ՀԹ. ՏԵՐԻ

Բանալի

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄԱՆԱԻԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Օ գ՚՚՚գ՚՚՚

2022
Ա. ԷՋՄԻԱԾԻՆ



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԷՋՄԻԱԾԻՆ»
կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխաւոր խմբագիր՝ **Գէորգ Մադոյեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,**
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բօզոյեան,
Խաչիկ Ռաֆֆի Գազէր,
Վարդան Դեւրիկեան,
Աբրահամ Տէրեան,
Գէորգ Տէր-Վարդանեան

“Etchmiadzin”
Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,**
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer,
Vardan Devrikyan,
Abraham Terian,
Gevorg Ter-Vardanyan

«Эчмиадзин»
Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворк Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,**
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Вардан Деврикян,
Абраам Терян
Геворк Тер-Варданян

ԻԲՐԵԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ընդունված է ասել, որ պատմությունը կերտում են այն անձինք, որոնք իրենց վառ անհատականությամբ եւ վճռականությամբ կարողանում են շարժել կամ ուղղորդել պատմության անիվն այնպես, որ թվացյալ անշեղ ընթացքը փոխվի։ Պատմությունը ճանաչում է այդպիսի շատ գործիչների։ Հայոց պատմության մեջ նույնպես բազմիցս հիշատակվում են մերազնյա այդպիսի գործիչներ։ Վերջիններս իրենց առ Հայրենիքն ու Աստված ունեցած հավատքի շնորհիվ կարողացել են վճռական դեր ստանձնել Հայոց պատմության բախտորոշ ժամանակաշրջաններում։

Հայ Եկեղեցու անդաստանը նույնպես արգասաբեր է եկեղեցական այնպիսի գործիչներով, որոնք իրենց եկեղեցական գործունեությանը հաղորդել են նաեւ ազգային դիմագիծ։ Եթե եկեղեցական մի շարք գործիչների բախտ է վիճակվել համատեղելու ազգային-եկեղեցական գործունեությունը եւ արձանագրել հաջողություններ այդ ոլորտներում, ապա Հայոց Կաթողիկոսներն ի պաշտոնե են կոչված եղել իրենց գործունեության ընթացքում հանդես գալու որպես ազգային-եկեղեցական գործիչ։ Այս առիթով պետք է ասել, որ կաթողիկոսներից այդպիսի դիմագծով օժտված գործունեության ակնկալիքը բխել է ներքին լսարանի պահանջմունքից։ Քանզի դարեր շարունակ չունենալով անկախ պետականություն, երկիրը եւ ժողովրդին ներկայացնողի եւ շահերը բարձր ատյաններում պաշտպանողների գործառույթներն իրականացրել են բացառապես Հայոց Կաթողիկոսները, որոնց, ի դեպ, այդպիսին դիտարկել են նաեւ օտարները։

Բարեբախտաբար այսօր ունենք անկախ պետականություն, որը պետք է կրի պատասխանատվություն ե՛ւ Հայրենիքի ե՛ւ ժողովրդի հոգսերը հոգալու ու շահերը պաշտպանելու համար։ Սակայն նույնիսկ այս պարագայում չի դադարել Հայոց Կաթողիկոսների վճռական եւ կարեւոր

դերակատարությունը ժողովրդի ու Հայրենիքի ճակատագրին վերաբերող ազգային հարցերում։ Եւ դա շատ բնական է հայ ժողովրդի եւ Հայաստանի դեպքում՝ որպես քրիստոնեությունն առաջինը պետական կրոն ընդունած եւ քրիստոնեությունը մաշկի գույն հռչակած ազգ։ Դրանից բխում է նաեւ, որ Սուրբ Էջմիածինն ընկալվում է որպես «խորհուրդ խորին», որպես հայ հավատքի բաբախուն սիրտ, որն աշխարհասփյուռ հայությանը համախմբում է իր շուրջ աշխարհի չորս ծագերից՝ հյուսիսից եւ հարավից, արեւելքից եւ արեւմուտքից։

2022 թ. օգոստոսը յուրահատուկ նշանավորվեց. լրացան երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի 90 եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 71 ամյակները։ Կարող ենք վստահ ասել, որ Հայոց երկու նշյալ կաթողիկոսներն էլ գահ բարձրացան մեր Հայրենիքի եւ ժողովրդի համար վճռական փուլում՝ իրենց անսակարկ եկեղեցասեր եւ ազգաշեն գործունեությամբ անգնահատելի նպաստ բերելով համազգային զարթոնքին։ Կարելի է արձանագրել, որ անկախության տարիների Հայոց Կաթողիկոսների առաջնորդությամբ Հայ Եկեղեցին ջանք ու եռանդ չի խնայել քրիստոնեությունն ամրապնդելու Հայաստանում եւ ի սփյուռս ցրված հայորդիների հոգիներում։

Եթե փորձենք բնութագրել եւ բնորոշել երջանկահիշատակ Գարեգին Ա. եւ ներկայիս Գարեգին Բ. կաթողիկոսների գահակալության տարիները, ապա վստահորեն կարելի է արձանագրել, որ անցյալի եւ ներկայի ընթացքը ոչ այլ ինչ է, եթե ոչ խոսքի եւ գործի հիանալի համադրություն, որով երկուստեք փոխլրացնելով անշեղորեն դեպի խաղաղ նավահանգիստ է առաջնորդվում Եկեղեցու նավը։

Հայս առիթ գլուխ ենք խոնարհում երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա. Սարգիսյան կաթողիկոսի շիրիմի առջեւ, մեր որդիական սերը վերահաստատելով նրա անձի եւ իբրեւ Հայոց Կաթողիկոսի նրա առաքելության նկատմամբ։ Թո՛ղ Տերը վառ պահի նրա հիշատակը եւ արդասավորի այդ հիշատակը նորանոր իրագործումներով մեր եկեղեցական եւ հայրենական կյանքից ներս։

Որդիական ջերմ սիրով շնորհավորում ենք նաեւ ազգընտիր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ներսիսյան Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի գահակալությամբ սկսվեց Հայոց պատմության մի նոր շրջափուլ, երբ հստակ գծագրվեցին Ազգ-Եկեղեցի զարգացման նոր հորիզոնները։ Առ

հայրենին եւ Եկեղեցին ունեցած պարտքի խոր գիտակցությամբ ու նվիրումով Գարեգին Բ. Հայրապետը ձեռնամուխ եղավ եռանդագին գործունեության, եւ, ահավասիկ, անցած երկու տասնամյակները անդուլ աշխատանքի եւ իրագործումների արգասաբեր մի շրջան դարձան. տեղաշարժերն ու ձեռքբերումներն ակնհայտ են թե՛ եկեղեցաշինության ասպարեզում, թե՛ միաբանական կյանքում, թե՛ միջեկեղեցական եւ կրոնական փոխհարաբերություններում, թե՛, վերջապես, հասարակական, ընկերային, մշակութային, կրթական, հրատարակչական եւ այլ բնագավառներում։ Վերջին երկու տասնամյակներում արված քայլերն առհավատչյա են գալիք առավել մեծ իրագործումների, որոնց իրականացման համար հայցում ենք Բարձրյալից, որ Իր Աջը հովանի դարձնի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ նրա ազգընտիր Գահակալ Գարեգին Բ. Վեհափառին, որպեսզի առհավետ բարձր ու հպարտ ծածանվի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հազարամյա դրոշը եւ թող Աստված օրհնի իրականություն դարձած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի երազը՝ Հայոց անկախ պետությունը, եւ պարգեւի շեն ու բարգավաճ կյանք եւ խաղաղ օրեր։

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ս. Էջմիածնի մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 օգոստոսի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

«Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զՀրեշտակաց,
բայց սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձն որ ճնչէ,
կամ իբրեւ զծնծղայս որ ղողանջեն»
(Ա. Կորնթ. ԺԳ. 1)։

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Ճաշու ընթերցումից վերցված Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված առաջին նամակի 13-րդ գլուխը այսօրվա մեր քարոզի ոգեշնչման աղբյուրն է։ Այստեղ առաքյալը խոսում է սիրո մասին։ Այս գլուխը, թերեւս, Նոր Կտակարանի ամենագեղեցիկ եւ ազդեցիկ հատվածներից է։ հաճախ տարբեր մեկնիչներ այն անվանել են «սիրո գլուխ» կամ «սիրո փառաբանության գլուխ»։

Սուրբ Պատարագի այսօրվա ընթերցումը գեղեցկորեն ուսուցանում է մեզ՝ Քրիստոսի Եկեղեցու զավակներիս, աստվածային սիրո մեջ մնալու ճշմարիտ եւ անշեղ ուղին։

Առաքյալն ասում է. «Եթե խոսեմ մարդկանց եւ հրեշտակների լեզուներով, բայց սեր չունենամ, ինչո՞վ պիտի տարբերվեմ պղնձե շեփորից, որ հնչում է, կամ ծնծղաներից, որ ղողանջում են։ Եթե մարգարեության պարգեւ ունենամ, կարողանամ բոլոր խորհուրդների խորքը թափանցել ու հասնեմ ամբողջական գիտության եւ եթե նույնիսկ լեռները տեղափոխելու չափ ուժեղ հավատք ունենամ, բայց սեր չունենամ, ես ոչինչ չարժեմ»։ Սերը ոչ միայն քրիստոնեության, այլ առհասարակ մարդկության պատմության, նրա քաղաքակրթական զարգացման հիմնարար արժեքներից է։ Մարդու գոյութենական կարեւորագույն երեւույթ, խթան։ Կորն-

թացիներին ուղղված Պողոս առաքյալի անդրադարձը սիրուն մատնանշում է նրա հիմնական ոգեշնչման աղբյուրը, որն Աստված է։ Աստված սեր է, եւ այդ պատճառով Պողոսը հռոմեացիներին ուղղված իր թղթում ասում է. «Աստված Իր սերը մեր հանդեպ հայտնեց նրանով, որ չնայած մեղավոր էինք, Քրիստոս մեզ համար մեռավ»։ Նույն միտքն արտահայտում է Հովհաննես առաքյալը. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին Իւր միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի Նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։ Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի Իւր յաշխարհ թե դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ Նովաւ» (Յովհ. Գ. 16)։

Սերը քրիստոնեության հիմքում է։ Նրա վրա է կառուցված մեր Եկեղեցու ու հավատքի ողջ ճարտարապետությունը։ Սերն Աստծու խոսքն է, որն անէությունից ստեղծեց տիեզերքը, լուսավորեց ու ջերմացրեց այն տարատեսակ աստղերով ու աստղային համակարգություններով, զարմանահրաշ մոլորակներով, երկնաքարերով, որոնք զարդարում են մեր երկնակամարը՝ ասես լուռ ու հուժկու վկաները լինեն Նրա անդրանցական ստեղծագործ ուժի եւ աներեւակայելի կարողության։ Եւ, իսկապես, միայն այս տիեզերածին անեղ սիրո արտահայտությունը հասկանալով է մեզ՝ մահկանացուներիս համար պարզ դառնում Քրիստոսի մարդեղության խորհուրդը։ Նրա զարմանահրաշ համբերատարությունն ու հոգատարությունը մարդկանց նկատմամբ, Նրա աներեւակայելի չարչարանքները։ Իր խաչի ճանապարհին հեղված արյամբ ուրվագծված՝ մեր փրկության ուղին դեպի երկինք։

Մի՞թե սրանից վեր զոհողություն կարող է տեղի ունենալ։ Մի՞թե քիմիական տարրերի պատահական հաջորդականությամբ կարող է աստվածամերժական (աթեիստական) բացատրություն տրվել այս ամենին, եթե չկա սերը։ Այս խորհուրդը վերբանական խորհումով կարելի է հասկանալ միայն։ Ահա գաղտնի բանալին Քրիստոսի մարդեղության խորհրդի։ Այժմ պարզ է՝ տիեզերքի ստեղծագործության ուժը Սերն է։ Սերն ավելին է, քան մեր զգացմունքներն ու անձնական մտադրությունները։ Իրական, աստվածային սերը գործն է՝ զոհաբերությունը. «Ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ Նա սիրեց մեզ եւ ուղարկեց Իր Որդուն մեր մեղքերի քավության համար»,— ասում է Հովհաննես առաքյալը (Հովհ. Դ. 10)։

Սիրելի՛ հավատացյալներ, ի՞նչ հատկանիշ ունի քրիստոնեական սերը, կամ ինչպիսի՞ն է նա մեզ՝ քրիստոնյաներիս համար։

Այդ սերը նախ եւ առաջ համբերատար է։ Եկեղեցու հայրերն ասել են, որ այդպիսի սերը հատուկ է մարդու, որը սրտնեղած է անարդարությունից, բայց վրիժառու չէ, քանի որ այդ մարդու մեջ հնարավոր չէ ցասում առաջացնել, որովհետեւ Աստված վրիժառու չէ, այլ ամենողորմ է։ Աստված խաղաղասեր է։

Երկրորդ. այդ սերը գթասիրտ է. Նա երբեք չի թողնի կարիքավորին, եթե նույնիսկ չգիտի նրան։ Այդ հատկությունը քրիստոնյայի մեջ չի առաջանում զուտ խղճահարությունից, որն առհասարակ հատուկ է մարդ էակին։ Այն գթասիրտ է կարիքավորի հանդեպ հավասարապես՝ եղբայրության գիտակցությամբ ի Քրիստոս, ինչպես Տերը, լվանալով Իր աշակերտների ոտքերը, օրինակ մատուցեց անհուն մարդկային խոնարհության։

Երրորդ. սերը չի նախանձում։ Նախանձությունը հատուկ է այն մարդուն, որի սրտում տեղ չի մնացել աստվածային սիրո։ Այդպես սատանան ապստամբեց Տիրոջ դեմ նախանձաբար։

Ահա ինչու Պողոս առաքյալը, շարունակելով խոսել սիրո մասին, ասում է. «Սեր ունեցողը համբերատար է լինում, քաղցրաբարո։ Սեր ունեցողը չի նախանձում, չի գոռոզանում, չի հպարտանում, անպատշաճ վարմունք չի ունենում.... Սեր ունեցողը միշտ զիջում է, միշտ հավատում, միշտ հույս է տածում, միշտ համբերում»։

Մի մարդ, դառնացած ամենօրյա իր հոգսերից, անընդհատ վիճաբանության մեջ է լինում մարդկանց հետ թե՛ աշխատավայրում եւ թե՛ ընտանիքում։ Ամեն անգամ վիճելիս նրան թվում է, որ մարդիկ չարությամբ են լցված իր հանդեպ։ Մի օր նա գալիս է հոգեւորականի մոտ եւ ասում. «Հա՛յր սուրբ, օգնի՛ր ինձ, քանի որ ինձ շրջապատում են կարծրասիրտ ու չար մարդիկ»։ Հոգեւորականը, լսելով նրան, ասում է. «Իրականում քո շրջապատում շատ լավ մարդիկ կան։ Նրանք նման են գետնի տակ թաքնված աղբյուրների, որոնց հասնելու համար քեզ ոչ բահը կօգնի, ոչ էլ այլ գործիք։ Միակ գործիքը, որ կարող է քեզ օգնել, սերն է»։

Քույրե՛ր եւ եղբայրնե՛ր, սիրո մեծագույն թշնամին հազարամյակներ ի վեր եղել է սատանան, որի նպատակն է եղել կործանել մարդուն, շեղել նրան աստվածային ուղուց եւ տիրել նրա աստվածաստեղծ հոգուն։ Չարի ու բարու պայքարը միշտ եղել է բանաստեղծների ու արվեստագետների ստեղծագործական նյութերից մեկը։ Բայց այսօր մենք ականատես ենք աշխարհի ու մարդկության սրընթաց փոփոխությանը։ Կյանքն այլեւս առաջվանը չէ։ Կարծում եմ՝ բոլորս էլ հետեւում ենք լրատվական

նյութերի թողարկմանը։ Ազգերը կարծես էլ ավելի անհանդուրժող են դառնում միմյանց նկատմամբ։ Հորիզոնից լսվում է պատերազմի մահաբեր ամպրոպի ձայնը։ Մեր դարավոր ոսոխը նույնպես քնած չէ եւ ոտնձգություն է կատարում մեր պապերի հողին ու ջրին։ Ջանում է յուրացնել, քանդել հինավուրց մեր մշակույթն ու ճարտարապետական կոթողները։ Մեր սահմանն այսօր էլ հանգիստ չէ։

Ակամայից հիշում եմ մի պատմություն, թե ինչպես դպրոցում դասի ժամանակ ուսուցիչը, երեխաների գոռոցներին ի պատասխան, հարցնում է, թե որն է պատճառը, որ նրանք իրար մոտ են նստած, բայց գոռում են միմյանց հետ խոսելիս։ Աշակերտները տարբեր պատճառաբանություններ են բերում՝ ասելով, թե փորձում են իրենց ճշմարտությունը հասանելի դարձնել մյուսներին եւ այլն։ Ուսուցիչը, լսելով նրանց, պատասխանում է. «Որքան հեռանում են մարդկանց սրտերը միմյանցից, այնքան նրանք ստիպված են բարձրացնել իրենց ձայնը՝ լսելի դառնալու համար։ Սիրող զույգերը հաճախ ցածր են խոսում, որովհետեւ սերը մոտեցնում է նրանց»։

Ներկայիս աշխարհաքաղաքական վիճակում ազգերն ու պետությունները նույն այդ աշակերտների նման փորձում են ուժով եւ սպառնալիքներով խոսել միմյանց հետ։ Ատելության փոխարեն, Տիրոջ ողորմությամբ, մարդ էակը կարող է հասնել հոգեւոր եւ նյութական մեծ բարձունքների, զարգացնել ու շենացնել իր անդաստանն ու մարդկային տեսակը։ Պատմությունը բազմիցս ցույց է տվել, թե ինչպիսի բուռն զարգացման է հասնում մարդկությունը, երբ ունենում է թեկուզ կարճատեւ խաղաղության եւ համերաշխության շրջան։ Հիշենք միայն Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տասնամյակները։ Զարգացան տնտեսությունը, արվեստը, ճարտարապետությունը։ Գիտական նոր նվաճումներով մարդն էլ ավելի մոտեցավ տիեզերական աստվածակերտ գաղտնիքների բացահայտմանը։

Սիրելի՛ հավատացյալներ, Աստված մեզ հորդորում է դժվար ժամանակներում ապրել խիզախ, անվախ, լի հույսով եւ հավատով։ «Մի՛ վախեցիր, որովհետեւ փրկեցի քեզ, եւ քեզ կոչեցի քո անունով, որ իմն ես։ Եթե ջրերի միջով անցնես, քեզ հետ կլինեմ, եւ գետերը քեզ չեն խեղդի, եթե կրակի միջով անցնես, չես այրվի, եւ նրա բոցը քեզ չի կիզի, որովհետեւ ես եմ Տերը՝ քո Աստվածը» (Եսայի ԽԳ. 1–3)։ Ուրեմն չարի դեմ պայքարում մենք մենակ չենք։ Անզոր չենք նրա հուժկու հարվածներից, ան-

կախ այն բանից՝ չարը մեզ երեւութապես է հարվածում թե աներեւույթ։ Ազգային բարձր գիտակցությամբ համախմբված եւ միաբանված՝ պիտի դիմագրավենք սահմանին կանգնած մեր թշնամուն։ Տերը մեզ հետ է, եւ ճշմարտությունը մեզ հետ է։ Այո՛, պետք է հուսալ, հավատալ եւ սիրել։

*Պողոս առաքյալն այսպես է եզրահանգում սիրո իր խոսքը. «Այժմ, ուրեմն, կարեւոր միակ բաներն են՝ հավատը, հույսը եւ սերը, իսկ այս երեքից մեծագույնը սերն է»։ Ահա առաքյալի սիրո երգի գագաթնակետը, աստվածացումը, մեծարումը (*Апофео́з*), ողջ տիեզերական հավասարակշռության անկյունաքարը։*

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, եկեք այսօր մեզ հետ տուն տանենք Պողոսի սիրո երգի քաղցր ղողանջը։ Կիսենք մեր հարազատների հետ սիրո այդ մասնիկը եւ լուսավորենք Քրիստոսով մեր տներն ու օջախները։ Թող Տերը սիրո մեջ պահի ու պահպանի յուրաքանչյուրիդ եւ մեր ազգի բոլոր զավակներին՝ լուսավորելով մեր ուղին խավարի մեջ։ Իսկ մենք փառաբանենք Նրան՝ միմյանց ասելով. «Եթե խոսեմ մարդկանց եւ հրեշտակների լեզուներով, բայց սեր չունենամ, ինչո՞վ պիտի տարբերվեմ պղնձե շեփորից....»։

Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։

Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 օգոստոսի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ

Այսօր զուրաճացան հրեշտակք ի յերկինս.
ընդունելով յերկրէ զմայր Բանին Աստուծոյ
յիմանալի խորանս անմահից
(Շարական)։

Մեր Եկեղեցին այսօր ամենուր տոնախմբում է հարյուրամյակներ առաջ տեղի ունեցած մի դեպք, որ կապված է մեր Տիրոջ մոր եւ Ընդհանրական Եկեղեցու մեծագույն բարեխոսի՝ Աստվածամայր Սուրբ Կույս Մարիամի՝ դեպի երկինք վերափոխման հիշատակության հետ։ Մեր Եկեղեցին դարերի ընթացքում մշտապես անդրադարձել է Աստվածամորը՝ իբրեւ մարդկային ցեղի, իբրեւ մայրության, իբրեւ Աստծու խոսքի հնազանդության գերագույն եւ կատարյալ օրինակի։ Եթե առաջին կնոջ՝ նախամայր Եւայի միջոցով մեղքն ու դատապարտությունը մտան մարդկային կյանք, ապա Աստվածամոր՝ երկրորդ Եւայի օրինակով տրվեց մարդկության փրկության ավետիսը։ Աստվածամոր մեծությունը ոչ միայն այն է, որ Աստծու Սուրբ Հոգու այցելությամբ դարձավ այն ոսկի տապանակը, որտեղից հայտնվեց համայն մարդկության բանականության ճշմարիտ Լույսը, այլեւ իր մայրական օրինակելի խոնարհությամբ եւ կանացիությամբ հետեւեց Տիրոջը՝ ընկալելով եւ հասկանալով Նրա բերած զոհողության, խաչի, փրկության եւ սիրո առաքելությունը։ Նա մշտապես ներշնչեց մեր ազգին ու բարեխոսեց մեզ համար։

Աստված Աստվածամոր միջոցով աշխարհին տվեց Հիսուս՝ Ընծա, որ եղավ փրկության մարմնացում՝ մարդուն խավարից դեպի լույս, չիմացությունից դեպի իմացություն, անճանաչողությունից դեպի ճանաչում, մահից դեպի կյանք տանող ճշմարիտ վեմ։

Աստվածամորից ծնվելը, 33 տարի ապրելն ու քարոզելը, բժշկելն ու հրաշքներ գործելն ըմբռնելու համար պետք է տառապել Հիսուսի հետ, պետք է «ամուսնանալ» Հիսուսի պայքարի հետ, մաքրամաքուր աչքով նայել Նրան ու Իր կատարածին։ Հիսուս, հակառակ տաժանակիր չարչարանքներին, որ ապրեց, ներկայացավ ազգերին իբրեւ Բերկրանք. ոչ թե իբրեւ Մարտիրոս, այլ Ստեղծագործ եւ Արվեստագետ։ Ուստի Հիսուսի ապրած կյանքն ի միտ ունենալով՝ հաղթենք մեր ներքին անձերին, տեր լինենք բոլոր առաքինություններին եւ խորհուրդներին, որ ունենք մեր ներսում, որպեսզի լինենք գիտակ եւ ունակ՝ ճանաչելու Հորը եւ Հիսուսին։

Վերափոխման հիշատակի այս տոնը եւս երկու կարեւոր պատգամ է փոխանցում մեզ. նախ՝ տեր եւ հնազանդ լինել Աստծու կամքին։ Սուրբ Աստվածամոր կյանքը մանկուց գերազանցապես եղել է աստվածահաճո։ Սուրբ Կույսն իր կյանքի յուրաքանչյուր հանգրվանին հնազանդվել է Տիրոջ պատգամներին եւ միշտ ջանացել է կատարել Նրա սուրբ կամքը։ Այս խոսքերի վկան հենց Տիրամոր այն արտահայտությունն է, որը փոխանցեց Գաբրիել հրեշտակապետի միջոցով, երբ իմացավ ամենակալ Աստծու ծրագիրն իր կյանքում. «Ահավասիկ, ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկաս Ա. 38)։ Սուրբ Աստվածածինն իր խոնարհության եւ հնազանդության օրինակով շահեց Տիրոջ վստահությունն ու լիառատ շնորհները, որով դարձավ անտանելի Աստծու Բանի տանելի տաղավարը. իր արգանդում կրեց Նրան, Ումից դողում էին զորություններն ու տերությունները, սերովբեներն ու քերովբեները։

Իր կյանքի մայրամուտին հնազանդության համար արժանացավ անցավոր այս երկրից վերափոխվելու դեպի երանական երկինք։ Այսօր մեղքի փոշոտ ճանապարհները խզում եւ զատում են դնում մեր՝ մարդկության եւ Աստծու մերձենալիության միջեւ, սակայն Աստվածամոր միջնորդությամբ եւ բարեխոսական մշտամնա առաքելությամբ մենք շնորհն ենք ստանում՝ դառնալու Աստծու ճշմարիտ տաճարներ եւ քայլելու արդեն անփոշի արահետներով։ Աստվածամայրը մեզ ամենքիս իր կյանքի կարեւորագույն պատգամներից մեկն է փոխանցում՝ Աստծու խոսքին, ավետարանական պատգամին կատարյալ հնազանդ կյանք ունենալ։ Այս է կարեւոր պատգամը՝ վերափոխում ունենալ մեր կյանքում։ Սա է քրիստոնյայի կյանքի ճամփան. նախ՝ ինքն իր հետ առերեսում, ապա՝ անհատական փոփոխություն։ Մենք եւս, Սուրբ Աստվածամոր օրինակով, կոչվել ենք հնազանդվելու երկնավոր Հորը, Նրա կամքը կատարելու, կոչվել

ենք հավատքով դառնալու Աստծու լույսի կրողներն ու այն ամենուրեք տարածողները, որպեսզի աշխարհը եւ մենք խավարի մեջ չմնանք։ Կոչվել ենք տիեզերքի մեջ Աստծու շնորհների՝ հեզության ու պարզության ճանապարհով քայլելու։ Ի վերջո, կոչվել ենք մեր կյանքի օրինակով վկաները դառնալու Ամենասուրբ Երրորդության։ Այնպես, ինչպես Տերը բնակվեց Սուրբ Կույսի մեջ, այդպես սպասում է մեր դարձին, որպեսզի բնակվի մեր մեջ եւ մեզ դարձնի կենդանի Աստծու բնակության տաճարներ։

Երկրորդ պատգամը՝ Աստծու նկատմամբ ունեցած հավատքի համար վարձատրություն չակնկալել։ Այսօրվա մեր՝ չափից ավելի նյութականացած աշխարհում մարդ տեսակն իր կատարած յուրաքանչյուր արարքի համար ոչ հոգեւոր վարձատրություն է ակնկալում։ Յուրաքանչյուր քայլ փորձում է կատարել համապատասխան պայմանով կամ հատուցման անպայման սպասելիքով։ Հավատքը, սակայն, Աստծու անտեսանելի շնորհի պարգեւն է մեզ, որի իրական ընկալումը միայն մեզանից դեպի դիմացինը սիրո, ջերմության, ծառայության, սպասավորության, զոհաբերության նվիրական զգացում է։

Ճշմարիտ հավատացյալ քրիստոնյան աշխարհում նյութական վարձատրություն ակնկալողն ու ստացողը չէ, քանզի «մեր գանձերն արդեն իսկ երկնքում են» (հմմտ. Մատթ. Զ. 19–21)։ Մեր Տերը՝ Քրիստոս, պատվիրում է մեզ, որ մեր աջ ձեռքի տվածը ձախը չտեսնի (հմմտ. Մատթ. Զ. 3)։ Մենք ի՞նչ ուղղությամբ ենք շարժվում. բարիք ենք գործում վարձատրություն ստանալո՞ւ համար, թե՞ որպեսզի չկորցնենք մեր մեջ Արարիչ Աստծու բարեհաճությունը։ Եթե երկրորդ ուղին ենք ընտրել, արդարեւ, մեզ առաջնորդողն ու կյանքի ապավենը մեր Տերն Ինքն է, եւ ըստ այդմ՝ մեր ձեռնարկած յուրաքանչյուր քայլ աստվածահաճո է։ Ուստի յուրաքանչյուր քրիստոնյա անհատի կոչումը պիտի լինի հնազանդվել Աստծու Սուրբ կամքին եւ առանց ակնկալիքի, անսակարկ, անպայմանավոր նվիրում ցուցաբերել Հորը՝ արժանի դառնալու Քրիստոսի խոստմանը, թե՝ «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ. 43)։ Այս է մեր հավատքի ուղին։ Այս է Աստվածամոր պատգամը մեզ՝ անվերապահ հավատքով վստահել Աստծու խնամատարությանը։

Այսօր՝ Սուրբ Պատարագի ավարտին, կկատարվի խաղողի օրհնության կարգ։ Մեզանում՝ մեր ժողովրդի լայն շրջանակներում, առկա է մոլորություն, որ Ծաղկազարդի ոստերի կամ խաղողի օրհնությամբ շենանում են Հայոց երկիրն ու հողը եւ անդաստանները։ Երկիրն ու նրա

բնակիչը կօրհնվեն, կբարգավաճեն ու կշենանան, երկրի պետական, հոգեւոր եւ բարոյական սահմաններն անվտանգ ու ապահով կլինեն միայն այն ժամանակ, երբ օրհնյալ այս հողի վրա ծնված եւ նրա հզոր ապագայի տեսիլքով ապրող մարդը չի զլանա խաղաղ պայմաններում իր մեջ հոսող նվիրական հեղուկներից քրտինքը թափել, դրանով երկիրը ոռոգել, հակառակ՝ ստիպված կլինի հաջորդ նվիրական հեղուկով՝ արյամբ այն շաղախել։

Թո՛ղ Աստվածամայրը դառնա մեր բարեխոս մայրը, որպեսզի այդ միջնորդության շնորհիվ մարդը հաշտվի իր եւ իր շրջակա աշխարհի հետ, հաշտվի Աստծու եւ բնության հետ։

Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Անաղարտ մնամ
Այն ճահճանման աղտ-աղարտի մեջ,
Որ դժգոհություն բառով է կոչվում։
Դժգոհությունից ես շա՛տ եմ դժգոհ։
Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Եւ ասեմ՝ ինչո՛վ.
Բարեխոս եղիր ի՛մ եւ ի՛մ միջեւ,
Որ բանն ավարտվի ինքնահաշտությամբ։

Մեծ գրողի այս աղոթքով եւ հաստատակամ վստահությամբ խնդրենք Տիեզերքի խնամատարության բարեխոսին՝ Սուրբ Կույս Մարիամին, որ նորոգի մեր մեջ իրական ծնողական սիրո զգացումը, ընտանեկան, եղբայրական, որդիական, միջանձնային հավատարմությունը, հաշտեցնի մեզ մեզ հետ, մեր ու Տիրոջ միջեւ դառնա մեղքը հաղթահարելու կամքի նորոգություն եւ վերափոխի մեր հոգիները՝ երբեք չտկարանալու, այլ Աստծու խոսքին հնազանդ՝ հավատքի ապրումով ակնկալելու եւ սպասելու երկնային վարձատրության։

Վերափոխվենք։ Վերափոխվենք եւ մեր անձերը աղոթքով սրբագործենք՝ ուխտյալ միություն հաստատելով Աստծու եւ մեր միջեւ. ամեն։

Տ. ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 օգոստոսի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

«Ընդէ՞ր այդպէս վատասիրտ էք,
չեւ եւս ունիք հաւատս»
(Մարկ. Դ. 40)։

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօրվա Ավետարանը փոթորկի խաղաղեցման հրաշքի մասին է։

Մարկոս ավետարանիչը պատմում է, որ մի երեկո Հիսուս, ավարտելով երկարօրյա քարոզչությունը, որոշում է Իր աշակերտների հետ նավակով Գալիլիայի լճի մյուս կողմն անցնել։ Նավագնացության ընթացքում Յիսուս, հոգնած լինելով, նավի հետեւի կողմում ննջում էր, եւ հանկարծ մեծ փոթորիկ է բարձրանում։ Աշակերտները, որոնց մեծ մասը ձկնորսներ էին, փորձառություն ունեին նավարկելու, շատ փոթորիկներ էին տեսել, վստահ էին, որ դա եւս կհաղթահարեն։ Սակայն շուտով հասկանում են, որ այսպիսի փոթորիկ երբեք չեն տեսել ու սկսում են տագնապել՝ մտածելով, որ շուտով նավը կխորտակվի։ Ի վերջո, աշակերտները խուճապահար արթնացնում են հանգիստ քնած Հիսուսին ու զարմացած բացականչում՝ մի՞թե Նրա համար միեւնույնն է, որ կորչում են։ Տերը՝ իբրեւ բնության ու տիեզերքի Արարիչ, սաստում է հողմը, դադարեցնում ծովային ալեբախությունը եւ զարմանում Իր աշակերտների թերահավատության վրա՝ հանդիմանելով նրանց. «Ինչո՞ւ եք այդքան վախկոտ, ինչո՞ւ հավատ չունեք»։ Եւ աշակերտները կրկին վախենում են, այս անգամ վախենում են Հիսուսից եւ զարմանալով հարցնում են միմյանց, թե «ո՞վ է արդյոք սա, որ ե՛ւ քամին, ե՛ւ լիճը հնազանդվում են նրան»։

Եթե մարդկայնորեն նայենք, Տեր Հիսուս այդ օրը շատ հոգնած էր, որի պատճառով խորը քնած էր։ Սակայն ավետարանիչը նշում է, որ

ալիքները նավի մեջ էին թափվում, ու նավը գրեթե ջրով էր լցվել, եւ հավանաբար Հիսուսն էլ թրջվել էր։ Եթե ավելացնենք նաեւ աշակերտների աղմուկ-աղաղակը, հասկանալի է դառնում, որ այստեղ Հիսուս ուղղակի չի արթնանում եւ թողնում է որ աշակերտներն իրենց վերջին ճիգերը գործադրեն։ Այսինքն՝ ինչ-որ առումով ստուգում էր Իր աշակերտների հավատքը։

Այդ նույն օրը Հիսուս բազմաթիվ հրաշքներ էր գործել, ու աշակերտներն ականատես էին եղել։ Այդ էր պատճառը, որ Հիսուս բարկացավ Իր աշակերտների վրա։ Սակայն այդ օրը Հիսուս, հիվանդներին բժշկելուց բացի, առաջին անգամ սկսել էր նաեւ դեւեր հանել (Մատթ. Ը. 16)։ Ուստի այդ օրը հոգեւոր պատերազմ էր սկսվել, եւ այդ պատճառով հասկանալի էր երեկոյան պատահած սաստիկ փոթորիկը, որը բնական փոթորիկ չէր։

Ավետարանում նավը հաճախ է գործածվում՝ խորհրդանշելով մարդու կյանքը, իսկ ծովը՝ այս աշխարհը։ Ուրեմն եթե նավը մեր կյանքն է, ապա հավատացյալն այն անձն է, որ իր մեջ Հիսուսին ունի։ Երբ Աստված ստեղծեց մարդուն, նրա մեջ Իր շունչը փչեց, ու այն մեր մեջ է։ Պողոս առաքյալն ասում է՝ «դուք Սուրբ Հոգու տաճար եք»։ Աստված բնակվում է մեր մեջ, սակայն շատ անգամ քնած է այնտեղ. պետք է արթնացնել Նրան։ Հաճախ մենք կարծում ենք, որ Աստված պետք է արթնանա միայն, երբ խնդիրների մեջ ենք, երբ օգնության կարիք ունենք։ Այնուամենայնիվ, երբ էլ արթնացնենք Հիսուսին մեր մեջ, մեր խնդիրները կսկսեն լուծվել։

Քրիստոնեական կյանքը մի նավագնացություն է։ Հիսուս ասում է՝ «մյուս կողմն անցնենք»։ Ծովի մի ափից մյուսն անցնելն այն ճանապարհն է, որ քրիստոնյան պետք է անցնի, եւ որը միշտ խաղաղ ու հանդարտ չի լինում, երբեմն դժվարություններ ու փոթորիկներ են լինում։ Այդ ժամանակ է, որ գիտակցում ենք, որ Աստված ունենք, հավատ ունենք, պետք է արթնացնենք։ Եւ այնուհետեւ այդ բոլոր դժվարությունների մեջ մենք տեսնում ու զգում ենք Տիրոջ օգնությունը մեզ։

Աշակերտների վախը, իհարկե, բնական էր, բայց հավատքը հենց վախը հաղթահարելու համար է։ Տեր Հիսուս ուզում էր, որ Իր աշակերտները, երբ մահվան սպառնալիքին հանդիպեն, որին անպայման հանդիպելու էին, ունենան այն հավատքը, որ իրենց հոգին եւ Աստված ավելի մեծ են, քան մահը, ու չվախենան մեռնելուց։ Նրանք հետո իհարկե հաս-

կացան։ Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված նամակի Ը. գլխում նշում է, որ մահը չի կարող մեզ բաժանել Աստծու սիրուց։ Առանց այս գիտակցության ու քաջության հնարավոր չէ հետեւել Քրիստոսին կատարելապես, որովհետեւ հավատքը միշտ փորձվում է մահվան վտանգի առջեւ։

Հիսուս ասում է աշակերտներին. «Ինչո՞ւ եք այդքան վախկոտ, ինչո՞ւ հավատ չունեք»։ Իհարկե, աշակերտներն անհավատ չէին, տեսել էին Հիսուսի բազմաթիվ հրաշքներն ու հավատում էին, ինչպես որ մենք էլ հավատում ենք այս պահին։ Բայց երբ փոթորկալից դժվար պահը գա, հավատ կունենա՞նք։ Ուրեմն վախը եւ հավատքը միասին երբեք չեն լինում. կա՛մ մեկն է, կա՛մ մյուսը՝ լույսի ու խավարի պես. որտեղ լույս կա, այնտեղ խավարն անհետանում է։ Հետեւաբար Հիսուս ասում է, որ դժվար պահերին փնտրեք ձեր հավատը, եթե ունեք, ապա որքան էլ դժվար վիճակում հայտնվեք, կհաղթահարեք, կպահպանեք ձեր խաղաղությունը, դուք հույս կունենաք։ Հետեւաբար հավատքն այդպիսի օրերի համար է, եւ այն միշտ մեր մեջ պետք է լինի։

Սուրբ Գրքի ուսումնասիրողները հաշվել են, որ այնտեղ 365 անգամ խոսվում է չվախենալու մասին։ Կարծեք թե Աստված ամեն օր մեզ ասում է՝ մի՛ վախեցեք։ Այսինքն՝ հավատքով կարող ենք մեր կյանքի բոլոր խնդիրները հարթել՝ առանց վախենալու, առանց խուճապի մատնվելու։

Սիրելինե՛ր, հիշենք նաեւ, որ այսօր Հայ Եկեղեցին նշում է Ս. Մարիամ Աստվածածնի գոտու գտնվելու տոնը։ Աստվածամայրը հանապազ բարեխոսում է Քրիստոսի Եկեղեցու համար, եւ մեզ համար, որպեսզի մեր քրիստոնեական ճանապարհորդությունը զերծ մնա փոթորիկներից ու նավաբեկություններից՝ հասնելով խաղաղության նավահանգստին։

Թող Աստվածամոր բարեխոսությունը եւ Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհներն ու խաղաղությունը միշտ լինեն ձեզ հետ եւ ամենքիս հետ, ամեն։



ԹԵՈՓԻԼՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ

ԱՌ ԱՎՏՈԼԻԿՈՍ[1]

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ա. Պերճախոս լեզուն եւ գեղեցիկ արտահայտությունները բավականություն են պատճառում ու սնուցում խեղված մտքով մարդկանց փառասիրությունը, իսկ ճշմարտասերն ուշադրություն չի դարձնում խոսքի ճոռոմության վրա, այլ քննում է խոսքի բուն էությունը, թե ինչ եւ ինչպիսին է։

Եւ քանի որ դու, իմ բարեկա՛մ, ինձ սնամեջ բառերով քարկոծեցիր, երբ գովաբանում էիր քո աստվածներին՝ քարից ու փայտից կերտված, դրոշմված ու ձուլված, քանդակված ու նկարված, «որոնք ո՛չ տեսնում են, ո՛չ լսում, քանզի կուռքեր են եւ մարդկանց ձեռքի գործեր»[2], եւ, բացի այդ, ինձ նաեւ քրիստոնյա ես անվանում, կարծես թե ես ինչ-որ մի դատապարտելի անուն եմ կրում, ապա ես ինքս խոստովանում եմ, որ քրիստոնյա եմ, եւ այս աստվածահաճ անունը կրում եմ Աստծուն սիրելի լինելու հույսով։ Աստծու անունը, ինչպես դու ես պատկերացնում, իր մեջ որեւիցե պարսավելի բան չի պարունակում. թերեւս, Աստծու մասին այդպես ես խորհրդածում այն պատճառով, որ ինքդ դեռ հաճո չես Նրան։

Բ. Եթե ասես. «Ցո՛ւյց տուր ինձ քո Աստծուն»[3], դրան ի պատասխան կասեմ՝ ցո՛ւյց տուր ինձ մարդուն[4], եւ ես ցույց կտամ քեզ իմ Աստծուն։

---

[1] * *Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից.* «Антология: Ранние Отцы Церкви», Брюссель, 1988, *էջ 458–521։ Թարգմանչի ծանոթագրությունները կտրվեն կարգային համարի հետ դրված աստղանիշով։*

[2] *Սաղմ. ՃԺԳ. 12–14 եւ ՃԺԴ. 15–17։ Սուրբգրային մեջբերումները հետայսու կտրվեն բնագրից ուղղակի թարգմանությամբ։*

[3] *Մինուկոս Ֆելիքսի աշխատությունում Կեկիլիոսը եւս կշտամբում է քրիստոնյաներին այն բանի համար, որ նրանք պաշտում են Աստծուն, Որին ո՛չ կարող են ցույց տալ, ո՛չ կարող են տեսնել։*

[4] *Այսինքն՝ ներքին մարդուն. արդյոք այնպիսի՞ն է, ինչպիսին պիտի լիներ Աստծուն տեսնելու համար։*

Յո՛ւյց տուր, որ քո հոգու աչքերը տեսնում են, եւ սրտիդ ականջները՝ լսում։ Քանի որ ինչպես տեսունակությամբ օժտված մարդիկ իրենց մարմնական աչքերով տեսնում են այս երկրային կյանքի առարկաները եւ նկատում տարբերությունը, օրինակ, լույսի եւ խավարի միջեւ, սպիտակի եւ սեւի միջեւ, այլանդակի եւ գեղեցիկի միջեւ, կանոնավորի, համաչափի եւ անկանոնի, անհամաչափի միջեւ, ավելորդի եւ պակասի միջեւ, կամ էլ ինչպես ականջներն են զանազանում լսողությանը հասնող ձայները՝ կտրուկ, ծանր կամ հաճելի, ճիշտ այդպես էլ սիրտը ականջներ, հոգին էլ աչքեր ունեն՝ Աստծուն տեսնելու համար։ Աստված տեսանելի է նրանց, ովքեր ունակ են Նրան տեսնելու, հենց նրանց, որոնց հոգու աչքերը բաց են։ Բոլորն էլ աչքեր ունեն, բայց ոմանց աչքերը խավարով են պատված եւ պայծառ լույսը չեն տեսնում։ Թեպետեւ կույրերը չեն տեսնում, այնուամենայնիվ արեւային լույս գոյություն ունի եւ լույս է տալիս, իսկ կույրերը թող դժգոհեն իրենք իրենցից եւ իրենց աչքերից։ Հենց այդպես էլ, բարեկա՛մս, քո պարագայում է. հոգուդ աչքերը մթագնած են քո մեղքերով ու չար գործերով։ Մարդու հոգին, ինչպես փայլող հայելին, պիտի մաքուր լինի։ Ինչպես որ ժանգոտած հայելու մեջ մարդու դեմքը չի երեւում, այնպես էլ մարդն Աստծուն ի վիճակի չէ տեսնելու, եթե մեղքերի մեջ է։ Արդ, ինքդ քեզ ցո՛ւյց տուր. արդյոք չե՞ս շնացել, արդյոք անառակի, գողի, ավազակի, պատանիներ պղծողի, կռվազանի, վատաբանողի, բարկացկոտի, նախանձի մեկը չե՞ս, արդյոք մեծամիտ չե՞ս, հպարտ չե՞ս, սանձարձակ չե՞ս, արծաթասեր չե՞ս, արդյոք հնազանդ ես ծնողներիդ, արդյոք քո իսկ երեխաներին չե՞ս վաճառում։ Քանզի Աստված չի բացահայտում Իրեն նրանց, ովքեր այդպես են վարվում, եթե նախապես իրենց ամենայն աղտեղությունից մաքրած չլինեն։ Այս ամենը խավար է ծնում, եւ ինչպես հիվանդ աչքը թույլ չի տալիս տեսնել արեւի լույսը, այնպես էլ քեզ, իմ բարեկա՛մ, անօրենություններն են մթությամբ սքողում, որ չես կարողանում Աստծուն տեսնել։

Գ. Ինձ կասես. «Դու, որ տեսնում ես, նկարագրի՛ր ինձ Աստծու տեսքը»։ Լսի՛ր, բարեկա՛մս, Աստծու տեսքն աննկարագրելի եւ անճառելի է, քանզի տեսանելի չէ մարմնական աչքերին։ Նրա փառքն անսահման է, մեծությունը՝ անբավ, բարձրությունը՝ անհաս, զորությունը՝ անչափ, իմաստությունը՝ անքնին, բարությունը՝ անզուգական, բարերարությունները՝ անասելի։ Արդ, եթե Նրան լույս անվանեմ, ապա բարբառած կլինեմ Նրա արարչագործության մասին. եթե Նրան Խոսք անվանեմ, ապա նկա-

տի ունեցած կլինեմ Նրա տերությունը[5]. եթե Նրան բանականություն անվանեմ, ապա նկատի ունեցած կլինեմ Նրա իմաստությունը. եթե Նրան Հոգի անվանեմ, նկատի ունեցած կլինեմ Նրա շունչը. եթե իմաստություն կոչեմ, նկատի ունեցած կլինեմ այն, ինչ Նա կյանքի է կոչել. կոչեմ ամրություն, Նրա զորության մասին խոսած կլինեմ. ուժ անվանեմ Նրան, Նրա գործունեությունը նկատի ունեցած կլինեմ. Նախախնամություն անվանեմ, Նրա քաղցրությունը նկատի ունեցած կլինեմ. արքայություն անվանեմ, Նրա փառքից խոսած կլինեմ. Տեր անվանեմ, դատավոր անվանած կլինեմ. դատավոր անվանեմ, արդար կոչած կլինեմ. հայր անվանեմ, Նրա սիրուց խոսած կլինեմ. հուր անվանեմ, Նրա ցասումի մասին բարբառած կլինեմ: Ինձ հարց կտաս. «Ուրեմն, Աստված բարկանո՞ւմ է»: Այո՛, բարկանում է նրանց վրա, ովքեր չար են գործում, բայց բարի է, առատաձեռն ու գթասիրտ Իրեն սիրողների եւ Իրենից երկյուղողների նկատմամբ. քանզի Նա բարեպաշտների դաստիարակն ու արդարների հայրն է, բայց եւ՝ ամբարիշտների դատավորն ու պատժողը:

*Դ. Աստված անսկիզբ է, որովհետեւ չի առաջացել, անայլայլելի է, որովհետեւ անմահ է: Նա Աստված (*Θεός*) է կոչվում, որովհետեւ ամեն ինչ Իր զորությամբ է կյանքի կոչել (*διὰ τὸ τεθεικέκι*) եւ* διὰ τὸ θέειν*, իսկ* θέειν *բառը նշանակում է՝ փախչել, շարժել, առաջացնել, անել, կանխատեսել, կառավարել ու ամեն ինչ կենսագործել[6]: Նա Տեր է կոչվում, որովհետեւ իշխում է բոլորին, Հայր, որովհետեւ ամեն ինչից առաջ գոյություն ունի, Հաստիչ եւ Արարիչ, որովհետեւ ամեն ինչի ստեղծողն ու արարողն է, Բարձրյալ, որովհետեւ գերիվեր է ամեն ինչից, Ամենակալ, որովհետեւ կառավարում ու պահպանում է ամեն ինչ: Որովհետեւ ե՛ւ երկինքներն իրենց բարձունքներով, ե՛ւ անդունդներն իրենց խորություններով, ե՛ւ տիեզերքն իր սահմաններով Նրա ձեռքում են, եւ Նրա համար հանգստյան տեղ չկա[7]: Երկինքները Նրա գործն են, երկիրը՝ Նրա արարումը, ծովը՝ Նրա ստեղծագործությունը, մարդը՝ Նրա հաստումն ու նմանությունը, արեգակը, լուսինն ու աստղերը՝ Նրա տարերքը՝ կազմված եղանակների, օրերի եւ տարիների*

---

[5] *Այսինքն՝ Հայր Աստված տիրում է ամենայնի վրա Իր Որդու՝ Բանի միջոցով:*

[6] θεὸς *բառը* τιθέναι*-ից են առաջացած համարում նաեւ Հերոդոտոսը (գր. Բ., գլ. ԾԲ.) եւ Կղեմես Ալեքսանդրացին («Ստրոմատիս», գր. Ա., գլ. ԻԹ.* I, §*182): θέειν բառից են առաջացած համարում այն Սոկրատեսը՝ ըստ Պլատոնի վկայության («Կրատիլոս», գլ. ԺԶ.), ինչպես նաեւ Կղեմես Ալեքսանդրացին («Խրատ ուղղված հույներին», գլ. Բ., §26), Ս. Աթանասը (*de definil*) եւ Գրիգոր Նազիանզացին իր ԼԱ. ճառում:*

[7] *Եսայի ԿՁ. 1, Գործք Է. 49:*

նշանները ցույց տալու համար՝ ի ծառայություն եւ հօգուտ մարդկանց[8]։ Եւ այս ամենն Աստված ստեղծեց անգոյությունից գոյության կոչելով, որպեսզի Իր իսկ գործերից ճանաչվեր եւ ըմբռնվեր Նրա մեծությունը։

Ե. Ինչպես որ մարդու հոգին անիմանալի եւ անտեսանելի է մարդկանց համար, բայց ճանաչվում է մարմնի շարժումների միջոցով, այդպես էլ Աստծուն չի կարելի տեսնել մարդկային աչքերով, բայց մտահայվում ու ճանաչվում է Իր նախախնամությունից եւ գործողություններից։ Արդ, եթե մեկը ծովում նավ տեսներ՝ հանդերձված եւ դեպի ափը նավարկող, անպայման հետեւություն կաներ, որ նավավարը կառավարում է նավի շարժումը. ճիշտ այդպես էլ հարկ է խորհել, որ Աստված աշխարհի կառավարողն է, թեպետեւ Իր անսահմանության մեջ մարմնական աչքերով տեսանելի չէ։ Եթե մարդն անզոր է արեգակին՝ տիեզերքի համեմատությամբ այդ փոքրիկ մարմնին նայել նրա տապի եւ զորության պատճառով, ապա մանավանդ մահկանացու մարդն ինչպե՞ս կկարողանա հայել Աստծու անճառելի փառքը։ Ինչպես նուռը, որ արտաքուստ կեղեւով է պատված, ներսում շատ բջիջներ եւ ամբարներ ունի՝ իրարից բարակ թաղանթներով մեկուսացած, ու նաեւ շատ կորիզներ, այդպես էլ բովանդակ արարչագործությունը պահվում է Աստծու հոգու[9] միջոցով։ Եւ ինչպես նռան հատիկի սերմը՝ նրանում ամփոփված, չի կարող տեսնել այն, ինչ կեղեւից անդին է, այդպես էլ մարդը, որը բովանդակ արարչագործության հետ Աստծու ձեռամբ է պահվում, անկարող է Աստծուն տեսնել։ Եւս մեկ բան. թեեւ բոլորը չէ, որ տեսնում են երկրային թագավորին, բայց ընդունում են նրա լինելությունն ու գիտեն նրան իր օրենքներով, կարգադրություններով, իշխանություններով, զորքերով ու պատկերներով։ Իսկ դու նույն այս եղանակով չես կամենում ճանաչել Աստծուն ըստ Իր գործերի եւ զորությունների[10]։

Զ. Բարեկա՛մս, քննի՛ր Նրա գործերը՝ տարվա եղանակների հաջորդական փոփոխություններն ու օդափոխությունները, աստղերի բարե-

---

[8] *Ծննդ. Ա. 14։*

[9] *Աստ սբ. Թեոփիլոսը խոսում է ոչ թե Սուրբ Հոգու, այլ Աստծու հոգու մասին, որպես աշխարհի հոգու, որն ամեն ինչ կենդանացնում է, սնուցում հողը, ներշնչվում մարդու կողմից (գլ. Է.), որն աշխարհի արարչագործության ժամանակ շրջում էր ջրերի վրա՝ պարգեւելով արարչությանը, ինչպես հոգին մարդուն, ամենուր սփռված լինել (գր. Բ., գլ. Դ, 13)։*

[10] *Սույն տեղին՝ «երկրային թագավորին», Թեոփիլոսի անվամբ մեջբերում է Ս. Հովհաննես Դամասկացին (*Sacr. parall*)։ Նմանօրինակ համեմատություն անում է նաեւ Ս. Իրինեոսը («Ընդդէմ հերձուածողաց», գր. Բ., գլ. Զ.,* II, §2*)։*

վայելուչ շարժումը, ցերեկների եւ գիշերների, ամիսների ու տարիների անընստգյուտ հաջորդականությունը, սերմերի, բույսերի ու պտուղների բազմազան գեղեցկությունը, կենդանիների՝ չորքոտանիների, թռչունների, զեռունների, գետային եւ ծովային ձկների բազմաբնույթ տեսակները, ինչպես նաեւ կենդանիներին տրված բազմանալու եւ իրենց սերունդներին վարժեցնելու բնազդը, այն էլ ոչ թե իրենց իսկ օգտի, այլ որ մարդիկ օգտագործեն, ինչն Աստծու նախախնամությամբ է որպես կերակուր նախատեսված ամենայն մարմնավորի համար, այդ թվում նաեւ՝ հնազանդությունը՝ սահմանված կենդանիների համար մարդկային ցեղի նկատմամբ։ Քննի՛ր նաեւ կարկաչուն վտակների եւ անհատնում գետերի հոսքը, ցողի ու անձրեւների պարբերական տեղումները, երկնային մարմինների բազմազան շարժումը, առավոտյան աստղի՝ կատարյալ լույսի բոլորման նախակարապետի ծագումը, Բազումք (Պլեյադա) եւ Հայկ (Օրիոն) համաստեղությունների միությունը, Արկտուրի եւ մյուս աստղերի շարժումը երկնակամարով մեկ, որոնց բոլորին էլ Աստծու խորախորհուրդ իմաստությունն անուններ է շնորհել[11]։ Եւ այս Մի Աստվածն է արարել լույսը խավարից եւ «շտեմարանները հարավային քամու»[12], անդունդների գանձերը, իսկ ջրերը հավաքել անդունդների գանձերում[13], խավարն էլ՝ իր գանձերում, եւ գանձերից դուրս բերում լույսը՝ հաճելի ու բաղձալի, երկրի ծագերից վեր հանում ամպերն ու բազմապատկում կայծակները հանուն անձրեւի, որոտն ուղարկում է վախի համար եւ կայծակի միջոցով կանխազդարարում որոտի ճայթյունը, ինչ է թե ոչ ոք անսպասելի վախից չմահանա, իսկ երկնքից իջնող կայծակի զորությունն այնպես մեղմում, որ հողերը հրո ճարակ չդառնան, քանզի եթե փայլակն իր ողջ զորությամբ հարվածեր, ապա երկիրը կմոխրանար, իսկ իր կամքին թողնված որոտը ջարդուփշուր կաներ երկրի երեսին ամենայն կանգուն բան։

Է. Իմ այս Աստվածը Տերն է աշխարհի, Որը միայնակ տարածել է երկինքը[14] եւ երկնատակի ընդարձակությունը դրել, Նա, Ով խռովքի է մատնում ծովի խորքը եւ ալիքների ձայնը գրգռում[15], Նա տիրում է ծովի

---

[11] *Սաղմ. ՃԽԶ. 4։*
[12] *Հոբ Թ. 9։*
[13] *Սաղմ. ԼԲ. 7։*
[14] *Հոբ Թ. 8, ԼԸ. 18։*
[15] *Սաղմ. ԿԴ. 7։*

զորություններին եւ նրա ալիքների խռովքը հանդարտեցնում[16], Ով հաստատեց երկիրը ջրերի վրա[17] եւ նրան սնուցող հոգի է տալիս, որի շունչը կենսագործում է ամենայն ինչ, եւ որը եթե չբաշխի, աշխարհը փուլ կգա։ Նրա մասին ես խոսում, ո՜վ մարդ, Նրա շունչը շնչում եւ հենց Նրան էլ չես ճանաչում։ Իսկ դրա պատճառը հոգուդ մթագնումն ու սրտիդ քարացումն են։ Բայց եթե կամենաս, կապաքինվես. հանձնի՛ր քեզ բժշկին, եւ նա կհեռացնի հիվանդությունդ հոգուդ աչքերից եւ սրտից։ Ո՞վ է բժիշկն այդ։ Աստված, Որ Խոսքի եւ իմաստության[18] միջոցով բժշկում ու կենսագործում է։ Աստված Իր խոսքով եւ իմաստությամբ է արարել ամենայնը, քանզի «Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը, եւ Իր Հոգով՝ նրա ողջ զորությունը»[19]։ Գերազանց է Իմաստությունը Նրա. «Աստված իմաստությամբ դրեց երկրի հիմքերը եւ իմացականությամբ հաստատեց երկինքը, Իր հանճարով անդունդներ բացեց, եւ ամպերն անձրեւներ տեղացին»[20]։

Եթե դու, իմ բարեկա՛մ, հասկանում ես այս բանը եւ անարատ, սուրբ ու բարեպաշտ կյանքով ապրում, ապա կարող ես Աստծուն տեսնել։ Նախեւառաջ սրտումդ թող հաստատվեն հավատն ու երկյուղն Աստծու, այդժամ կհասկանաս ասածս։ Երբ անցողիկ բաները մի կողմ թողնես եւ զգեստավորվես անմահով, այդժամ, ինչպես հարկն է, կտեսնես Աստծուն։ Քանզի Աստված անմահ մարմինդ հոգուդ հետ միասին վեր կբարձրացնի, եւ այդժամ, անմահ դառնալով, կտեսնես Անմահին, եթե այսօր իսկ հավատաս Նրան, եւ հենց այդ ժամանակ էլ կհասկանաս, թե որքան անարդար էին խոսքերդ Նրա մասին։

Ը. Դու, սակայն, չես հավատում մեռյալների հարությանը։ Կհավատաս, երբ այն կատարվի, կամա թե ակամա, բայց հավատդ անհավատություն կհամարվի, եթե այսօր իսկ չհավատաս։ Թե՞ չգիտես, որ բոլոր գործերին նախորդում է հավատը[21]։ Ո՞ր հողագործը հունձ կստանա, եթե նախ սերմերը հողին չվստահի։ Ո՞վ կարող է նավարկելով ծովն անցնել, եթե չվստահի նավին ու նավավարին։ Ո՞ր հիվանդը կապաքինվի, եթե

---

[16] *Սաղմ. ՁԸ. 10։*

[17] *Հմմտ. Սաղմ. ԻԳ. 2։*

[18] *Այսինքն՝ Սուրբ Հոգին։*

[19] *Տե՛ս Սաղմ. ԼԲ. 6։*

[20] *Առակ. Գ. 19–20։*

[21] *Հավատի հարցում նմանօրինակ ապացույց օգտագործել են Կղեմես Ալեքսանդրացին («Ստրոմատիս», գր. Բ., գլ. ԻԴ.), Որոգինեսը («Ընդդէմ Կելսոսի». գլ. Ա.), Ս. Կյուրեղ Երուսաղեմցին («Կոչումն ընծայության», գլ. Ե.) եւ այլք։*

նախ բժշկին չհավատա։ Ինչ արվեստ եւ գիտություն կարելի է ուսումնասիրել, եթե մեզ վստահելով չհանձնենք ուսուցչին։ Այսպես՝ մշակը վստահում է հողին, նավաստին՝ նավին, իսկ հիվանդը՝ բժշկին, իսկ դու չես կամենում հավատալ Աստծուն՝ Նրանից այդքան առհավատչյաներ ունենալով։ Առաջին՝ այն, որ Նա քեզ անգոյությունից գոյության է կանչել, այսինքն՝ արարել է քեզ։ Արդ, եթե դու հայր եւ մայր չունենայիր, ապա առավել եւս գոյություն չէիր ունենա։ Իսկ Նա քեզ ստեղծել է ոչ մեծ խոնավ գոյացությունից եւ փոքրիկ կաթիլից, որն ինքնին երբեք գոյություն չի ունեցել. Աստված է քեզ կյանքի կոչել։ Իսկ դու հավատում ես, որ մարդկանց ձեռամբ կերտված արձաններն աստվածներ են եւ հրաշք են իրագործում։ Բայց չես հավատում, որ քեզ արարող Աստված կարող է երբեւէ քեզ վերաստեղծել։

Թ. Դարձյալ, աստվածների անունները, որոնց դու, ինչպես ասում ես, պաշտում ես, ոչ այլ ինչ են, քան մարդկանց անուններ։ Ո՞վքեր են դրանք եւ ինչպիսի՞ն են եղել։ Արդյոք Կրոնոսն իր երեխաներին սպանողն ու ուտողը չէ՞ր։ Իսկ թե մատնացույց անես Զեւսին՝ նրա որդուն, ապա ուշիուշով քննի՛ր նրա գործերն ու կենսակերպը։ Նախեւառաջ նրան Իդիս լեռան վրա դաստիարակել է այծը, եւ, ինչպես պատմում են առասպելները, Զեւսը սատկեցրել է նրան եւ այծենուց իր համար հագուստ պատրաստել։ Իսկ նրա այլ գործերի մասին, ինչպիսիք են արյունապղծությունը, շնությունը, ամոթալի արարքները, ավելի լավ պատմում են Հոմերոսն ու մյուս բանաստեղծները։ Կարիք կա՞ ցույց տալու նրա որդիներին, օրինակ՝ Հերակլեսին, որն ինքն իրեն կրակի էր մատնել, Դիոնիսոսին՝ հարբեցողին ու անսանձին, Ապոլլոնին՝ վախից Աքիլլեսից փախչողին, Դափնեին սիրահարվածին եւ Հակինթի (Հիացինտի) մահվան մասին ոչինչ չիմացողին[22], վիրավոր Վեներային, մարդկանց կործանող Արեսին եւ մանավանդ այսպես կոչված աստվածներից հոսող արյունը։ Եւ սա տակավին անհամեմատ նվազ կարեւոր է այն բանից, ինչ հիշում ենք Օսիրիս[23] հորջորջված բզկտված դիքի[24] մասին, որի պատվին՝ իբրեւ մահա-

---

[22] *Զնայած այն բանին, որ Ապոլլոնը պաշտվում էր իբրեւ մարգարե (տե՛ս* Տ Ա Տ Ի Ա Ն Ո Ս*, Ընդդեմ հույների, գլ. Ը.,* Ա Թ Ե Ն Ա Գ Ո Ր Ա Ս Ա Թ Ե Ն Ա Ց Ի*, Միջնորդություն քրիստոնյաների համար, գլ. ԻԲ.)։*

[23]* Osiris — *Մեռնող եւ հարություն առնող բնության հին եգիպտական աստվածություն, որին հույները նույնացնում էին Դիոնիսոսի հետ, իսկ նրա քույր եւ կին Իսիսին՝ Դեմետրայի հետ։*

[24] *Տե՛ս* Ա Թ Ե Ն Ա Գ Ո Ր Ա Ս Ա Թ Ե Ն Ա Ց Ի*, Միջնորդություն, գլ. ԻԲ.։*

ցող, մաս-մաս գտնվող աստվածության, ամեն տարի տոներ էին կատարվում, որովհետեւ անհայտ էր մնում՝ մահացել էր, թե՞ ոչ, եւ չէր էլ երեւում՝ գտնվել է, թե՞ ոչ։ Կարիք կա՞, որ խոսեմ ամորձատված Ատտիսից կամ Ադոնիսից, որը թափառում էր անտառում, զբաղվում որսորդությամբ, եւ որը վիրավորվել էր վարազից։ Արժե՞ խոսել շանթահարված Ասկլեպիոսից կամ էլ Սինոպեից, Ալեքսանդրիա փախած Սերապիսից, Սկյության Արտեմիսից՝ նույնպես փախուստի դիմածից, մարդասպանից, որսորդուհուց եւ պատանի Էնդիմիոնին սիրահարվածից։ Սրանք իմ խոսքերը չեն. սրանց մասին են պատմում ձեր պատմիչներն ու բանաստեղծները։

Ժ. Անիմաստ է հիշատակել եգիպտացիների պաշտած բազմաթիվ կենդանիներին՝ գեռուններին, անասուններին, գազաններին, թռչուններին, գետային կենդանիներին, անգամ կոնքերն ու ամոթալի ձայները[25]։ Եթե մատնացույց անես հելլեններին եւ այլ ժողովուրդների, ապա նրանք պաշտում են քարեր, ծառեր եւ նյութական այլ իրեր, եւ ինչպես արդեն ասել եմ, մեռյալների պատկերներ։ Հայտնի է, որ Ֆիդիասը Պիզայում կերտել էր օլիմպիական Զեւսին իլիոնացիների համար, իսկ աթենացիների համար Ակրոպոլիսում՝ Աթենասին։ Կամենում եմ, իմ բարեկա՛մ, քեզ հարցնել, թե քանի Զեւս կա։ Նախեւառաջ՝ Զեւս Օլիմպիացի, ապա Զեւս Լատիարցի, Զեւս Կասսկիցի, Զեւս Կարիացի, Զեւս Պրոպատոր, Զեւս Պաննիխացի, Զեւս Պոլիուխոս եւ Զեւս Կապիտոլացի։ Կրոնոսի որդի Զեւսը, որ կրետացիների թագավորն է եղել, թաղված է Կրետեում, իսկ այլք գուցեեւ չեն արժանացել թաղման։ Եթե հիշատակես այսպես կոչված աստվածությունների մորը, ապա շուրթերս թող չարտաբերեն նրա գործերը (քանզի մեզ համար վայելուչ չէ դրանց մասին խոսելը) կամ էլ նրան պաշտող սպասավորների արարքները[26], եւ թե որքան եկամուտ ու հարկ են թագավորին մատուցում նաեւ նրա որդիները[27]։ Բանն այն է, որ դրանք աստվածություններ չեն, այլ կուռքեր են, ինչպես եւ առաջ էի ասել[28], դրանք «ձեռքի գործն են մարդկանց եւ պիղծ դեւեր են... Նրանց նման կլինեն դրանք ստեղծողները եւ բոլոր նրանք, որ իրենց հույսը դնում են դրանց վրա»[29]։

---

[25] *Հերոդոտոսը (գր. Բ., գլ. 172) խոսում է Ամասիսից, որն իբրեւ թե կոնքից՝ տաշտից, կուռք էր պատրաստել (տե՛ս* Աթենագորաս Աթենացի, *Միջնորդություն, գլ. ԻԶ.,* Մինուկոս Ֆելիքս, *Օկտավիոս, գլ. ԻԳ., §9)։*

[26] *Նկատի ունի Կիբելային եւ նրա քրմեր կորիբանտներին։*

[27] *Տե՛ս* Տերտուղիանոս, *Ընդդեմ հերետիկոսաց, գր. Ա., գլ. Ժ., Ջատագովություն, գլ. ԺԳ.։*

[28] *Տե՛ս գլ. Ա.։*

[29] *Սաղմ. ՃԺԳ. 12, ՃԼԴ. 15, 18, ՂԶ. 7։*

ԺԱ. *Այդ իսկ պատճառով ավելի շուտ թագավորի կպատվեմ, քան ձեր դիքերին*[30], *կպատվեմ առանց նրան պաշտելու, այլ աղոթելով նրա համար։ Ես պաշտում եմ Աստծուն, Որն իրավամբ էլ ճշմարիտ Աստված է՝ իմանալով, որ թագավորը Նրանից է կարգված։ Ինձ հարց կտաս՝ ինչո՞ւ թագավորին չես երկրպագում։ Այն բանի համար, որ նա չի ստեղծվել, որ իրեն պաշտեն, այլ որպեսզի իրեն օրինավոր պատիվ մատուցվի։ Նա Աստված չէ, այլ մարդ է՝ Աստծուց կարգված ոչ թե այն բանի համար, որ իրեն պաշտեն, այլ որպեսզի արդար դատի։ Քանզի ինչ-որ առումով Աստծուց է նրան վստահելով հանձնված կառավարումը. եւ ինչպես որ նա իրենից ստորադաս որեւէ մեկին թույլ չի տա թագավոր կոչվել,— որովհետեւ թագավոր անունը նրան է պատկանում, եւ մեկ ուրիշին թույլատրված չէ այդ անունով կոչվել,— այդպես էլ, բացի Մի Աստծուց, պաշտամունքը մեկ ուրիշի չի պատկանում։ Այնպես որ, իմ բարեկա՛մ, բոլոր հարցերում էլ մոլորված ես։ Իսկ թագավորին պատվի՛ր բարեհաճությամբ առ նա, հնազանդությամբ եւ նրա համար աղոթելով։ Այդպես վարվելով՝ Աստծու կամքը կատարած կլինես։ Քանզի Աստծու օրենքն ասում է. «Որդյա՛կ, պատվի՛ր Աստծուն ու թագավորին ու նրանցից ոչ մեկի դեմ մի՛ ապստամբիր, որովհետեւ հանկարծակի վրեժխնդիր կլինեն իրենց թշնամիներից»*[31]։

ԺԲ. *Ինչ վերաբերում է ինձ եւ իմ քրիստոնյա անվանն ուղղված քո ծաղրուծանակին, ապա չգիտես, թե ինչ ես ասում։ Առաջին՝ այն, ինչ օծված է, հաճելի է, օգտակար եւ չպիտի ծաղրուծանակի ենթարկվի։ Արդ, այդ ո՞ր նավը պիտանի եւ ամրակուռ կարող է լինել, եթե նախապես չօծվի։ Կամ ո՞ր աշտարակն ու տունը կարող էին գեղեցիկ եւ հարմարավետ լինել, եթե չօծվեին։ Այդ ո՞վ է որ այս կյանքի շեմը հատելիս կամ մարզարան մտնելիս չի օծվի։ Այդ ո՞ր պաճուճանքը կամ զարդը բարետես կլինեն, եթե չօծվեն ու չփայլեցվեն։ Երկրորդ՝ ինչ-որ առումով օդն ու ողջ երկնատակն օծվում են լույս ու շնչով։ Իսկ դու Աստծու ձիթայուղով օծվել չե՞ս ուզում։ Մենք հենց այն բանի համար ենք քրիստոնյաներ կոչվում, որ օծվում ենք Աստծու ձիթայուղով*[32]։

---

[30] *Խոսքը թագավորին հարկեր վճարողների մասին է։ Նման բան ասում է Տերտուղիանոսը. «Դուք ավելի շատ վախենում եք ու դողում կեսարից, քան օլիմպիական Յուպիտերից, եւ դա արդարացի է։ Քանզի ողջերից ո՞վ է, որ մեռյալներից ավելի զորավոր չէ» («Ջատագովություն», գլ. ԻԸ.)։*

[31] *Առակ. ԻԴ. 21–22։*

[32] *Աստ Ս. Թեոփիլոսը, ինչպես եւ Տերտուղիանոսը («Ջատագովություն», գլ. Գ., «Մկրտության մասին», գլ. Է., «Ընդդեմ Մարկիոնի», Ա. 14, «Հարության մասին», գլ. Ը.),*

ԺԳ. Դու նաեւ մերժում ես մեռյալների հարութիւնն ու ասում՝ ցույց տուր ինձ հարութիւն առածներից գեթ մեկին, որ տեսնեմ ու հավատամ։ Բայց նախ՝ ինչ մեծ բան կա իրողությունը տեսնելով հավատալու մեջ։ Երկրորդ՝ չէ՞ որ հավատում ես, որ Հերակլեսն ինքն իրեն այրել է եւ տակավին կենդանի է, որ Ասկլիպիոսը շանթահարվել ու հարություն է առել։ Սակայն չես հավատում Աստծու ասածին։ Գուցեեւ կարողանայի քեզ ցույց տալ մեռյալի, որը հարություն է առել եւ դեռ ողջ է, բայց դու դրան էլ չես հավատա։ Աստված բազում ապացույցներ է ներկայացնում քեզ՝ Իրեն հավատալու տրամադրող։ Իսկ թե հաճո է քեզ, ուշադրությո՛ւն դարձրու տարվա եղանակների, ցերեկների ու գիշերների ավարտին. ինչպես են դրանք ավարտվում եւ վերստին սկսվում[33]։ Մի՞թե նույնպես սերմերի եւ կորիզների հարություն չի լինում՝ հօգուտ մարդկանց։ Քանզի, օրինակ, երբ հողի մեջ ցորենի հատիկ կամ այլ սերմեր են գցվում, դրանք նախ մեռնում ու քայքայվում են, ապա նոր ծլում-աճում ու հասկ դառնում։ Արդյոք, Աստծու կամոք, ծառեր չե՞ն դառնում որոշակի ժամանակներում պտուղները՝ նախապես ծածուկ ու աներեւույթ։ Ապա՝ երբեմն ճնճղուկը կամ մի այլ թռչուն, խնձորի, թզի կամ մեկ այլ պտղի կորիզ կուլ տալով եւ թռչել-հասնելով մի ինչ-որ ապառաժ բլրի կամ գերեզմանի, այդտեղ էլ իր ստամոքսից դուրս է հանում սերմը, որը ծլելով-արմատակալելով՝ ծառ է դառնում, թեպետ լինելով ստամոքսի մեջ՝ ենթարկվում է ուժեղ ջերմության։ Այս ամենը կատարվում է Աստծու իմաստությամբ այն նպատակով, որ այլեւս ապացուցի, որ Ինքն ի զորու է բոլոր մարդկանց հարություն տալու։ Եթե կամենում ես, հապացույց հարության, ավելի զարմանահրաշ երեւույթ տեսնել ոչ միայն երկրային, այլեւ երկնային մարմինների օրինակով, ապա պատկերացրու լուսնի ամենամսյա հարությունը՝ նրա նվազումը, անհետացումն ու բոլորումը։ Բարեկա՛մս, խելամո՛ւտ եղիր հարության էությանը, որ կատարվում է քո մեջ, թեպետ այդ մասին ոչինչ էլ չես կռահում։ Թերեւս ինչ-որ հիվանդությամբ պա-

---

«քրիստոնյա» բառն ածանցում են մկրտության ժամանակ ձիթայուղով օծությունից, բայց իրականում այս բառը ծագում է նախեւառաջ Քրիստոսից՝ Օծյալից, ինչպես դա ընդունում են եկեղեցական մատենագիրները, օրինակ՝ Տերտուղիանոսը («Ընդդեմ Մարկիոնի», Դ. 14), որն ասում է, որ քրիստոնյաների անունը ծագում է Քրիստոսից։

[33] Նույն բանն են ասում նաեւ Կղեմես Հռոմեացին իր «Առ Կորնթացիս» երկում, Տերտուղիանոսը «Ջատագովություն», գլ. ԽՀ., «Հարության մասին», գլ. ԺԲ., Մինուկոս Ֆելիքսը «Օկտավիոս», գլ. ԼԴ. եւ Կյուրեղ Երուսաղեմացին իր «Կոչումն ընծայության» մեջ, գլ. ԺՀ.։

տուհասված լինես եւ մարմնիդ հաղթանդամությունը, ամրությունն ու գեղեցկությունը կորցրած, բայց Աստծուց ողորմության արժանանալով եւ ապաքինում ստանալով՝ կրկին վերադարձրած լինես մարմնիդ առողջությունը, գեղեցկությունն ու ուժը. եւ ինչպես որ չգիտեիր, թե այդ ինչ եղավ անհետացած առողջությանդ հետ, այդպես էլ չգիտես՝ որտեղից ի հայտ եկավ եւ վերադարձավ։ Կասես՝ արյան վերածված սննդից եւ հյութերից։ Լավ, բայց դա էլ Աստծու ձեռքի գործն է եւ ոչ մեկ ուրիշի։

ԺԴ. Այսպես ուրեմն, անհավատ մի՛ եղիր, այլ հավատա՛։ Ես նույնպես առաջ չէի հավատում, որ դա լինելու է, իսկ հիմա հավատում եմ այն բանից հետո, երբ ըմբռնեցի այդ ապացույցներն ու ընթերցեցի սրբազան գրվածքները բոլոր սուրբ մարգարեների, որոնք Սուրբ Հոգու ներշնչանքով տեսել էին եւ անցյալը, ինչպես որ կատարվել էր, եւ ներկան, այնպես, ինչպես որ կատարվում է, եւ կանխասել ապագան այն ձեւով, ինչպես որ կատարվելու է։ Այսպիսով՝ համոզվելով նախապես կանխասածի համաձայն կատարվածում՝ անհավատության մեջ չեմ հարատեւում, այլ հավատում եմ՝ Աստծուն հնազանդվելով։ Եթե կամենում ես՝ դու էլ Նրան հնազանդվի՛ր եւ հավատա՛, որպեսզի, եթե Նրան հիմա չհավատաս, ստիպված չհավատաս այնժամ, երբ հավերժական տառապանքների մատնված կլինես։ Այս պատիժների մասին նախապես հայտնել էին մարգարեները, իսկ նրանցից հետո ասպարեզ իջած մեր բանաստեղծներն ու իմաստասերները սրբազան գրքերից գողացան դրանց մասին ուսմունքը, որպեսզի իրենց կարծիքներին հավաստիություն հաղորդեն[34]*։*

Հենց իրենք էլ մարգարեանում էին ամբարիշտներին ու անհավատներին պատուհասող պատիժների մասին, որպեսզի դրանք հայտնի լինեին բոլորին, եւ ոմանք չկարողանային ասել՝ մենք չէինք լսել եւ չգիտեինք։ Եթե կամենում ես, դու էլ խնամքով ընթերցիր մարգարեական գրքերը, եւ դրանք ամենահուսալի եղանակով քեզ կբերեն առ այն, որ խուսափես հավիտենական չարչարանքներից եւ Աստծու հավիտենական բարիքներին արժանանաս։ Քանզի «Նա, Ով բերան է տվել՝ խոսելու համար, ականջներ՝ լսելու համար, եւ աչքեր՝ տեսնելու համար»[35]*, կքննի ամեն ինչ եւ արդար դատաստան կտեսնի՝ յուրաքանչյուրին իր գործե-*

---

[34] *Այս տեսակետին էին հարում քրիստոնյա գրեթե բոլոր մատենագիրները, տե՛ս* ՀՈՒՍՏԻՆՈՍ ՎԿԱ, *Ա. Ջատագովություն, գլ. ԽԴ., Առ հելլենս, գլ. ԺԴ.–ԺԹ.,* ՏԱՏԻԱՆՈՍ, *Ընդդեմ հույների, գլ. Խ.,* ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ԱԹԵՆԱՑԻ, *Մեռելների հարության մասին, գլ. Թ.։*

[35] *Հմմտ. Ելք Դ. 11, Սաղմ. ՂԳ. 9։*

րի համեմատ հատուցելով։ Իսկ նրանց, ովքեր հանապազ բարի գործերով անապականություն են փնտրում, կշռնրհվի հավիտենական կյանք, ուրախություն, խաղաղություն, հանգստություն եւ բազում բարիքներ, «որոնց ո՛չ աչքն է տեսել, ո՛չ ականջը լսել, եւ որոնք մարդու սիրտը չեն ընկել»[36], իսկ նրանց, ովքեր անհավատ են, արհամարհում ու չեն հնազանդվում ճշմարտությանը, բայց հնազանդվում են ստին, քանի որ համակված են անառակությամբ, շնությամբ, ամոթալի գործերով, նյութապաշտությամբ եւ կռապաշտությամբ, բաժինը ցասումն ու սրտմտությունը, վիշտն ու անձկությունը կլինեն, եւ վերջապես՝ հավերժական կրակը։ Քանի որ դու, իմ բարեկա՛մ, ասացիր՝ ցո՛ւյց տուր ինձ քո Աստծուն, ահա եւ ես քեզ ցույց տվեցի իմ Աստծու որպիսությունը եւ քեզ խորհուրդ կտայի վախենալ Նրանից ու հավատալ Նրան։

Շարունակելի

Ռուսերենից թարգմանեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ

[36] *Հմմտ. Ա. Կորնթ. Բ. 9։*

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՅԵՑԻ

ՔԱՐՈՉ «ԵԹԷ ԿՈՅՐ ԸԼԼԱՅԻՔ՝ ՄԵՂՔ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅԻՔ»[1] ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ

Հարցական է, թէ միտքին կուրութիւնը պատճառ է մեղքերը փոքրացնելուն։ Երեւի թէ ո՛չ։

Նախ՝ պատճառ է, որովհետեւ ով որ մեղքը կը կրկնէ, չի՛ փոքրացներ [զայն], իսկ միտքին կուրութիւնը կը կրկնէ մեղքը, քանի որ կուրութիւնը ինքնըստինքեան մեղք է, իսկ մեղքը, որ կուրութեամբ կը գործէ, այդ եւս մեղք է, ապա ուրեմն՝ կրկին մեղք է անգիտութիւնը, հետեւաբար՝ չի՛ փոքրացներ մեղքերը։

Երկրորդ, պատճառ է այն բանին համար, քանի որ պատիժը կրկին է, մեղքերը չի՛ փոքրացներ, այլ՝ կը ծանրացնէ։ Իսկ միտքի կուրութեան համար՝ պատիժը կը կրկնապատկուի, ինչպէս Արիստոտէլը կ՚ըսէ, թէ արբեցողները արժանի են կրկնապատիկ պատիժի, ապա ուրեմն՝ միտքի կուրութիւնը չի՛ փոքրացներ մեղքերը։

Սակայն հակառակ է Քրիստոսի խօսքին, որովհետեւ կ՚ըսէ թէ՝ «եթէ կոյր ըլլայիք՝ մեղք պիտի չունենայիք»[2]։ *Տարակուսանքը լուծելու համար երեք բան պէտք է։*

Նախ՝ թէ ինչ է միտքի կուրութիւնը։

Երկրորդ՝ թէ ինչպիսի՞ մեղքերը կը փոքրացնէ։

Երրորդ՝ թէ ինչպէ՞ս կը փոքրացնէ։

Առաջինին համար գիտելի է, թէ կուրութիւնը միայն տեսանելիներուն բացասութիւնը չէ, որովհետեւ քարն ալ տեսանելիներու բացասութիւն ունի, սակայն կոյր չըսուիր։ Այլ՝ կուրութիւն է տեսանելիներուն պակասութիւնը՝ պատշաճաւոր ենթականերուն եւ դիպաւոր ժամանակներուն։ Որովհետեւ եթէ ենթակայ մը, որ պատշաճ է տեսանելի ունենալ որոշ ժամանակի մը համար, եթէ չունենայ, այդ ժամանակ կոյր կ՚ըսուի, ինչպէս մարդ մը, որ կուրցած ըլլայ, կոյր կ՚ըսուի, որով-

---

[1] *Յովհ. Թ. 41։*

[2] *Անդ՝ նոյն։*

հետեւ կոյր ենթական, որ տեսանելիներ ունէր եւ հիմա չունի, կոյր կ՚ըսուի։ Իսկ եթէ պատշաճ չէր տեսանելիներ ունենալ, այդպիսին կոյր չըսուիր, ինչպէս ծառ մը, որովհետեւ պատշաճ չէ որ աչք ունենայ, կոյր չըսուիր։ Եւ դարձեալ, եթէ պատշաճ է ունենալ, սակայն ժամանակը չէ տեսանելիներ ունենալու, այդ ատեն եւս կոյր չըսուիր, ինչպէս շան կորիւնը նախքան ինն օր[ական դառնալը] չի՛ տեսներ, [սակայն] կոյր չըսուիր։ Այսպէս ալ հոգեւորապէս միտքի կուրութիւնը ո՛չ միայն գիտութեան բացասութիւն է, այլ՝ գիտութեան բացասութիւն է, եւ պատշաճաւոր մարդուն վրայ՝ յարմար ժամանակին։ Որովհետեւ բոլորը պարտաւոր չեն նոյն բանը իմանալ եւ ո՛չ ալ նոյն ժամանակին, քանի որ աւելի պատշաճ է քահանային գիտութիւնը, քան՝ աշխարհականինը, ծերինը՝ քան տղայինը։ Այդ պատճառով, եթէ մէկը չի գիտեր ինչ որ պէտք է գիտնալ եւ այն ժամանակին որ պէտք է գիտնալ, այդպիսին միտքի կուրութիւն ունի։ Բայց եթէ մէկը չի՛ գիտեր այն, ինչ որ պէտք չէ եւ անհրաժեշտ չէ գիտնալ, այդ ատեն այդպիսին կոյր չըսուիր։ Եւ դարձեալ, եթէ նախքան գիտնալու ժամանակը չի գիտեր, կոյր չըսուիր։

Երկրորդին համար գիտելի է, թէ միտքի կուրութիւնը երեք կերպով կարելի է համեմատել մեղքի գործերուն հետ, այսինքն՝ նախկինաբար, կցորդաբար եւ յաջորդաբար։

Միտքի կուրութիւնը յաջորդաբար կը համեմատուի մեղքերու հետ, երբ մէկը կամովին եւ հաւանումով կպչի մեղքերուն, մինչ որովհետեւ չի կամենար գիտնալ ապաշխարութիւնը, որ կրնայ զինք պահել եւ փրկել մեղքերէն եւ այդպէս կը կամենայ չգիտնալ այսպիսի բան, որպէսզի ազատաբար մեղանչէ։ Այդ պատճառով անգիտութիւն կ՚ըսուի մեղքերուն հետեւիլը, քանի որ մեղքերուն համար կը կամենայ զայն ունենալ, եւ նմանօրինակ մեղքը փոքր չի՛ ցուցուիր այս կուրութեան համար, այլ՝ առաւել ծանր, որովհետեւ իր միտքին մէջ մեծապէս հաճած է մեղքերուն։

Իսկ միտքի կցորդաբար կուրութիւնը մեղքերուն կը համեմատուի, երբ մէկը անգիտակցաբար մեղանչէ, սակայն այնպիսի կամքով, որ եթէ գիտնար, դարձեալ կը գործէր։ Օրինակի համար, եթէ մէկը մարդու մը զարնէ, կարծելով թէ շուն է. արդ, եթէ գիտնար ալ որ շուն չէ, այլ՝ մարդ, դարձեալ կը զարնէր, եւ այսպիսի միտքի կուրութիւնը ո՛չ կը փոքրացնէ եւ ոչ կը մեծցնէ մեղքը, քանի որ մեղքերուն պատճառ չէ, այլ՝ միայն

կցորդ է մեղքերուն, եւ որովհետեւ այդպիսին անգիտութեամբ չի՛ մեղանչեր, թէեւ անգիտութեան հետ կը մեղանչէ։

Դարձեալ՝ անգիտութեամբ, նախկինաբարը մեղքերուն հետ կը համեմատուի, երբ մեղքերուն գործը պատճառ է, այսինքն՝ մարդուն անգիտութեան պատճառով կը մեղանչէ՝ կարծելով, թէ ինչ որ կ՚ընէ մեղք չէ, եւ եթէ գիտնար թէ մեղք է, չէր գործեր։ Եւ այդպիսով միտքի կուրութեամբ կը մեղանչէ, եւ այսպիսով մեղքը փոքր է։

Երրորդին համար գիտելի է, թէ միտքի կուրութիւնը կամ անգիտութիւնը, որ մեղքերուն պատճառն է, կրկին կերպով կրնայ ըլլալ։

Նախ՝ մարդուն թանձրամտութեան պատճառով, երբ միտքը այնքան կոյր եւ յամր կ՚ըլլայ, որ ուսանելու հնարաւորութիւն չըլլար, այդ ատեն մեղք չըսուիր։ Օրինակի համար, եթէ մէկը ի ծննդենէ յիմար է եւ դեղով չի՛ բժշկուիր, այդպիսիին մեղքը մեղք չի՛ համարուիր իր համար։

Երկրորդ՝ իսկութեամբ անգիտութիւն կ՚ըլլայ՝ ծուլնալու գիտնալու այն. աշխատանքի նկատմամբ երկիւղէն չի՛ կամենար աշակերտ ըլլալ եւ այդ պատճառով տգէտ կ՚ըլլայ։ Այսպիսի անգիտութիւնը քիչ մը կը փոքրացնէ մեղքերը, սակայն այնպէս չընէր ընդհանրապէս, որ մեղք չըլլայ, քանի որ այդ անգիտութիւնը ակամայ չէ, այլ՝ կամովին։ Իսկ յիմարին անգիտութիւնը ակամայ է։ Այդ պատճառով մեղք չունի։

Առաջին տարակոյսին մասին կ՚ըսուի, թէ մեղքերու կրկնութիւնը միշտ մեծագոյն ծանրութիւն չունի, որովհետեւ կը պատահի, որ երկու մեղք եղելութիւններէն ետք այնպէս ծանր չեն ըլլար, ինչպէս մէկը։ Օրինակի համար, երբ զգաստ մարդ մը՝ մարդ կը սպաննէ, փոքր չէ, ինչպէս երբ արբեցածը կը սպաննէ, եւ զգաստին մարդասպանութիւնը ըստ ինքեան ծանր է քան երկրորդ մեղքը, որ արբեցութիւն է, եւ մարդասպանութիւն, որովհետեւ արբեցութիւնը առաջինը կը թեւթեւցնէ։ Իսկ եթէ ըսես՝ ինչպէ՞ս կը թեթեւցնէ. կ՚ըսեմ, ինչպէս հաւին երկու թեւերը բնական հաւը կը թեթեւցնեն, թէեւ ինք ծանր է։

Երկրորդին մասին կ՚ըսուի, որ թէեւ արբած մարդը երբ մեղանչէ, արժանի է կրկին պատիժի, ապա արբածինը երկու պատիժ է, այնպէս չէ, ինչպէս զգաստին մէկ հատը, որ աւելի ծանր է, քան անորը։

Իսկ այստեղ գիտելի է, թէ երբ մարդ կը մեղանչէ, իր պակասութիւնը չի գիտեր, չի՛ դառնար կամ տակաւին չէ գործած, եթէ մեղքերուն պակասութիւնը չի՛ գիտեր՝ փութով մեղքի մէջ կ՚իյնայ։ Օրինակի համար, եթէ մէկու մը ըսածը, թէ այսինչ բանը պիտի ընենք քեզի հետ, այսինքն՝ կամ

վաղը գլուխդ պիտի կտրենք կամ անդամներէդ մէկը, որ լսելով ոսկորները կը սոսկան, եւ հնարք կը փնտռէ զերծ մնալու։ Իսկ եթէ չըսեն մինչեւ կտրելու ժամին հասնիլը, դժուարութեամբ զերծ կը մնայ պատուհասէն, այդպէս ալ պէտք է տեսնել մեղքի պարագան։

Այդ պատճառով հարկ է մեզի ցուցնել, թէ ինչ կը պակսի մեզմէ, երբ մեղքի մէջ կ'իյնանք, ինչպէս կ'ըսէ Սքանչելին՝ Գրիգոր Նարեկացին. «Որ իմանալով՝ հեռո՛ւ մնացէք մեղքերէն»[3]։

Առաջին պակասութիւնը այն է, որ Աստուծոյ Արքայութենէն կը զրկուինք, երբ մեղքի մէջ կ'իյնանք, ըստ այնմ. «Տէ՛ր, Տէ՛ր, բաց մեզի»[4]։ *Կ'ըսէ.* «Հեռացէ՛ք Ինձմէ, որովհետեւ ձեզ չեմ ճանչնար»[5], *եւ ասիկա տեղին ցուցումը ունի։*

Երկրորդ, քանի որ աստուածային փառքէն, որ Տէրը արդարներուն կու տայ, թափուր կը մնանք, ըստ այնմ. «Կապեցէ՛ք ատոր ձեռքերն ու ոտքերը...»[6], *եւ ասիկա պատիւին ցուցումը ունի։*

Երրորդ, որովհետեւ մահուամբ կը գրաւուինք եւ անմահական կեանքէն հեռացած կը մնանք, ըստ որում Ադամին մեղանչելէն ետք, ըսաւ. «Որովհետեւ [քեզի թելադրածս] չպահեցիր, հող էիր եւ հողին պիտի դառնաս»[7]։ *Նոյնը մեզի ալ կը պատահի, երբ մեղքերու գործին մէջ կը գտնուինք։*

Չորրորդ, քանի որ հրեշտակներուն պարակից ըլլալէն կը զատուինք եւ սատանային երգակից կ'ըլլանք, ըստ այնմ. «Յաւիտենական տանջանքին, որ սատանային ու անոր հրեշտակներուն համար պատրաստուած է»[8]։

Հինգերորդ, որովհետեւ մեր բնութենակիցներէն անոնք որոնք Աստուծոյ հաճոյացած են, այսինքն՝ արդարներէն, անոնցմէ կը ճեղքուինք ու կը հեռանանք անոնց փառքէն, ըստ այնմ. «Արդարները յաւիտենական կեանք պիտի երթան, իսկ մեղաւորները՝ տանջանքներու»[9]։

Վեցերորդ, քանի որ Գլուխէն, որուն հաւատքով պատուաստուած ենք, այսինքն՝ Քրիստոսէ, Անորմէ զատուելով կը հեռանանք՝ երբ մեղան-

---

[3] Սուրբ Գրիգոր Նարեկացի *(951–1003 թթ.), Հայ Եկեղեցւոյ հրեշտակային Վարդապետը եւ Հայ ժողովուրդին մեծանուն եւ սիրելի Սուրբը։*

[4] *Ղուկ. ԺԳ. 25։*

[5] *Տե՛ս Մատթ. է. 23։*

[6] *Մատթ. ԻԲ. 13։*

[7] *Հմմտ. Ծննդ. Գ. 19։*

[8] *Մատթ. ԻԵ. 41։*

[9] *Հմմտ. Մատթ. ԻԵ. 46։*

չենք, ըստ այնմ. «Եթէ մէկը բարի գործերով Ինծի հաստատուած չէ, այդպիսին դուրս պիտի ելլէ, ինչպէս ուտ մը»[10], *եւ թէ՝* «ով որ բարի պտուղ չի՛ տար, կը կտրուի եւ կրակ կը նետուի»[11]։

Եօթներորդ, որովհետեւ մեղք գործելով՝ հոգիով ու մարմինով կը գօսանայ, ըստ որում Տէրը անիծեց թզենին՝ եւ գօսացաւ[12]*, օրինակ ըլլալով մեղաւորներուս, որ անպտուղ ենք Քրիստոսի վայելումէն։*

Ութերորդ, քանի որ բարի գործերը հոգիին ծաղիկներն են, միաժամանակ սակայն կը թառամին՝ մեղք գործելով, ըստ այնմ, որու մասին Մարգարէն կ՚ըսէ. «Ծաղիկը ցամքեցաւ [թառամեցաւ]…»[13], *եւ թէ՝* «ծառերը չորցան, տերեւները թօթափեցան, արեւները խաւարեցան»[14]։

Իններորդ, որովհետեւ մինչ տակաւին բարիին մէջ ենք, Տէրը կ՚ըսէ՝ «Ես անոր մէջ կը բնակիմ, եւ ան՝ Իմ մէջս»[15], *եւ թէ՝* «Ես եւ Հայրը անոր մօտ պիտի գանք ու օթեւանինք»[16]։ *Իսկ երբ չարիք կը գործենք, կ՚ըսէ.* «Խօսքը, որ ես խօսեցայ, այն պիտի դատէ զինք վերջին օրը»[17], *եւ թէ՝* «ան որ զիս եւ Իմ խօսքերս ամօթ նկատէ, Մարդու Որդին ալ ամօթ պիտի նկատէ զինք»[18]։

Տասներորդ, քանի որ մինչ տակաւին բարիին մէջ ենք, Աստուծոյ ձեռքին մէջ ենք՝ ըստ այնմ. «Արդարներուն հոգիները Աստուծոյ ձեռքին մէջ են, եւ չարը անոնց չի մօտենար»[19]։ *Իսկ մեղանչելու պարագային, կ՚ըսէ.* «Հեռո՛ւ գացէք ինձմէ, անիծուածներ, դէպի կրակը»[20]։

Տասնմէկերորդ, որովհետեւ երբ տակաւին բարիին մէջ ենք, զԱստուած Հայր կը կոչենք եւ որդիներ կ՚անուանուինք, ըստ այնմ. «Հայր մեր, որ երկինքի մէջ ես»[21], *եւ թէ՝* «Իմ փոքրիկ որդիներ…»[22]։ *Իսկ չարիք գործելու պարագային, կ՚ըսէ.* «Զար եւ վատ ծառայ»[23], *եւ թէ՝* «անպիտան ծառաները խաւարին հանեցէք»[24]։

---

[10] *Տե՛ս Յովհ. ԺԵ. 2–4։*
[11] *Հմմտ. Յովհ. ԺԵ. 2–6։*
[12] *Տե՛ս Մարկ. ԺԱ. 21։*
[13] *Հմմտ. Ես. Խ. 8։*
[14] *Տե՛ս Ես. Խ. 7–8, ԿԴ. 6։*
[15] *Հմմտ. Յովհ. ԺԴ. 17։*
[16] *Յովհ. ԺԴ. 23։*
[17] *Յովհ. ԺԲ. 48։*
[18] *Մարկ. Ը. 38։*
[19] *Հմմտ. Յովբ Ե. 19։*
[20] *Մատթ. ԻԵ. 41։*
[21] *Մատթ. Զ. 9։*
[22] *Հմմտ. Գ. Թագ. Գ. 7։*
[23] *Մատթ. ԻԵ. 26։*
[24] *Մատթ. ԻԵ. 30։*

Տասներկրորդ, քանի որ Տէրը արդարներուն հարիւրապատիկ կը խոստանայ, ըստ այնմ. «Իւրաքանչիւր որ, որ տունը կամ որդին ձգեց, հարիւրապատիկը պիտի ստանայ»[25], *իսկ այդպէս չընողներուն՝* «ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, թէ չեմ ճանչնար ձեզ»[26]։

Տասներեքերորդ, որովհետեւ մեր Ամենակարող Տիրոջ զօրութիւնը ամօթ կը համարենք եւ Անոր շարշարանքները անօգուտ կը նկատենք, ըստ այնմ. «Ի՞նչ օգուտ ինծի, եթէ յարութիւն...»[27]։ *Եւ Պօղոս, թէ՝* «Քրիստոս ձեզի համար մէկ անգամ մեռաւ, ինչպէս դարձեալ ըստ մարմինի ընթացք»[28]։ *Այդ պատճառով, պէտք է բարիք գործել, որպէսզի Անոր շարշարանքները մեզի օգտակար ըլլան։*

Տասնչորրորդ, քանի որ եթէ մեղքերով մեռնինք, բոլոր բարի գործերը որ մեր օրերուն կատարեցինք, ընդունայն կը դարձնենք, ըստ այնմ, որ Եզեկիէլը կ՚ըսէ. «Այդ արդարութիւնը պիտի չյիշեմ»[29], *եւ թէ՝* «ինչի մէջ որ գտնուիք, նոյնին մէջ պիտի դատուիք»[30], *կ՚ըսէ Տէրը։*

Տասնհինգերորդ, որովհետեւ ինչքան ատեն որ աշխարհի մէջ ենք, մեղք կը գործենք եւ կը զղջանք, բարի է, քանի որ Աստուծոյ ողորմութիւնը մօտիկ է, իսկ առանց զղջալու մնալով՝ Անոր անաչառ ատեանին կը մատնուինք, որ արդար դատաստանն է։ Այդ պատճառով Առաքեալը կ՚ըսէ. «Սարսափելի է Աստուծոյ ձեռքը իյնալը եւ Անոր անաչառ դատաստանին մատնուիլը»[31], *եւ թէ՝* «[ուր] որդը չի՛ մեռնիր»[32], *եւ այլն։*

Տասնվեցերորդ, քանի որ բարիք գործած ատեն, Քրիստոսէ երանութիւն կը ժառանգենք, ըստ այնմ. «Երանի այն ծառային, որուն տէրը գալով՝ զինք կը գտնէ այնպէս ըրած»[33]։ *Իսկ չարիք ընողներուն, կ՚ըսէ.* «Շատ պատիժ պիտի գտնեն անոնք, որոնք ըստ Անոր կամքին չպատրաստուեցան»[34]։

Տասնեօթներորդ, որովհետեւ յարութիւն առած ատեն Աստուծմէ օրհնութիւն եւ բարութիւն կը ժառանգենք, ըստ այնմ. «Եթէ դուք յօժարիք ու հնազանդիք, երկրին բարիքը պիտի ուտէք, բայց եթէ զիս մերժելով ապստամ-

---

[25] *Մատթ. ԺԹ. 29։*
[26] *Մատթ. Իե. 12։*
[27] *Հմմտ. Ա. Կորնթ. ԺԵ. 32։*
[28] *Հմմտ. Հռոմ. Ե. 8։*
[29] *Հմմտ. Եզեկ. ԼԳ. 13։*
[30] *Հմմտ. Յովհ. Ե. 30։*
[31] *Հմմտ. Եբր. Ժ. 31։*
[32] *Մարկ. Թ. 47։*
[33] *Ղուկ. ԺԲ. 43։*
[34] *Ղուկ. ԺԲ. 47։*

բիմ, սուրը պիտի ուտէ ձեզ»[35]։ *Իսկ Դաւիթ.* «Անիծեալ ըլլան անոնք, որոնք պատուիրանքներէն խոտորեցան»[36], եւ թէ՝ «անիծեալ ըլլայ ան, որ Տիրոջ թելադրած օրէնքներուն մէջ չի մնար»[37]։

Տասնութերորդ, քանի որ արդարութեան եւ ազատութեան մէջ ենք, իսկ մեղքին մէջ իյնալով՝ բանտ կ'իյնանք, ըստ Տիրոջ. «Եթէ գանձերուն հաշիւները չտանք, սատանային բանտէն չե՛նք ելլեր»[38], *մինչեւ մեղքերուն բաժին ինկած վերջին մասը չվճարենք։*

Տասնիններորդ, որովհետեւ եթէ միայն հաւատքը պահենք եւ սակայն գործին ուշադրութիւն չդարձնենք, մեր լապտերները առանց ձէթի կը վառին, որ շուտով կը մարի՝ ըստ յիմար կոյսերու առակին, թէ՝ «ահաւասիկ լապտերները կը մարին»[39]։

Քսաներորդ, որովհետեւ ամօթով եւ գլխիկոր կը մնանք Քրիստոսի դիմաց, եւ մեր պարծանքի առիթներով՝ մեզ դատապարտութեան կը տանինք, եւ մեր մասին կը գանգատի դատաստանի ընթացքին. «Անօթեցայ, եւ ուտելու բան չտուիք, ծարաւցայ եւ չխմցուցիք»[40], *եւ այլն։ Եւ այլեւս չենք կրնար ետ վերադառնալ ու բարիք գործել, քանի որ ուրիշ աշխարհ չկայ։ Այս պատճառով այս բոլորը գիտնալով՝ երկնչինք եւ մեղքերէն հեռանանք, կ'աղաչեմ, ո՛վ եղբայրներ։*

Եւ մարդասէր Քրիստոսին փառք, յաւիտեանս։ Ամէն։

Շարունակութիւնը՝ յաջորդիւ

Գրաբարէ Արեւմտահայերէնի վերածեց՝
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

[35] *Եսայ. Ա. 19–20։*
[36] *Սաղմ. ՃԺԸ. 21։*
[37] *Բ. Օր. ԻԷ. 26. Գաղ. Գ. 10։*
[38] *Հմմտ. Ղուկ. ԺԲ. 59։*
[39] *Հմմտ. Մատթ. ԻԵ. 1–13։*
[40] *Մատթ. ԻԵ. 42։*

Doi: 10.56737/2953-7843-2022.8-39

Տ. ՇԱՀԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ԳՀՃ, ՍՎԴ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ. ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ[1]

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 90-ամյա պատկառելի հայրապետ կլիներ այսօր, եթե անժամանակ հիվանդությունն ու մահը նրան չխլեին մեզանից... Նրա թողած գրական հարուստ ժառանգությունն է այսօր խոսում մեզ հետ՝ տասնյակ գրքերն ու հոդվածները, մտորումներն ու ակնարկները՝ Հայոց Եկեղեցու պատմության, աստվածաբանության, հոգեւոր կյանքի ու մշակույթի մասին յուրահատուկ, անկրկնելի վերլուծություններով։

Դժվար է մի քանի էջերի սուղ սահմաններում վերհանել մեծ հայի ու հայրապետի կերպարը, որն առանձնահատուկ կապող օղակ էր՝ հաստատուն կամուրջ հայկականության ու համամարդկային քրիստոնեական արժեքների միջեւ։ Առավել դժվար է ամփոփել նրա աստվածաբանական մտածողությունը, մանավանդ որ ուսանողական նստարանից առանձնակի ակնածանքով էինք սերտում լուսահոգի հայրապետի երկերը.... Եւ հիմա՝ անցած տարիների բարձրությունից, կարծես ավելի ու ավելի են հստակվում նրա հաճախ մարգարեական խոսքերն ու մտածումները։

Այս ամփոփ նկարագիրը, աստվածաբանական դիմանկարը «կերտելու» ցանկությունը մի փորձ է՝ խտացված կերպով ներկայացնելու Գարեգին Ա. հայրապետի տեսական ու փորձառական հարուստ ժառանգությունը։ Վերջինս, ինչպես արդեն նշել են ամենատարբեր ոլորտների շատ մասնագետներ, բազմաշերտ է, իրարալրացնող խորքերով ու ծալքերով։ Շատ հաճախ էսսեի կամ ուղեգրական նոթ-ակնարկի մեջ հայրապետը խտացնում է այնքան հմայիչ գույներ ու տրամաբանական, կուռ կառուցվածք, որ այդ improvisus-*ը՝ հանկարծաստեղծությունը, միաձուլվում է տարիների ընթացքում մտածված, հոգեմտավոր լաբորատորիայում թրծված փորձառությանը...*

---

[1]* *Հոդվածը ստացվել է 31.10.2022, գրախոսվել է 3.11.2022։*

Էլ. փոստ՝ shaheananyan@gmail.com։

Գարեգին Ա.-ին անձնապես ճանաչած մարդիկ մշտապես հիացել են նրա ճարտասանական տաղանդով, քարոզչական բացառիկ որակներով, աստվածաբանական խոր ու ներհուն գիտելիքներով..., բայց շատ քիչ, գրեթե երբեք չի ակնարկվել այն յուրահատուկ մեթոդի, մոտեցման մասին, որով նա ստեղծագործում էր, միահյուսում իր գիտական-ակադեմիական, քարոզախոսական, հրապարակախոսական եւն երկերում առկա գաղափարները: Այս իմաստով դեռ ասելիք կա Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թողած ժառանգության ուսումնասիրության գործում[2]*:*

Ընդ որում, Գարեգին Ա.-ի մեթոդը նույնպես բազմատարր, տարբեր ու հարուստ շերտերով միմյանց ընդելուզված մի յուրօրինակ աշխարհ է, որի մանրակրկիտ ուսումնասիրության համար լոկ այս աստվածաբանական դիմանկարը չի կարող սպառիչ ու հիմնավոր լինել: Ահա թե ինչու ստորեւ անդրադառնալու ենք երջանկահիշատակ հայրապետի երկերում առավել ցայտուն արտահայտված երկու մոտեցմանը, կամ կարելի է թերեւս այդպես էլ կոչել՝ «մեթոդներին»՝ փորձառությանը *եւ* երկխոսությանը*:*

ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵԻ ՄԵԹՈԴ

Գարեգին Ա.-ն պատմությունը, անցած-դարձածը հավատի աչքերով վերաշարադրելու բնատուր ձիրք ունի: Հիշենք «Խորհէ՛ եւ մտի՛ր (խոհեր եւ հայեացքներ դպրեվանքի մասին)» ինքնակենսագրական էսսեն[3]*: Դպրեվանք մտնելու եւ հոգեւորական դառնալու բարդ, պատանու հոգին փոթորկող զգացումներն անձնական փորձի օրինակով շարադրելով՝ հայրապետը մատնանշում է նաեւ ընդհանրապես բոլոր դպրեվանքցիների համար ուղենիշ ծառայող կարեւոր կետեր.*

---

[2] *Հետաքրքիր վերլուծական ակնարկ է Գարեգին Ա. Կաթողիկոսի «Հոգեմտաւոր ճառագայթումներ» հատընտիր երկերի հատորի համար պրոֆեսոր Ս. Դանիելյանի պատրաստած «Հոգելից խօսքի ոյժն ու հմայքը» խորագրով առաջաբանը (Ս. Էջմիածին, 1997, էջ 3—16):*

Գարեգին Ա.-ի աստվածաբանական-էկումենիկ հայացքներին նվիրված կարեւոր հետազոտություններ են նաեւ հետեւյալ հոդվածները՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՐԿ. ԱՍԱՏՐՅԱՆ, *«Քրիստոսաբանական տարաձայնությունների հաշտեցման ուղիները Գարեգին Ա.-ի էկումենիկ հայացքներում», «Էջմիածին», 2018, Բ., էջ 49—69.* ՆՈՒՅՆԻ՝ *Գարեգին Ա.-ի եկեղեցաբանական ընկալումների դիտարկումն էկումենիկ շրջանակներում, «Էջմիածին», 2018, Զ., էջ 12—29:*

[3] ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Կրօնական, Աստուածաբանական եւ Հայագիտական երկեր, հտ. Է., խմբ.՝ Վ. Ղուկասեան, 2011, էջ 17—25:*

1. Երբեմն պատահաբար, ասես ակամա արված քայլերը կարող են երիտասարդին Աստծու սպասավորության ծանր, բայց քաղցր ճանապարհի վրա բերել՝ կերտելով գիտակից ու նվիրյալ եկեղեցականի[4]։

2. Ճեմարանական համակարգված հոգեւոր կրթությունը վերափոխիչ ազդեցություն է գործում դեռեւս իրենց կարգավիճակն ամբողջությամբ չգիտակցող սաների վրա. «Տարուէ տարի աճող պայծառատեսութեամբ զգացի, որ վեց ուսումնական տարեշրջաններու ուսանողական կեանքս վերածնունդ մը եղաւ ինծի համար»[5]։

3. Մարդու պատրաստության, կրթության ու նորոգության հարցն առաջնային է, որովհետեւ, սկսելով անհատի հոգուց ու ներաշխարհից, դառնում է այնպիսի ընդհանուր մի հասկացություն, ինչպիսին քահանայական կոչման զգացումն է։

Ավելի գաղափարական, համաեկեղեցական ու համազգային թեմաներ արծարծելիս էլ Նորին Սրբությունն անձնական իր վերապրումները, փորձառությունն ու մտքերը միահյուսում է թուղթ ու թանաքի զուգավորումից ծնվող իր գրքերին։ Ավելի շոշափելի դարձնելու համար մեր միտք բանին՝ խոսքը տանք լուսահոգի հայրապետին. «Անցնող տարիներու ընթացքին, պահեր եկան մեր անձնական կեանքին մէջ, որոնք իւրայատուկ ապրումներու երանգներ դրոշմեցին մեր հոգեխառնութեան վրայ։ Ընթերցումներու պահերուն, ընթացքին, ազգային, հոգեւոր, մշակութային տօնախմբութեանց մեր մասնակցութեան պարագաներուն, այնպիսի ապրումներ, յիշողութիւններ, խորհրդածութիւններ անցան մեր կեանքի թելէն, որոնք օրուան հետ մայրամուտի չյանգեցան։ ....Եկեղեցւոյ խորանին վրայ, վանքի մը մեկ անկիւնը, օդանաւի մը մէջ, ուխտագնացութեան մը ընթացքին, հանդարտ ընթերցումի մը խորասոյզ մէկ պահուն, յիշատակի մը դիմաց, հայոց պատմութեան կամ մերօրեայ կեանքէն մեր հոգիին մէջ շառաւիղած մտածումներ, զգացումներ, խորհրդածութիւններ, անդրադարձումներ, վերլուծումներ այնպիսի արձագանգներ տուին մեր հոգեմտաւոր աշխարհին մէջ, որ տարուեցանք զանոնք գիրին փոխանցելու։ Որովհետեւ, զգացինք, որ անոնք միայն մեր նեղ անձին սեղմ զգայնութեան չէին պատկաներ, այլ արտաքնացումն էին մեր հաւաքական անձին՝ մեր Ժողովուրդի ոգիին եւ ժառանգութեան, որուն հաղորդ

---

[4] *Տե՛ս անդ, էջ 21։*

[5] *Անդ։*

դառնալու մեր ճիգը եւ սրտբաց պատրաստակամութիւնն էին միայն մեր անձնական բաժինը»[6]։

Բայց սա բնավ չի նշանակում, որ Գարեգին Ա.-ն վերարտադրում էր միայն պահի կամ վայրկյանի հուզումնալից վերապրումները. հովվական, մշակութային, գրական ու վարչական հարուստ փորձով լեցուն իր կյանքի իրադարձությունները նա հավաքական հասկացությունների էր վերածում՝ աստվածաբանական, պատմական ու գրական տարբեր օրինակներով կուռ կառույց ստեղծելով։ Ըստ էության՝ հոգեւոր փորձի ու աստվածաբանական գիտության յուրահատուկ այս համադրումն է, որ առանձնակի խորություն ու հմայք է տալիս Գարեգին Ա.-ի նմանատիպ երկերին։ Այս հետաքրքիր մեթոդի կամ մոտեցման ամենաամբողջական ու ավարտուն արտահայտությունը նրա «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ»[7] եւ «Ես յաղթեցի աշխարհի...». Յարութիւն եւ Հայութիւն» աշխատություններն են[8]։

*Եկեղեցաբանական ու քրիստոսաբանական տարողությամբ այս երկու գրքերը, սակայն, աստվածաբանության դասական առումով տարբեր են մեր պատկերացրած ուսումնասիրություններից։ Նախ՝ գերիշխող է հեղինակի անձնական փորձառության ու տեսակետների համադրումը, թեեւ կան նաեւ աստվածաբանական-տեսական ընդհանրացումներ[9]։ Երկրորդ՝ դավանական թեմաների, այս դեպքում՝ քրիստոսաբանության ու եկեղեցաբանության հանրայնացման եւ դոգմայի հասարակական-հանրային բնույթի (*aspect social du dogme*) շեշտադրում[10]*. այս վերջին առանձնահատկությունը հայ աստվածաբանական մտածողության մեջ թերեւս ամենակարեւոր նորարարություններից մեկն է։ Ո՞րն է այդ մոտեցման առանցքը։*

---

[6] ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, *Հող, Մարդ եւ Գիր, Անթիլիաս, 1983, էջ 5։ Վերահրատարակված՝* ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Կրօնական, Աստուածաբանական եւ Հայագիտական երկեր, հտ. Զ., խմբ.՝ Վ. Ղուկասեան 2009, էջ 29։*

[7] ԳԱՐԵԳԻՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, *Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ, Ս. Էջմիածին, 1996։*

[8] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, *«Ես յաղթեցի աշխարհի...». Յարութիւն եւ Հայութիւն, Անթիլիաս, 1993։*

[9] *Տե՛ս, օրինակ, «Ես յաղթեցի աշխարհի....», էջ 13–51. «Հայաստանեայց Եկեղեցին....», էջ 21–33։*

[10] *Հետաքրքիր եւ միաժամանակ շահեկան կլիներ այս իմաստով Գարեգին Ա.-ի համապատասխան երկերի համեմատությունը* «nouvelle théologie՝ *նոր աստվածաբանություն» կաթոլիկ շարժման տեսական հիմնադիրներից կարդինալ Անրի դե Լյուբակի՝ «Կաթոլիկություն. դոգմայի հասարակական-ընկերվարական կողմերը»* («Catholicisme. Les aspects sociaux du dogme», Paris։ Cerf, *1947) խորագրով գրքում արտահայտված տեսակետների հետ։*

Գարեգին Ա.-ի գրչին պատկանող գրքերի մեծ մասը շարադրված է տեւական, շարունակական խորհրդածությունների համատեղմամբ, այսինքն՝ դրանք ոչ թե մեկ ընդհանուր աշխատանքային ծրագրով, գիտական մեկ մտահղացումով ծնված աշխատություններ են, այլ տարբեր առիթներով ու տարբեր տարիներին խոսված կամ գրված քարոզներ, խորհրդածություններ, ակնարկներ... Առանձնահատուկ է սակայն այն, որ դրանք բոլորը գաղափարական միասնություն եւ կառուցվածք ունեն. կարծես հեղինակն ինքն այդ տարիների ընթացքում անընդհատ մտմտում, «ի սրտի ծնեալ» մտքերով զտում է իր հիմնական ասելիքը: «....Քրիստոսի յարութիւնը՝ որպէս մեղքի եւ մահուան վրա տարուած անզուգական եւ աննախընթաց յաղթանակ՝ այստեղ դիտուած է եւ ներկայացուած ոչ այնքան որպէս պատմական դէպք կամ երեւոյթ, եւ ոչ ալ այնքան աստուածաբանականօրէն բացատրելի իրողութիւն, որքան որպէս ներշնչման աղբիւր՝ թէ՛ ընդհանուր մարդկութեան եւ թէ՛ հայութեան կեանքին մէջ, թէ՛ անցեալին եւ թէ՛ ներկային»[11]: Եւ ուրեմն այն, ինչ ներշնչել է հեղինակին, անհրաժեշտորեն, այս մոտեցման համաձայն, պետք է դառնա նաեւ ընթերցողի, հա՛յ մարդու ներշնչման աղբյուր: *Քրիստոնեական հավատի հրամանակարգ դրույթի հանրայնացումը, կարելի է նույնիսկ ասել՝* հայկականացումը, *տեղի է ունենում «հոգեւոր, իմացական եւ ազգային հայեցողութեան»[12] մեջ: Աստվածաբանական իրողությունները ներշնչման աղբյուր դարձնելու դիտավորությունը, սակայն, պետք է լայն ծիրից ներս դիտարկել. քրիստոսաբանություն թե եկեղեցաբանություն՝ չեն կարող զուտ աստվածաբանական նեղ լուսարձակի ներքո քննարկվել (մանավանդ հայ ժողովրդի դեպքում, որի պատմության ներկապնակն ամբողջովին ներծծված է քրիստոնեական վկայության ու արժեհամակարգի գույներով): «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ» գրքում Գարեգին Ա. հայրապետը, հատուկ ուրվագծելով Եկեղեցու՝ որպես Քրիստոսի խորհրդական մարմնի դավանաբանական դրույթը, դրա եկեղեցաբանական արժեւորումը եւ հանրայնացումը կատարում է երեք ընդարձակ ոլորտներով՝*

— կրոնական-բարոյական,

---

[11] *«Ես յաղթեցի աշխարհի....», էջ 7:*

[12] *Տե՛ս անդ, էջ 6:*

— մշակութային-քաղաքակրթական,

— ազգային-քաղաքական[13]։

*Ակնհայտ է, որ «եկեղեցաբանության»՝ որպես քրիստոնեական դավանաբանության առանձին ճյուղի դիտարկումը բարոյական, մշակութային եւ քաղաքական մոտեցումներով շատ ավելի է լայնացնում դրա դավանաբանական տարողությունը՝ այն դարձնելով ոչ միայն աստվածաբանների, այլեւ քիչ թե շատ գիտակից ու զարգացած հայորդու խորհրդածության նյութ։ Եկեղեցու, դպրոցի (բառիս ակադեմիական ամենալայն իմաստով) եւ հասարակության հետ իր նորարարական, բեղուն ու տեւական երկխոսությամբ Գարեգին Ա.-ն կերտում է հանրային պահանջներին պատասխանող աստվածաբանություն (*théologie publique*)[14], որը չի սահմանափակվում դավանաբանության հիմնահարցերի քննարկումներով։ Ընդ որում, այդ աստվածաբանությանը բնորոշ է նաեւ տեղական,* local *բնույթը, որն այս պարագային արտահայտվում է զուտ հայկական ինքնությանն արված անդրադարձներով[15]։*

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Վերջին անգամ, երբ այս կյանքում հանդիպեցինք, ...մի հապշտապ տեղեկության առիթով էր. ինձ տեղեկացրել էին, որ Գարեգին Ա. կաթողիկոսն իր հիվանդասենյակում՝ Նյու Յորք քաղաքում, ցանկանում է ունենալ իմ հեղինակած «Էկումենիկ շարժման բառարան» գրքից մի օրինակ։ Նույնիսկ իր հիվանդությամբ ծանրաբեռն, կյանքի վերջին հասած վիճակում՝ չէր ցանկանում թողնել իր աղոթական փնտրտուքն ու ընթերցումը՝ անընդհատ տքնելով քրիստոնեական միության համար»[16]։ ԱՄՆ

---

[13] *«Հայաստանեայց Եկեղեցին....», էջ 31։ Դժվար չէ նկատել, որ այս գիրքն իր որոշ մասերով վերարտադրում է ավելի վաղ շրջանում Գարեգին Ա.-ի՝ անգլերեն պատրաստած մեկ այլ գրքույկի գաղափարները։ Հմմտ.* Karekin Sarkissian, A Brief Introduction to Armenian Christian Literature, Faith Press, London, 1960*։*

[14] *Աստվածաբանական համեմատաբար նոր այս ուղղության տեսական առանձնահատկությունների մասին տե՛ս* J. de Gruchy, Public Theology as Christian Witness: Exploring the Genre, "International Journal of Public Theology", vol. I (2007), Issue 1, *էջ 26—41.* G. Villagrán, La Théologie publique: une proposition pour donner voix à l'Eglise dans les sociétés pluralistes, "Revue d'éthique et de théologie morale (2017/4)", №296, *էջ 45—58։*

[15] *Կարեւոր մի տարբերակում. մեր ակնարկած «հանրային աստվածաբանություն» հասկացությունն առաջացել է բազմակարծական (պլյուրալիստական) հասարակության մեջ՝ որպես պատասխան այդ նույն հասարակության առաջ քաշած հանրային ամենատարբեր հարցերի։ Գարեգին Ա.-ի մտածողության դեպքում խոսքն ավելի շատ հայ հանրության՝ որպես միաձույլ միավորի հետ երկխոսության մասին է։*

[16] J. Robert Wright, The Ecumenical Ministry of Catholicos Karekin I (†1999), "St. Nerses Theological Review", 5—6 (2000—2001), *էջ 2։*

Եպիսկոպոսական Եկեղեցու հայտնի աստվածաբան ու ծիսագետ Ջոն Ռոբերտ Ռայթը (1936–2022 թթ.) այսպես է նկարագրում իր վերջին հանդիպումը Գարեգին Ա. Կաթողիկոսի հետ։ Նմանատիպ անձնական վկայություններն ու հիշատակները լուսահոգի հայրապետի գրքերի կողքին բազմաթիվ են՝ մեկը մյուսից տպավորիչ ու սրտաբուխ։ Եւ այդ բոլորի մեջ աչքի է զարնում մի կարեւոր պարագա՝ Գարեգին Ա.-ի անխոնջ ու անմնացորդ ծառայությունն էկումենիկ շարժմանը։

Որոշ իմաստով, ինչպես այլուր նկատել է հայրապետն ինքը[17], նրա քահանայական ծառայության սկիզբը համընկավ էկումենիկ շարժման մեջ նրա ներգրավվածության հետ։ Թերեւս սրանով կարելի է բացատրել երկխոսելու, քրիստոնեական տարբեր հարանվանությունների ու մշակույթների հետ տրամախոսության մեջ մտնելու նրա բացառիկ տաղանդն ու հմտությունը։ Առանց վարանելու կարելի է նշել, որ Գարեգին Ա.-ի գրեթե բոլոր կարեւոր աստվածաբանական երկերը կրում են երկխոսության կնիքը։ *Աստվածաբանական նրա ամենակարեւոր ու հայտնի աշխատությունն անգլերեն գրված* «The Council of Chalcedon and the Armenian Church» *(*New York, *1965) մենագրությունն է, որը, ըստ էության, Հայ Եկեղեցու քրիստոսաբանության ծագման ու ձեւավորման պատմաաստվածաբանական քննությունն է։ Եւ այս գրքի հենց առաջաբանում նա մատնանշում է երկխոսական, էկումենիկ ոգուն բնորոշ իր մոտեցումը. «Իմ անկեղծ ցանկությունն է, որ Քաղկեդոնի ժողովի եւ հետքաղկեդոնյան շրջանի պատմության ու աստվածաբանության ցանկացած անաչառ եւ ծավալուն ուսումնասիրություն ծառայի մեր քրիստոնեական հավատի ընդհանուր ժառանգության ամենաորոշիչ ոլորտի՝ քրիստոսաբանության առավել խոր ու համակողմանի ճանաչողությանը»[18]։ Ընդ որում, էական է նաեւ այն փաստը, որ Գարեգին Ա.-ն իր վերոնշյալ գրքում Հայոց Եկեղեցու տեսակետը Քաղկեդոնի վերաբերյալ ներկայացնում է իբրեւ քաղաքական, մշակութային, եկեղեցական գերակայության վեճերից անկախ ու չեզոք մի մոտեցում։ Հենց այս մոտեցումն է նա դիտարկում իբրեւ հնարավոր տարբերակ՝ քրիստոսաբանական հարցերում հաշտության հասնելու համար։*

Էկումենիզմի մասին Գարեգին Ա.-ի հայացքները խտացած են երկու՝ իրարից բավական տարիներ անց գրված հոդվածում ու գրքում։ 1959 թ.

---

[17] *Տե՛ս* ....And the Boat Moves on the Waters: Dispatches from an Ecumenical Journey, ed. Christopher H. Zakian, New York: St. Vartan Press, 1998, *էջ 2։*

[18] "The Council of Chalcedon and the Armenian Church", New York, 1965, *էջ* XII։

Օքսֆորդում երիտասարդ Գարեգին աբեղայի «Էկումենիկ խնդիրն Արեւելյան քրիստոնեության մեջ» խորագրով ներկայացրած դասախոսությամբ (հրատարակվել է մեկ տարի անց)[19] *առաջին անգամ հստակեցվեց ապագայի միջեկեղեցական ականավոր գործչի մոտեցումն էկումենիկ շարժմանը: Երկրորդ՝ առավել համընդգրկուն եւ արդեն շուրջ 40 տարվա հեռավորությունից արված դիտարկումը հրատարակվեց* «Entretiens avec Giovanni Guaïta. Karékine 1er, Catholicos de tous les Arméniens»[20] *(«Գարեգին Ա., Կաթողիկոս Ամենայն Հայոց: Զրույցներ Ջիովաննի Գուայտայի հետ») նշանավոր գրքում: Այս երկու մոտեցումների համեմատությունը հետաքրքիր է այնքանով, որ առաջին հոդվածում Գարեգին աբեղան անդրադառնում է Քրիստոնեական Եկեղեցու ներսում առկա բաժանումներին* պատմաժամանակագրական *տեսանկյունից*[21]*: Ըստ այսմ՝ քրիստոնեական Արեւելքն ու Արեւմուտքը, պատմական եւ եկեղեցաբանական իմաստով, բաժանված են նախ իրար մեջ՝ Արեւելքում՝ Օրթոդոքս եւ Արեւելյան Ուղղափառ, իսկ Արեւմուտքում՝ Կաթոլիկ եւ Օրթոդոքս եկեղեցական ընտանիքները: Քրիստոնեական լիարժեք միության հասնելու համար անհրաժեշտ է այս երկու պատմամշակութային տարածքները միավորել միայն ու միայն ներքին միասնության հասնելու ճանապարհով: Այլ խոսքով՝ պետք է ունենալ մեկ Արեւելք եւ մեկ Արեւմուտք՝ միասնության համար անհրաժեշտ երկխոսությունն սկսելուց առաջ:*

«Զրույցներ Ջիովաննի Գուայտայի հետ» գրքում էկումենիզմի մասին հայրապետի արտահայտած տեսակետները շատ ավելի ընդգրկուն են, տեսական ու աստվածաբանորեն հիմնավորված: Առաջին նշանակալի կետը, որին անդրադառնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, էկումենիզմի եւ միջեկեղեցական շարժման տարբերակումն է. «Եթե էկումենիզմ *բառով արտահայտվում է Աստծու կամքը մշտապես արտահայտելու որոնում, ապա դա բոլոր Եկեղեցիների եւ յուրաքանչյուր քրիստոնյայի պարտականությունն է: Այսպիսով՝ էկումենիզմը Եկեղեցու սահմանման մասն է կազմում, որովհետեւ միությունը Եկեղեցու կյանքի ու գործունեության կենտրոնն է: Այնուհետեւ, էկումենիզմն իբրեւ այդպիսին պետք է զանազանել միջեկեղեցական շարժումից, որը որոշ կերպով այս կամ այն նպատակն*

---

[19] *Տե՛ս* “The Ecumenical Problem in Eastern Christendom”, “The Ecumenical Review”, vol. XII, №4 (July, 1960), *էջ 436–454:*

[20] Nouvelle Cité, Montrouge, *1998:*

[21] *Ավելի մանրամասն տե՛ս* ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՐԿ. ԱՍԱՏՐՅԱՆ, *Քրիստոսաբանական տարաձայնությունների հաշտեցման ուղիները Գարեգին Ա.-ի էկումենիկ հայացքներում, էջ 53–55:*

*է հետապնդում։ Միջեկեղեցական շարժման մեջ (նկատի ունեմ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, ինչպես նաեւ այլ կազմակերպությունները կամ միութենական արտահայտությունները) բոլոր միջոցներով փորձում ենք միության որոնումը դարձնել մեր աստվածաբանական մտածողության եւ հասարակական գործի հիմնական բնաբանը»[22]։ Այս տարբերակումն անհրաժեշտ է այնքանով, որքանով Գարեգին Ա.-ն հստակեցնում է աստվածաբանական երկխոսության եւ քրիստոնեական տարբեր հարանվանություններում հոգեւոր-աղոթական հաղորդակցության միջեւ առկա տարբերությունը։ «Քրիստոնեական, քրիստոսական ինքնություն» (*identité christique*) եզրը, որ այդքան հմտորեն հայրապետը ձեւակերպում է Ջ. Գուայտայի հետ զրույցում, կարեւոր է՝ հասկանալու համար այդ տարիներին արդեն լայն տարածում գտած «հոգեւոր էկումենիզմ» (*œcuménisme spirituel*) եւ «հաղորդության հոգեւորություն» (*spiritualité de communion*) արտահայտությունները։ Պատահական չէ, որ Գուայտայի ուղիղ հարցին՝ «Ինչ է Ձեզ համար էկումենիզմը», Գարեգին Ա.-ն պատասխանում է հոգեւոր բարձր ընկալումով. «Ինձ համար էկումենիզմը խորապես հոգեւոր իրականություն է. մեր քրիստոնեական հավատքի էության չափանիշներից մեկը։ Հարկ է դիմել Հովհաննու Ավետարանի 17-րդ գլխին, որտեղ հստակ արտահայտված է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կամքը. «Հա՛յր, որպեսզի ամենքը մի լինեն.... Նրանք մեր մեջ լինեն.... որպեսզի աշխարհն էլ հավատա, թե դու ուղարկեցիր ինձ»։ Սա պատահական ցանկություն չէ. քրիստոնեական հավատքի հավաստիությունը սերտորեն կապված է եկեղեցական գոյության այս որակին, այն իրողությանը, որ մեր կյանքում արտահայտում ենք Քրիստոսից մեզ տրված միությունը, որը հենց Սուրբ Երրորդության կյանքն է»[23]։ Եւ վերջապես, իբրեւ էկումենիզմի ապագա հեռանկար՝ լուսահոգի հայրապետն առանձնացնում է երեք կարեւորագույն ուղղություն, որոնցով պետք է միասնաբար Քրիստոսի հավատի մասին աշխարհում վկայեն բոլոր քրիստոնյաները։ Այս երեք ուղղությունները քրիստոնեական կյանքի առանցքային հասկացություններն են, ընդհանուր չափորոշիչները, առանց որոնց ոչ մի քրիստոնեական հարանվանություն չի կարող հավատարմորեն վերարտադրել Քրիստոսի Ավետարանի իսկությունը՝*

koïnonia — *հոգեւոր ներքին ու արտաքին հաղորդություն.*

kerigma — *Աստծու խոսքի հռչակում ու տարածում աշխարհում.*

---

[22] Entretiens avec Giovanni Guaïta, *էջ 242–243։*

[23] *Անդ, էջ 243։*

diakonia —*Եկեղեցու սոցիալական-հասարակական ծառայությունն աշխարհին ու մարդկությանը։*

Այս երեք որակները բնորոշ են Քրիստոսի մեկ ու միասնական Եկեղեցուն, հատուկ են եղել Ընդհանրական Եկեղեցուն եւ այսօր էլ իրենց գործադրմամբ ու կենսականությամբ ներկա են քրիստոնեական բոլոր Եկեղեցիներում։

ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ...

Գարեգին Ա.-ի թողած գրական-աստվածաբանական ժառանգությունը դեռ երկար տարիներ շարունակ վերահրատարակվելու է ինչպես մեզանում, այնպես էլ քրիստոնեական եւ էկումենիկ այլ շրջանակներում։ Հրատարակվելու է ոչ թե դրա հեղինակի միջեկեղեցական վարկի, աստվածաբանական-տեսական հետաքրքիր տեսակետների առկայության շնորհիվ... ո՛չ, վերարժեւորվելու ու վերընթերցվելու է, որովհետեւ դրա ամեն տող ու ամեն բառ թրծված են մտածողի խոր ու աներեր համոզումով։ Այդ ժառանգությունը բարերար, հուսառատ ու լավատեսական մի հորիզոն է բացում այս աշխարհի մռայլ, թավշյա ու ծանր վարագույրից անդին։ Վեհափառի պատկերած արշալույսը ողողված է տառապած ու հարություն առած Աստծու անմիջականությամբ, այս աշխարհի համար Նրա պարգեւած անսպառ ու անսահման սիրով... Ահա ինչու դեռ այդքա՛ն մարգարեական, եւ թող թույլ տրվի ասել՝ անուղղելիորեն լավատեսական են «Զրույցներ Ջիովաննի Գուայտայի հետ» գրքի վերջին պարբերության առաջին բառերը. «Je vois une aube…»[24]*։*

Միգուցե խստապահանջ աստվածաբանները, որոնք մաթեմատիկական ճշգրտությամբ են հասկանում աստվածաբանական խոսույթը, Գարեգին Ա.-ի արտահայտած աստվածաբանական կարծիքների ու մտքերի մեջ նկատեն որոշակի անորոշություն, չհամակարգվածություն... Հնարավոր է։ Բայց ինչպես արդեն նշեցինք, փորձառական զորեղ ակունքից հորդող այդ ներշնչումն է հենց լուսահոգի հայրապետի յուրահատուկ «մեթոդը»։ Աստվածաբանական վերացական հայեցակարգերն ու գաղափարները ոչինչ չասող, անշունչ իրողություններ են, եթե չեն անցնում Աստծու հանդեպ աներեր հավատի փորձառության հնոցով. «Եթե Աստված տառապած չլիներ, մեզ համար կլիներ բարձր ամբիոնից դասեր

[24] *«Արշալույս եմ տեսնում...». տե՛ս* “Entretiens avec Giovanni Guaïta”, *էջ 311։*

տվող իմաստուն մի ուսուցիչ»[25]*։ Ահավասիկ մարդեղության՝ աստվածամարդկային խորհրդի լույսի ներքո ձեւակերպված սահմանում, որը, մեր կարծիքով, խտացնում է Գարեգին Ա.-ի՝ աստվածաբանության եւ աստվածաբանական գիտությունների մասին ընկալումը։*

РЕЗЮМЕ

Богословское наследие покойного Католикоса Всех Армян Гарегина I (1932—1999) включает разнообразные духовные очерки, размышления, проповеди, книги и исследования по истории и богословской традиции Армянской Апостольской Церкви. Как известный оратор и экуменический лидер, он оставил неизгладимый след в современном экуменическом движении. Данная статья направлена на создание богословского портрета Его Святейшества, в особенности выделяя два основных направления его мысли: *духовный опыт как метод* и *богословие в диалоге*. Были также проведены некоторые параллели между богословским наследием Его Святейшества и методами так называемого публичного богословия (public theology). Во второй части статьи также представлен краткий очерк его экуменических взглядов и видений.

SUMMARY

The theological legacy of the late Catholicos of All Armenians, Karekin I (1932—1999) includes a variety of spiritual essays, reflections, sermons, books and studies on the historical-theological tradition of the Armenian Church. As a famous orator and ecumenical leader, he left his indelible mark on the modern ecumenical movement. This article aims at creating a theological portrait of His Holiness, reflecting especially on the two main views of his thought: *experience as method* and *theology in dialogue*. Some parallels were made also between His Holiness's theological legacy and the public theology's methods. In the second part of the article a brief outline of his ecumenical views and vision was presented, as well.

---

[25] *Անդ, էջ 292։*

Doi: 10.56737/2953-7843-2022.8-50

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱԱ ԳԻ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԼԱՍՏԻՎԵՐՑՈՒ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՆՐԱ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»[1]

Յուրօրինակ գեղարվեստականությամբ օժտված Արիստակես վրդ. Լաստիվերցու երկում[2] միջնադարյան քրիստոնեական գեղագիտությունն[3] է՝ ներհյուսված աշխարհայացքային մյուս բաղադրիչներին։ Դրանք երեւան են գալիս պատմիչի՝ իրականությանը տրված բանական մեկնություններում, աստվածաշնչյան կանոններն ու օրենքները մարդկանց վարքի ու փոխհարաբերությունների կարգավորիչ դարձնելում, ի վերջո, իր ժամանակի իմաստասիրական խնդիրների արծարծումներում։

Մ. Ավդալբեգյանը Ե. դարի հայ պատմագրության մասին նկատում է, որ թեեւ նշվել է նրա մասնակի գեղարվեստականությունը՝ կերպավորում, հայրենասիրական խանդավառություն, բանահյուսական շունչ, համեմատություններ, պատկերավոր խոսք եւ այլն, եւ այլն, սակայն

---

[1] Հոդվածը ստացվել է 31.10.2022, գրախոսվել է 3.11.2022։*

Էլ. փոստ՝ l.yu.vardanyan@gmail.com։

[2] Քննական բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԶ., ԺԱ. դար, Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, Երեւան, 2012։ Գրաբարյան բնագրային հետագա նշումները կլինեն նույն հրատարակությունից, էջերը կնշվեն տեղում։

[3] Թեեւ գեղագիտականի փիլիսոփայական ընկալումը գալիս է դեռ անտիկ ժամանակաշրջանից, բայց հայտնի եզրային համարժեքը՝ «էսթետիկա», եւ երեւույթի գիտակցումը՝որպես գիտություն, առաջացել են շատ ավելի ուշ։ «Էսթետիկա» եզրը գործածության մեջ է մտել միայն ԺԸ. դարի կեսերից, երբ գերմանացի փիլիսոփա Ալեքսանդր Բաումգարտներն առաջին անգամ այն կիրառեց՝ թեեւ ժամանակակից իմաստին ոչ լրիվ համապատասխանությամբ։ Իսկ քանի որ եզրն ու այն կրող գաղափարը չէին կարող հարյուրամյակներ գոյություն ունենալ առանց մեկը մյուսի, նշանակում է ե՛ւ Պլատոնն ու Արիստոտելը, ե՛ւ նրանց հաջորդած անտիկ եւ միջնադարյան փիլիսոփաները հանդես էին գալիս առանց այս երեւույթի անվանական գործածության։ Ըստ Ավերինցեւի՝ սա այն երկվությունն է, որը հառնում է միջնադարյան գեղագիտությունն ուսումնասիրողի առջեւ։ Տե՛ս С. С. Аверинцев, Поэтика ранневизантийской литературы, Москва, 1977, *էջ 30. տե՛ս նաեւ* Эстетика: словарь / ред. А. А. Беляев, Москва, 1989, *էջ 416։*

անդրադարձ չի եղել պատմությունների՝ ամբողջական գեղագիտական սկզբունքով կառուցված լինելուն[4]։ Ինչ խոսք, սույնի խնդրառուն կարող է լինել նաեւ Արիստակես Լաստիվերցու երկը։ Այս տեսանկյունից այդ ամբողջական գեղագիտական սկզբունքը հետաքրքիր է դիտել նաեւ պատմիչի այդ ըմբռնումների բացահայտմամբ, որոնք էլ հենց նրա աշխարհընկալման ցուցիչներն են։

Նախքան անդրադառնալն այդ երեւույթին՝ մի փոքր պարզենք այն սահմանները, որոնց մեջ կարող ենք փնտրել մեր ասելիքը։ Գեղագիտության ուսումնասիրության առարկան գեղագիտական սկզբնատարրերի դրսեւորումն է բնության եւ մարդու հասարակական գործունեության մեջ, ինչպես նաեւ այդ գիտակցության ծագման օրինաչափությունները, զարգացումն ու գործառությունը, արվեստի ծագումը՝ որպես նրա առավել լիարժեք դրսեւորում[5]։ Ուստի այս ուղով ընթանալու դեպքում մենք նույնպես պետք է սկսենք սկզբից, ասել է թե՝ հին շրջանից։

Անտիկ գեղագիտությանը բնորոշ էր ընդգծված տիեզերագիտությունը (կոսմոլոգիզմը)[6]։ Տիեզերքը, հների պատկերացմամբ, թեեւ տարածականորեն սահմանափակ էր (հայերենում բառի ներքին ձեւն իսկ, որ նշանակում է «մեծ եզերք», այդ է վկայում), սակայն առանձնանում էր իր մեջ տեղի ունեցող շարժման ներդաշնակությամբ, նպատակասլացությամբ եւ ճշտությամբ։ Այն ընկալվում էր որպես բարձրագույն եւ վեհ գեղեցկության *մարմնավորում։ Մնացած ամեն ինչ գեղեցկությամբ օժտված էր այն չափով, որ չափով մոտենում էր այդ բացարձակ ներդաշնակությանը, իսկ մարդու ստեղծած իրը դիտվում էր որպես բնության նմանակում։*

Այս տեսությունը, ունենալով տարբեր զարգացումներ[7], միջնադարում արդեն վերամշակվեց քրիստոնեական գաղափարաբանությամբ[8]։

---

[4] *Տե՛ս* Մ. Ավդալբեգյան, *Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար), Երեւան, 1971, էջ 197։*

[5] *Տե՛ս* «История эстетической мысли», т. 1, Москва, 1985, *էջ 17։*

[6] *Եզրն առաջին իմաստով նշանակում է ուսմունք տիեզերքի՝ որպես միասնական ամբողջության մասին։*

[7] *Անտիկ շրջանին փոխարինած բյուզանդական գեղագիտությունն ստեղծեց գեղագիտական ստորոգությունների (*κατηγορία*) եւ հասկացությունների յուրօրինակ համակարգ։ Եթե առաջինի համար հիմնարար էին* գեղեցիկը, չափը, ներդաշնակությունը, միմեսիսը (նմանակումը)*, ապա բյուզանդական գեղագիտությունը գլխավոր ստորոգությունների թվում առաջ էր քաշում* պատկերը, խորհրդանիշը, լույսը, կանոնը, նմանակումը *(տե՛ս* В. В. Бычков, Византийская эстетика, Москва, 1977, *էջ 166)։*

[8] *Այս հարցի շուրջ նորագույն հետազոտություններից տե՛ս Հ. Քյոսեյան, Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանություն, Երեւան, 2021, 408 էջ։*

Այն պաշտպանում էր գեղեցկության աստվածային ծագման գաղափարը։ *Ընկալումն իր դրսեւորումն է ունենում կյանքի տարբեր բնագավառներում՝ հասարակության աստիճանաձեւ կառուցվածքում, մարդու դերի մասին պատկերացումներում, ընդհանրապես միջնադարյան աշխարհայացքում այսպես կոչված երկնային աստիճանակարգի տեսքով, որը, համաձայն քրիստոնեական միաստվածական տեսության, իր ավարտունությունը գտնում է անհատական բացարձակում կամ Աստծու մեջ։ Իր հերթին բնությունը դառնում է գերզգայականի տեսանելի դրսեւորում։*

Աշխարհը դիտվում է որպես աստիճանակարգային խորհրդանիշների համակարգ։ Տեսանելի, զգայական երեւույթներն ընկալվում են միայն որպես «անտեսանելի, անարտահայտելի Աստծու» խորհրդանիշներ։ Ընդհանրապես միջնադարյան գեղագիտության մեջ բացահայտ է «աստվածային» գեղեցկությունն ու «հոգեւորը» բնական գեղեցկությունից վեր դասելու, «երկրայինը» որպես «երկնայինի» խորհրդանշական կամ այլաբանական արտահայտություն դիտելու միտումը։

Այսպիսով՝ ըստ միջնադարյան պատկերացումների՝ «գեղեցիկը»՝ որպես առավել ընդհանրական ստորոգություն, իր բարձրագույն վերացարկման մեջ հենց Աստված է։ Մարդու հեռանալն Աստծուց այդ գեղեցիկի կորուստն է նշանակում, իսկ կորստի գիտակցումն ու պայքարը՝ կորցրածը վերադարձնելու համար, դառնում են համապատասխանաբար՝ ողբերգականի ու վեհի դրսեւորում։ Հետեւաբար միջնադարյան գեղագիտությունը սերտորեն կապված է կրոնական գիտակցության, աստվածաբանության հետ[9]*։*

Մի հանգամանք եւս միջնադարյան գեղագիտությունը տարբերում է հին շրջանի գեղագիտությունից։ Մարդը բարձրագույն արժեք է այս աշխարհում. չէ՞ որ Աստված Իրեն զոհում է նրա փրկության համար։ Բոլոր մարդիկ հավասար են անկախ ծագումից եւ հասարակական դիրքից եւ հաշվետու են միայն Աստծուն։ Սերը մարդու հանդեպ հիմնական սկզբունքն է մարդկանց փոխհարաբերություններում եւ այլն[10]*։*

---

[9] *Տե՛ս* В. П. Зубов, Ранее Средневековье, «История эстетической мысли», *նշ. աշխ., էջ 276։ Հ. Քյոսեյանն այս մասին հետեւյալն է գրում. «Մշակույթը էապես կապված էր աստվածաբանության հետ, կյանքի, իրավիճակի պահանջով՝ մշակույթը, արվեստը գոյավորվում է վարդապետական կարգույթների խստագույն հաշվառումով. առանց տիրապետելու փիլիսոփայության եւ աստվածաբանության այբուբենին՝ ոչ միայն չէր կարող ստեղծվել, այլեւ չէր կարող ընկալվել մշակույթը, արվեստը»։ Տե՛ս Հ. Քյոսեյան, նշ. աշխ., էջ 7։*

[10] *Տե՛ս* В. В. Бычков, Ранняя патристика, «История эстетической мысли», *նշ. աշխ., էջ 255։*

Միջնադարյան մտածողության առաջին տեսաբաններից մեկը՝ Օգոստինոս Երանելին, որը երկու աշխարհների (հին եւ միջնադարյան) մեջտեղում էր գտնվում եւ ստիպված էր նորի՝ քրիստոնեության համար գեղագիտական տեսություն մշակել, (որքան էլ այդ «գեղագիտականը» լիներ չգիտակցված),[11] աշխարհն անկատար համարողներին նմանեցնում էր մարդկանց, ովքեր տեսնում են խճանկարի մի խորանարդիկը միայն, փոխանակ նայեն ողջ կառուցվածքին եւ վայելեն քարերի գեղեցկությունը՝ որպես մեկ ամբողջություն։ Ըստ Օգոստինոսի՝ միայն մաքուր հոգին կարող է հասկանալ տիեզերքի գեղեցկությունը։

«Ratio» *օգոստինոսյան եզրը, որը ներառում էր համաչափության, համապատասխանության հասկացությունները, միաժամանակ ներառում էր ձեւ եւ կարգուկանոն։ Պյութագորյան ներդաշնակության եւ համաչափության սկզբունքները վերծանող այս բնորոշումը տարածվեց միջնադարյան գեղագիտության մեջ։*

*Թ. դարի մտածողներից մեկը՝ Հովհան Սկոտ Էրիուգենան (մոտ 810—877 թթ.), որը միջին դարերի առաջին համաստվածային (*πανθεϊσμός*) համակարգի ստեղծողն էր, գտնում էր, որ ամեն մի գեղեցկություն հիմնված է մասերի եւ ամբողջի ներդաշնակ միասնության վրա։ Շնորհիվ կարգուկանոնի եւ գեղեցկության՝ Աստված թույլ է տալիս ճանաչել Իրեն[12]։ Ոչինչ չկա նյութական աշխարհում, որ ինչ-որ անմարմին մի բանի նշանը չլինի, ինչը կարելի է ընկալել միայն բանականությամբ։ Իսկ գեղեցկությունը բանականության, ճշմարտության, հավերժության, վեհության, սիրո, ամեն կատարյալի եւ աստվածայինի դրսեւորումն է[13]։*

Հայ իրականության մեջ դեռ Ե. դարի մեր մտածողները նույնպես գեղագիտական հարցերը[14] մշակում էին քրիստոնեական վարդապետու-

---

[11] *Տե՛ս* В. В. Бычков, Эстетика, www.gumer.info։

[12] *Իր ուսումնասիրության մեջ այս մասին խոսում է նաեւ Հ. Քյոսեյանը՝ հիշատակելով արարչագործությունը՝ որպես մարդու հանդեպ Աստծու սիրո եւ ողորմածության նշան. «Մարդը Աստծու հետ հաղորդակցվում է Նրա արարչության, նյութական իրականության միջոցով։ Արարաչությունը Աստծո փառքի ստվերն է, այն ընդհանուր պատկերացում է տալիս Արարչի մասին՝ ուսուցանելով առ Աստված տանող ուղիները»։ Տե՛ս* Հ. Քյոսեյան, *նշ. աշխ., էջ 204։*

[13] *Տե՛ս* М. В. Зубова, Раннее Средневековье, «История эстетической мысли», *նշ. աշխ., էջ 282—293։*

[14] *Միջնադարի հայ մատենագիրների գեղագիտական հայացքների մասին տե՛ս* Վ. Ներսիսյան, *Արվեստի եւ գրականության տեսության հարցերը 5—10-րդ դդ. հայ մատենագրության մեջ, ԲԵՀ, թ. 1, էջ 47—59. նույնի՝ Դավիթ Անհաղթի գեղագիտական*

թյան հետ ունեցած սերտ կապի մեջ։ Օրինակ՝ Եղնիկ Կողբացու համոզմամբ՝ գեղեցիկի արարիչն Աստված է։ Նա ձգտում էր գեղեցիկի գոյությունը սահմանել բարու գոյությամբ՝ ենթադրելով, որ գեղեցիկի արարիչ կարող է լինել միայն բարի էությունը։ Մարդուն տրված է ազատ կամք՝ բարի կամ չար գործելու, իսկ գեղեցիկն Աստծուց շնորհվում է նախապես։ Այն բացարձակ է, առարկայական (օբյեկտիվ) եւ կախված չէ մարդու կամքից ու ցանկություններից[15]*։ Այս իմաստասիրական մտորումներն իրենց արտացոլումն ունենում էին նաեւ գրական եւ պատմագրական երկերի վրա։ Բանաստեղծներն ու պատմիչները թեեւ ուղղակի չէին տալիս իրենց գեղագիտության տեսական բնորոշումը, բայց իրենց երկերով, որոնցում կար կերպարակերտման, նպատակադրության, ասելիքի «ճշմարտությունը» ընթերցողին հասցնելու խնդիր, գեղագիտականի իրենց հայեցակարգն էին ներկայացնում։*

Ասվածը վերաբերում է նաեւ Արիստակես վրդ. Լաստիվերցուն։ Նրա գեղագիտական հայացքները երեւան են գալիս իր երկի էջերում եւ գրեթե առանձնացված չեն բուն ասելիքից։ Հիշենք, որ միջնադարը հետեւողականորեն պաշտպանում էր աշխարհի՝ որպես Արարչի ստեղծագործության գաղափարը։ Այդ ստեղծագործությունը չէր կարող անկատար լինել, ուստի մարդկային մեղքերի պատճառով անկատար դարձածը պետք է ուղղվեր, որպեսզի վերադարձվեր նախնական կատարելությունը։

Լաստիվերցու անմիջական նախորդը՝ Գրիգոր Նարեկացին,[16] *իր մտորումներում նույնպես մասի եւ ամբողջի ներդաշնակությունն էր փնտրում։ Չկա լիարժեք կատարելություն, եթե ամեն ինչ կատարյալ չէ։ Մեկի մեջ ամենքն են, իսկ ամենքի մեջ բոլորն առանձին-առանձին պետք է հասած լինեն կատարյալին։ Սա «Մատեան....»-ի գլխավոր գաղափարներից է։*

Արիստակես Լաստիվերցին նույնպես Հայոց աշխարհի ամբողջական կատարելության (դրան հասնելու պայմանը մեղքից ազատվելն էր) դիրքերից է հայտնում իր ասելիքը։ Հետեւաբար նա նույնպես աշխարհն ընկալում է իր ամբողջության մեջ։ Եթե խախտված է մարդկային կյան-

---

հայացքները, «Սովետական արվեստ», 1980, թ. 6, էջ 19—24. ինչպես նաեւ Մովսես Խորենացու գրական-գեղագիտական հայացքները, ՊԲՀ, 1991, թ. 2, էջ 79—82։

[15] *Տե՛ս* С. Топчян, Армения, «История эстетической мысли», *նշ. աշխ., էջ 372—373։*

[16] *Ավելորդ չենք համարում նշել, որ ըստ որոշ ուսումնասիրողների՝ Արիստակես Լաստիվերցին նարեկյան դպրոցի ներկայացուցիչ էր, որին պատկանում էր եւ Գրիգոր Նարեկացին (Տե՛ս Հ. Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Բ., Երեւան, 1985, էջ 263—270)։*

քի ներդաշնակությունը, ուրեմն ամեն ինչ այնպես չէ այդ աշխարհում։ Այդ աշխարհը կորցնում է Աստծու պարգեւած գեղեցկության շնորհը։ Սա աշխարհն ամբողջական տեսնելու եւ պատկերելու՝ միջնադարյան մշակույթի առանձնահատկությունն էր[17], որի յուրովի արտացոլումը սեփական բնագրի տարածաժամանակում առկա է նաեւ Լաստիվերցու երկում։ Աշխարհի (իր աշխարհի) ամբողջության պատկերն առավել քան տեսանելի է երկի առաջին իսկ տողերից՝ սկսած «մենք» դերանվան գործածությունից մինչեւ ընդհանուր ճակատագրի ու ողբերգության բախտակցության նկարագրությունները։

Այսպես՝ Բագրատունի արքաներ Աշոտի եւ Հովհաննես-Սմբատի մահը նրա համար ազդարարում է նաեւ Հայոց աշխարհի կործանումը։ «Յորում շարժեցաւ աթոռ հաստատութեան նոցա, եւ այլ ոչ էառ զկայումն» *(էջ 555) տողին հետեւում է այն տեղեկությունը, թե ինչպես իշխանները զրկվեցին իրենց հայրենի ժառանգությունից ու պանդուխտ դարձան, գավառներն ավերվեցին ու կողոպտվեցին, շինանիստ ավանները դարձան գազանների բնակավայր, իսկ նրանց անդաստանները՝ երեների արոտավայր եւ այլն։ Նկարագրությունների շարքը, որտեղ Լաստիվերցին մաս առ մաս ցույց է տալիս ամբողջի՝ Հայոց աշխարհի կործանումը, կարելի է շարունակել։*

Նույն կերպ, երբ հակառակն է ուզում ցույց տալ եւ երբեմնի ներդաշնակությունը պատկերել, կրկին ընդհանուր պատկերը ներկայացնում է մաս առ մաս։ Պատմիչն անդրադառնում է հասարակության գրեթե բոլոր շերտերին՝ իշխաններին, հասարակ ժողովրդին՝ ուրախության ու խնջույքի պահին (դիմակահանդեսային տեսարանի ակնարկային հիշատակում[18]), ծերերին՝ խաղաղ ծերությունը, մայրերին՝ մայրության բերկրանքը վայելելիս եւ այլն[19]։

---

[17] Խոսելով միջնադարյան արվեստի մասին եւ զուգահեռներ տանելով գրականության հետ՝ Դ. Լիխաչովը նկատում է, որ միջնադարյան նկարիչը ձգտում է պատկերել առարկան իր ամբողջության մեջ։ Մարդը կտավի վրա տեղադրվում է այնպես, որ պարզ երեւան նրա 2 հավասարաչափ կողմերը։ Նկարիչն ստիպված է կրճատել առանձին առարկաների չափերը՝ դրանք ամբողջությամբ պատկերելու համար (տե՛ս Д. С. Лихачев, Избранные работы, Ленинград, *հտ. 1., էջ 534)։*

[18] Տե՛ս М. Бахтин, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, Москва, 1990, *էջ 9։*

[19] Միջնադարին առավել, քան մեկ այլ դարաշրջանի, բնորոշ են ծիսականությունն ու հասարակական կենցաղի կայունությունը։ Մարդկության պատմության այդ ժամանակահատվածի մասին ուսումնասիրողները համակարծիք են, որ այն թատերային է եւ

Պատմիչի պահանջած զղջումն անգամ անհատի կամ խմբի համար չէ։ Եթե Նարեկացու խոսքն անհատի խոսքն էր Աստծու հետ, որն իր փրկությունը բոլորի փրկության հետ է կապում, ապա Արիստակես Լաստիվերցին տեսնում էր, որ շատ հաճախ անհատները զոհ են գնում ընդհանուրի ստեղծած չարիքին։ Այս մտքի անմիջական հաստատումը Ղուկասի Ավետարանից մի վկայակոչումն է (հմմտ.Ղուկ. ԺԳ. 4—5)[20]։ Ըստ այդ հատվածի՝ Աստծու առջեւ բոլորը հավասար են։ Քրիստոս Իր խրատով ուզում է մարդու մեջ այն գիտակցումն արթնացնել, որը ցավակից է ուրիշի վշտին, ինչպես սեփականին, եւ չի մտածում, թե իր հետ դա չէր կարող տեղի ունենալ։ Այս գաղափարից ածանցվում էր մի կարեւոր հանգամանք. ապաշխարությունը բոլորի համար նույնը պետք է լինի, մեղքը զղջումով բոլորը պետք է քավեն։ Սա միավորման *քարոզ է, որի պակասը Լաստիվերցին զգում էր դեռեւս ԺԱ. դարում[21]։*

Կյանքի ու կատարյալ հասարակության մասին իր պատկերացումներում Արիստակես Լաստիվերցին գովերգում է միջնադարյան կենսաձեւը, որի աստիճանակարգային բնույթը պատկերանում է բուրգի տեսքով. վերեւում թագավորն է, այնուհետեւ աշխարհիկ եւ հոգեւոր տերերը՝ ըստ դիրքի, իսկ ներքեւում՝ արհեստավորներն ու շինականները։ «Պատմու-

---

ծիսականացված։ Նրա այս յուրահատկության մասին Հենրիկ Հովհաննիսյանը գրում է. «Միջնադարը ամենաթատերային դարաշրջաններից մեկն է։ Դա հատկանշված է հասարակական կենցաղի պայմանական ու կայունացված ձեւերով, բարքերի ընդհանուր ռիտուալիզմով եւ ցուցադրականությամբ։ ....Միջնադարում պարզունակորեն ու համերաշխ ի ցույց են դրված ե՛ւ հպարտությունն ու քաջությունը, ե՛ւ բարեպաշտությունը, աղքատությունն ու զրկանքը։ Ոչ ոք անբնական չի համարում Աստծուց տրված իր վիճակն ու հասարակությանը ներկայանում է իր սոցիալական դիմակով» (Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երեւան, 1978, էջ 16)։

[20] *«Գալիլեացիքն զորոց արիւնսն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա, համարիք թէ նոքա մեղաւո՞ր էին քան զամենայն մարդիկ, ո՛չ. այլ թէ ոչ ապաշխարիցէք, նոյնպէս ամենեքեան կորնչիցիք։ Կամ նոքա ութուտասանքն, յորոց վերայ աշտարակն անկաւ ՝ի Սիլոամ, եւ սպան զնոսա, համարիք թէ նոքա պարտապա՞նք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են յԵրուսաղէմ. ոչ ասեմ ձեզ, ա՛յլ թէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք» (Ղուկ. ԺԳ. 4—5)։*

[21] *Արժեւորելով այս հանգամանքը պատմականության դիտանկյունից՝ Կ. Յուզբաշյանը գրում է. «Մեր հեղինակը համահայկական պատմաբան է, նրա տեսադաշտում ողջ ազգի ճակատագիրն է, եւ սա շատ հարցերում որոշում է Պատմութեան փիլիսոփայական զեղումների ուղղվածությունը։ Հայ ժողովրդի միասնության գաղափարը, որը նշանակալիորեն պայմանավորված էր օտար նվաճողների դեմ մշտական դաժան պայքարի անհրաժեշտությամբ, արտացոլված էր դեռեւս հայ պատմագրական գրականության վաղ հուշարձաններում։ Արիստակես Լաստիվերցու երկում այդ գաղափարը հետագա զարգացումներ ունեցավ» (տե՛ս «Պատմութեան» ռուսերեն թարգմանության առաջաբանը՝* «Повествование вардапета Аристакэса Ластивертци», Москва, «Наука», 1968, *էջ 38—39)։*

թեան» գլուխներից մեկում (գլուխ Ժ.) նա մի ամբողջ հատված նվիրում է վերհուշին՝ ժամանակի անցյալ—ներկա բաժանումից կատարելության հայտարար դարձնելով անցյալը, որպեսզի գեղեցիկի կանոններով հյուսված մի պատկերով նկարագրի Գագիկ Ա.-ին։

Այդ իրականությունը համապատասխանում է ներդաշնակության իր պատկերացումներին։ Նկարագրության մեջ գործածվում են արտահայտություններ, որոնք այդ իրականության դրականի նշանակյալներն են։ «….Սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց» *(էջ 230),— գրում է պատմիչը Գագիկ Ա.-ի (990—1020 թթ.) թագավորության տարիների մասին, եւ այդ խաղաղության հետագա մեկնությունը գոյավորվում է քրիստոնեական իմաստաբանությամբ։ Կաթողիկոսը (Սարգիս Ա. Սեւանցի (992—1019 թթ.) ընտրվում է «շնորհիւն Աստուծոյ», եկեղեցական կարգերը պայծառանում են, սուրբ ուխտի մանուկները լուսավորվում։ Ի նշան ժամանակի բարորության՝ Լաստիվերցին անուն առ անուն հիշատակում է այդ ժամանակի մտավորականներին՝ ոմանց կարճ, բայց կարեւոր բնութագրեր տալով։*

Այս ամենից երեւում է, թե որքան ամուր են նրա մեջ ժամանակի պետական մտածողության հիմքերը։ Իսկ պետականության ամրությանը պետք է նպաստեր հասարակության ու դրա հիմքը կազմող մարդկային գոյերի ներդաշնակ կեցութաձեւը։

Հետաքրքիր է, որ Լաստիվերցին միշտ իր իրականության մեջ ունի օրինակելին ու ճիշտը, թեեւ մեծ է պատումն աստվածաշնչյան հերոսներով ու դեպքերով ընդմիջարկելու հակումը։ Այդպես նաեւ կատարյալ հասարակության մասին Լաստիվերցու պատկերացումները վերացական ու վերերկրային չեն։ Կյանքի իր կատարելատիպը պատմիչը գտնում է Արծն քաղաքի անցյալում։ Ըստ այդ իրականության՝ կատարյալ հասարակության մեջ իշխանները պետք է լինեն մարդասեր, դատավորները՝ արդարադատ ու անկաշառ, վաճառականները՝ եկեղեցի կառուցող, աղքատների հանդեպ ողորմած։ Վաճառքի մեջ չպետք է լինեն նենգություն ու խաբեություն, կաշառք, վաշխի եւ տոկոսի շահ։ Բարեպաշտությունը պետք է ամենքի առաքինությունը լինի, իսկ քահանաները լինեն սրբակյաց, աղոթասեր, եկեղեցու կարգերը պահպանող (տե՛ս էջ 572, գլ. ԺԲ. «Վասն Արծնին անողորմ կոտորածին»)[22]։

---

[22] *Նշված հատվածն անմիջական աղերսներ ունի Մովսես Խորենացու «Ողբ»-ի եւ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» համապատասխան հատվածների հետ թե՛ ոճի, թե՛ բովանդակության առումով։ Իհարկե, ազդեցության սկզբնաղբյուրն Աստվածաշունչն է։*

Սակայն այս ներդաշնակությունը խախտված էր իր ներկայում։ Աստծու ներդաշնակության մեջ, երկնային օրենքներին համապատասխան ապրելը մարդու առաքելության գլխավոր նպատակն էր. մինչդեռ իրականությունն այլ էր։ Իշխանները դարձել էին գողերին գողակից, վրիժառու եւ արծաթի ծառաներ, դատավորները՝ կաշառակեր, նույնիսկ ցորենի փոխատվության համար տոկոս էր սահմանվել։

Հասարակական այս կամ այն դերը կատարողներին ուղղված պատմիչի քննադատությունից անմասն չեն մնում նաեւ կանայք։ Նրանք մեղադրվում են ամբարտավանության ու իրերի աշխարհին պատկանելու մեջ, իրեր, որոնք սահմանափակում են ազատությունը, տեղ գրավում մարդու հոգում՝ հոգեւորի փոխարեն։ Այս քննադատությունը եւս գալիս էր միջնադարյան պատկերացումներից։ Ըստ այդ պատկերացումների՝ աշխարհը՝ որպես Աստծու կատարյալ ստեղծագործություն, ինքնին գեղեցիկ է։ Զարդերն ու պճնանքն ավելորդ են Աստծու այդ ստեղծագործության համար։

Նյութականի պաշտամունքն այնքան ատելի է պատմիչի համար, որ պատրաստ է անխնա քննադատել անգամ եկեղեցական կարգերը, եթե դրանք ամուր չեն մնացել իրենց հիմքերի վրա։ Սեքստացիների եւ պիհռոնացիների մուտքը եկեղեցի արդարության օրենքները փոխարկում է անօրինության, հարգի դարձնում արծաթասիրությունը (էջ 572)։ Արծնի կործանման նախապատճառներից մեկը, նույնիսկ ամենակարեւոր պատճառը Արիստակես Լաստիվերցին համարում է եկեղեցական կարգերի այս խախտումը, որովհետեւ անչափ կարեւորում է ճշմարիտ հավատի առաջնորդությունը մարդկանց կյանքում (հիշենք պատմիչի գոհությունն այդ կարգերից Գագիկ Ա. արքայի օրոք)։ Հասարակության ճիշտ կեցութաձեւի քայքայման առաջին մեղադրանքը եկեղեցուն ուղղելով՝ պատմիչը բացահայտում է նաեւ իր որոշ ըմբռնումներն աշխարհի մասին։

Ուսումնասիրողների պնդմամբ՝ Լաստիվերցին երկու անվանումով՝ սեքստացիներ *եւ* պիհռոնացիներ, *միեւնույն փիլիսոփայական ուսմունքն է հիշատակում*[23]*։ Խոսքը սկեպտիցիզմի (հուն. սկեպտոմայի — դիտար-*

[23] *Գ. Մանուկյանն առաջին բառի մեկնությունը տալիս է՝ մեջբերելով «Պատմութեան» ֆրանսերեն թարգմանչի՝ է. Պրյուդոմի կարծիքը, ըստ որի՝* պիհռոնացիք *ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե հին հույն սկեպտիկ փիլիսոփա Պյուհռոնին (365–275 թթ. մ. թ. ա.) եւ նրա հիմնած աղանդի հետեւորդներին, այլ ընդհանրապես բոլոր նրանց, ովքեր կասկածի տակ են դնում կրոնի ճշմարտությունները։ Սակայն հնարավոր է նաեւ, որ Արիստակեսը նկատի է ունեցել անհավատներին, ինչպես անվանել են նրանց հայ պատմիչները։* Սեքստացիք *բառի*

կում եմ, հետազոտում եմ, կասկածում եմ) մասին է, որը պաշտպանում էր աշխարհի անճանաչելիության մասին տեսությունը։ Ըստ սկեպտիկների՝ չկա հավաստի գիտելիք, հետեւաբար պետք է ձեռնպահ մնալ որեւէ բան հաստատելուց կամ ժխտելուց։ Մարդու կեցության գլխավոր նպատակը հոգու անխռովության հասնելն է, ինչը գործնականում նշանակում էր անտարբեր լինել ամեն ինչի հանդեպ[24]*։*

Պարզ է, որ այս տեսությունը ոչ մի կերպ չէր կարող տեղավորվել կյանքի մասին Լաստիվերցու պատկերացումներում։ Նախ՝ նրա համար կային ճշմարտություններ, որոնք կասկածից վեր էին, երկրորդ՝ իր նկարագրած իրավիճակում այսպիսի տեսությունները կործանարար կլինեին ազգի համար։ Վերջապես իր անձով անգամ նա ժխտում էր անտարբերությունը եւ անհատական «ես»-ը «մենք»-ին ձուլելով՝ նույնը պահանջում մյուսներից՝ որպես փրկության ելք։

Լաստիվերցու գեղագիտական ըմբռնումները բացահայտվում են ոչ միայն աշխարհայացքային հարցերի քննությամբ, այլ նաեւ գեղագիտական հասկացությունների յուրօրինակ արտացոլումներով։ Այսպես՝ գեղագիտական հասկացություններից «ամենաակնառուն»՝ գեղեցիկը, *նկատել-պատկերելու պատմիչի նախասիրությունը պատահական կամ ինքնանպատակ չէ։ Միջնադարում գեղագետը (նկարիչը, պատմիչը, վարքագիրը, ընդհանրապես այն անձը, որի գործում, ըստ արվեստի միջնադարյան համադրականության, կար նաեւ գեղարվեստ) համարվում էր Աստծու մտքի թարգմանը, միջոց՝ իր ստեղծագործությամբ այն մյուսներին հասցնելու համար։*

Գեղեցիկի հասկացությունը Լաստիվերցու համար ոչ միայն գեղարվեստ ստեղծելու միջոց է, այլ նաեւ նրա՝ կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի կրողը, կյանքն իմաստավորելու միջոցներից մեկը։

բացատրությունը տրվում է ըստ Նորայր Բյուզանդացու «Հայկական բառաքննութեան» (Կ. Պոլիս. 1880)։ Ենթադրվում է, որ սրանք Սեքստ-Էմպիրիկոսի հետեւորդներն են, որոնք կրկին ընդունում էին աշխարհի անճանաչելիության գաղափարը եւ նույնպես սկեպտիցիզմի եւ ագնոստիցիզմի կարկառուն ներկայացուցիչներ են, Պյուռոնի գաղափարների կրողներ։ Այս եւ այլ փաստեր ի մի բերելով՝ հետազոտողը գալիս է այն եզրահանգման, որ վերոնշյալ բառերը փիլիսոփայական նույն հոսանքի տարբեր անվանումներն են, որոնք քաղված են Գրիգոր Աստվածաբանի ճառերից։ Այդ անվանումների տակ պատմիչը նկատի է ունեցել այն հոգեւորականներին, որոնք հարել էին թոնդրակյան աղանդին կամ ավելի արծաթասեր էին, քան աստվածասեր։ Տե՛ս ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ*, Պատմություն, թարգմ.՝ Վ. Գեւորգյանի, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Գ. Մանուկյանի, Երեւան, 1971, էջ 134, ծանոթ. 120։*

[24] Ս. ԶԱՔԱՐՅԱՆ, *Փիլիսոփայության պատմություն, Երեւան, 2005, էջ 89։*

Առանց գեղեցիկի պատկերման Լաստիվերցին չի հյուսում անգամ ողբերգական տեսարանները, ինչից ածանցվում է գեղագիտականի մյուս ստորոգությունը՝ վեհը*։ Այս կապակցությամբ նշենք նաեւ, որ Լաստիվերցին ընդհանրապես աշալուրջ է գեղագիտական զգացողություն առաջացնող մյուս միջոցների նկատմամբ։ Հիշենք հենց թեկուզ «Պատմութեան»՝ չափածո կշռույթով գրված նախերգը, ուր առկա է* չափը՝ *որպես գեղագիտական դրսեւորում։*

Արիստակես Լաստիվերցու երկում ուշագրավ կիրառում են ստացել լույսի *եւ* գույնի *միջնադարյան ընկալումները։ Միջնադարյան արվեստում լույսի պատկերումն ունեցել է իր որոնումներն ու հայտնաբերումները։ Մանրանկարները[25] դրա լավագույն ապացույցն են։ Լաստիվերցու՝ լույսի պատկերումները մանրանկարչական արվեստի ավանդույթով են կերտված, քանի որ պահպանելով պատումի կրոնական հենքը՝ հյուսում են կյանքի կենսասիրական պատկերներ։ Ի դեպ, այդ ավանդույթն էլ գալիս էր ազգային մտածողության ամենահեռավոր խորքերից[26]։*

Արիստակես Լաստիվերցին լույսը պատկերում է ոչ միայն մարդու հոգում, այլ նաեւ արտաքին աշխարհում։ Այսինքն՝ այն ոչ միայն եւ ոչ այնքան ներքին դերով է հանդես գալիս, որքան արտաքին՝ նյութական կարեւորությամբ։ Ինչպես տեսնում ենք, գեղագիտական այսպիսի ըմբռնումն այն զարգացումն էր, որ ունեցել էր միջնադարյան միտքը. աշխարհիկ կյանքի քրիստոնեական իմաստավորումը, որը գեղեցիկը փնտրում էր նաեւ արտաքին աշխարհում ու մտքով *իմաստ հաղորդում այդ արտաքին աշխարհին, այն դարձնում իր հոգու մի մասնիկը։*

Արիստակես Լաստիվերցու գեղագիտական հայացքները ճիշտ հասկանալու համար կարեւորվում է եւս մի հանգամանք՝ մարդուն վերապահվող դերն աշխարհում։ Այս հարցն անմիջականորեն առնչվում է նաեւ Միջնադար—Վերածնունդ ժամանակային վեճերին։

Արիստակես Լաստիվերցու երկում քիչ չեն այն հատվածները, երբ նա քննադատում է մարդուն՝ հույսն ամբարտավանորեն սեփական ուժերի վրա դնելու, Աստծուն չապավինելու համար։ Գլուխներից մեկում բյու-

---

[25] *Այս մասին տե՛ս* Վ. ԴԵՒՐԻԿՅԱՆ, *Պայծառակերպությունը եւ Վարդավառի տոնը, Երեւան, 2006, էջ 13—14։*

[26] *Ըստ Տ. Իզմայլովայի՝ հայ մանրանկարիչների զվարթ աշխարհըմբռնումն ու դրանից ծագող գունային մեկնություններն սկիզբ էին առնում ազգային առասպելաբանությունից, ինչպես նաեւ բնության հետ ունեցած կենդանի ու անմիջական կապից (տե՛ս* Т. А. Измайлова, Армянская миниатюра XI века, Москва, 1979, *էջ 26)։*

զանդացիների կրած պարտությունը պատմիչը մեկնաբանում է զորքի առաջնորդների (Կամենաս, Ահարոն, Գրիգոր Մագիստրոս) պահվածքով։ Այդ երեքը ոչ թե Աստծուն են դիմում, այլ Լիպարիտին են օգնության կանչում, ուստի նրանց գործը դատապարտված է պարտության (տե՛ս էջ 577)։

Մեկ այլ գլխում (գլ. ԺԶ.) սուլթանի (Տուղրիլ)՝ Մանազկերտ քաղաքի պաշարումն անհաջողության է մատնվում, որովհետեւ Աստված նրա միտքը մոլորեցնում է։ Մի ուրիշ տեղում պատմվում է Գեորգի Մանյակի մասին, որի հղփանալը, սեփական արժանիքներով չափից դուրս տարվելն ու Աստծուց հեռանալը, ըստ պատմիչի, դառնում են նրա փառքի կորստյան եւ պարտության պատճառը (գլ. Ժ.)։ Նմանատիպ օրինակներ դարձյալ կարելի է նշել։

Արիստակեսի այսպիսի հայացքները նրա միջնադարյան մտածող լինելն են վկայում։ Վերածննդին բնորոշ մտածողությունը, ըստ որի՝ մարդը կարող էր վստահել իր ուժերին, Լաստիվերցու երկում բացակայում է։ Նույնիսկ դեպքերը մեկնաբանելու՝ պատմիչի կերպը, որում կրկին չափազանց գերակա է աստվածաշնչյան բնագիրը, եւ տեղի ունեցածը պատմվում է Սուրբ Գրքի իրադարձությունների համադրությամբ, դրա վկայությունն են։

*Եւ այդուհանդերձ նկատենք, որ մարդու մասին Լաստիվերցու պատկերացումները, որոնք քրիստոնեական բարեպաշտությանն են ենթակա, իրենց հետ բերում են գիտակցության մի ձեւ, որն առավել հին է, քան այդ բարեպաշտությունը։ Դա հայրենիքի հանդեպ սիրո եւ սեփական աշխարհը պաշտպանելու գիտակցումն է։ Մատյանի էջերը մեղքերի մասին ողբագին քննարկումներով լցրած պատմիչը գլուխներից մեկում այսպիսի տեսարան է ներկայացնում. թշնամին Մելիտենեն ավերելուց հետո մոտեցել էր Մորմրյանս բերդին, ուր պատսպարվել էին նաեւ մոտակա գյուղի բնակիչները։ Երբ թշնամու հրոսակախումբը մոտենում է բերդին, գլխավորը, վահանով պատսպարված, սկսում է «մեծամիտ ամբարտավանությամբ դժոխալուր խոսքեր» բարբառել։ Այս տեսնելով՝ քաղաքի իշխանը, հարմար պահը որսալով, սպանում է նրան («....*եւ որ ի յամրոցին իշխանն էր՝ դիպաւղ ժամու մնացեալ, ի թիւրիլ ասպարին, եւ նա զփողիցն հարեալ նետիւ՝ առ ժամայն սատակեաց» *(էջ 609)*[27]։*

[27] *«Ամրոցի իշխանը, որ հարմար միջոցի էր սպասում, երբ մի կողմ ծռվեց վահանը, նետով խփելով նրա կոկորդին՝ տեղնուտեղը սատակեցրեց» (թարգմ.՝ Վ. Գեւորգյանի, էջ 85)։*

Ինչպես տեսնում ենք, մեղքի մասին Լաստիվերցու պատկերացումները երբեմն պատրաստ են շեղվելու նորկտակարանային բարության քարոզներից։ Այսպիսի դեպքերում մարդու նրա կատարելատիպը չի նույնանում աստվածաշնչյան կատարելատիպին։ Պատճառը, իհարկե, հայրենասիրության ստորոգությունն *է, ինչը միշտ իրենց երկերի բազում իմաստներում կարեւորել են մեր պատմիչները։*

Ստեղծագործության առեղծվածի ժամանակակից ուսումնասիրողներից մեկը, ստեղծագործության հիմքում հենց գեղեցիկի ընկալումը տեսնելով, այդ մասին գրում է. «Գեղագիտականի ողջ հարստությունն ու խորությունը կարող է բացահայտվել միայն ճշմարտության եւ բարոյականի համամարդկային հարթությունների բարձունքներում՝ ազատ եսայինից, տեղայնական-սոցիալական, թե ազգային կապանքներից»[28]։ Այս պայմանն Արիստակես Լաստիվերցու երկում իրականացված է, քանի որ «մենք»-ի անունից հանդես եկող եւ իր ազգի ցավը ողբերգող պատմիչը մնում է համամարդկային արժեքների սահմաններում։ Դրա լավագույն եւ պարզ ապացույցն աստվածաշնչյան վկայակոչումներն ու հիշատակումներն են, որ յուրօրինակ բնագրային երկխոսություն են ստեղծում Սուրբ Գրքի եւ «Պատմութեան» միջեւ։

РЕЗЮМЕ

История историка XI века Аристакэса Ластивертци создавалась по правилам средневековой христианской эстетики, что отражалось в трактовках историком действительности, характеристиках действующих лиц, размышлениях историка о грехе и искуплении. Средневековье последовательно отстаивало представление о мире как сотворении Творца. Это творение не могло быть несовершенным, ибо то, что стало несовершенным из-за человеческих грехов, должно было быть исправлено, чтобы восстановить изначальное совершенство. Подобно своему гениальному предшественнику Григору Нарекаци, архимандрит Аристакэс говорит от общего имени (в данном случае армянского народа), поэтому он и воспринимает мир во всей его полноте. Идеалом че-

[28] Հր. Շաքարյան, *Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում, Երեւան, 2002, էջ 68–69։*

ловека в характеристике Аристакэса Ластивертци является интеллектуальная система Средневековья. самостоятельность его возрождения неприемлема для историка. Эстетические категории прекрасного, возвышенного,добра, света и цвета имеют уникальное применение в сочинении Аристакэса Ластивертци, но особое значение имеет категория патриотизма, которая при необходимости отклоняется даже от требования доброты и смирения христианского учения.

SUMMARY

The “History” of the 11th century historian Aristakes Lastivertsi was created according to the rules of medieval Christian aesthetics, which was reflected in the historian’s interpretations of reality, descriptions of the acting characters, and thoughts about sin and atonement. The Middle Ages consistently upheld the view of the world as the creation of the Creator. That creation could not be imperfect, so what had become imperfect because of human sins had to be corrected in order to restore the original perfection. Like Gregory of Narek, his brilliant predecessor, Archimandrite Aristakes speaks on behalf of the whole (in this case, the Armenian nation); therefore, he also perceives the world in its entirety. The ideal of man in the characteristics of Aristakes Lastivertsi can be found in the intellectual system of the Middle Ages: the independence of its revival is unacceptable for the historian. The aesthetic categories of beautiful, noble, good, light and color have unique usages in the work of Aristakes Lastivertsi, but of particular importance is the category of patriotism, which, if necessary, deviates even from the requirements of kindness and humility of the Christian faith.

Doi: 10.56737/2953-7843-2022.8-64

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

1920 Թ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԵՒ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ[1]

1920 թ. սեպտեմբերի 22-ին վերագրավելով Օլթին՝ թուրքական զորքերը Քյազիմ Կարաբեքիրի ղեկավարությամբ սեպտեմբերի 23-ին սկսեցին ընդհանուր հարձակում Հայաստանի վրա[2]։ Դա միանգամայն անսպասելի էր երկրի ղեկավարության համար, որը լիովին անտեղյակ էր մինչ այդ սահմանից այն կողմ կատարվող իրադարձություններին։ «Հայաստան, այսպես, հանկարծակիի եկավ,— գրում է Կարո Սասունին,— որովհետեւ դիվանագիտական ոչ մեկ հարաբերություն ուներ Անկարայի հետ եւ չէր գիտեր այդ պաշարված ու ընդարձակ երկրի ներքին անցուդարձերը։ Իսկ զինվորական հետախուզությունը շատ ողբալի վիճակ մը ուներ։ ....Մինչդեռ թրքական Արեւելյան բանակի հրամանատարությունը, օրը օրին, ճշգրիտ տեղեկություններ կստանար մեր զինվորական եւ քաղաքական վիճակի մասին»[3]։

Կատարյալ անտեղյակության հետ մեկտեղ, ինչպես նշում է Համբարձում Տերտերյանը, Հայաստանում միանգամայն սխալ պատկերացում կար քեմալական շարժման եւ Քեմալի ռազմական ուժերի վերաբերյալ, եւ «պետական ու կուսակցական որոշ շրջաններում այն կարծիքն էր իշխում, որ քեմալական ուժերի հետ բախման պարագային հայկական

---

[1] Հոդվածը ստացվել է 7.10.2022, գրախոսվել է 6.12.2022։*

էլ. փոստ՝ hayruniashot@gmail.com։

[2] Յ. Իրաձեկ, *Մոտիկ անցեալից. պատմական դէպքեր եւ ապրումներ 1917—1922, Պէյրութ, 1956, էջ 67։ Հմմտ.* Սիմոն Վրացյան, *Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 1993, էջ 493։*

[3] Կ. Սասունի, *Հայ-թրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969, էջ 47։ Այն մասին, թե թուրքական հետախուզությունը «բարեկամ հայերի» եւ «մոլոկանների» միջոցով որքան լավ էր իրազեկված հայկական կողմում տեղի ունեցող իրադարձությունների, այդ թվում՝ ռազմական գաղտնի որոշումների մասին, Կարսում Կորյուն քահանա Քոթանջյանին վկայել է նաեւ թուրքական 9-րդ դիվիզիայի հրամանատարը։ Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան, 2006, թիվ 1, էջ 107։*

զօրամասերը հեշտութեամբ կարող են գրաւել Էրզրումը եւ Էրզրումի բարձրաւանդակը»[4]։

Հայ ռազմական, քաղաքական եւ կուսակցական շրջաններում միասնական իրատեսական գնահատումներ ի հայտ չեն գալիս նաեւ հարձակմանը հաջորդող օրերին։ «Զինուորականները հաւար էին ձգում, որ տաճիկ կանոնաւոր ուժերի հետ գործ ունինք,— գրում է Արտաշես Բաբալյանը։— Նահանգապետը պնդում էր, որ յարձակում գործողը ամբոխն է թիւրք կոմիսարների ղեկավարութեամբ, եւ որ քիչ ուժ է հարկաւոր թշնամուն երկրից դուրս հանելու համար։ Ընդհանուր հրամանատարի եւ զինուորական նախարարի տեղեկութիւնները սրանցից հարուստ չէին։ Տիրում էր կատարեալ անտեղեակութիւն։ Կառավարութեան մէջ մտքերի շփոթ էր»[5]։ Այդ ընթացքում անակնկալի եկած հայկական զորամասերը խուճապահար նահանջում էին։ Եւ երբ թուրքերը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, արագորեն առաջանալով, սեպտեմբերի 29-ին գրավեցին Սարիղամիշը, իսկ սեպտեմբերի 30-ին՝ նաեւ Մերդենեկն ու Կաղզվանը, «թէ՛ կառավարությունը եւ թէ՛ հայ ժողովուրդը նոր զգացին, որ հայրենիքը վտանգի մեջ էր»[6]։ Այդ ամենը նկատի առնելիս չպետք է զարմանալ, որ հարձակումից մեկ շաբաթ անց միայն՝ սեպտեմբերի 30-ին, կառավարությունն արտակարգ նիստ գումարեց՝ երկիրը հայտարարելով պատերազմական դրության մեջ։ Զորավար Մովսես Սիլիկյանը նշանակվեց Կարսի ճակատի ընդհանուր հրամանատար եւ մեկնեց Ալեքսանդրապոլ, իսկ Սուրմալուի ճակատի պաշտպանությունը հանձնվեց Դրոյին[7]։ Երբ թուրքերը Սարիղամիշը գրավեցին, հայկական զորքերը, առանց նրանց հետ շփման մեջ մտնելու, շարունակեցին նահանջել եւ դիրքեր զբաղեցրեցին միայն Կարսի մերձակայքում ու նրանից 20 կմ հեռավորության վրա գտնվող բարձունքներում[8]։ Այդ պարպված շրջանները նույնպես գրավելով՝ թուրքական զորքերը կանգ առան, եւ սկսվեց մոտ մեկ ամիս տեւող հարաբե-

---

[4] Հ. Տէրտէրեան, Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները. Լեւոն Շանթի պատուիրակութիւնը, մաս երկրորդ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1954, թիվ 5, էջ 6։

[5] Ա. Բաբալեան, Կարսի անկումը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, թիվ 12, էջ 54։

[6] Կ. Սասունի, նշ. աշխ., էջ 49։

[7] Տես Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ, հտ. Ե., Պէյրութ, 2007, էջ 166։

[8] Տես Կ. Սասունի, նշ. աշխ., էջ 193։

րական ժամանակավոր դադար, որի ընթացքում միայն դիրքային մարտեր էին տեղի ունենում: Քեմալականները հարձակումը վերսկսելուց առաջ ուզում էին շոշափել Ռուսաստանի եւ Անտանտի տրամադրությունները, միաժամանակ նաեւ ճշտել իրենց պատկերացումը Հայաստանի դիմադրական կարողության վերաբերյալ: Անշուշտ, դրանով բավականաչափ ժամանակ էր ընձեռվում նաեւ հայկական կողմին՝ ստեղծված իրադրության վերագնահատման եւ համարժեք քայլեր կատարելու համար: Ցավոք, սակայն, դրանք տեղի չունեցան:

ՀՀ կառավարությունն ստեղծված դադարի ժամանակահատվածում գլխավորապես զբաղված էր Անտանտի դաշնակիցների օգնությունը հայցելով, որը, սակայն, սահմանափակվում էր միայն հուսադրական եւ սին խոստումներով, իսկ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բորիս Լեգրանի առաջարկը՝ հայ-թուրքական խնդիրների կարգավորման համար որպես միջնորդ Ռուսաստանին ներգրավելու վերաբերյալ, ինչին Քեմալական Թուրքիան ամիսներ առաջ համաձայնել էր, ուղղակիորեն մերժվեց:

Հարձակվող թուրքական զորքերի թվաքանակի մասին միանգամայն տարբեր տեղեկություններ են ի հայտ եկել: Ալեքսանդր Խատիսյանը նշում է, որ իրեն չի հաջողվել գոնե մոտավոր ճշգրտությամբ պարզել այդ թիվը[9]: Ըստ զորավար Թովմաս Նազարբեկյանի՝ թուրքական զորքերի թվաքանակը հասնում էր 20 000-ի[10]: Գնդապետ Ալ. Կորոլկովի տեղեկությունների համաձայն՝ Ք. Կարաբեքիրն ուներ մոտ 11 000 զինվոր[11]: Ըստ Կ. Սասունու՝ թուրքական կանոնավոր զորամասերի թիվը 25 000 էր[12], ըստ Վրացյանի՝ 25 000—30 000[13]: Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչի՝ դաշնակիցներին հաղորդած տեղեկության համաձայն՝ թուրքական կանոնավոր զորքերի թիվը հասնում էր մինչեւ 12 000-ի[14]: Ա. Բաբալյանի հաշվարկներով՝ թուրքական զորամասերի ընդհանուր անձնակազմի թիվը 9000—10 000-ի

---

[9] *Տե՛ս* Ալ. Խատիսյան, *Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Երեւան, 2018, էջ 312:*

[10] *Տե՛ս անդ, էջ 313:*

[11] *Տե՛ս «Մարտական գործողությունները Կարս—Ալեքսանդրապոլ ուղղությամբ հայկական բանակի սպայի հուշերում», աշխատասիրությամբ՝ Վլադիմիր Հարությունյանի, Երեւան, 2019, էջ 49:*

[12] *Տե՛ս* Կ. Սասունի, *նշ. աշխ., էջ 163:*

[13] *Տե՛ս* Ս. Վրացեան, *նշ. աշխ., հտ. Ե., էջ 165:*

[14] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 6:*

էր հասնում, իսկ Ք. Կարաբեքիրի կողմից Ալեքսանդրապոլում Խատիսյանին հաղորդած տեղեկության համաձայն՝ նա ունեցել է միայն 8000-անոց զորք[15]: Ըստ Վրաստանի ռազմական նախարարության եւ Թիֆլիսում Անգլիայի ներկայացուցիչ Ստոքսի տեղեկությունների՝ Հայաստան ներխուժած թուրքական ամբողջ զորքի թիվը կազմում էր 18 000[16]:

Հայկական զորքերի թվի մասին տեղեկությունները նույնպես զգալիորեն տարբերվում են: Ըստ Ալ. Խատիսյանի՝ զորակոչի շնորհիվ զինվորագրվածների, թիկունքային ծառայողների եւ բանակային այլ աշխատողների հետ միասին հայկական բանակի թվակազմը հասնում էր 40 000-ի[17]: Ըստ Ս. Վրացյանի՝ պատերազմի նախօրեին հայկական կանոնավոր զորքի թիվը հասնում էր 20 000-ի[18]: Ա. Բաբալյանի տեղեկությունների համաձայն՝ Սարիղամշի եւ Մերդենեկի ճակատներում մեր զորքերը թվով շուրջ երկու անգամ գերազանցում էին թշնամուն, իսկ Իգդիրի ճակատում նրան չէին զիջում[19]: Հայկական զորքերի թվական գերազանցությունը վկայում է նաեւ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը՝ նշելով, որ նրանք չորս անգամ գերազանցում էին թշնամուն[20]:

Հայկական զորամասերի թվակազմի վերաբերյալ տեղեկությունների զանազանությունը պայմանավորված էր նրանով, որ հստակ վիճակագրություն այդ մասին չի կատարվել: Եթե վերոնշյալ եւ այլ՝ համեմատաբար հավաստի թվերը, տարբերություններով հանդերձ, փորձենք համադրել, կարելի է եզրակացնել, որ երկու կողմերի ուժերը թվաքանակով միմյանցից առանձնապես չէին տարբերվում: Դա վկայում է նաեւ Հակոբ Տեր-Հակոբյանը, ըստ որի՝ պատերազմն սկսվելու պահին հայկական բանակն ուներ 23 000-անոց զորք, որի թիվը նոր զորահավաքների հետեւանքով էապես աճեց: Այնպես որ Կարսի անկման ժամանակ հայկական զորքերի թիվը հասնում էր 55 000-ի, որոնցից 32 000-ը տեղակայված էր ռազմաճակատում, իսկ մնացյալը թիկունքային ուժեր

---

[15] Տե՛ս Ալ. ԽԱՏԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 313:

[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 42:

[17] Տե՛ս Ալ. ԽԱՏԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 313:

[18] Տե՛ս Ս. ՎՐԱՑԵԱՆ, նշ. աշխ., հտ. Ե., էջ 165:

[19] Տե՛ս Ա. ԲԱԲԱԼԵԱՆ, նշ. աշխ., էջ 57–58:

[20] Տե՛ս «Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 ապրիլ – 1920 հոկտեմբեր). Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը», աշխատասիրությամբ՝ Վլ. Յարութիւնեանի, Երեւան, 2018, էջ 151:

էին, ընդ որում՝ այդ 32 000-ից 23 000-ը Կարսի ճակատում էր[21]։ Ինչ վերաբերում է թուրքական ուժերին, ապա Կարսի ճակատում թուրքական կանոնավոր զորքերի թիվը հասնում էր 15 000–17 000-ի, իսկ Սուրմալու–Իգդիր ճակատում՝ 7000–8000-ի[22]։ Թվերը, սակայն, էական նշանակություն չունեին պատերազմի ելքը որոշող բազմաթիվ այլ գործոնների շարքում։ Կարսի ճակատում գտնվող հայկական բանակում տիրում էր զանգվածային բարոյալքում՝ պայմանավորված մի շարք իրողություններով։ Թուրքական ներխուժումից հետո Կարսի զորքերի հրամանատարության ձեռնարկած նահանջը դեպի Կարս, ինչպես փաստում են ժամանակակիցները, ամենևին արդարացված չէր եւ վկայում էր պատերազմելու՝ Կարսի զորահրամանատարության անկարողությունը՝ ի դեմս գեներալներ Դանիել Բեկ-Փիրումյանի եւ Արտյոմ Հովսեփյանի։ Դա տարածքների չպատճառաբանված կորստի հետ մեկտեղ հոգեբանորեն բարդութավորում էր հայ զինվորներին, իսկ հարձակվող թուրքերին՝ ոգեւորում։ «Կաղզուանը մեր զօրքը դատարկեց երկու ժամուայ ընթացքում,– գրում է Ս. Ղորղանյանը,– իսկ մի շաբաթից յետոյ եկողները պատմում էին, որ այնտեղ թուրք զօրքի մասին ոչ մի տեղեկութիւն չկար։ Իսկ ո՞ւմ առջեւից էր փախչում մեր զօրաբանակը, եւ թէ ինչո՞ւ էին բոլորը Կարսի թնդանօթների հովանու տակ կուտակւում՝ այդ մի գաղտնիք էր, ուր թափանցում էին միայն մեր գեներալներն ու սպաները։ Նրանք ասում են, որ «ռազմական միտումներով» նոցա պէտք է օր առաջ դէպի Կարս քաշել մեր ամբողջ զօրաբանակը եւ այնտեղ երեւի թիւրքերին ջարդել։ Բայց այդ ռազմական միտումները բերեցին մեզ ոչ միայն Կարս, այլ Ալեքսանդրապոլ, եւ հայ ժողովուրդը կարօտ մնաց այն ճակատամարտին, որ երկու ամսից աւելի նահանջելով՝ գեներալ Փիրումով պատրաստւում էր տալու Կարաբեքիր փաշային»[23]։ Այդ մասին ուշագրավ վկայություն է կատարում նաեւ Ա. Բաբալյանը։ «Սարիղամշի պարպումից յետոյ թշնամու փոքրաթիւ ուժերի դիմաց,– գրում է նա,– մեր հրամանատարութիւնը մի քանի անմիտ կարգադրութիւններով յետ քաշեց զօրքը։ Թշնամու ճնշման տակ չէին կատարուած այդ նահանջները։ Երեք անգամ զօրավար Յովսէփեանի պնդումին վրայ, մեր բանակը յետ քաշեցին՝ բռնելու համար իբր թէ աւելի նպաստաւոր

[21] Տե՛ս Յ. Տեր-Յակոբեան, Հայաստանի վերջին աղէտը, Կ. Պոլիս, 1921, էջ 88։
[22] Տե՛ս անդ, էջ 93։
[23] «...Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 162–163։

դիրքեր։ Երեք անգամ էլ մենք առարկել ենք այդ կարգադրութիւնների դէմ եւ միշտ պատասխան ենք ստացել, որ նոր դիրքերը աւելի յարմար, աւելի ամուր են։ Իրապէս զօրքը, մէկ ու կէս ամսուայ ընթացքում չտեսնելով թշնամուն, ընդհարում չունենալով նրա հետ, միշտ յետ ու յետ գալով պիտի բարոյալքուէր։ Եւ հայ զինուորը պիտի ճնշուէր ու թշնամու մասին գերազանց կարծիք ունենար, իսկ թշնամին պիտի սրտապնդուէր եւ աւելի յաւակնոտ դառնար»[24]։ Հայկական բանակի բարոյալքումը, սակայն, շատ ավելի խոր արմատներ ուներ։

Կարսում գտնվող երկու բարձրագույն զորահրամանատարները՝ գեներալներ Փիրումյանը եւ Հովսեփյանը, զբաղված էին ոչ թե բանակի, պատերազմի եւ պաշտպանության խնդիրներով, այլ Օլթիի եւ այլ վայրերի քուրդ եւ թուրք բնակչության թալանով՝ դրա համար զանազան պատրվակներով օգտագործելով կանոնավոր զորամասերը։ Այդ մասին բազմաթիվ են վկայությունները[25], եւ դրա օրինակներից է Շորագյալի ու Զարիշատի միջեւ ընկած թուրքական գյուղերի զինաթափման շղարշի տակ այնտեղ իրագործված կողոպուտը։ «Ոմբակոծելով թնդանօթներով Շորագեալից Զարուշատի թուրք գիւղերը՝ նա (գեներալ Հովսեփյանը.— Ա. Հ.) սարսափելի թալանի ենթարկեց այդ երկու գաւառակների թուրք գիւղերը։ Տասնեակ գիւղեր թողնելով տուն, տեղ՝ փախան լեռները, բայց փախան զէնքով, եւ գեներալ Յովսէփեան, որ այդչափ մեծ զօրաբանակ ունէր՝ չը կարողացաւ մի հրացան անգամ ձեռք բերել։ Եւ այդ շատ բնական էր ի հարկէ։ Մեր ահարկու զօրաբանակը ժամանակ չունէր այդ գործով զբաղուելու, մենք տենդոտ կրում էինք միայն թուրքերի թողած հարստութիւնը՝ հացը, գորգերը, տաւարը եւ այլ իրերը։ Սպայութիւնը, հրամանատար կազմը՝ ժամանակ էլ չունէր զբաղուելու զինաթափութեան գործով, նա քշում էր դէպի Կարս, Աղեքսանդրապոլ եւ Երեւան իր մեծ յաղթանակը՝ տաւարի, ոչխարի անվերջ հօտեր, գորգերով ու պղնձի անօթներով բարձած սայլեր եւ ամբողջ վագոններ։ ....Երբ թալանի աղմուկը տարածուեց ամեն տեղ, Երեւանից սպարապետը ծածկագիր հեռագրով սպառնալից պահանջում էր գեներալ Փիրումովից վերջ տալ այդ մեծ, խայտառակ ամօթին, բայց ի հարկէ սպարապետին ոչ լսող կար եւ ոչ էլ հրամանը կատարող»[26]։

---

[24] Ա. Բաբալեան, նշ. աշխ., էջ 60։

[25] Տե՛ս «....Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 347, 365։

[26] Անդ, էջ 319–320։

Այդ եւ բազմաթիվ այլ նման դեպքերում ձեռք բերված «պատերազմական» ավարը, սակայն, տրամադրվում էր ոչ թե բանակի կամ ժողովրդի կարիքների բավարարմանը, այլ յուրացվում էր եւ մասամբ էլ բաշխվում զորահրամանատարների, «կուսակցական քաղաքագլուխների» եւ նրանց մերձավորների միջեւ[27]։ «Ժողովրդի մեջ ընդհանուր խոսակցության եւ քննադատության առարկա էր հատկապես գեներալ Հովսեփյանը յուր մի քանի սպաների հետ,— գրում է Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը,— նորան «թալանչի» եւ «անասունների վաճառական» էին անվանում, որ թուրք եւ քուրդ տարրերից հափշտակելով նրանց անասունները, որպես խռովարարների պատժելու պատրվակով, վաճառում էր Վրաստանի վերա։ Խոսվում էր հենց այդ օրերը, որ նա, յուր եղբոր անասունների հետ, հափշտակված նախիրներ էր ուղարկել Վրաստան, յուր իսկ զինվորների պաշտպանությամբ։ ....Հարկավոր չէ բացատրել, թե ինչ ներգործություն պիտի ունենային շարքային զինվորների վերա իրենց գեներալի մասին այսպիսի զրույցները, որ թռչում էին բերնեբերան»[28]։

Թալանի եւ այլ վարկաբեկիչ գործողություններով Հովսեփյանին չէր զիջում նաեւ Դ. Բեկ-Փիրումյանը։ Բնութագրական է, օրինակ, նրա՝ Կարսից մի կուսակցական ընկերոջ ուղարկած հրավերը. «Քեֆ, հալ, ինչպէս ես, անպատճառ պէտք է գաս ինձ մօտ Կարս, քո բաժին թալանը պահել եմ»[29]։

Երկու զորավարներն էլ, ինչպես դիպուկ կերպով նշում է Գ. Եազըճյանը, ունեին «ապազգային-հակաազգային եւ հակապետական» նկարագիր[30]։ Բնականաբար զորահրամանատարության թալանի մոլուցքը պետք է վարակեր նաեւ սպայությանը, որի մի զգալի մասը ռուսախոս էր, չէր տիրապետում հայերենին, անտեղյակ էր «երկրին, մեր պահանջներին եւ մեր պատմութեան իմաստին»[31], իսկ մի մասն էլ առհասարակ զուրկ էր սպայական կրթությունից ու գիտելիքներից։ «Այստեղ էին մեր եկեղեցիների նախկին տիրացուները,— գրում է Ղորղանյանը,— ծխական ուսումնարանների վարժապետները, խանութների գործակատարները, աշակերտներ, սափրիչներ, եւ վերջապէս՝ մեր բուրժուազիայի հարուստ

---

[27] *Անդ, էջ 320–321։*

[28] *Տես «Գարեգին Հովսեփյանի օրագիրը», Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան, 1989, թիվ 3(85), էջ 117։*

[29] *«....Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 321։*

[30] Գ. ԵԱԶԸՃՅԱՆ, *Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Բ. հրատարակություն, Երեւան, 2009, էջ 29։*

[31] *«....Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 298։*

եւ մեծատուն զաւակները, որոնք առանց մի բառ հայերէնի՝ մի կերպ ուզում էին պատսպարուել հայկական զօրաբանակում, մինչեւ որ ճանապարհները բացուեն, եւ քաղաքական հորիզոնը պարզուի...»[32]։

Սպաները, հետեւելով իրենց հրամանատարներին, նոյնպես լիովին տարված էին թալանով՝ այդ նպատակով օգտագործելով իրենց ենթակա զինվորությանը։ Եւ այդ ընթացքում նրանք այնքան էին անտեսում իրենց տարրական պարտականությունները, որ, օրինակ, Օլթիի գրավումից հետո, երբ սպաները զինվորներին լծել էին լքված գյուղերի հարստությունը կրելու գործին, հայկական առաջավոր դիրքերն այն աստիճանի բարձիթողի դրության էին մատնվել, որ թուրք բաշիբոզուկներն այնտեղից տանում են հայկական ութ թնդանոթները[33]։

Ինչպես նշում է նահանգապետը, այդ դեպքը բնակչությանը եւ հակառակորդին ցուցադրեց հայկական կողմի «....անփոյթ, անհոգ եւ ապիկար դրութիւնը։ Երկիրը տեսաւ, որ սահմանագիծը տիրում է ոչ թէ պետական զօրքը, այլ մարդկանց մի բազմութիւն, որ զբաղուած է թալանով եւ կեղեքումով միայն։ Եւ այդ զօրքը այլեւս սպառնալից չէր, նա ինքն էլ կորցրել էր իր հաւատը դէպի իր կարողութիւնը, եւ այդպէս խախտում էին մեր պետականութեան արմատները»[34]։

Ղորղանյանն անմիջապես տեղյակ է պահում այդ մասին վարչապետին եւ ռազմական նախարարին՝ պահանջելով կազմել կառավարական հանձնաժողով՝ դեպքը քննելու համար՝ միաժամանակ վերջինիս ուղարկելով նաեւ մոտ հարյուր թերթից բաղկացած նյութերի ու փաստաթղթերի մի մեծ կապոց նահանգում զորահրամանատարության եւ սպաների կողմից կատարված անօրինականությունների վերաբերյալ։ Նա լիահույս էր, որ նման հանձնաժողովի կողմից հարցի բարեխիղճ քննությունը կարող էր արմատապես փոխել իրադրությունը եւ կանխել հետագա խայտառակությունները։

Նահանգապետի դիմումները, սակայն, որեւէ արդյունք չեն տալիս։ «Այդ յանձնաժողովը,— գրում է նա,— կը ցրէր վարակուած ու թունալից մթնոլորտը, նա կը հեռացնէր այդ անընդունակ եւ ողորմելի գեներալներին, նա գէթ կը ցրէր սպաների այն գիշատիչ բազմութիւնը, որ մեր զինուորական զրահի տակ միայն թալանել եւ կոփել են, եւ նա այդպիսով

---

[32] *Անդ, էջ 316–317։*
[33] *Տե՛ս անդ, էջ 348։*
[34] *Անդ, էջ 349։*

կը փրկէր դրութիւնը։ Եւ անկասկած մենք այդ ժամանակ այլեւս չէինք նահանջի Մերդենեկից, մենք առանց որեւէ պատճառի չէինք դատարկի կաղզուանը, անտեսանելի թշնամու առջեւից չէինք փախչի կարակուրտից (թունավոր սարդ է.— Ա. Հ.), եւ առանց որեւէ տուեալների չէինք թողնի Սարիղամիշը, ամբողջ երկաթուղու գիծը, եւ առանց մի գնդակ անգամ արձակելու ամենաանամօթ կերպով անձնատուր չէինք լինի Կարսի անմատչելի եւ անառիկ պարիսպներում։ ....Բայց թէ ինչ եղաւ այդ հետաքրքիր եւ յամենայն դէպս մեծ պատմական նշանակութիւն ունեցող դօկումենտների կապոցը՝ չը գիտեմ, կարող եմ այն միայն ասել, որ իմ այս դիմումս էլ մնաց առանց որեւէ հետեւանքի, եւ այդ Յովսէփեանները, Փիրումովները, Միրիմանովները եւ Մազմանովները շարունակում էին «ընդհանուր» գործը։ Խրախուսուած եւ քաջալերուած իրանց թիկունքում զգալով այնպիսի անխորտակելի ժայռ՝ որպէս Ներքին եւ զօրաց մինիստր Ռուբէն, այդ սպաներն ու գեներալները շարունակում էին իրանց յաղթական արշաւը երկրի ներսում, ահաբեկելով եւ կեղեքելով քրդերին, թուրքերին եւ նոյնիսկ հայերին»[35]։ Ինչ խոսք, որ հարստանալու տենչով տարված զորահրամանատարությունը եւ նրա՝ թալանի քաղաքականությունը, որի համար նրանք օգտագործում էին թէ՛ սպաներին եւ թէ՛ շարքային զինվորներին, չէին կարող վերջիններիս մեջ վառ պահել հայրենիքի եւ պետականության, պարտքի եւ պատասխանատվության գաղափարները։ «Թուրք գիւղերի շրջանում մեր այդ աւանտիւրան միանգամայն երերեց երկրի իրաւակարգը եւ լքեց (նկատի ունի՝ բարոյալքեց.— Ա. Հ.) զօրքը,— գրում է Ղորղանյանը։ Շարքային զինուորութիւնը կապ չունէր հրամանատար կազմի հետ։ Գեներալները եւ սպաները խորթ մարդիկ էին հայ զինուորի, հայ գիւղացու համար։ Եւ, բացի այդ, նրանք ոչ մի բարոյական հեղինակութիւն չէին ներկայացնում հայ զինուորի աչքում։ Այդ հրամանատար կազմը, ձգտում էր միայն ապահովելու իրեն, եւ անում էր այդ ոչ միայն զինուորի աչքի առաջ՝ այլեւ նորա միջոցաւ։ Գաղափարական, ազգային նոյնիսկ հեռաւոր սկզբունքների մասին խօսելն անգամ աւելորդ էր»[36]։ Բնութագրական է, որ ինքնամեծարումով, թալանի եւ հարստանալու մոլուցքով տարված, իսկ իր բուն պարտականություններում անգործության մատնված Կարսի զորահրամանատարու-

[35] *Անդ, էջ 351–352։*
[36] *Անդ, էջ 325։*

թյունը չէր կարողանում հանդուրժել արեւմտահայ զորահրամանատարների, օրինակ՝ Սեպուհի ներկայությունը Կարսում, որի զորամասն աչքի էր ընկնում իր կարգապահությամբ եւ մարտունակությամբ, եւ զանազան բանսարկություններով փորձում էր Սեպուհին մեկուսացնել, իսկ նրա զորամասը՝ կազմալուծել[37]։

Գեներալների անբարեհաճությանն էին արժանանում նաեւ այն սպաները, որոնք չէին ենթարկվում թալանի եւ անմաքուր գործարքների՝ հրամանատարության պահանջներին։ Այդպիսին էր առաջին գնդի հրամանատար գնդապետ Հարությունյանը, որն «առհասարակ հաճելի չէր գեներալներին՝ եւ նորին գերազանցութիւնները նորան միշտ Կարսում էին պահում, հեռու Օլթիից եւ միւս շահաւէտ վայրերից»[38]։ Երկու գեներալները, օգտվելով բյուրո-կառավարության՝ մասնավորապես ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հովանավորությունից, թալանն ավելի արդյունավետ եւ ապահով կատարելու նպատակով ստեղծեցին նաեւ այսպես կոչված «կամավորական խմբեր», որոնք պատուհասում էին բնակչությանը։ «Կառավարութիւնը,— գրում է Հ. Տեր-Հակոբյանը,— նախապէս փոխանակ զին. կազմակերպութեան մէջ իսկական կարգապահութիւն մը ստեղծել աշխատելու կամաւորական խումբերու ուժ կուտար իբր իրեն «վստահելիները»։ Այսպէս կազմուեցաւ շփացածներու դաս մը, որ պահ մը հանրային կեանքին սպառնալիքը դարձաւ։ Ասոնք կը կոչուէին մաուզերիսթներ, որոնք, զէն ի ձեռին իրենց կամքը կը պարտադրէին երբեմն Դաշնակցութեան պետերուն դրդումով եւ յաճախ իրենց քմահաճոյքին եւ հաշիւներուն համար»[39]։

Նահանգապետ Ղորղանյանը, որը լիովին իրազեկ էր գեներալների, սպայակազմի օրինազանցություններին եւ, բազմաթիվ դեպքերում, քրեական հանցագործությունների բնույթ ունեցող գործելակերպին, շարունակ այդ մասին զեկուցագրեր էր ուղարկում կառավարությանը, որոնք, սակայն, ինչպես նշվեց, ընթացք չէին ստանում։ Կուսակցական հովանավորչությունը եւ բարձրագույն զինվորական ղեկավարությունը, ի դեմս ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի, հաճախ խոչընդո-

---

[37] Տե՛ս անդ, էջ 229—232, 380, 382, 417, 428—429։

[38] Անդ, էջ 332։

[39] Հ. Տեր-Յակոբեան, նշ. աշխ., էջ 49։ «Թալանի ուրուականը փառում էր օդում,— գրում է Ս. Ղորղանյանը,— եւ հարստանալու տենչը, բռնկելով մարդկանց ախորժակները, դէպի գեներալներ քաշում բազմաթիւ անգործ մարդիկ, որոնք կամաւորական, ազգային դիմակի տակ՝ գնում էին թալանելու եւ կեղեքելու»։ «....Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 319։

տում էին նույնիսկ այն պատիժների իրագործմանը, որոնց վերաբերյալ Ղորղանյանը վճիռներ էր կայացնում իր իրավասությունների շրջանակում։ «....Գերադասում էի տեղ չտալ արատաւորուածներին,— գրում է Ղորղանյանը,— հալածել իրաւակարգի այդ ցեցերին՝ գէթ դորանով վերականգնել երկրի աչքում իշխանութեան համարումը։ Զօրաց մինիստրը ի հարկէ չէր կարող չը համաձայնել նահանգապետի հետ, բայց եւ այնպէս այն բազմաթիւ սպաները, որոնց ես արձակել էի պաշտօններից կաշառակերութեան, պաշտօնական զեղծումների համար՝ անմիջապէս «տեղաւորւում էին» զանազան զօրամասերում եւ միշտ իւղալի համով պաշտօններ ընտրում...»[40]։

Կուսակցական հովանավորչությունը, ըստ Ղորղանյանի, այն աստիճանի էր հասել, որ «Կուսակցական լինելը ինքը օրէնքն էր եւ ինքը օրինականութիւնը»[41]։

Գեներալներ Փիրումյանն ու Հովսեփյանը միաժամանակ փորձում էին միջամտել նահանգի քաղաքացիական կառավարման խնդիրներին[42], տարված էին Կարսի նահանգում ողջ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու մոլուցքով եւ զանազան պարսավագրերով փորձում էին խախտել նահանգապետի դիրքերը, որն իր հնարավորությունների սահմանում ջանում էր զսպել նրանց կամայականությունները եւ դրանց մասին տեղեկացնում էր կառավարությանը։ Դեռ Օլթիի գրավումից հետո, երբ հարաբերական խաղաղություն էր տիրում, նրանք այդ նպատակին ուզում էին հասնել ընդհուպ նահանգում ռազմական դրություն հայտարարելու գնով, ինչի անհրաժեշտությունը չկար[43]։

Շարունակելի

---

[40] «....Ստեփան Ղորղանեանի յուշերը», էջ 458—459։

[41] Անդ, էջ 53

[42] Տե՛ս անդ, էջ 249, 290։

[43] Տե՛ս այդ մասին պառլամենտի անդամ Թադեւոսյանի հեռագրային վկայությունը, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 18։

Doi: 10.56737/2953-7843-2022.8-75

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԼԻ

ԳԱՐԵԳԻՆ Ա. ՔԵՍԱԲՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԽՕՍՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ[1]

Քարոզխօսութիւնը հովուական աստուածաբանութեան բաղկացուցիչ մասերից մէկն է, որի ընթացքում Եկեղեցու հայրերը հանրութեանը հասու են դարձնում աստուածաշնչական դրոյթներին։ Ինչպէս գրում է յոյն փիլիսոփայ Թէոն Ալէքսանդրացին, հարկ է, որ այդ հաղորդակցութիւնը լինի մտերիմ եւ բարեկամական. «Եւ ներ լսելութեանցն նախ առաջին է մտերիմ եւ բարեկամ մատուցանել զինքն ասողի, քանզի ոչն մատուցանողի եւ ոչ ի պիտանեացն ինչ օգտակար»[2]։

Քարոզխօսութիւնը, յարաբերուելով հռետորութեան ու ճարտասանութեան հետ, ներազդում է ունկնդրի վրայ՝ նրան մղելով ապրելու քրիստոնէական հաւատքով եւ բարոյականութեամբ[3]։ Այդ հաղորդակցութիւնը բնորոշւում է որպէս «գեղեցիկ, պատկերաւոր ու արտայայտիչ խօսելու արուեստ եւ գիտութիւն», որը «բարձր ծաղկման է հասել Հին Յունաստանում»[4]։ Հայոց հայրապետների դասում ճարտասանական խօսքի հմտութիւններով առանձնանում է երանաշնորհ կաթողիկոս Գարեգին Առաջին Քեսաբցին, որի մասին Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետը գրում է. «Գարեգին Ա. Հայոց երջանկայիշատակ կաթողիկոսը իր նուիրեալ ու բեղուն սպասաւորութեամբ, ոգեշունչ քարոզներով, գրական ժառանգութեամբ ամրապնդել է մեր ժողովրդի հաւատքն առ Աստուած, սէրն առ Սուրբ Եկեղեցին, նախանձախնդրութիւնն ու հաւատարմութիւնը առ հայրենին։ Նրա խօսքը սերմանուել է մեր ժողովրդի զաւակների

---

[1]* *Հոդվածը ստացվել է 9.08.2022, գրախոսվել է 10.08.2022։*

Էլ. փոստ՝ haykanushm@mail.ru։

[2] *Թէովնեայ յաղագս ճարտասանական կրթութեանց հանդերձ յոյն բնագրաւ, յԵրեւան, 1938, էջ 179։*

[3] *ՏԵՍ «Քրիստոնեայ Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 1053։*

[4] ԷԴ. ՋՐԲԱՇԵԱՆ, Հ. ՄԱԽՋԱՆԵԱՆ, *Գրականագիտական բառարան, Երեւան։*

սրտերում եւ առատ պտուղներ բերել՝ ի խնդիր հոգեւոր-եկեղեցական կեանքի զօրացման ու առաջընթացի»[5]։

Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռակից կաթողիկոս Տ. Բաբկէն Կիւլեսէրեանը «Քարոզելու արուեստը» աշխատութեան մէջ քարոզի արդիւնաւէտութեան գրական է համարում համոզումն ու հաւատքը, որոնք արուեստով արտայայտելիս քարոզը դարձնում են կատարեալ[6]։ Գարեգին Քեսաբցու քարոզներն աչքի են ընկնում համոզումով, քրիստոնէական հաւատքի ջատագովմամբ, յստակ եւ անմիջական խօսոյթով։ Ըստ Արիստոտէլի՝ ճարտասանական «ոճի արժանիքը յստակութիւնն է, դրա ապացոյցն այն է, որ երբ խօսքը յստակ չէ, չի հասնում իր նպատակին»[7]։

Ս. Գրիգոր Տաթեւացին սահմանում է քարոզի ժանրի այսպիսի կառուցուածք՝ ա) բնաբան, *բ)* բնաբանի մեկնութիւն՝ համապատասխան մթնոլորտի ստեղծումով, *գ)* բուն նիւթի ներկայացում եւ պարզաբանում, *դ)* պատգամ-առնչում հաւատացեալների ներկայ կեանքին՝ դրանից բխեցնելով կոչը, հրաւէրը, ներշնչումը, ներզօր ուժը[8]։

Գարեգին Ա.-ն հիմնականում առաջնորդւում է քարոզախօսութեան նշուած հանգրուաններով եւ տուրք չի տալիս անհարկի աւելորդաբանութիւնների՝ ի մտի ունենալով իր հոգեւոր ուսուցչի՝ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսի դասը. «Լաւագոյն, մշակուած քարոզն իսկ կը կորցնէ իր տպաւորութիւնը, մինչեւ իսկ կը ձանձրացնէ ունկնդիրներին, եթէ նա չափից աւելի երկար է»[9]։

Բարեյիշատակ հայրապետի քարոզների բնաբանները հիմնականում աստուածաշնչեան են, որոնցից արտածւում է քրիստոնէական հաւատքի վրայ հիմնուած խօսք[10]։ Բուն քարոզի մասում բովանդակային շեշտը դրւում է քրիստոնէութեան զօրութեան, հայրենասիրութեան եւ մարդկային արժանապատուութեան վրայ։ Բոլոր քարոզնե-

---

[5] ԳԱՐԵԳԻՆ Ա., *Քարոզներ, Հայրենիքը պատկերն է հայութեան, Գիրք Բ., Վանորէից տեսչութիւն Մայր Աթոռի, 2018, էջ 5։*

[6] *Տե՛ս* Բ. ԿԻՒԼԵՍԷՐԵԱՆ, *Քարոզելու արուեստը, Երեւան, «Լոյս», 1905, №3, էջ 49—54։*

[7] *Տե՛ս* Аристотель, Риторика, М., 1978։

[8] Գ. ՏԱԹԵՒԱՑԻ, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կոստանդնուպոլիս, 1741։*

[9] Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Քարոզի յաջողութեան գաղտնիքը։*

[10] *Մեր ուսումնասիրութեան նիւթերը քաղել ենք Գարեգին Սարգիսեան կաթողիկոսի՝ Անթիլիասում եւ Ս. Էջմիածնում տպագրուած շուրջ երեք տասնեակ գրքերից, ԱՄՆ-ում հրատարակուած Գարեգին Ա. մատենաշարից (կազմող՝ Վազգէն Ղուկասեան), ինչպէս նաեւ «Հասկ» եւ «Էջմիածին» ամսագրերում զետեղուած քարոզներից ու յօդուածներից։*

րի մղիչ ուժը լաւատեսութիւնն է՝ արդիականացուող աւարտով[11]։ Քարոզների վերջաբանին առանձնայատուկ են յորդորակն ու հայրական օրհնութիւնը, պահպանիչ աղօթքն ու մաղթանքները։ Այս ամենը ճիշտ արտայայտելու համար կայ մէկ հիմնական պահանջ. «Խօսքի զարդերը պէտք է համապատասխան լինեն նրա նիւթին»[12]։ «Խօսքի զարդերի» մաս են կազմում ուրոյն լեզուական միջոցներն ու արտայայտչաձեւերը, հրապարակախօսական ոճին բնորոշ բառապաշարը, ձեւի եւ բովանդակութեան համապատասխանութիւնը։

Վ. Միրզոյեանը գրում է, որ «Հրապարակային խօսքին տիրապետելը, յստակ եւ համոզիչ խօսելը ենթադրում են ոչ միայն լեզուիմացութիւն, անհրաժեշտ գիտելիքների առկայութիւն, դրանք կապակցուած, որոշակի տրամաբանական հենքով եւ յուզականօրէն մատուցելու հմտութիւն, արտասանական կարողութիւն, այլեւ հոգեբանական պատրաստականութիւն, ...խօսքային պատշաճ ոճ ընտրելու եւ յետադարձ կապն ապահովելու ունակութիւն»[13]։ Հայոց Հայրապետը լիովին տիրապետում էր նշուած յատկանիշներին։

Բանաւոր քարոզներից բացի՝ Գարեգին Սարգիսեան Հայրապետը հեղինակել է աստուածաբանական մեկնութիւններ, փիլիսոփայական աշխատութիւններ, կրօնաեկեղեցագիտական հրատարակութիւններ, յուշագրութիւններ, գեղարուեստական խօսքի նմուշներ։ Անթիլիասում եւ Ս. Էջմիածնում, ինչպէս եւ արտերկրում տպագրուած եւ վերահրատարակուած բազմաթիւ հայերէն եւ օտարալեզու գրքերը՝ «Դաւանաբանական աստուածաբանութիւն», «Հայ Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ», «Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու», «Հովուական աստուածաբանութիւն», «Բեթղեհէմի աստղին լոյսը՝ Ս. Էջմիածնի պրիսմակէն...», «Տո՛ւք զկայսերն կայսեր», «Հոգեմտաւոր ճառագայթումներ», «Ծանի՛ր զքեզ», «Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց», «Հին արմատներէն նոր ընձիւղումներ», «Հող, մարդ եւ գիր», «Անցեալը անցած չէ», «Ան-ժամանակը ժամանակին մէջ», «Խորհէ՛ եւ մտի՛ր», «Ես յաղթեցի աշխարհի», «Մաշտոցաշունչ», «Հայրենիքը պատկերն է հայութեան»,

---

[11] *Տե՛ս* Գարեգին Ա., *Քարոզներ, Հայրենիքը պատկերն է հայութեան, Գիրք Ա., Բ., Վանորէից տեսչութիւն Մայր Աթոռի, 2018։*

[12] Պ. Պօղոսեան, *Ոճագիտական ըմբռնումների ծագումն ու զարգացումը Հին Յունաստանում եւ Հռոմում, Երեւան, 1976, էջ 64։*

[13] Վ. Միրզոյեան, *Հռետորական արուեստի բուհական դասաւանդման հարցեր, «Բանբեր» ՀՊՏՀ, 2017, №2, էջ 189։*

«Հրաշք Տաթեւի», «Վասն հայրենեաց» եւ այլն, մեր ժողովրդի հոգեմտաւոր հարստութեան ծանրակշիռ մասն են կազմում։

Գարեգին Քեսաբցի կաթողիկոսի երկերն աչքի են ընկնում պատկերաւոր լեզուամտածողութեամբ, գեղարուեստական խօսքին բնորոշ արտայայտչական զանազան միջոցներով։

Վեհափառ Հայրապետի ստեղծագործութիւնների լեզուն գրական արեւմտահայերէնն է։ Կեանքի վերջին տարիներին արեւելահայ միջավայրի հետ շփումը հիմք է դառնում արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի իւրայատուկ համադրութեամբ հաղորդակցուելու եւ անհատական ոճ ստեղծելու[14]։

Ինչպէս նշում է Ա. Մարութեանը, «....ոճի մէջ դրսեւորւում է.... դարաշրջանի հիմնական ոգին, ժամանակի շունչն ու ռիթմը»[15]։ Գարեգին Քեսաբցի Հայրապետն իր անհատական ոճով, ճարտասանական հմտութեամբ եւ համոզելու արուեստով[16] կարողանում է դառնալ իր ժամանակի հաւատացեալ հանրութեան «շունչն ու ռիթմը»։

Ժամանակակից հայերէնը հասցնելով զարգացման մի նոր որակի՝ Հայրապետը համոզում է հայտնում, որ «Մեր լեզուն ճանապարհ է դէպի յաւերժութիւն, գրաւական՝ մեր ինքնութեան, Նոյեան տապան՝ մեր փրկութեան, լուսաստղ՝ մեր լինելութեան»[17]։

Վեհափառի քարոզխօսութեան բառապաշարը կարելի է դասակարգել ըստ մի քանի հիմնական խմբերի։

ա) Գրաբարաբանութիւններ. *Հայրապետի խօսքին պատմականութիւն, գիտականութիւն, նաեւ հանդիսաւորութիւն եւ քնարականութիւն են հաղորդում քրիստոնէական քարոզի ժանրին բնորոշ գրաբարաբանութիւնները՝ գրաբարեան բառերը, դարձուածքներն ու քերականական ձեւերը, որոնց առկայութիւնը պայմանաւորուած է անհատական մի քանի գործօնով. 1) բարբառների արեւմտեան խմբակցութեան Անտիոքի կամ ծայր*

---

[14] *Հայոց Հայրապետն արեւելահայերէնի է փոխադրել իր «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ» աշխատութիւնը։*

[15] Ա. Մարութեան, *Հայոց լեզուի ոճաբանութիւն, Երեւան, 2000, էջ 61–62։*

[16] Դաւիթ Անյաղթ, *Ճարտասանութիւնը համոզելու արուեստ է, Փիլիսոփայութեան սահմանումները, Երեւան, 1980, էջ 61։*

[17] Գարեգին Բ. Սարգիսեան, *Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց..., Անթիլիաս, 1990, էջ 74։ Վեհափառի երկերի հոգեմտաւոր ընդհանրացումները եւ հարուստ բառապաշարը մեր ժողովրդին հասու դարձնելու նպատակով կազմել ենք ժողովածու (տե՛ս «Խօսքս պատարագի նշխարին պէս բաժներ եմ իմ ժողովրդին», Ընտրանի ասոյթների եւ պատգամների, կազմող՝ Հ. Մեսրոպեան, Ս. Էջմիածին, 1999)։*

հարաւարեւմտեան բարբառախմբի Քեսաբ-Սուեդիայի կը *ճիւղի բարբառի Քեսաբի ենթաբարբառը որպէս մայրենի ունենալը, 2) գրական արեւմտահայերէնը որպէս կրթութեան հիմնական տարբերակ ունենալը, 3) Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի հովանեաւ ճեմարանական, աստուածաբանական կրթութիւն ու դաստիարակութիւն ստանալը, 4) գրաբարը՝ որպէս եկեղեցու ծէսի հիմնական լեզուամիջոց լինելը: Գրաբարեան արտայայտութիւններից են՝* զհամահաւաքեալս յայսմ տեղւոջ, ի շորիս կողմանս աշխարհիս այսորիկ, վասն պահպանութեան աւանդութեանց հարցն մերոց, վերամկրտեալ ի հաւատս եւ ի հայութիւնս մեր *եւ այլն:*

Ոճական գործառոյթ ունեն գրաբարի անցեալ դերբայի ձեւերը: Ա. Սուքիասեանը գրում է, որ «արդի հայերէնում յարակատար եւ ենթակայական դերբայների գերակշռիռ մասը բայի բառաձեւեր համարուելու պատճառով բառարանային արժէք չունի, բացառութեամբ այն բառերի, որոնք որոշակի, մասնաւոր բառային տարբերակուած իմաստ են ձեռք բերել... եւ կորցրել են իրենց դերբայական յատկանիշները»[18]: Ի տարբերութիւն ժամանակակից հայերէնի յարակատար եւ ենթակայական դերբայների՝ Հայրապետի խօսքում գրաբարի անցեալ դերբայաձեւերը ձեռք են բերում բառարանային արժէք, ածականի խօսքիմասային պատկանելութիւն, օժտւում են գեղագիտականութեամբ եւ որպէս խօսուն մակդիրներ՝ յատկանշում են լրացեալին: Այսպէս՝ աստուածաշնչեալ խօսք, արփացեալ, միայնացեալ *կամ* բանացեալ հոգի, գրախնկեալ բակ, գօսացեալ պարտէզ, անձնացեալ զօրութիւն, երեկոյացեալ պահ, մարդեղացեալ Փրկիչ, մեբենականացեալ վիճակ, մասունքացեալ աւերակ, մանրանկարեալ կոնդակ, մշակացեալ ձեռք, անձրեւացեալ արցունք, աստուածանկարեալ պատկեր, շիրմացեալ գետին, պրկեալ վճռականութիւն, ջրդեղեալ զօրութիւն *եւ այլն: Ինչպէս նկատում ենք, նշուած բառակապակցութիւններում անցեալ դերբայաձեւերն ապահովում են «խօսքի գեղարուեստականութիւնը եւ բանաստեղծականութիւնը»՝ դառնալով «գեղարուեստական պատկերի համար զարդ»[19]:*

Բ) Բառապաշարի յաջորդ խումբը, որը մերձաւոր աղերսներ ունի գրաբարաբանութիւնների հետ, հնաբանութիւններն *են: Քարոզի նիւթով են բացատրւում հնաբանութիւնների (արխայիկ բառերի) լեզուաիրադրական ընտրութիւններն ու նպատակային կիրառութիւնները: Դրանք*

---

[18] Ա. Սուքիասեան, *Ժամանակակից հայոց լեզու, Երեւան, 1982, էջ 153:*

[19] *Տե՛ս* Պ. Պօղոսեան, *Խօսքի մշակոյթի եւ ոճագիտութեան հիմունքներ, Երեւան, 1990, էջ 247:*

հեղինակի խօսքին հաղորդում են պատմականութեան երանգ (օրինակ՝ ճշմարտող, վերառաքող, խանդալից, հանդիսադրել, անգայտ *(նօսր),* անձնադրոշմ, հոգեխառնութիւն, լուսատեսիլ, կենդանագործ, լրութիւն *(լրիւութիւն),* ճշմարտելի, ընկլուզել *(կուլ տալ),* խրախճանութիւն, մարդկաբար, յանկուցիչ, արդիւնագործ, կողկողագին, տրամախոհել, դէտ, տապաստ, հրիտակել *(կտակել),* ճշմար, երաշտութիւն, վերնական, կարշնեղ, ասութիւն, ծնուցիչ, բարեխնամող, դառնաճաշակ, դալարիք, բնազանցական *եւ այլն)։*

գ) Բանաստեղծական կամ հազուադէպ գործածութիւն ունեցող բառեր։ *Խօսքը ոճաւորող միջոցներից են բառարաններում իբրեւ բանաստեղծական, ինչպէս նաեւ հազուադէպ գործածութեամբ նշուող բառերը. օրինակ՝* սկզբնաստեղծ, բուխ, փորձանաւոր, պաշտանք, անդրանցնել, անձնադրոշմ, ժայթք, յանախանք, զուարթախոհ, վեհավայր, դրասանգել, պերճաբարբառ, պատարագել, տեսլահար, դիւցազնաշունչ, կայլակել *եւ այլն։*

դ) Եզրոյթներ եւ ոչ գրական բառեր։ *Քաջածանօթ լինելով մեսրոպեան բառագանձի բոլոր շերտերին՝ ճարտասան Հայրապետը կիրառում է նաեւ բարբառային, ժողովրդախօսակցական (*պնլտուն, խանձողուած, հունար, ղայիմ*), մասնագիտական (*արժեշափ *(քաղաքատնտեսութիւն),* զօրաշարժ *(ռազմական),* համագրաւել *(տնտեսագիտական)) եւ այլ շերտի բառեր։*

ե) Փոխառութիւններ։ *Վեհափառն իր խօսքում լեզուաբանական բծախնդրութեամբ եւ յատուկ ընտրութեամբ գործառում է օտարաբանութիւններ եւ փոխառութիւններ.* երեկոյին մեծ տռամ *(դրամա),* տիպով ու իտէալով ամուր, մասնաւոր ժեսդ, ոսկումի մանրանկարչական ոճային իւրայատուկ մոթիֆներով ընկերացած, մարդեղական աֆթ, մանրանկարը ազգերուն մոզայիքին *եւ այլն։ Երբեմն հանդիպում ենք նաեւ հակառակ երեւոյթին, երբ հայերէն բառակապակցութեանը զուգահեռում է օտարալեզու բառամեկնութիւնը, եւ փակագծերում նշում է տուեալ խօսքաշարի իմաստային կիզակէտում գտնուող բառի օտար՝ անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն համարժէքը. այսպէս՝* բարձր կեանք *(*high-life*),* աշխարհայնամտութեան հոսանք *(*secularism*),* վանքի պատկերը *(*image*),* հոգեւոր տարածք *(*dimension*),* ի տեսութիւն *(*en theoria*),* խորհրդանիշ *(*symbol*) եւ այլն։ Այսպիսի լրացուցիչ բացատրութիւնները յստակեցնում, ճշգրտում եւ ամփոփում են բառիմաստը՝ ասելիքին հաղորդելով գիտական ոճի ճշգրտութիւն։*

զ) Հեղինակային նորաբանութիւններ[20]*։ Գարեգին Առաջինը բառակերտ է։ Հայերէնի հմուտ իմացութիւնը եւ բառերի տեղին գործածելու կարողութիւնն են Հայոց Հայրապետի «պերճախօսութեան հիմքն ու հենքը»[21]։ Քարոզների լեզուն հարուստ է հայերէնի բառակազմական ներքին միջոցներով ու եղանակներով կերտուած նորաբանութիւններով, ինչպէս նաեւ իմաստային նոր կիրառութիւններով։*

Նորաբանութեան բոլորովին նոր որակ կարելի է համարել բաղադրեալ բառերի բաղադրիչների տրոհումը եւ այսպէս կոչուած անջատագրութիւնը։ Բառակազմական այս նորոյթով իմաստային եւ ոճական նոր ենթաիմաստ է հաղորդւում բառին. այսպէս՝ ան-ժամանակ, ան-այսօր, ան-երէկ, ան-վաղ, մարդ-եղութիւն, մարդ-ութիւն, գեր-անձնական, անդր-անհատական, հոգե-զօրացում, հոգե-կալում, հոգե-սնուցում, լոյս-ու-մութ, նոր-ութիւն, բան-ա-խօս, փոխ-յարաբերական, ան-ասուն, ով-ութիւն *եւ այլն։*

Ինչպէս ցոյց են տալիս օրինակները, բառերի՝ ըստ բառակազմական մասնիկների եւ արմատի այսպիսի նպատակային տրոհումն ընդգծում է բաղադրիչներից յատկապէս մէկի՝ բառամիջուկի իմաստը՝ հարստացնելով շարակարգի լեզուարտայայտչականութիւնը։

Լեզուաոճական եւ բառիմաստային առումով հետաքրքիր համադրութիւն են ստեղծում մի շարք գործուն բաղադրիչներով կերտուած եւ նորակազմական արժէք ունեցող յարադիր կազմութիւնները, ինչպէս՝ աչք-Աստուած, Յիսուս-Խորհուրդ, կեանք-հաստատութիւն, հոգի-մսուր, լոյս-իմաստ, մեղր-բարիք, հոգի-կաղապար, արեւ-պահ, գրիչ-փետուր, մարդ-կարողութիւն, ընձիւղ-բարտի, պտուղ-արդիւնք, ցայտաղբիւր-աշխարհ, անէծք-օրհնանք *եւ այսպէս շարունակ։ Գոյականական բառակապակցութիւնից տարբերուող այսպիսի կառոյցները Գ. Ջահուկեանն անուանում է վերլուծական գոյականական բառաձեւեր, որոնք, բացի գոյականից, այլ լիիմաստ բառ չեն պարունակում[22]։*

Հեղինակային նորաբանութիւններն աչքի են ընկնում լեզուական մի շարք իրողութիւններով։

---

[20] *Վեհափառի բառակերտումներն ու նորակազմութիւնները, նաեւ բառերի իմաստային նոր կիրառութիւնները, ըստ մեր բառարանի, 1700 են։ Տե՛ս* Հ. Մեսրոպեան, *Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրէալ, 2000։*

[21] *Տե՛ս* Цицерон, Об ораторе // Марк Туллий Цицерон, Три трактата об ораторском искусстве, Москва, «Наука», 1972, *էջ 235։*

[22] *Տե՛ս* Գ. Ջահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները, Երեւան, 1974, էջ 291։*

գ-1) Բառային նորակազմութիւնների զգալի մասի համար, որպէս բառակազմական բաղադրիչ, հանդէս են գալիս Աստուած, Յիսուս, Քրիստոս, Մեսրոպ, Աւետարան, լոյս, հայ, հոգի, աղօթք, սուրբ, առաքեալ, ինքն *եւ աստուածախօսական ոլորտին բնորոշ այլ յատկանուններ եւ բառարմատներ։ Այսպէս՝* աստուածաձեռն, աստուածագիծ, աստուածակոխ, աստուածագիր, աստուածամաղ, յիսուսանուէր, յիսուսատիպ, քրիստոնէատիպ, քրիստոսահաւատ, քրիստոսատունկ, քրիստոսաբեր, հայաշեշտ, անհայախօս, հայավառ, հայանուագ, հայալոյս, հայատեսիլ, հայարիւն, յուսեղինութիւն, լուսալցուիլ, լուսածնունդ, նորալոյս, լուսաջան, լուսութիւն, լուսերգակ, լուսածորան, լուսաւորչակնիք, լուսագծել, մեսրոպահեղ, մեսրոպահունչ, մեսրոպագիծ, մեսրոպաբարբառ, մեսրոպաստեղծ, հոգեկառուցել, հոգեքանդ, հոգեկրթիչ, հոգեփոխ, հոգեկերտել, հոգիաբնակ, ինքնաշեշտ, ինքնաբարբառ, ինքնաբիւրեղացում, ինքնընծայում, ինքնապրկում, ինքնախորհողական, աղօթաճաճանչ, աւետարանագիծ, առաքելաժառանգ, սրբական, սրբահոգի *եւ այլն։*

գ-2) Մեծ թիւ են կազմում գոյն *վերջածանցով նորաբանութիւնները, որոնք արտայայտում են սաստկականութիւն կամ գերադրականութիւն.* ընդարձակագոյն, անկեղծագոյն, լիագոյն, նուիրականագոյն, առատագոյն, իմաստնագոյն, գլխաւորագոյն, զօրաւորագոյն *եւ այլն։*

գ-3) Ան- *նախածանցով կերտուած բառերը եւս շատ են. Ինչպէս՝* անայսօր, անանցային, անհայանալ, ընդարձակագոյն, անկեղծագոյն, նուիրականագոյն, իմաստնագոյն, գլխաւորագոյն, զօրաւորագոյն *եւ այլն։ Գ. Ջահուկեանն* ան- *նախածանցով կազմութիւններն անուանում է* բացառողական, *որոնք հակադրութեան միջոցով ստեղծում են* բացառման կարգ[23]։

Վերը թուարկուած բառապաշարային իւրայատկութիւններն ուղեկցում են գեղարուեստական խօսքին բնորոշ պատկերաւորման բազմազան միջոցներով, արձակ բանաստեղծութիւններով, քնարական հատուածներով, բառային պատկերների պատշաճ համադրումով, երբեմն էլ հակադրումով՝ տպաւորիչ ու բարձրարուսեռ դարձնելով Գարեգին Ա. Հայրապետի քարոզախօսութիւնը։ Բազմաթիւ են տեղին գործածուած մակդիրներն ու համեմատութիւնները, փոխաբերութիւնները, դիպուկ անձնաւորումները եւ գեղարուեստական խօսքի ոճաւորման զանազան միջոցները. այսպէս՝ աղօթաճաճանչ կամար, աստուածիմաստ վարդապետ,

[23] *Տե՛ս* Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, *Ժամանակակից հայերէնի իմաստաբանութիւն եւ բառակազմութիւն, Երեւան, 1989, էջ 47։*

աստուածային ջրտուք, աւետարանագիծ ճամբայ, մեսրոպաբոյր ու յաւերժաբարբառ շիրիմ, լուսածորան գրիչ, լուսաղբիւր հոգի, լուսաւորչեան հիւսկէն, խորհրդաբոյր կամար, անդրանցնող աղբիւր, հայավկայ հրովարտակ, հայանուագ շարական, ծաղկած եկեղեցի, մեղահալած սպիտակութիւն, սրբաշունչ բառ, խորհրդասքող մատեան, ինքնարդարութեան փետուր, բնաթոյր զովութիւն, աղօթասոյզ խուց, գրչագրածին աշխատանոց, աղօթահայց մրմունջ, երկնանձայն փայլակ, խնկեղէն աղօթք, կրօնաբոյր մթնոլորտ, մեծատենչ փափաքներու կարկին, Անի քաղաքին փառախօս աւերակ, մտքի փեթակ, շնորհաբուխ բերան, բորբ իմաստ, թշնամիների գրոհների քամի, աղօթասոյզ քար, հոգեխօս դէմք, արեւեան ոճ, կոյրիմաստ բազալտ, կեանքի ոսկեթել, հայադրոշմ ձայն, անհունախօս ոճնանկար, բազմագունեան ամբոխ, ոգիաբնակ քաղաք, սուրբ թողօն, տարիներու պրկուած իղձի զսպանակ, քարերի բիւրեղ սրբատաշութիւն *եւ այլն։*

Խօսքի պատկերաւորման արդիւնաւէտ ձեւերից են նաեւ բառակապակցութեան ներսում հակադրուած բառիմաստները, ինչպէս նաեւ առձայնոյթով՝ նման բաղաձայնների կուտակումով, բառերի կրկնութեամբ եւ բառախաղերով ստեղծուած արտայայտութիւնները, շրջասութիւնները, երբ առարկայի կամ անձնաւորութեան անուանումն ուղղակի տալու փոխարէն նշւում է նրանց այս կամ այն էական կողմը, յատկանիշը. օրինակ՝ աւերակներու անաւերակելի լեզու, անցեալը անցելութենէն ներկայի փոխադրող, հոյակապ աւերակ, շնորհալոյս Շնորհալի, լուսաջան լուսաբար, խորասոյզ խորհուրդի խորհրդագործում, լոյսին լուսութիւնը, ողբերգական կատակերգութիւն, տառապանք չունենալու տառապանքէն տառապիլ, քաղաքացած եւ քաղաքայնացած կեանք *եւ այլն։*

Հաղորդուող գաղափարն անմիջական եւ ազդեցիկ է դառնում առածներով, ասացուածքներով, դարձուածքներով, թեւաւոր խօսքերով, պատգամներով եւ իմաստային այլ միաւորներով, որոնք միահիւսելով համեմատութիւններին, փոխաբերութիւններին եւ անձնաւորմանը՝ կերտում է գեղարուեստական անկրկնելի պատկերներ։ Այսպէս՝ «Ինչպէս արեւը այգաբացի մշուշի ցնցուող սաւանին մէջ»։ «Մեռան, ինչպէս մեռնում են ճիւղերը ծառին, երբ խզւում են ու բաժանւում են իրենց բներից, մեռան, ինչպէս քարերը, երբ պոկւում եւ դուրս են ընկնում իրենց պատերից»։ «Խօսքս պատարագի նշխարին պէս բաժներ եմ իմ ժողովուրդին»։ «Քրիստոսի կեանքը աշխարհին վրայ միախառնումն է աստուածայինին եւ մարդկայինին»։ «Ինչպէս երկինքին էջքը երկրի վրայ ու երկրին երկնայնացումը հո-

գեկան կեանքի ուժեղ թափանցումովը անոր մէջ, ինչպէս արեգակի շողին թափանցումը խոր մթութեան մէջ»։ «Աւանդութիւնները կը նմանին մարդու մարմնին ողնաշարին»։ «Պատերազմն ու խաղաղութիւնը հիւսքի սեւ ու ճերմակ թելերուն պէս իրարու հետ միշտ պար բռնեցին» եւ այլն։

Ինչպէս նկատում ենք, բերուած հատուածներում բառընտրութիւնը կատարուած է անթերի եւ ճշգրիտ, որը ճարտասանական խօսքի կարեւոր նախապայմաններից է։ Բարձր գնահատելով այդ հմտութիւնը՝ Ա. Մարութեանը նշում է, որ «ստեղծագործական գործունէութեան մէջ բառընտրութիւնը միշտ էլ կենտրոնական տեղ է գրաւում», եւ «միտքը ճիշտ արտայայտելու տեսակէտից.... անչափ կարեւոր է դառնում իմաստամերձ լեզուական միաւորներից ու համարժէք լեզուական տարրերից ճիշտ ընտրութիւն կատարելու հարցը»[24]։

Բառընտրութեան անթերի օրինակներից են՝ դաշտի ծաղիկներուն նման գիրքեր, ընձիւղ-բարտիներուն պէս աղջիկներ, անանցաւորութեան էատարրեր, մշակոյթի պատարագին նշխար, միտքի զբօսանք, շնորհաստեղծ նուաճում *եւ այլն։*

Այսպիսով՝ Գարեգին Քեսաբցի կաթողիկոսը քարոզչի դասական օրինակ է։ Նրա հարուստ եւ պատկերաւոր բառապաշարը կամրջում է արդի արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը՝ նպաստելով գրական հայերէնի երկու ճիւղերի փոխհարստացմանը։ Մաշտոցաշունչ ոգին՝ մայրական երգերով, Քեսաբի դրկից եկեղեցու զանգերի ղօղանջով, հայ պատմիչների իմաստնութեամբ մարմին առած գրքերով դարձաւ խնկելի Հայրապետի կեանքի մղիչ ուժը՝ շնորհելով նրան մշտամնայ խօսքի արտօնութիւն ու յաւերժութիւն, եւ «մահը չի կրնար մօտենալ հոն, ուր անմահական սկզբունքներու, գաղափարներու, արժէքներու, գործերու թագաւորութիւնը կը տիրէ»[25]։

РЕЗЮМЕ

В статье мы представили лингвистические особенности проповеди Католикоса Гарегина Кесабци, являющемся классическим примером проповедни-

[24] Ա. Մարութեան, *Հայոց լեզուի ոճաբանութիւն, Երեւան, 2000, էջ 31։*

[25] Գարեգին Ա. Սարգիսեան, *Ես յաղթեցի աշխարհի..., Յարութիւն եւ հայութիւն, Ս. Էջմիածին, 1997, էջ 139։*

ка. Проповеди Патриарха отличаются убедительностью, христианской верой, патриотическими идеями, богатой лексикой, характерной для риторического стиля, образным языком, разнообразными выразительными средствами, характерными для художественной речи. Язык произведений Его Святейшества — литературный западноармянский. В последние годы жизни восточноармянская среда наложила свой отпечаток на речь Гарегина Первого. Богатый язык его проповедей и описательная лексика соединяют восточноармянский и западноармянский современные литературные языки, способствуя взаимообогащению двух ветвей литературного языка. Мы рассмотрели особенности литературных слов, авторских неологизмов, архаизмов, поэтических и редко используемых слов, терминов, заимствований, а также средства изображений, характерные для художественной речи: наречий и сравнений, метафор, олицетворений и т. д.

SUMMARY

In the article, we presented the linguistic features of the sermons of Catholicos Karekin of Kessab, who is a classic example of a preacher. The Catholicos' sermons are characterized by persuasiveness, Christian faith, patriotic ideas, a rich vocabulary characteristic of the rhetorical style, figurative language, and various expressive means characteristic of artistic speech. The language of the works of Karekin I is literary Western Armenian. In the last years of his life, the Eastern Armenian milieu left its mark on the speech of His Holiness. The rich language of his sermons and the descriptive vocabulary combine the modern literary Eastern Armenian and Western Armenian, contributing to the mutual enrichment of the two branches of the literary language. We have considered the features of literary words, authorial neologisms, archaisms, poetic and rarely used words, terms, borrowings, as well as the means of imagery characteristic of artistic speech: adverbs and comparisons, metaphors, personifications, etc.

Doi: 10.56737/2953-7843-2022.8-86

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ

«ՀՈԳԻԻ ՇԱՐԺՈՒՄԸ» ԴԷՊԻ ՆԻՒԹԸ. ՄՆԱՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՆԱՁԵՒՈՒՄԻ ԱՌՁԵՒ[1]

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենսափիլիսոփայութիւնը.
ծննդեան 90 ամեակի առթիւ

1

Իբրեւ Ամենայն Հայոց, իբրեւ Գարեգին Առաջին՝ խորհրդանշական էր «Խորհէ՛ եւ մտի՛ր» *գրքով Ս. Էջմիածին մուտքը իր թագակալութեան առաջին իսկ տարին՝ 1995-ին։ Մեր կարծիքով՝ նոր իմաստ է դրուած «հին» գրքի խորագրի խորքերում։ Նոր, անծանօթ միջավայր, արեւելահայ մթնոլորտ, ուր ինքն այլեւս* «ամենայն հայոց» *է։ Դա վերաբերում էր առաջին հերթին իրեն. գիտակցում էր՝ ուր է եկել։ Գիտակցում էր ծանրագոյն առաքելութիւնը նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնում։ Բնականաբար, «խորհէ եւ մտիրը» չէր վերաբերում միայն Անթիլիասի դպրեվանքի ուսուցչապետի ներքին խոհերին ու հայեացքներին, ուր ինքը երկիցս զբաղեցրել է տեսչի պաշտօն (1956—1957, 1960—1967), յընթացս դասախօսել Պէյրութի Նշան Փալանճեան, Դարուհի Յակոբեան եւ այլ վարժարաններում, Պէյրութի ամերիկեան համալսարանում, Սփիւռքի այլեւայլ կրթօջախներում։ Իր համար անակնկալը մեկնութեան նոր դուռն էր, որ բացւում էր Հայաստանում՝ անձնական ու պատմական հանգամանքներով պայմանաւորուած։ Գալիս էր իր շռնդալից խօսքով, բնաւորութեան աներեր վարքագծով։ Եւ ուրեմն՝ գալիս էր վերաբերմունքի խորապէս մշակուած այն պաշարով, քրիստոնէական հարուստ, անսպառ ճանաչողութեամբ, որ ձեռք էր բերել Քէսապում, Լօնդօնում, Ջուղայում, ամերիկեան ափերին եւ այլուր։*

Ուրեմն՝ հարկ էր նաեւ Ս. Էջմիածնի Տրդատայ դռնից մտնելուց առաջ ինքն իրեն ուղղել խորհելու *եւ վճռապէս մայր հայրենիքի իւրաքանչիւր*

---

[1]* *Հոդվածը ստացվել է 8.08.2022, գրախոսվել է 9.08.2022։*

Էլ. փոստ՝ spyurksd1948@gmail.com։

քրիստոնեայի հոգեաշխարհ իրաւունքո՛վ մտնելու՝ *թէկուզ չորս տարուայ՝ Աստծուց սահմանուած ժամանակահատուածի համար։*

«Ջարթի՛f, նոր ժողովուրդ...»։

Մեզ համար Գարեգին Ա. Հայրապետը գահակալութեան թէ՛ Անթիլիասի, թէ՛ Ս. էջմիածնի շրջաններում վեր յառած սրբատաշ քարաշէն ինստիտուտ է։ Մենք այսօր էլ՝ Վեհափառ Տիրոջ վախճանումից գրեթէ քառորդ դար յետոյ, շարունակում ենք համախմբուել այդ վեհաշուք հաստատութեան, ասել է թէ՝ մարդու մտածումների դարպասների՝ տիեզերական խորհրդի առջեւ։ Ինչ վերաբերում է մեզ, գուցէ եւ չենք համարձակւում մտնել, *մինչդեռ ինքը երկընկեց զօրութեամբ մեզ՝ կրթութեան մշակներիս հրմշտում-յուշում է Աստծուն եւ իրեն խորքով ճանաչելու ուղին. թերեւս պէտք է համարձակուել* «խոռհել եւ մտնել», *այդ ժամանակ կը կարողանաս* «ծանել զքեզ» *գարեգինեան իմաստնութեամբ, իրենո՛վ ճանաչել խորագնայ հոգեմտաւոր գունարձակ աշխարհը. ահա՛ միտք բանին։*

Որոշ չափով ձեւափոխելով երանաշնորհ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի փիլիսոփայական բեղուն ժառանգութիւնից իմաստուն մէկ հիմնադրոյթը՝ կարող ենք փաստել, որ ջրերի ալքերի, գետի խորքերում ենք հարստացնում մեզ, եւ դա այնքան ատեն, որչափ գիտակցում ենք անմահութիւնը՝ հանդարտ հոսող եւ ծանր կշռող ջրերի տարրերով[2]*։ Յայտնի է, որ* «ծառայական կերպ» *մեկնութիւնը 70-ական թթ. առաջին կէսին, այն ժամանակ դեռ անթիլիասաբնակ եպիսկոպոս Գարեգին Սարգիսեան, վերցրել էր հայ շարականոցի մատեանից՝ Մեծ պահքի վեցերորդ կամ* «Գալուստեան» *կոչուած Կիրակիի շարականից, ուր Յիսուսի համար շարականագիր վարդապետը գրի էր առել այսպիսի տողեր՝*

Երեւեցար ի մէջ մարդկան
Զգեցեալ ՁԿԵՐՊ ԾԱՌԱՅԱԿԱՆ...

Իր հերթին Սուրբ Գրքից (Թուղթ առ Փիլիպեցիս, Բ. 7) այս պատկերը («զկերպարանս ծառայի առեալ»*) արդէն բարձրաստիճան հոգեւորականը վերաքաղում է որպէս Հայց. Առաքելական Եկեղեցու նկարագրի եւ առաքելութեան հարազատ բնութագիր եւ աւելին՝ իբրեւ սեփական անձանձիր ծառայութեան կերպի վկայութիւն, որպէս իմացութեան գերագոյն արժէք։*

---

[2] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ [ԿԻԼԻԿԻՈՅ], *Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ, Անթիլիաս, 1994, էջ 94։*

Անցեալ դարի 70–80-ական թթ. Գարեգին եպիսկոպոսն առաջիններից էր, որ ձեւակերպեց ծառայական կերպի՝ արուեստի «անդրակերպումի» նախահիմքերը, այսինքն՝ ձեւաւորեց աշխարհիկ եւ հոգեւոր շունչերի միասնական ճանաչողութեան տիրապետութիւնը, որն օգնելու էր յայտնաբերելու իրականութեան ընկալման հոգեւոր եզրագծերը։ Դա, ըստ էութեան, իրականութեան փիլիսոփայութեան գեղարուեստական առարկայացումի փորձն էր՝ աշխարհը եւ աստուածայինը ժամանակի եւ տարածութեան շրջագծից այն կողմ։

Ժամանակի գերզգայութիւնն առանձնացնում է նրան մտքի խտութեան եւ ուժականութեան զօրաւոր միջանցքներում։ Նա անակնկալ յայտնուեց Ս. Էջմիածնում՝ նոր ձեռք բերած բարեկամների շրջանակում, երբ ուրիշ էր ոչ միայն տարածութիւնը, այլեւ գործունէութեան, մտածելակերպի խորքը, յաճախ նաեւ՝ հայեացքի ուղղութիւնը։ Ուրիշ էր յետանկախ Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդը՝ յետխորհրդային «չմարսած» իր բեռով, 88-ի երկրաշարժի հոգեմաշ աւերի իրատեսութեամբ, արտագաղթի շարունակական ծանրագոյն ապրումներով, երբեմն թերահաւատ վաղուայ անորոշութեան առջեւ, ղարաբաղեան պատերազմի առաջին յաղթական շեփորների շփոթն ամբողջութեամբ չյաղթահարած։

Նա, ով անցել էր եւ լիբանանեան հայութեանն անցկացրել մերձաւորարեւելեան քաղաքացիական անվերջանալի թուացող պատերազմի արհաւիրքով, ի հա՛րկէ, նոր ճակատագրական որոշում ընդունելուց առաջ քաջ պատկերացնում էր ժողովրդի առջեւ ծառացած աշխարհիկ եւ հոգեւոր ներհակ դժուարութիւնները։ Բայց չմոռանանք՝ եզակի էր իրերի դրութիւնը, քանի որ Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ամենատես առաջարկով էր երկրի հոգեւոր շունչն ստանձնել նորոգելու, զօրացնելու պատասխանատուութիւնը, առաջնորդելու ժողովրդին այս անիմանալի ճանապարհով։ Նոյնիսկ ժամանակ չունեցաւ մտածելու իրեն վերջին շրջանում պատուհասած ծանրագոյն հիւանդութեան հնարաւոր հետեւանքների մասին։ Այս քայլին նա մղուեց ուժականութեան խոր գիտակցութեամբ, որը թելադրում էր ընտրեալների համար բնութագրման ուրիշ կարգ՝ «Անցեալը երբ լեցուն է նորին, ներկայի համար դառնում է մեծ ուժականութիւն»[3]։ *Դա նշանակում է՝ մեր ներկան սնուցւում է անցեալի դասերով, նշանակում է՝ աւելի հաստատուն է մեր*

[3] ԳԱՐԵԳԻՆ Ա., *Հայրենիքը պատկերն է հայութեան, գիրք Ա. / Քարոզներ, Ս. Էջմիածին, 2000, էջ 19։*

քայլքը։ Եթէ 1700-ամեայ պատմութիւն կայ մեր թիկունքին, ապագան պայծառ է ու տեսանելի։

Որտեղի՞ց է գալիս ուժականութիւնը. հոգեւոր խօսքի ճանապարհից, դարերի հետ կապից, բարձր ճշմարտութիւններից, որոնք ժողովրդի սրտին անվրէպ հասցրել է քրիստոնէական վարդապետութիւնը, այն, ինչ տասնամեակների մէջ իր համար էլ դարձել է առաքելութիւն, իր իսկ գտած հրաշալի ձեւակերպումով՝ «հոգեմտաւոր աւազան»։

Մենք քայլում էինք նրա կողքից, իսկ նա՝ միշտ Աստծուց բխող իմացական լոյսով էր պարուրում մեր ներքին վճռականութիւնը։ Նա Միջնորդն էր հոգու արթնութեան, «հոգիի մարմնառութեան»։ *Եւ եթէ կարճում էր այդ ճանապարհը, պարզապէս բացում էր Վահան Թէքէեանի՝* «դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբան»՝ *եզրայանգելով, թէ նոյնն է իր ու Հայաստանեայց Եկեղեցու դերակատարութիւնը՝* «գաղտնի այդ ճամբի մէջ հայ ժողովրդի մէն մի անդամը պահելը»։ *Ահա՛ թէ ինչ էր նշանակում իր համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահն ստանձնելու խորհուրդը՝* «խորհուրդ խորինը»։ *Ահա ինչպէս է հատել ու անցել Աստծու ճշմարտութիւնից մինչեւ երկրի խորքերը, մինչեւ համամարդկային մշակոյթի մաս կազմող հարուստ էութիւն։ Եւ աւելի առարկայական՝ անկրկնելի ծննդավայր Քէսապից մինչեւ Պէյրութ, մինչեւ Ս. Էջմիածին եւ Երեւան...*

Ուժականութիւնը գիտելիքն է, անսպառ Աստուածաշունչը եւ Աւետարանները, աշխարհի փիլիսոփայական ճանաչումը, ուժականութիւնը մշտահմայ ազգային գրականութեան ակունքներն են, աշխարհը եւ մարդկանց սիրելու անպարփակ-անդադրում զգացումը։

Այստեղից՝ Վեհափառ Հայրապետի ծննդեան իննսունամեակին նուիրուած յիշատակի խօսքի ծալքերը թափանցելու մեր անմիջականութիւնը, ներկայի մէջ նրա գրամշակութային տեսլականը վերակազմելու նոր ջանքը։

2

Գարեգին Ա.-ի մասին ըստ էութեան յոբելենական այս յօդուածի խորագիրը մեզ տարել է ազգային մշակոյթի շուրջ խորհրդածութիւնների, որտեղ «իրականութեան անդրակերպում» *կենտրոնական հասկացութիւնը լուծուած է* «հոգիի»՝ *դէպի նիւթը շարժին, ենթադրում է գեղարուեստական յաւելեալ ճանաչողութիւն, ուր իմաստի հոմանիշը* «հոգեմտաւոր ճառագայթումն» *է։ Այս առանցքային երկու արժէքների միասնական ըն-*

կալումն ունի տեղաշարժի խորհուրդ, որի մեկնութիւնը Վեհափառ Հայրապետը դեռ 80-ական թթ. առաջին կէսին, երբ դեռ Ս. Էջմիածին փոխադրուելու գաղափարը մտքի ծայրով անգամ չէր կարող անցկացնել, ամբողջացնում, իւրովսանն կռահում է իբրեւ «երեք աշխարհներէ» *հատող կենսագիծ, իբրեւ* «հող, մարդ եւ գիր»*։*

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի համար ինքնաբնութագրումի սեւեռուն միտք դարձած «Հող, մարդ, գիր» *աշխատասիրութիւնն առաջին անգամ լոյս տեսաւ Անթիլիասում 1983-ին։ Կարճ ժամանակում վերահրատարակուեց Նիւ Եորքում 1990-ին, իսկ մէկ տարի անց՝ վերստին Անթիլիասում։ Այն երեւան հանեց փիլիսոփային, արուեստագէտին, բարձրաստիճան հոգեւորականին, գիտնականին միաժամանակ։ Իսկ եթէ քննենք զուտ գեղարուեստական տեսանկիւնից, մեր առջեւ նորօրեայ նորավիպագիրն է, որ կարծես եկել է ուշ միջնադարից ու այսօր էլ սուսեր է ճօճում վաղ շրջանից մնացած կարծրատիպ (*scholastikos *գիտուն, կրթված, գիտնական) մտածողութեան դրսեւորումների դէմ։*

Իսկ աւելի ամբողջական եւ ընդհանրական՝ մեր առջեւ գրողն է, որի նորավէպեր-«քարոզները» (վերջինս՝ տուրք սերուանտէսեան գեղարուեստական տեսողութեան), ըստ էութեան, նորավէպ-փորձագրութիւններ են՝ անակնկալ իրադրութիւնները որսացող ազգային եւ մշտահոլով գնահատութիւնների հերոս-հեղինակով, անցեալի խիտ, բայց ուսանելի դասերով։

Հողը միջավայրն է, լինելութեան պայման-ենթահողը՝ ամուր ոտքերիդ տակ, Մարդը՝ ժողովրդի հաւաք նկարագրի լիութիւնը՝ վեր ժամանակի ու տարածութեան հոլովոյթից։ Հողի եւ մարդու միութեան մէջ է ազգային բարոյաբանութեան առեղծուածը, ինչի մեկնումը հնարաւոր է դառնում գրի շնորհիւ։ Երեք արժէքների փոխնիփոխ շարժի՝ անդրակերպումի գեղարուեստական դրսեւորումները հնարաւոր դարձնում է միայն վերջինը։ Գիրը ձեռք է բերում փիլիսոփայական խորք, այն այլեւս նշանային չէ, միաւոր չէ։ Այն լինելութեան չափումն է։

Որքան էլ զարմանալի է, այդ երեք կենսաշխարհերի հիմնական բաժնեգծերն աշխարհիկ են թւում առերեւոյթ. առաջինը հողն է, երկրորդը՝ գիրը, երրորդը՝ մարդը[4]*։ Ներքին դասդասման ջանքի մէջ իշխում*

[4] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ, *Հող, մարդ եւ գիր / Գ. տիպ, Անթիլիաս, 1991, էջ 8։*

է խօսքի կարգապահութիւնը՝ կառուցումը յստակ է. «կեանքի այս եռանկիւնու» *գիտակցումը՝* «հող–գիր–մարդ», *Աստծու նուէրն է՝ իր իսկ գոյութեան գերագոյն իմաստը։ Գիրը սրբազնագոյնն է, արարումի խորհուրդը, ուր «ծառայական կերպը» ամէնից առաջ հոգեւորին եւ մշակոյթին իր անձը նուիրագործելու պատրաստականութիւնն է՝ կեանքի մէջ քայլերի յաջորդականութիւնը՝ գիտակցական ու ենթագիտակցական ընտրութեամբ։ Առաջին վայրկեան բաժանումների առիթով կարելի է տարակուսել. ինչո՞ւ է այդպէս։ Մինչդեռ ողջ կենսական, բայց երկշերտ ենթաբաժանումներն այստեղ են.* «հողը» *առարկայական երկու բովանդակութիւն ունի, այսինքն՝ նիւթական եւ մշակութային հայրենիքի սահմանումներով, եւ դրա կողքին՝ կենսափիլիսոփայութեան խորքային իմացութիւնը։* «Հողը» *նաեւ ծննդավայր է. իր մասին պարզ ու «չոր» տեղեկութիւնը հաղորդում է որպէս իրողութիւն՝ առանց թմբուկի կամ ծնծղայի, որպէս կենսագրական սովորական նօթ. աշխարհ իջել է Քէսապի մէջ, որպէս Յակոբի որդի Նշան, Սարգիսեանների զարմից։ Հազիւ ներանձնական աննշան յղումով, բայց զգայութեան շաղախով՝* «Մեր աշխարհը այս աշխարհին բացուեցաւ *հողին* մէջէն, գեղջկական պարունակի մը մէջ»[5]։

Երկրորդ եւ երրորդ ռազմավարական բաժնեգծերը վերաբերում են «գիրին» *եւ* «մարդուն»[6], *նրանց միասնութեան անտրոհելի խորհուրդներին։ Նախ, անակնկալը, զարթումը՝* «Մեր աշխարհը իր կազմը գտաւ – եւ կը շարունակէ գոյանալ – գիրին եւ գիրէն անցնող հոգեկան բխումներու ճամբով»[7]։ *Եւ շարունակական ընթացքը, որի մէջ տեսնում է նախախնամ Աջի զօրութիւնը.* «Կեանքի այս եռանկիւնին մէջ եղանք – եւ կը ջանանք ըլլալ – այն, ինչ որ Աստուծոյ ստեղծումին, եկեղեցւոյ կոչումին եւ հայկեան արիւնին տուրքը եղաւ մեր անձին»[8]։ *Իսկ դա այդպէս է, քանի որ կոչումն է թելադրում ճանապարհը.* «Մեր աշխարհը իր աճման, հասունացման ուղին գտաւ *մարդոց* մէջէն՝ գրասեղաններու կամ – ապա – ամպիոններու առջեւ, խորանին վրայ, ժողովին մէջ, բազմութեանց դիմաց, որոնց հասարակաց տարրը եղաւ *մարդը*, *հայ մարդը*՝ առաւելապէս եւ տիրապէս»[9]։

---

[5] *Անդ։ Նկատենք, որ* «հողի» *ընդգծումը իր համար խնկարկումի ու խոնարհումի իմաստ ունի։*

[6] *Անդ։*

[7] *Անդ։*

[8] *Անդ։*

[9] *Անդ։ Ընդգծումները՝ բնագրում։*

Եկանք ծառայութեան բարձրակէտին՝ մարդուն, աշխարհի եւ հայաշխարհի կերտման ներուժին, այն, ինչ տիրաբար իշխում է իբրեւ թիրախ, իբրեւ նպատակ։

3

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գրքերն անդրակերտումի, այսինքն՝ ներքին շարժի, գեղարուեստական մտածողութեան եւ փիլիսոփայութեան յարաճուն վկայութիւններ են։ Հոգեւոր գրականութեան բարձրագոյն արտայայտութիւններ են արդէն մեր յիշատակած «Հայաստանեայց եկեղեցին իր ծառայական կերպ»ին մէջ», «հող, մարդ եւ գիր» *ազգային նշանառութեամբ* «Ծանի՛ր զքեզ» *քարոզների շարունակական ժողովածուները, կրօնաբարոյաբանական արժեւորում եւ մտասեւեռում ձեռք բերած ազգային-պատմական* «Անցեալը անցած չէ» *եւ հայեցողական խորհրդով առանձնացող* «Հայ մարդը հայ գիրքին դիմաց» *խոհափիլիսոփայական ներածութիւն-գրքերը եւ, ի հա՛րկէ, շատ ուրիշներ։*

Անդրակերտման փորձառութիւնը տարիների ընթացքում նրան հասցրեց նոր ոճի բացառիկ կառոյցի, առանձնացրեց գրի եւ բանաւոր խօսքի սահմանագծերում։ Մտածողութեան եւ ձեռագրի անշփոթելի եղանակը «մատնում էր» նրան ամենուր հենց կուռ դատողութիւնների հետագծով։ Նրան կարելի էր ճանաչել հոգեւոր-փիլիսոփայական եւ գրական-գեղարուեստական, պատկերային անսպասելի թռիչքների շաղախից։

Հիմնուելով «դիոգինէսեան լապտերով կեանք, հա՛յ կեանք որոնող»[10] *Յակոբ Օշականի՝ կեանքի վերջին գրած յայտնի աշխատասիրութեան տուեալների վրայ (*«Արեւելահայ բանասիրութիւնը եւ Ս. Էջմիածին – Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան»*)՝* «դառնօրէն» *երկրորդում էր, թէ* «ի՞նչ անհուն գերեզմաննոցներ են ձեռագիրներու մատենադարանները, որոնց պեղումը մեր մէջ հազիւ թէ սկսած է»[11]։

Այստեղ էլ սկսում է Յ. Օշականի մտածողութեան պատկերից բխող «անդրանցումի» փայլուն օրինակներից մէկը, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը Գարեգին Առաջինի մասին գրում է. «Այդ գերեզմաննոցները, սակայն, Գարեգին Կաթողիկոսի համար մահուան

[10] *Անդ, էջ 254։*

[11] Յ Ա Կ Ո Բ Օ Շ Ա Կ Ա Ն, *Արեւելահայ բանասիրութիւնը եւ էջմիածին. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան, Երուսաղէմ, 1948, էջ 56։*

վկայարաններ չէին, այլ կեանքի եւ յարութեան օճախներ: Եւ ինք՝ այդ օճախներուն կրակին շունչ տուող անձնեղէն հով»[12]: *Խօսքն այստեղ աւագ սերնդի Վեհափառ Տիրոջ «փոթորկայոյզ» մտակառոյցի ուժգնութեան մասին է, որից ինքն անմասն չէր, այնպէս, ինչպէս բառն է ննջում բառարանում ու երազում արթնութիւն կամ յարութիւն: Այդպիսին էր Մշակոյթի մարդու կերպարը՝ տիրական ներկայութիւն իր հոգեկան խառնուածքի մէջ, որ* «երբեք իր տեղը չկորսնցուց...: Ո՛չ Թիֆլիսի առաջնորդական զբաղումները, ո՛չ Երեւանի թեմական դպրոցի առօրեայ եւ սրտմաշ գործերը, ո՛չ Ս. Էջմիածնի մէջ ստանձնած վարչական պատասխանատուութիւնները, ո՛չ կաթողիկոսական պատուիրակի հեւիհեւ տարած հանգանակային սպառիչ աշխատանքները, ո՛չ մեքենականացած եւ համակ շարժում եղող Ամերիկայի նման երկրի մը մէջ առաջնորդական տաղտուկները հայ կեանքի արդէն իսկ խռովեալ պայմաններուն մէջ եւ ո՛չ ալ կաթողիկոսական Աթոռի մը Աթոռակալին վերապահուած եւ գերագոյն պատասխանատուութեամբ միայն տանելի շատ փափուկ, բազմակողմանի եւ բազմակնճիռ առաքելութիւնը կրցան կասեցնել իր մէջ մշակութային պարապումներու ընթացքը: Մշակոյթի ապրումը Գարեգին Կաթողիկոսի անձին մէջ սրբազան կիրք մըն էր, անմար կրակ մը»[13]: *Երիցս ճիշտ էր ինքը, միայն թէ բոցկլտացող կիրքը շարունակում էր այրուել ու մխալ նաեւ իր՝ սարգիսեանական ներաշխարհում,* «եւ Յիսուսի աշակերտներուն նման «կորզենք հասկերը, շփենք զանոնք մեր ձեռքերուն մէջ», տանինք մեզի հետ իբրեւ ալիւր եւ անո՛վ խմորենք մեր սեղաններուն հացը, որպէս սնունդ յաւերժութեան: ....ժամանակը վերածենք յաւիտենութեան....»[14]:

4

1985-ին, որպէս սեւեռակէտ իր մտածումների, Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսն ընտրել էր հայոց հնաբոյր գրքերի միջից «թաղուած բառ մը», «զոր կ՚ուզեմ այսօր արեւին մէջ լուալ ձեր առջեւ, այս տարուան խօսքիս խորագիր ընտրելով ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ «*ՕՃԱՆԱՍՓԻՒՌ ՀԱՅՈՒԹԵԱՆ*»: *Օճանասփիւռ եւ Օճան նշանակութեամբ բառերը ժառանգուած են հայ մատենագրութիւնից եւ մոռացութեան են տրուած եղել: Մեր ժամանակների հոգեւոր մեծ ուսուցչապետը Հայկազեան բա-*

---

[12] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ [ԿԻԼԻԿԻՈՅ], *Հող, մարդ եւ գիր, էջ 254:*

[13] *Անդ, էջ 255:*

[14] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ, *Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց... / Փոքր մը Հայ Գիրքի Փիլիսոփայութեան, Անթիլիաս, 1990, էջ 80:*

ռագրքի սահմանումով վերադարձնում է նրա նախնական նշանակութիւնը՝ «բարիք», «երախտիք», «օգնութիւն» *բառերի մեկնութեամբ, երբ Պոմպէյ, ապա եւ Կալկաթա քաղաքներում խանդավառ երիտասարդներ հիմնել էին տպարան 1821-ին հենց* «Օճանասփիւռեան Ընկերակցութիւն» *եւ* «Իմաստախնդրեան» *անուններով, որպէսզի* «օճան» «սփռեն լոյսի կարօտ իրենց ժողովուրդին կեանքին մէջ»[15],— *գրում է Գարեգին Սարգիսեան Կաթողիկոսը, որը հաստատում է իր մեջ անդրակերտումի որակական ներքին փոփոխութիւնները, անցումը դէպի գրական եւ փիլիսոփայական հակումը, ինչը գալիս է հնուց, առնուազն, պայմանականօրէն նկատենք, հեգնելով ԺԹ. դարի սկզբի այս պայմանական թիւը, երբ գիտակից տարիներից երիտասարդ հոգեւորականի* «իւրայատուկ ապրումներու երանգներ դրոշմեցին մեր *(այսինքն՝ Գարեգին Կաթողիկոսի.—* Ս. Դ.*)* հոգեխառնութեան *(իմա՛ նկարագրի.—* Ս. Դ.*)* վրայ»[16]*: Եւ առօրեայ կեանքի շարունակութիւնը՝* «Ընթերցումներու պահերուն, միջեկեղեցական առաքելութեամբ կատարած մեր ճամբորդութեանց ընթացքին, ազգային, հոգեւոր, մշակութային տօնախմբութեանց մեր մասնակցութեան պարագաներուն, այնպիսի ապրումներ, յիշողութիւններ, խորհրդածութիւններ անցան մեր կեանքի թելէն, որոնք օրուան հետ մայրամուտ չյանգեցան: ....Եկեղեցւոյ խորանին վրայ, վանքի մը մէկ անկիւնը, օդանաւի մը մէջ, ուխտագնացութեան մը ընթացքին, հանդարտ ընթերցումի մը խորասոյզ մէկ պահուն, յիշատակի մը դիմաց, հայոց պատմութեան կամ մերօրեայ կեանքէն մեր հոգիին մէջ շառաւիղած մտածումներ, զգացումներ, անդրադարձումներ, վերլուծումներ այնպիսի արձագանգներ տուին մեր հոգեմտաւոր աշխարհին մէջ, տարուեցանք զանոնք գիրին փոխանցելու: Որովհետեւ զգացիք, որ անոնք միայն մեր նեղ անձին սեղմ զգայնութեան չէին պատկաներ, այլ արտաքնացումն էին մեր հաւաքական անձին՝ մեր ժողովուրդի ոգիին եւ ժառանգութեան, որուն հաղորդ դառնալու մեր ճիգը եւ սրտբաց պատրաստակամութիւնն էին միայն մեր անձնական բաժինը»[17]:*

Անդրակերպումների համակարգը երանաշնորհ Ամենայն Հայոց Կաթողիկոսը լուծում է Մարդու եւ Գրի ստեղծագործ շաղախով, երբ խորութեամբ գիտակցում է, որ հայ բարձրագոյն անհատականութիւնն է կանգնած հայ գրքի փիլիսոփայութեան ներածութեան ընդմէջէն իբրեւ

---

[15] *Անդ, էջ 99:*

[16] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ, *Հող, մարդ եւ գիր / Գ. տիպ, Անթիլիաս, էջ 7:*

[17] *Անդ:*

գեղագիտական միասնութեան կերպ, իբրեւ ազգային արթնութեան կողմնորոշում անցել դարի Մերձաւոր Արեւելքի համար անհանգիստ տարիներին։ Արթնութեան կոչնակը նա հնչեցրեց 1977-ի յունիսի 30-ին՝ այն օրը, երբ միայն մէկ ամիս հազիւ էր անցել իր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռակից Կաթողիկոսի օծումից։ Իր անմիջական նախաձեռնութեամբ սկիզբ դրեց «Հայ մարդը հայ գիրքին դիմաց...» *նշանաբանով շարունակական ցուցահանդէսների շարքին, որոնց շուրջ իր մտորումները «Հայ գիրքը...» սկսուածքով յօդուածաշարով ութսունականների երկրորդ կէսին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան* «Հասկ» *պաշտօնական ամսաթերթում լոյս տեսնելուց յետոյ ամբողջական գիրք դարձան 1990-ին՝ վեր հանելով վերլուծական խորամուխ իր տարողունակ աշխարհը մտքի կենտրոնացումի իբրեւ արգասիք։ Իսկ դրանից անմիջապէս յետոյ՝ 1991-ին, վերոնշեալ* «Հող, մարդ եւ գիր» *գրքի երրորդ տպագրութիւնը զուգադիպութեան կնիք ունենալ չէր կարող եւ յուշում էր այս գրքերի միասնութեան ենթահողը։*

Գրքերը, այո՛, յուշում էին, որ Վեհափառը միշտ անայլայլ, յամառօրէն, թուացեալ արտաքին հանդարտութեամբ պահպանում էր խօսքի ուժգնութիւնը՝ պատմութեան փորձով հաստատուած ռազմավարութեան խորհուրդը, բայց թէ դա ինչ էր նստում միշտ անհանգիստ, ժողովրդի կեցութեան հանդէպ պատասխանատու մտաւորականի վրայ, լաւ գիտէր ինքը։ Տարիներ անց պիտի խոստովանէր տագնապը եւ տագնապի ընդմէջէն հպարտութիւնը, որ ցմրուր ապրել էր առանձինն. «Հազա՜ր փառք Աստուծոյ, որ հակառակ լիբանանեան տագնապին երկարաձգութեան մինչեւ մեր այս օրերը, ահա տասնեւհինգ տարիներ հայ գիրքի ցուցահանդէսը հետեւողական եւ յարաճուն շարունակութիւն ունեցաւ եւ 12 օղակներու շղթայ մը դարձաւ։ Միայն մէկ անգամ, 1978-ին, կոտրեցաւ շղթան։ Անագորոյն ռմբակոծումներու դժոխային շաբաթն էր Հոկտեմբեր 1–8-ի շաբաթը, երբ հայաբնակ թաղերը թէ՛ Պուրճ Համուտի եւ թէ՛ Նոր Հաճըն-Ռըմեյլի շրջաններուն մէջ կրեցին «Կամուրջի ճակատամարտ» անունին տակ բնորոշուած զինական բուռն եւ քանդիչ բախումներու ծանրագոյն հետեւանքները։ Անկարելի էր ոեւէ ձեռնարկի մասին մտածել աւերածութեան եւ տաժանագին անձկութեան այդ օրերուն»[18]։*

Դժուարին ժամանակներ էին եօթանասունականները, երբ Վեհափառն սկսեց իր կաթողիկոսական ճանաչողական երթը դէպի ժողովր-

[18] Ի՛ր, *Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց...*, էջ 6։

դի մտքի ու ոգու դարպասները գրքի զրահանդերձի պաշտամունքի պահանջով ու պարտադրանքով։

Նա գրքի դիմաց էր... Նա ժողովրդին կանգնեցրեց գրքի առջեւ՝ աղօթքի պէս զօրացնելով, թրծելով հաւաքական այն մերկ ճշմարտութեամբ, որ Գիրքն է պատիւը, պարտքը, ճանապարհը հայի։ Իմացական խորհուրդների մէջ նա առաջնորդեց հային դէպի փիլիսոփայական խտացումի կենսադաշտը՝ «զրահանդերձի» վահանակերպ տեսակի՝ խօսքի՝ «զօրաւորք սպեղանիքի» մոգական ընկալումը, ասել է թէ՝ իր ձեւակերպմամբ՝ «Յաւերժութեան եւ ժամանակի հանգոյցը», *երբ կարող էր Պղատոնի շուրթերով բարբառել դարերի՝ մեզ հասած ճշմարտութիւնը, թէ* «Ժամանակը շարժուն պատկերն է անշարժ յաւերժութեան»։ *Ուրեմն՝ հարկ է, որ հայն անցնի իր ժամանակը եւ գրով հաստատի հետագիծը իր ապրած ժամանակի ու առօրէական փորձառութեան ընթացքներում, ինչը պիտի մեկնել իբրեւ* «հոգիի շարժում նիւթին մէջ»՝ *ի շահ* «հոգիի մնայնացումի»[19]։

5

Լեզուական տեսակէտից փոքր-ինչ անսովոր «մնայնացումի» եւ տեսողութեան առարկայացումի ճանապարհին մարմնաւորումի խորհուրդները հոմանշային արժէք են ստանում «հոգու շարժի» *շնորհիւ։ Դէպի հոգը եւ սիրտը։ Դէպի իմացականը եւ զգայականը։ Սրանով է գիտականաստուածաբանական աստիճանակարգերում առանձնանում Վեհափառ Հայրապետի գրչի ուժգնութիւնը՝ իբրեւ կենսափիլիսոփայական հայեացք եւ իբրեւ աշխարհի բանաստեղծացման իւրայատկութիւն։* «Երթանք ջուր տանք փոքր ածուին» *յօդուածի բանաստեղծական ներշնչանքը ծնունդ է ժամանակին Իրանա-Հնդկական թեմի առաջնորդութեան՝ իր ունեցած ապրումների վկայութիւնների, որոնք գրի է առել հեռաւոր 70-ական թթ. առաջին կէսին Նոր Ջուղայի վանքում։ Այլաբանութիւնն է ուղղութիւն տալիս խօսքի սլացքին։ Զգացական գերիվեր յոյզը խեղդում է փոքր Ջուղայի հսկայատիպ ու հարուստ թանգարանի առջեւ կանգնած քառասնամեայ կենսախինդ հոգեւորականին, որին, ինչպէս հաստատում են այլեւայլ վկայութիւններ, զուգահեռները տանում են դէպի ոգեղէն Անիի սրբատաշ քարերը։*

[19] *Տե՛ս անդ, էջ 68 եւ 69։*

«Հայութեան պարզ *զգացումէն* անդին՝ հայութեան *նախանձախնդրութիւն* է, որ այսպէս կեանք կ՚առնէ հայ հոգիին մէջ, երբ հայ մարդը Նոր Ջուղայի «Փոքր ածու»ն կը մտնէ եւ գիտակցական լուրջ ինքնասեւեռումով կ՚ըմբոշխնէ գեղարուեստական արժէքները իր հայրերու ստեղծագործութեանց՝ զանոնք փոխադրելով իր հոգիին մէջ եւ տարրացնելով իր ապրումներու հետ: Անոնց մէջէն իր մէջ կը պրկուին հայկական ազգային կամքը, նախանձախնդրութեան ոգին»[20]: *Այս ամէնից ինքն ամբողջացնում է* «Փոքր ածու»*ին հրաշքը՝ որպէս կրկնութիւն, կենտրոնական հարցադրումի իմացեալ կրկնութիւն, որպէս գաղափարների կիզակէտ, ճշմարիտ ներկայութիւն, թէկուզ իրանեան հողի վրայ: Այն Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքն է*[21]:

Հենց այստեղ տեղի է ունենում հին ու նոր քաղաքակրթութիւնների հանդիպում: Հեռաձայնն անակնկալի է բերում Նոր Ջուղայի թեմի առաջնորդին. Օսթանտարն էր՝ տեղւոյն նահանգապետը: Սովետ Միութեան մշակոյթի նախարարը ցանկութիւն էր յայտնել այցելել մայր տաճար եւ թանգարան: Խնդիրքը՝ պատշաճ ընդունելութիւն, հիմնաւոր բացատրութիւններ: Եղաւ աւելին, քան ենթադրելի էր. քրիստոնէական ու ազգային-պատմական բացատրութիւնները համեմուեցին նաեւ մտերմիկ խոր հասկացողութիւններով. ամբողջատիրութեան լճացման խորխորատ մտնող հասարակարգի մշակութային առաջին պաշտօնեան՝ տիկին Ֆուրցեւան, մի կողմ էր դրել պաշտօնէական ծէսին անհրաժեշտ գումարելիները՝ ջանալով ցոյց տալ աւելին, քան իրականում ինքը կար, «կարծես ինք ինձմէ աւելի բան գիտէր»[22]: *Հայ հոգեւորականի կուռ մտածողութեան ներքին շերտերում իմացական խորքից առաւել կար նաեւ դիւանագիտական հմտութեան շնորհալի կիրառութիւնը՝ առանց ցցուն ցուցադրութեան, ներհուն նրբամտութեամբ... Սկզբում թեմի Գարեգին առաջնորդի խօսքի մէջ ակնբախ են իմաստուն, ամենագէտ մարդու զուսպ ու համեստ, ճշմարտին այնքան մօտ շեշտադրումները.* «Բայց ասնք ի՞նչ կ՚ար-

---

[20] Ի՛ր, *Հող, մարդ եւ գիր, էջ 81:*

[21] *Այդպէս՝* «Հայոց «փոքր ածու»ն իրանեան հողին վրայ» *է կոչել իր գրքոյկը (Նոր Ջուղա, տպ. Ս. Ամենափրկիչ վանքի, 1971): Այդ թուականից նա Կիլիկիոյ ենթակայութեան Սպահանի՝ Նոր Ջուղայի առաջնորդն էր: Երկու տարի անց՝ 1973-ից, նա ստանում է արքութեան պատիւ ու տիտղոս:*

[22] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ [ԿԻԼԻԿԻՈՅ], *Հող, մարդ եւ գիր, էջ 84: Զուսպ տողերի մէջ «դերերը» ճիշտ էին բաշխուած՝ իրենը գիրն էր, ինքը՝ գրի սպասաւոր, գիտնականի դիմաց մարդն էր՝ այլեւս ոչ պաշտօնեան, անմիջական ու հաղորդական:*

ժեն Ջակոբսմի մէջ Ռուպլեի *իկոններուն»*, պատասխանեցի՝ համեստութեան եւ արժեչափի համեմատական գնահատումի փոռ մը կատարելով»[23]։

Ռուս կին պաշտօնեայի պատասխանն ապշեցնում է հողի, մարդու եւ գրի խորագիտակ հոգեբանին։ Քիչ է ասել, թէ պատմութեան, համադրումի կարողութիւնն է նրան առանձնացրել։ Ամենեւին։ Ռուս կինը վերհանում է այն, ինչ աշխարհի հզօրները միշտ անտեսել են հայ մարդու մէջ։ Բայց չէ՞ որ նա աշխարհի տիրակալ երկրներից մէկի հզօր մշակոյթն իր յաղթ ուսերին կրող անհատականութիւնն է։ Նա տեսնում է մի բուռ ու խեղճ Հայաստանի աննկուն կամքի առհաւատչեայ երթը պատմութեան միջանցքներով. «Ա՛, ո՛չ,— ըսաւ։— Ասոնք հոյակապ են ու մանաւանդ այն իմաստով, որ երբ մենք տաճարները կառուցինք, մեր որմանկարները պատկերել տուինք, կայսր ու պետութիւն եւ զօրութիւն ունէինք ու մեր աշխարհին մէջ կ՚ապրէինք։ Դուք հայերդ, այստեղ, երբ այս բոլորն ստեղծեցիք, մի՛ մոռնաք, որ գաղթակա՛ն էիք, ձեր հողերէն բերուած եւ հարաւային Պարսկաստանի այս տարածութեան մէջ նետուած։ Ես եղեր եմ Երեւան, ...այդ բոլորը բնական կը գտնէի, որովհետեւ ձեր հողին վրայ ձեր ժողովուրդը չէր կրնար տարբեր ըլլալ, քան այն, ինչ որ իր մշակոյթի պատմութիւնը զինքը շինած էր որպէս ստեղծագործ ժողովուրդ։ ....Ա՛յս է իրական մեծութիւնը. մե՛ծ ըլլալ, երբ ամէն ինչ քեզ կը տանի դէպի փոքր ըլլալը եւ օրէ օր դէպի անէութիւն երթալը»[24]։

Մենք չունենք այն միամտութիւնը, թէ Եկատերինա Ֆուրցեւան երէկուայ այս կիզիչ կիսաանապատի մէջ պիտի կարողանար նման յանպատրաստից խորհուրդներ կարդալ Հայաստանի եւ հայ ոգու, նրա ստեղծագործ էութիւնը վերհանելու պատրաստութիւնն ունենալ։ Քա՛ւ լիցի։ Գարեգին եպիսկոպոսը գտնում է իր ժողովրդի հաւաքական ամբարձիչ էութիւնը, իր եւ, ի հա՛րկէ, իր ժողովրդի «ծառայական կերպի» *մեկնութիւնը 70-ական թթ. առաջին կէսին վերհանելու, բացայայտելու, գեղարուեստական իմաստնութեան հասցնելու եղանակը։ Օտար պաշտօնեան միայն միջոց է ինքնաբնութագրման եւ արարումի ճանապարհին։*

Եպիսկոպոսն անդրակերտումի ճանապարհն այնպէս թեթեւասահ է անցնում, իսկ արուեստագէտը քաջ գիտի, թէ եկեղեցաշինութեանը զուգընթաց ինչ է իր համար Հոգեւոր Հայաստանի կերտումը։

Այստե՛ղ է նրա մեծութիւնը։

---

[23] *Անդ, էջ 85։ Ընդգծումը՝ բնագրում։*

[24] *Անդ։*

6

Անդրակերտումը միայն փիլիսոփայական հայեացքի խտացում չէ. այն ունի գեղարուեստական մտածումի անսպասելի պոռթկումներ, ինչպէս օրինակ՝ սքանչելի «Բանալիներ, բանալինե՛ր Մայր Արաքսի», «Լռած զանգակներ, անլռելի ղօղանջներ», «Դառնութեան եւ բերկրանքի արցունքներ» *խոհագրութիւնները, նաեւ շատ ուրիշներ, որոնց մէջ պատմութիւնը լուծւում է հողին, հասակ է առնում երկրի յիշողութեան, մարդու եւ նորոգուող քրիստոնեայի հետ՝ դառնալով, ինչպէս յուշում է շարքի խորագրութիւններից մէկի խորագիրը,* «Հայ «ստեղծագործ ոգու» անմահ վկան»*։ Այս ամէնն ապրումի լիապարոյր հետագիծ ունի, փիլիսոփայական խոհի տարողութիւն։ Ամենուրեք մենք տեսնում ենք, մէկընդմէջ, նաեւ՝ մէջընդմէջ, սրբասաց երկու բեւեռների՝ Մովսէս Մարգարէին՝ քրիստոնէականի թրթիռը, եւ Մեսրոպ Մաշտոցին՝ ազգայինի խորախորհուրդ առաջնորդութիւնը։*

Մայր Արաքսի զոյգ ափերին, երբ աշխարհիս վրայ նոր բացուած ժէ. դարը չորս դին խորհրդանշում էր «մահ, փլուզում, տուներու հրկիզում»[25]*, երբ իրար դէմ ելել էին երկու ամեհի ուժեր՝ պարսից շահը եւ օսմանեան սուլթանը, Շահ Աբբասը մտմտում էր հայութեան շինարար ուժը փոխադրել Արաքսի այն ափը՝ դէպի Սպահան։* «Մե՛ծ երազներու տէր մարդ էր արքան։ Իր կայսրութեան մեծութեան եւ շքեղութեան համապատասխան քաղաք կ՚ուզէր կերտել։ ....Պէտք ունէր շնորհալի ձեռքերու, ստեղծագո՛ր ձեռքերու, ...բազմաշնորհ արհեստագէտներու եւ արուեստի վարպետներու»[26]*։ Երազո՛ւմ էր արքան՝ հայի մէջ տագնապ յարուցանելով դէպի թուրք աւազակը, յենուելով նրա պաշտպանական բնազդներին.* «Դուք զոհ կը դառնաք կոստեան կամ գերութեան։ Ողորմելով ձեզի՝ կ՚ուզեմ ձեզ փրկել»[27]*։*

Վախը սարսռազդու էր. չէ՞ որ օսմանեան զօրքը Կարինի դարպասների տակ էր այլեւս։ Միւս կողմից՝ աշունը մօտ էր, հայոց յղի դաշտերը՝ բերքի տակ ճկած։ Յայտնի պատմութիւնը ներկայացնելիս Վեհափառ Հայրապետը յարաճուն դրամատիզմ է հաղորդում խօսքին, մէջբերում այն, ինչ պատմիչ Առաքել Դաւրիժեցու ներքին տեսողութեան մէջ դառնում է դող, «կրկնակի մահ»*, ազգային նոր ողբերգութեան նախադուռ.* «Հայ աւագանիի այս դիւանագիտութիւնը շա՜տ թափանցիկ էր եփուն դիւա-

[25] *Անդ, էջ 13։*
[26] *Անդ, էջ 15–16։*
[27] *Անդ, էջ 16։*

նագէտին՝ Շահի սրատես աչքերուն դիմաց: Մանուկի խաղ կը թուէր ան հնարամիտ վարպետին համար: Շահ Աբբասի միտքը անշրջելի էր – պէտք էր հայերը տանիլ եւ բնակեցնել ի՛ր երկիրը ու անոնց քրտինքը խառնել ի՛ր հողերուն մէջ: Այդ ոռոգումը անտարակոյս արգասաբեր պիտի ըլլար, որովհետեւ ինք տեսեր էր քարահանք Հայաստանը եւ քարէն կեանք ու արուեստ ստեղծող հայ ժողովուրդը»[28]:

Այդ ահագնացող պատկերները հոլովոյթ են ապրում նաեւ 21-րդ դարում՝ նորից պատմական ծրագրերի կրկնութիւն, նորից «բարերարի» սրտահովութեան խաղարկումներ, այս անգամ՝ դէպի հիւսիս կամ անգամ դէպի արեւմուտք... «զլայնանիստ դաշտն» *Արարատեան, ինչպէս յուշում է պարսկական կայսրութեան հինաւուրց մեթոդոլոգիան: Նիւթական գայթակղութիւնները գուցէ հոգեբանութեան վրայ աւելի ներգործուն են: Պորտուգալացի ճանապարհորդ Հ. Անտուան Գուէվան՝ օտար մէկը, աւելին էր տեսնում, աւելի խորն էր արձանագրում ազգային ողբը, հայ մարդու հրաժեշտը մայր հողին:*

Եւ նորից՝ հողն ու մարդը դէմ դիմաց, անհուն ցաւի ընդմէջէն: Զգացական մորմոքը դարեր անց վերանորոգւում է եպիսկոպոս Սարգիսեանի գեղարուեստական պատկերի նոր համակարգում. «Հողն ալ սիրտ ունի, եթէ սիրտ ունինք այդ սրտին տրոփը զգալու: Հողն ալ կեանք ունի, եթէ շունչ ունինք այդ կեանքին շունչը զգալու»[29]*: Հրաշալի է ասուած. նո՛յն դերակատարներն են, մտքի նո՛յն դասերի այլազան կերպը:*

Սա պիտի լաւագոյնս ուսել ազգային պատմութիւնից՝ Նոր Ջուղայից, Առաքել Դաւրիժեցուց, վաւերական տիպար Խոջայ Խաչիկից եւ տեղահանուած ժողովրդի ողբերգութիւնից, որոնց աչքերի մէջ Շահ Աբբասը որսացել էր հայ ապրելու անկոտրում վճիռը, վերադարձի հանդէպ հաւատը՝ քրիստոնէական հաւատքին զուգահեռ:

Այսօր էլ ժողովուրդը հաւատում է մայր Արաքսի ջրերին, որի խորքերում վերջին մխիթարութիւն սուրբ թողօնն են՝ Վերադարձի բանալիները, որ յանձնել է իր մօրը՝ Արաքսին: «Եւ այս եղեւ թուին Հայոց ՌԾԴ., յամի Տեառն 1605»[30]*:*

Խորն է Գարեգին եպիսկոպոսի ընդհանրացման ներուժը 1973-ի մայիսին մէկ շնչով գրուած վերոնշեալ «Բանալիներ, բանալինե՛ր Մայր Արաքսի»

[28] *Անդ, էջ 18:*
[29] *Անդ, էջ 21:*
[30] *Անդ, էջ 25:*

խոհագրութեան մէջ։ Ինքն անցնում է Արաքսի վարար, պղտոր հատուածով. «Ջարթի՛f, նոր ժողովուրդ»։ Եւ այն ատեն՝ բանալինե՛ր, բանալինե՛ր Մայր Արաքսի, Ձեզմո՛վ բացուին «դռներն յուսոյ» ազգիս հայոց անջնջելի....»[31]։

Խօսքի սկզբում ակնարկեցինք Հայրապետի անցած մանկավարժական լայնահուն ճանապարհի կեռմանների մասին։ Պատիւ ենք ունեցել տեւականօրէն մնալու նրա իմացական հունդերի ձգողական հրապոյրի մէջ։ Մէկ դրուագ Ամենայն Հայոցի՝ Հայաստանի մէջ կրթական առաջին խորհրդանշական քայլերից. օգտուելով Գէորգեան ճեմարանում դասաւանդութեան մեր փորձառութիւնից՝ իննսունականների կէսերին առաջարկեցինք այց կատարել Խաչատուր Աբովեանի անուան համալսարան՝ շփուելու մանկավարժների եւ վաղուայ ուսուցիչների հետ, որոնք կարօտ էին նրա հոգեւոր խօսքի սլացքին։ Վեհափառ Հայրապետն սկզբում տատամսեց. յարմա՞ր կը լինի արդեօք։ Չէ՞ որ դեռ չի եղել Երեւանի պետական համալսարանում, Հայաստանի գիտական այրերի հետ դեռ չի հանդիպել։ Բայց նա, որ լիբանանեան պատերազմի թոհուբոհում ուշադրութեան կենտրոնում սեւեռուն պահում էր գրքի եւ խօսքի ներգործուն հմայքը, որսաց ուսուցչի դերի բացառիկ նշանակութիւնը եւ դաստիարակութեան նոր ժամանակի բաղադրիչն առանձնացրեց միւս՝ նոյնքան անհրաժեշտ գործօններից, քանի որ երբ խօսում էր «Հայ մարդը հայ գրքի դիմաց» *գրքի գլխաւոր հերոսի մասին, գիրքն ու ուսուցիչը հաւասար նժարներ էին դառնում։*

Հայոց Կաթողիկոսն արագ էր կողմնորոշւում արհեստածին բարդոյթների մէջ. նա վաղուայ ուսուցչին տեսնում էր ազգային գրականի առջեւ՝ ժամանակի հրապոյր-գայթակղութիւններից ձերբազատ. բոլոր միջօրէականներում հայ գրքի դիմաց առաջինը պիտի լինի հայ ուսուցիչը։ Ուսանողները նոր խօսքի արտասովոր արժէքը իւրովսանն որսացին. մանկավարժականի առօրեայի մէջ Գարեգին Առաջինի՝ շուրջ երկու ժամ տեւած շլացուցիչ բանախօսութիւնն ուղղորդող էր, հասցէաւորուած, նաեւ՝ փոխակերպիչ։ Այն դարձաւ փրկարար ձեռք՝ մեկնուած աշխարհիկ որոգայթներում երբեմն անճրկող ուսանողին։ Գարեգին Առաջին Կաթողիկոսն սկսում էր վաղուայ ուսուցչի անաղարտ տիպարի նորոգութեան գործից, քանի որ, որպէս ազգիս ուսուցչապետ, լծակից էր դառնում Խրիմեան Հայրիկին։

---

[31] *Անդ, էջ 29։*

Անշրջելի էր այս հանդիպումը, բացառիկ երեւոյթ. դրանով իսկ նա ձեւաւորում էր աւանդոյթ, որը անմիջապէս հրաշալիօրէն շարունակեց նրա յաջորդը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ներսիսեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն առ այսօր տեւական շփումներ է ունենում երիտասարդութեան, դասախօսների հետ, յաճախ իր ձեռամբ շնորհում լաւագոյն շրջանաւարտներին աւարտական եւ մագիստրոսական վկայագրեր։

Ոչ անկարեւոր մի հանգամանք եւս. համագործակցութեան սկզբունքով Գարեգին Բ. Հայրապետը լուրջ ուշադրութիւն է դարձնում սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստութեան դասընթացներին, յաճախ միասնական ջանքերով, որոնք, ի հա՛րկէ, նախաձեռնւում են համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնում։ Եւ դա՝ 2000 թուականից։ Քանիցս տարբեր երկրներից ժամանած ուսուցիչներին հիւրընկալել է Մայր Աթոռը, ամենօրեայ հոգածութիւն ցուցաբերել։ Սա նկատում ենք սիրով եւ երախտագիտութեամբ։

* * *

Իբրեւ հանրագումար եւ ամփոփում ասուածի՝ երանելի Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 90-ամեակի առթիւ մեր գնահատանքի բնութագրականը կ՚ուզէինք եզրափակել Վեհափառ Տիրոջ գլխաւոր ծառայութեան խորհրդի ստորագծումով՝ օգնութեան կանչելով աւետարանիչներից յատկապէս Ղուկասի սուր նկատառումը։ Յայտնի է, որ առաքեալների միջեւ մեծամտութեան յաւակնութիւններ առթող յարաճուն վէճ էր առաջ եկել, թէ ով է իրենց մէջ ամէնից մեծը։ Ղուկասի Աւետարանում խնդիրն աւելի սուր էր դրուած՝ «հակառակութիւն ի մէջ նոցա»։ *Յիսուս, կարդալով նրանց մտքերը, միանգամից բերել էր հարցադրումի ողջ սնանկութիւնը.* «Ո՞վ է մեծը. աթոռին վրայ բազմողը թէ՞ սպասաւորը»։ *Եւ պատասխանն իր հարցումին՝* «Ես ձեր մէջն եմ իբրեւ սպասաւոր եւ ծառայ»[32]։ *Երանաբոյր Հայրապետը գրում է այս առիթով.* «Ի՜նչ խորունկ խօսքեր ....Աստուած մարդ եղաւ՝ մարդուն ծառայելու համար, ոչ թէ մարդէն ծառայութիւն ստանալու համար»[33]։ *Եւ յաւելում է Մատթէոս աւետարանչի խօսքերը՝ Յիսուս չեկաւ* «պաշտօն առնուլ, այլ պաշտել»[34]։

---

[32] *Ղուկ. ԻԲ. 24։*

[33] ԳԱՐԵԳԻՆ Ա. [ԿԱԹՈՂԻԿՈՍ], *Հայրենիքը պատկերն է հայութեան, գիրք Ա., Ս. Էջմիածին, 2000, էջ 578։*

[34] *Հմմտ. Մատթ., Ի. 28։*

Յիսուսն Իրեն ընծայել է մարդկութեանն ու մարդկայինին։

Հետեւութիւնը պարզ է ու որոշ. յիրաւի, երանի են այն հոգեւոր առաջնորդները, որոնց իմաստնութիւնը ծառայութեան մէջ է՝ գաղափարով մարմնանալու եւ նոր ուժով հինաւուրց գաղափարը մարմնաւորելու մէջ։ Այդպէս պիտի ճանաչենք «Նոր Արեան՝ Բեթղեհէմ քաղաքի»՝ *մեր մէջ եւ մեզնից դուրս։*

Աւելի պարզ՝ Գարեգին Կաթողիկոսը շարունակական ներկայութիւն է մեզանում։ Ակամայ վերադարձնում ենք իրեն իր մէկ նշանաւոր խոհը՝

«Խուսափումներ կան այս կեանքին մէջ, որոնք աւելի կ՚արժեն, քան յարձակումներ։

Կորուստներ կան այս աշխարհին մէջ, որոնք գիտերու չափ կը կշռեն։

Բացակայութիւններ այս կեանքէն՝ որոնք ներկայութիւններ են, լիութիւն եւ ծանրութիւն ունեցող։

Լռութիւններ՝ որոնք խօսքի շտեմարաններ են, անսպառ աղբիւրներ»[35]։

Նա՝ Ամենայն Հայոց Հայրապետը, որ խորն էր տեսնում այդ «խուսափումները», «կորուստները», «բացակայութիւնները» եւ «լռութիւնները», աշխարհին ու մարդկանց ժպտում է յաւերժութիւնից՝ ամբողջացնելով մեր հոգեւոր պատմութիւնը։

Յուլիս 7 – օգոստոս 6, 2022

РЕЗЮМЕ

В статье рассматриваются вехи жизни, деятельности, научного, педагогического и творческого мира Католикоса Гарегина Первого. Жизненная философия Его Святейшества представлена как одна из вершин армянской духовной культуры. В частности, в центре внимания журнала находятся основы и познавательные пласты трудов «Армянская Церковь в «ее форме служения», «Родина – образ Армении», «Земля, человек и письменность», «Армянин перед армянской книгой...» В этих работах наилучшим образом раскрываются основы мышления Католикоса Великого Дома Киликийского, а затем Католикоса Всех Армян, его «образ служителя», понимание и восприятие отношения меж-

[35] *«Հասկ» / պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, կրօնական, կրթական, գրական եւ բանասիրական, Անթիլիաս, 1957, ԻԶ. Տարի, Օգոստոս, թիւ 8, էջ 273։*

ду Богом и человеком как образа жизни бытия. В плане интерпретации первоисточников выделялась его высокая историческая роль в журнале и ежегоднике «Аск» (Колос). Статья посвящена 90-летию со дня рождения величайшего духовного деятеля и человека-интеллектуала.

SUMMARY

The article examines milestones of the life, activity, scientific, pedagogical and creative world of Catholicos Karekin I, revealing His Holiness' philosophy of life as one of the high points of the Armenian spiritual culture. In particular, the author of the article focuses on basic provisions and cognitive layers of the following works: «The Church of Armenia in Her «Servile Form», «Homeland is the Image of the Armenians», «Land, Man and Writing», «An Armenian In Front of an Armenian Book...». Those works best reveal the starting points of the thinking of the Catholicos of the Great House of Cilicia and later the Catholicos of All Armenians, his «servile form», the understanding of the relationship between God and man as a way of life. In terms of the interpretation of the original sources, his high historical role in the «Hask» magazine and yearbook has stood out.

The article is dedicated to the 90th birth anniversary of a great spiritual figure and intellectual.

Doi: 10.56737/2953-7843-2022.8-105

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԱԴՈՅԵԱՆ
ԵՊՀ, ՀՀ, Յորդանանի Արքայական համալսարան, ՅՀԹ

ՄԷԿ ՎԱՂԵՐԱԳԻՐ ԱՄՆ ՅԱՏՈՒԿ ՊԱՀՈՅՆԵՐԻՑ[1]

Անցեալ դարի վերջին քառորդում ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչութեան[2] Ռազմավարական հետազօտութեանց գրասենեակի[3] մի մասն ընդգրկուեց նորաստեղծ SOVA (Office of Soviet Analysis)՝ ԽՍՀՄ վերլուծութեան գրասենեակում, որը դարձաւ տարածաշրջանային համանման կառոյցներից ամենամեծն ու առաւել արդիւնաւէտը՝ իր կազմում ներառելով Արեւելեան Ասիայի[4], Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւային Ասիայի[5], Եւրոպայի (EURA- Europe) եւ Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներով զբաղուող[6] օղակները[7]: Աշխատանքի բերմամբ՝ յիշեալ վերլուծական խմբերը տարբեր ժամանակներում անդրադարձել են նաեւ հայութեանն ու հայկականին առընչուող տարբեր հարցերի: Իբրեւ օրինակ կարելի է նշել 2012/09/10-ին գաղտնազերծուած 1987 թ. մայիս 18 թուագրեալ փաստաթուղթը, ուր «Թուրքիա—ԱՄՆ. անցեալի խնդիրներ, նոր մարտահրաւէրներ» խորագրի ներքոյ վերլուծաբանները գրում են, որ մի շարք իրողութիւնների բերմամբ՝ Թուրքիայի

---

[1]* *Հոդվածը ստացվել է 7.06.2022, գրախոսվել է 7.07.2022:*

Էլ. փոստ՝ sirmad.sm@gmail.com:

[2] *Շարադրանքում կիրառուած է եզրանուն՝* CIA: *Ի տարբերութիւն այս մէկի՝ յաջորդող յապաւումները քիչ են հանդիպում, իսկ երբեմն նաեւ տարբեր կերպ են բացւում կառավարական ու այլեւայլ ուրիշ կայքերում (տե՛ս օր.՝* https://2001—2009.state.gov/r/pa/ho/frus/nixon/e7/48645.htm, https://ucsd.libguides.com/govspeak/pagec *եւն): Այս իսկ պատճառով թարգմանութեան տողատակում դրել ենք բնագրի ձեւերը:*

[3] OSR—Office of Strategic Research.

[4] OEA—Office of Eastern Asia.

[5] NESA—Near East and South Asia.

[6] ALA—Africa and Latin America.

[7] *Տե՛ս* https://irp.fas.org/cia/product/osr.pdf. *հմմտ.* R. Vickers, The History of CIA's Office of Strategic Research, 1967—1981, 2019, *էջ 87:*

եւ ԱՄՆ-ի յարաբերութիւնները բարդ միտումներ են դրսեւորում: «Ի թիւս այլոց կարելի է յիշել Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի քննարկումը Քօնգրէսում, Թուրքիային ԱՄՆ-ի մատակարարած զէնքը Կիպրոսի դէմ կիրառելու սահմանափակումները, ինչպէս եւ Թուրքիային յատկացուող ամերիկեան օգնութեան կրճատումը»[8]: Ստորեւ բերուող փաստաթղթում ձեւակերպումների, պաշտօնական կոչումների, դիմելաձեւերի սխալ կամ թերի կազմութիւններ կան, որ առաջին հայեացքից կարող են անհրաժեշտ գիտելիքի պակասի կամ մասնագիտական յետնութեան տպաւորութիւն ստեղծել, կարծիք առաջացնել, թէ հետախուզական կառոյցի գործակալներն անգամ տեղեակ չեն՝ ինչ կոչում ունի ԱՄՆ նախագահին հանդիպող «հայ հոգեւորականը»: Սակայն իրականութիւնն այլ է. նոյն պահոցներից հանուած բազմաթիւ փաստաթղթեր՝ «բնագրի լեզուն՝ հայերէն» դրոշմն ունեն եւ այդու վկայում են, որ «գրասենեակային» աշխատանքներում ընդգրկուած են եղել եթէ ոչ հայ, ապա գոնէ հայերէնին կատարելապէս տիրապետող աշխատակիցներ, որոնք, ասենք, բարեխիղճ եւ բծախնդիր կերպով կարդացել եւ սղագրել են հայկական մամուլը, քաղել իրենց համար կարեւոր տեղեկութիւնները[9], հետեւաբար, չէին կարող տեղեակ չլինել լեզուի տարական կաղապարներից:

Գաղտնազերծուած փաթեթը, իր կարճառօտութեամբ հանդերձ, բաւականին տեղեկութիւն է տալիս անցեալի մի ուշագրաւ դրուագի վերաբերեալ՝ եւս մէկ վրձնահարուած յաւելելով հայրապետի դիմաստուերին:

---

[8] *Տե՛ս* https://www.cia.gov/readingroom/docs/CIA-RDP90T00114R000303280001—2.pdf:

[9] *Տե՛ս օր.՝* https://www.cia.gov/readingroom/docs/CIA-RDP80—00809A000700210220—9.pdf *վաւերագիրը. «1953՝ յունուար 11 ամսաթուով հաղորդագրութեան մէջ [Բէյրութում հրատարակուող] «Ազդակ»-ի Թեհրանեան թղթակիցը յայտնում է, որ ԽՍՀՄ-ը կրկին փորձում է խաթարել պարսկահայ համայնքի անդորրը»:*

ՅՈՒՇԱԹԵՐԹ

Կցուող [յուշաթերթը] պատրաստուել է [տողը ծածկուած է] Եւրա/Արեւելեան Եւրոպա Իբերիա-Էգէեան մասնաճիւղում՝ ԿՀՎ Տնօրէնի տեղակալի համար՝ ի պատասխան [ԱՄՆ] նախագահի եւ Հայ Առաքելական [Եկեղեցու] առաջնորդ՝ [Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոս] Գարեգին Բ. հանդիպման առիթով թուրքական հնարաւոր արձագանքի վերաբերեալ իր հարցմանը։

Յանձնելի՝

բնագիրը—ԿՀՎ Տնօրէնի տեղակալին

1 — Զարգացումների բաժին/Եւրա

1 — Կենտրոնական/Արեւմտեան բաժիններ

2 — Եւրա

4 — Հաղորդակցութեան բաժին/գործողութիւնների համակարգման յանձնախումբ

1 — Տեղեկոյթի վերլուծութեան մասնաճիւղ

1 — [տողը ծածկուած է]

ԵԻՐԱ

Եւրոպական վերլուծութեան գրասենեակ

ՅՈՒՇԱԹԵՐԹ ԿՀՎ ՏՆՕՐԷՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՀԱՄԱՐ

Կցուող յուշագիրը մեր պատասխանն է [ԱՄՆ] Նախագահի եւ [Մեծի Տանն Կիլիկիոյ] Կաթողիկոս Գարեգին Բ. հանդիպման կապակցութեամբ թուրքական հնարաւոր արձագանքի վերաբերեալ Ձեր հարցմանը։

Համաձայնեցուած է Կառավարական տեղեկատուութեան գրասենեակի[10] Միջգերատեսչական հետախուզական յանձնաժողովի[11] եւ [համապատասխան] աշխատանքային խմբի[12] հետ։

Եւրոպական վերլուծութեան [....]

Անունը եւ պաշտօնը թաքցուած են։

27 մայիս, 1983 թ.

---

[10] OGI—Office of Government Information.

[11] IIC-Interdepartmental Intelligence Committee.

[12] TG-Task Group.

ՅՈՒՇԱԹԵՐԹ

Թուրքական արձագանքը [ԱՄՆ] Նախագահի եւ Հայ Առաքելական [Եկեղեցու] արքեպիսկոպոս Գարեգին Բ. հանդիպմանը։

Ա. Թուրքական կառավարութիւնը, ըստ ամենայնի, առանձնակի նշանակալից չի համարի [ԱՄՆ] Նախագահի եւ Գարեգին արքեպիսկոպոսի հանդիպումը։ Անկարան նուազ հետաքրքրութիւն է ցուցաբերել հայ եկեղեցական առաջնորդների եւ ԱՄՆ պաշտօնատար անձանց նախկին հանդիպումների վերաբերեալ, անգամ այն հանդիպումների, որոնց մասնակցելիս է եղել Ստամբուլում գահակալող Հայ [Արեւելեան] Ուղղափառ Եկեղեցու պատրիարքը։ Կարծում ենք, որ Թուրքական ղեկավարութիւնը պատմականօրէն տարբերակում է հակաթուրքական հայ ահաբեկչութիւնն աւանդաբար դատապարտող հայ կրօնական առաջնորդներին նրանցից, որոնցից շատերը կասկածելի դիրքորոշում են որդեգրել ահաբեկչական գործողութիւնների կապակցութեամբ։ Թուրքերը հաւանաբար գիտեն, որ Բէյրութում գահակալող [Գարեգին] արքեպիսկոպոսը լիբանանեան ամբողջատիրութեան եւ անկախութեան ջատագովն է։ Ամենայն հաւանականութեամբ, նրանք կենթադրեն, որ իր հանդիպումը [ԱՄՆ] Նախագահի հետ խարսխուած կլինի այս խնդիրներին։

Բ. Թուրքերը, սակայն, այժմ անասելի զգայուն են Հայկական հարցի պարագային։ Հայ ահաբեկիչները վերջին տարիներին սպանել են աւելի քան 25 թուրք դիւանագէտի։

[2 տող ԾԱԾԿՈՒԱԾ է...] Աւելին՝ Հայկական հարցը գործօն է դարձել Կիպրոսի հակամարտութեան շարակարգում։ Անկարան պնդում է, որ Կիպրոսի յոյներն ապաստան են տրամադրում հայ ահաբեկիչներին, մինչդեռ Աթէնքն ու Նիկոսիան կտրականապէս հերքում են ներկայ մեղադրանքը։ Այս ամենը յուշում է փոքր հաւանականութեան մասին, որ Թուրքերը կարող են սխալ ընկալել Նախագահի հանդիպումը Գարեգին Բ.-ի հետ։ Սակայն եթէ անգամ Թուրքերն այցը վիրաւորական նկատեն, այնուամենայնիւ դժուար թէ առաւել հեռագնայ քայլ ձեռնարկեն, քան իրենց մտահոգութիւնը դիւանագիտական ուղիներով արտայայտելը։

EUR M83—10155

[շարունակութիւնը ծածկուած է] ԳԱՂՏՆԻ

ԹՈՅԼԱՏՐՈՒԵԼ Է ԳԱՂՏՆԱԶԵՐԾՄԱՆ 2010/07/20 CIA-RDP85T00287R000501460001—7

Memorandum for: RECORD

The attached was prepared by [redacted] 25X1

[redacted] Iberia-Aegean Branch, EURA/WE for 25X1

the DDI in response to his query about the possible Turkish reaction to a meeting between the President and the Armenian Apostolic leader Karekin II.

Distribution:

Orig - DDI
1 - OD/EURA
1 - C/WE
2 - EURA Production
4 - OCO/IDCD/CB
1 - IA Branch File
1 - [redacted] 25X1

E U R A

Office of European Analysis

Memorandum for: DDI

The attached memorandum is our response to your query about the possible Turkish reaction to a meeting between the President and the Armenian Catholicos Karekin II. It has been coordinated with OGI/IIC/TG.

[redacted] 25X1

Director
European Analysis

E U R A

Office of European Analysis

Sanitized Copy Approved for Release 2010/07/20 : CIA-RDP85T00287R000501460001-7

27 May 1983

MEMORANDUM

Turkish Reaction to a meeting between the President and Armenian Apostolic Archbishop Karekin II

1. The Turkish government probably would not consider a meeting between the President and Archbishop Karekin to be particularly significant. Ankara has shown little interest in past meetings between Armenian church leaders and US officials, not even those involving the Patriarch of the Armenian Orthodox Church, who lives in Istanbul. We believe that the Turkish leadership historically has differentiated between Armenian religious leaders -- who have traditionally condemned anti-Turkish Armenian terrorism -- and other Armenian leaders, many of whom have taken ambiguous positions on the terrorists' actions. The Turks probably know that the Archbishop -- who resides in Beirut -- is a strong advocate of Lebanese unity and independence. They are likely to assume that his meeting with the President would focus on these issues.

2. The Turks are, however, unusually sensitive now about the Armenian problem. Armenian terrorists have assassinated more than 25 Turkish diplomats in recent years. [redacted] 25X1 25X1 25X1 The Armenian question has, moreover, become a factor in the Cyprus dispute. Ankara claims that the Greek Cypriots are harboring Armenian terrorists, while Athens and Nicosia heatedly deny the charge. All this suggests a slight possibility that the Turks might misconstrue the President's meeting with Karekin II. If the Turks did take the visit as an affront, they would be unlikely to do more than express their concern through diplomatic channels.

EUR M83-10155

[redacted] 25X1

SECRET

Sanitized Copy Approved for Release 2010/07/20 : CIA-RDP85T00287R000501460001-7

РЕЗЮМЕ

Многочисленные структурные подразделения разведывательных и аналитических центров США разное время занимались сбором, обзором и исследованием информации об Армении и об армянских деятелях.

Вниманию читателей предлагается рассекреченная записка одного из офисов стратегических исследований. В нем по поручению заместителя директора ЦРУ всесторонне рассматривается возможная реакция официального Стамбула на предстоящую встречу Президента США и Католикоса Великого Дома Киликийского Гарегина II.

SUMMARY

Numerous structural subdivisions of U.S. intelligence and analytical centers at different times were engaged in collecting, reviewing and researching information about Armenia and Armenian figures.

Here is a declassified note from a strategic research office. On behalf of the Deputy Director of the CIA, it examines in detail the possible reaction of official Istanbul to the upcoming meeting between the U.S. President and Karekin II, the Catholicos of the Great House of Cilicia.

Doi: 10.56737/2953-7843-2022.8-112

ՀՐԱՉԵԱՅ ԲԱԼՈՅԵԱՆ (ԱՐՄԷՆԵԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

ԽՈՐԱԳԵՏ ՀԱՅՐԱՊԵՏԸ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ (ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)[1]

Կնուց անտի կեանքի յայտնի ու անվիճելի ճշմարտութիւններից է՝ հոտը պէտք է հովիւ ունենայ, հաւաքականութիւնը՝առաջնորդ, որպէսզի կարողանայ կազմակերպել իր կեանքն ու գործը։ Այդ առաջնորդների մէջ, սակայն, լինում են այնպիսիք, ովքեր իրենց մտքի հզօրութեամբ, հոգու ու սրտի նուիրումով, վաստակի կարեւորութեամբ ու արժէքով առանձնանում են, դառնում հանուրի գնահատանքի, ակնածանքի ու հիացմունքի առարկան։ Հայ Եկեղեցու այդպիսի առաջնորդ էր հայ եւ ընդհանրական քրիստոնէական Եկեղեցու ճանաչուած գործիչ, գիտնական, մտածող, հրապարակախօս, մանկավարժ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Առաքելահիմն Հայաստանեայց Եկեղեցու 131-րդ գահակալը (աւազանի անուամբ՝ Նշան Սարգիսեան) ծնուել է 1932 թ. օգոստոսի 27-ին Սիրիայի Քեսապ հայաւանում։ Նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրի Ազգային ուսումնասիրաց միացեալ վարժարանում։ Նախակրթարանն աւարտելուց յետոյ պատանի Նշանը որոշում է արհեստ սովորել, որպէսզի կարողանայ օգնել նիւթական դժուարին վիճակում յայտնուած իր ընտանիքին։ Հակառակ հօր պնդումներին՝ տասնչորսամեայ պատանին ուսումը գիւղի միջնակարգ վարժարանում շարունակելուց հրաժարւում է, սակայն իրենց ծխատէր քահանայ տէր Մովսէսի միջամտութեամբ ու առաջարկով՝ համաձայնում է թողնել հայրենի գիւղը եւ 1946-ի հոկտեմբերին մտնել Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ Անթիլիասի դպրեվանք։ Դպրեվանքի ժառանգաւորաց քառամեայ շրջանը յաջողութեամբ աւարտելուց յետոյ՝ 1949-ի մայիս 29-ին, նորաւարտ

---

[1]* *Հոդվածը ստացվել է 27.11.2022, գրախոսվել է 30.11.2022։*

էլ. փոստ՝ hrachyab@gmail.com։

սանը սարկաւագ է ձեռնադրւում։ 1952-ի յունիսին բարձր գնահատականներով աւարտում է նաեւ դպրեվանքի ընծայարանի ուսումնական եռամեայ շրջանը։

1952 թ. սեպտեմբերի 28-ին ձեռնադրւում է կուսակրօն քահանայ եւ ի յիշատակ նորոգ վախճանեալ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի՝ վերակոչւում Գարեգին աբեղայ, դառնում Կիլիկիոյ միաբանութեան ուխտի անդամ։ Նոյն տարում դպրեվանքում սկսում է պաշտօնավարել որպէս ուսուցիչ ու հսկիչ, մաս է կազմում կաթողիկոսարանի «Հասկ» պաշտօնաթերթի խմբագրութեան եւ որպէս այցելու ուսուցիչ՝ դասաւանդում ՀԲՄ Բէյրութի Դարուհի Յակոբեան երկրորդական վարժարանում։ Այս բոլոր պաշտօնների կողքին ձեռնամուխ է լինում իր վարդապետական աւարտաճառի պատրաստութեանը, որի նիւթն էր «Հայաստանեայց Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու»։ 1955 թ. յունիսի 5-ին ստանում է վարդապետական աստիճան։ Նոյն թուականին պաշտօնավարում է դպրեվանքում՝ որպէս ուսուցիչ եւ վերակացու։ 1956 թ. ստանձնում է տեսչի պաշտօնը։

*1957-ի սեպտեմբերին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կրթաթոշակով Գարեգին վարդապետը մեկնում է Անգլիա՝ աշխարհի հռչակաւոր բուհերից մէկում՝ Օքսֆօրդի համալսարանում հետեւելու աստուածաբանական բարձրագոյն ուսմանը։ Օքսֆորդեան ուսումնառութիւնն աւարտում է գրականութեան բակալաւրի աստիճանով։ Որպէս աւարտաճառ՝ ներկայացնում է «Քաղկեդոնի ժողովը եւ Հայ Եկեղեցին» խորագիրը կրող աշխատանքը. աւարտաճառը պաշտպանում է անգլերէն եւ արժանանում «Գրականութեան բակալաւր» (*B. Litt-OXON*) համալսարանական տիտղոսին։ Համալսարանաւարտ երիտասարդի աշխատութիւնը 1965 թ. հրատարակում է Լօնդօնի «Էս Փի Սի Քէյ» (*S. P. C. K.*) հրատարակչատունը։ Արձագանքները լինում են կարեւոր գրախօսականները«Ջուրնըլ ըվ Թիըլոջիքըլ սթադիս» (*Journal of Theological Studies*), «Դը Թայմս լիթըրըրի սափլիմընթ» (*The Times Literary Supplement*), «Չըրչ Թայմս» (*Church Times*) ու եւրոպական մի շարք այլ հանդէսներում։ Գիրքը վերահրատարակւում է Նիւ Եօրքում 1976 թ., լինում են նաեւ այլ հրատարակութիւններ տարբեր երկրներում։*

1960 թ. Գարեգին վարդապետը վերստանձնում է դպրեվանքի տեսչի պաշտօնը. յաջորդ ութ տարիներին նրա գործունեայ, նախանձախնդիր եւ հետեւողական աշխատանքի շնորհիւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան

միաբանութիւնը համալրում է շուրջ երկու տասնեակ երիտասարդ եւ ուսեալ միաբանների նոր՝լուսարձակ աստղաբոյլով։

Նոյն շրջանում Գարեգին վարդապետը գործուն մասնակցութիւն է ունենում միջեկեղեցական մի շարք համագումարների ու ժողովների՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներկայացուցիչ։ Խորէն Ա. Կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ՝ 1963 թ. մայիսի 5-ին, Գարեգին վարդապետը կարեւոր դեր է կատարում նորընտիր եկեղեցապետի պաշտօնական այցելութիւնների կազմակերպման գործում։

Դպրեվանքում պաշտօնավարելու շրջանում աստուածաբանութեան, գրականութեան, պատմութեան, մշակոյթի եւ մատենագրութեան վերաբերեալ դասախօսութիւններ է կարդում ՀԲՀՄ Դարուհի Յակոբեան երկրորդական վարժարանում, Բէյրութի «Համազգայինի» Նշան Փալանջեան ճեմարանում, Համալսարանական քոլէջում եւ Ամերիկեան համալսարանում, հրապարակային դասախօսութիւններով հանդէս է գալիս մի շարք եկեղեցիներում, մամուլում հրապարակում յօդուածներ։ Դասախօսութիւններով հանդէս է գալիս նաեւ արտերկրում, յատկապէս Ռումինիայում, ուր նրան հրաւիրել էր Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու պատրիարքը։ 1963-ին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանու ներքոյ հիմնում է «Հայաստանեայց Եկեղեցւոյ համալսարանական ուսանողների միութիւն»-ը, որն աւելի քան քառասունհինգ տարի իր շուրջ է համախմբում մեծ թուով համալսարանական հայ ուսանողների։ 1963 թ. յունիսի 16-ին, առ ի գնահատութիւն նուիրեալ ծառայութեան, Խորեն Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ նրան շնորհւում է ծայրագոյն վարդապետի աստիճան։

1971-ի փետրուարի 24-ին Գարեգին եպիսկոպոսն ընտրւում է Իրանա-Հնդկաստանի դարաւոր թեմի առաջնորդ եւ մեկնում Իրան՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում ստանձնելու առաջնորդի պաշտօնը։ Նոր Ջուղայում իր յարաբերականօրէն կարճ պաշտօնավարման ընթացքում՝ մինչեւ 1973 թ. յուլիսը, զարթօնք է ապրում աւելի քան երեք դար անշքութեան մատնուած թեմի հոգեւոր, մշակութային, ընկերային եւ ազգային կեանքը։ Եռանդուն առաջնորդի նախաձեռնութեամբ եւ ճիգերով մասնագիտական դասակարգման են ենթարկւում Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանն ու մատենադարանը, սկսւում են վանքի շուրջ չորսհարիւրամեայ արխիւների հարուստ հաւաքածուի դասակարգման եւ ցուցակագրման աշխատանքները, 1636 թ. հիմնադրուած տպարանն օժտւում

*է արդիական մամուլով, Ս. Ամենափրկիչ վանքի «Յուցակ ձեռագրաց»-ը լոյս է ընծայւում երկու հատորով, ինչպէս նաեւ հայ արուեստի անզուգական մասնագէտ Սիրարփի Տէր-Ներսիսեանի, հնագէտ Արփակ Մխիթարեանի եւ իր աշխատակցութեամբ հրատարակւում է Նոր Ջուղայի հայկական մանրանկարչութեան կոթողային հատորը։ Տասնեակ հազարաւոր տպաքանակով լոյս են տեսնում Նոր Ջուղայի մշակութային գանձերը ներկայացնող գունաւոր բացիկներ (*card-postal*), որոնք տարածւում են Միջին Արեւելքից մինչեւ Եւրոպա եւ Ամերիկա՝ համատարած հետաքրքրութիւն առաջացնելով Նոր Ջուղայի պատմութեան եւ մշակութային ժառանգութեան նկատմամբ։*

Հակառակ Նոր Ջուղայում տիրող մտայնութեանը՝ թեմական առաջնորդին յաջողւում է ստեղծել Հայ երիտասարդաց կենտրոնատեղի՝ մարզամշակութային կազմակերպութեան հովանու ներքոյ ի մի համախմբելով հարիւրաւոր երիտասարդների։ «Վարդան Ճինիշեան յիշատակի ֆոնտ»-ի աջակցութեամբ կազմում է Փերիոյ գաւառից Նոր Ջուղայ տեղափոխուած կարիքաւոր հայ ընտանիքների, որբերի եւ միայնակ տարեցների աջակցութեան ծրագիրը։ Ս. Ամենափրկիչ վանքում կազմակերպում է նաեւ հայ ուսուցիչների հայագիտական պատրաստութեան դասընթացներ, դասախօսութիւններ, համագումարներ եւ կիրակնօրեայ կրօնական-եկեղեցագիտական յատուկ դասընթացներ՝ հայ միջնակարգ դպրոցների աշակերտութեան համար։ 1973-ի ապրիլի 26-ին Խորէն Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսն Իրանի հայոց երեք թեմեր կատարած իր հովուապետական այցելութեան ընթացքում Նոր Ջուղայում թեմի մեծեռանդ առաջնորդին շնորհում է արքութեան պատուի է կոչում։

Իրանում Գարեգին Ա.-ի պաշտօնավարած տարիների ծնունդ են «Հայոց «Փոքր ածու»-ն Իրանեան հողին վրայ» (Նոր-Ջուղայ, 1971) եւ «Ժողովրդական աղօթագիրք Մեծ պահոց երեկոների» (1973) հատորները։

1973-ի յունիսի 21-ին Գարեգին արքեպիսկոպոսը նշանակւում է Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի հայրապետական պատուիրակ։ Յաջորդ սեպտեմբերին ժամանում է Նիւ Եօրք՝ ստանձնելու իր պաշտօնը։ 1974-ի մայիսի 24-ին միաձայն ընտրւում է առաջնորդ։ Իր իմաստուն ղեկավարութեամբ եւ մշտատեւ աշխատանքով զարկ է տալիս թեմի ազգային-եկեղեցական, կրթական-մշակութային կեանքի զարգացմանը՝ յատկապէս քաջալերելով երիտասարդութեան մասնակցութիւնն այդ բնագաւառների առաջխաղացման գործում։ Նիւ Եօրքի առաջնորդա-

րանում հաստատում է «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանը, Ազգային ուսումնական խորհրդի գրասենեակը, լոյս է ընծայում մի շարք հրատարակութիւններ, իրագործում մշակութային ու ընկերային կարեւոր ծրագրեր։ Նրա ղեկավարութեամբ՝ 1975-ի ապրիլին Նիւ Եօրքի «Մեդիսօն Սքուէր Գարդէն» կենտրոնում աննախընթաց ընդգրկմամբ է կազմակերպում Հայոց ցեղասպանութեան 60-րդ տարելիցի միջոցառումները։

Ամերիկայի արեւելեան թեմի նրա առաջնորդութեան շրջանում պայթում է Լիբանանի քաղաքացիական պատերազմը՝ մահ ու ավեր սփռելով մեզ՝ հայերիս համար ասպնջական Լիբանանեան հողում։ 1976-ի աշնանը Բէյրութի հայաբնակ թաղամասերը եւս ենթարկւում են ահաւոր ռմբակոծումների եւ դառնում թաղային կռիւների թատերաբեմ՝ լիբանանահայոց պատճառելով մարդկային եւ նիւթական ծանր կորուստներ։ 1976-ի հոկտեմբերին Գարեգին արքեպիսկոպոսը մեկնում է Լիբանան՝ ամերիկահայութեան անունից զօրակցութիւն յայտնելու տեղի հայութեանը եւ ի մօտոյ տեսնելու ու գնահատելու ստեղծուած կացութիւնը։ Լիբանանից վերադառնալով՝ «Յանուն մէկ ազգի, ի սէր մէկ ապագայի...» վերտառութեամբ առանձին գրքոյկով հրատարակում է հայերէն ու անգլերէն մի ընդարձակ զեկոյց եւ Ամերիկայի հայ եկեղեցական, ազգային ու բարեսիրական մի շարք կազմակերպութիւնների մասնակցութեամբ ստեղծում «Լիբանանահայութեան օժանդակութեան ազգային գործադիր մարմին»-ը՝ հանգանակութիւններ կազմակերպելու համար Ամերիկայի ամբողջ տարածքում։ Յաջորդող հինգ ամիսների ընթացքում աւելի քան 700 000 դոլլար է հանգանակւում՝ յաջակցութիւն լիբանանահայութեան։

1977 թ. մայիսի 22-ին՝ Գարեգին արքեպիսկոպոսը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Խորէն Ա. Բարոյեանի հայրապետութեան շրջանում, ընտրւում է Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռակից Կաթողիկոս. կաթողիկոսական իր օծումն ստանում է ձեռամբ Խորէն Ա. Կաթողիկոսի 1977 թ. մայիսի 29-ին։ 1983-ին՝ Խորէն Ա. վախճանումից յետոյ, հռչակւում է Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս։

Ազգանուէր հոգեւորականի հոգածու վերաբերմունքը պատերազմի բոցերում յայտնուած լիբանանահայութեան նկատմամբ շարունակւում է նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան տարիներին. Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի գահակալութեան առաջին շրջանը համընկնում է Լիբանանեան պատերազմի դժուարին տարիներին։ Գարեգին Բ. իր մշտամնայ հոգածութեան առարկան է դարձնում Լիբանանահայութեա-

նը, յաճախակի քարոզներով, հրապարակային ելոյթներով եւ գրաւոր պատգամներով քաջալերում է ժողովուրդին, կոչ անում չյուսալքուել երբեք, բարոյական եւ նիւթական իր բոլոր միջոցներով զօրաւիգ կանգնում նրան։ Պատերազմի ամենածանր օրերին իսկ անխափանօրէն շարունակում է իրականացնել եկեղեցական, ազգային ու մշակութային բազմամարդ արարողութիւններ, հանդիսութիւններ եւ ձեռնարկներ՝ միշտ վառ պահելու համար ժողովրդի յոյսը, հետեւողական հոգածութեան եւ հետաքրքրութեան առարկայ է դարձնում հոգեպէս ու բարոյապէս առողջ երիտասարդութեան ձեւաւորումը եւ կարելիութեան չափով ջանում ընդարձակել կաթողիկոսարանի հասարակական ծառայութեան դաշտը։

Լիբանանի եղբայրասպան պատերազմի ամբողջ ընթացքում Գարեգին Վեհափառն օգնութեան է փութում բոլորին, օժանդակում մշակութային, մարզական, բարեսիրական միութիւններին, որպէսզի նրանք կարողանան իրենց առաքելութիւնն իրականացնել առաւելագոյն արդիւնաւէտութեամբ։ «Օրեր եղան, երբ ստիպուած էր նկուղներուն մէջ մնալ, վերահաս ռումբերէն ազատուելու համար, եւ մի քանի անգամ իր կեանքը նախախնամութեան շնորհիւ միայն փրկուեցաւ, որովհետեւ ռումբեր էին, որ կիյնային Անթիլիասին վրայ, կը դպնային Զարեհեան դամբարանին, կը դպնային ուրիշ շէնքերու, կը կոտրտէին պատուհաններ, բայց հրաշքով տպարանին նկուղին ծուարած միաբաններն իրենց Վեհափառին հետ ապրեցան եւ ֆիզիկապէս անվնաս անցուցին այդ դժխեմ տարիները՝ կոտրուած սրտով, բեկուած տրամադրութեամբ, բայց անսասան հաւատքով»[2],— յիշում է Վեհափառի նախկին սան, Հայ Եկեղեցու պսակակիր այրերից Մեսրոպ արք. Աշճեանը։

Կիլիկիոյ կաթողիկոսութեան 18 տարուայ ընթացքում Գարեգին Բ.-ն զարկ է տալիս ազգային-կրօնական, մշակութային եւ շինարարական ձեռնարկներին։ Կաթողիկոս ընտրուելուց անմիջապէս յետոյ յատուկ ուշադրութեան առարկայ է դարձնում սիրելի դպրեվանքը։ Այն 1977-ին Անթիլիասից տեղափոխւում է Բիկֆայա, ուր եւ շուտով կառուցւում է կրթական հաստատութեան ընդարձակ եւ արդիական յարմարութիւններով հանդերձաւորուած նոր շէնքը, որը նպաստում է աստուածաբանական ուսուցման բարելաւմանը։ տարի շարունակ՝ ամեն չորեքշաբթի, Վեհափառն իր ամբողջ օրն անցկացնում է դպրեվանքում՝ դասաւանդելով Հայ

[2] *«Էջմիածին», 1999, է., էջ 86։*

Եկեղեցու պատմութիւն եւ հովուական աստուածաբանութիւն՝ միաժամանակ ի մօտոյ հետեւելով դպրեվանքի կրթական ծրագրին եւ առօրեային։

Իր գահակալութեան առաջին տարիներին կաթողիկոսարանում հաստատում է նաեւ քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքը՝ օժանդակելու համար քրիստոնէական առողջ դաստիարակութեանը ոչ միայն Լիբանանում, այլեւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր թեմերում։ Նորին սրբութեան ջանքերով կաթողիկոսարանում հաստատում է նաեւ «Խաչեր Գալուստեան» մանկավարժական կենտրոնը, որի առաքելութիւնն էր լիբանանահայ ուսուցիչների պատրաստութիւնը։

Գարեգին Բ. Կիլիկիոյ Կաթողիկոսն առանձնայատուկ ուշադրութեան առարկայ է դարձնում հրատարակչական գործը։ Կաթողիկոսարանի տպարանը յագեցնում է արդիական սարքաւորումներով, հրատարակչական մնայուն հիմնադրամներ հաստատում կաթողիկոսարանի հովանու ներքոյ։ Ամեն տարի Սրբոց Թարգմանչաց տօնի առիթով կաթողիկոսարանի բակում կազմակերպւում են հայ գրքի երկօրեայ ցուցահանդէսներ՝ Լիբանանի հայկական բոլոր հրատարակչատների մասնակցութեամբ։ Նրա գահակալութեան շրջանում միայն Անթիլիասի կաթողիկոսարանի տպարանից գրասէր հանրութեանն ընծայւում է աւելի քան 350 անուն հայերէն գիրք։ Նրա հովանաւորութեամբ անհատ հեղինակների բազմաթիւ գործեր լոյս են տեսնում Լիբանանի հայկական այլ տպարաններում։

Բիքֆայայի դպրեվանքի նոր եւ արդիական շէնքի կառուցումից յետոյ զանազան ծրագրեր են իրականացւում նաեւ Անթիլիասի մայրավանքում։ Յատկապէս վերանորոգւում եւ ճարտարապետական կարեւոր բարեփոխումների է ենթարկւում ապրիլեան Նահատակաց յուշարձան-մատուռը՝ դառնալով հայկական ճարտարապետութեան մի գեղաշէն կառոյց։

Անթիլիասում իր հովուապետութեան վերջին տարիներին Գարեգին Վեհափառը ձեռնարկում է կաթողիկոսարանի թանգարան-մատենադարանի շէնքի շինարարութիւնը, որը, իր պատկերացումով, «լոյսի նոր օճախ մը պիտի դառնար Կիլիկիոյ կաթողիկոսութեան հոգեւոր կեդրոնին մէջ»։ Շէնքի կառուցումը գրեթէ աւարտին է հասնում, սակայն պաշտօնական բացումը վիճակւում է Կիլիկիոյ աթոռին նրան յաջորդած Արամ Ա. Կաթողիկոսին։ Գարեգին Վեհափառն առաջնորդող դեր է կատարում նաեւ Դեյր էլ Զորի Սրբոց նահատակաց եկեղեցու եւ յուշարձան-համալիրի կառուցման գործում. օծումը կատարւում է 1991-ի մայիսի 5-ին։

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան շրջանում Գարեգին Հայրապետը ձեռնարկում է հովուապետական այցելութիւններ Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմեր։ Միջեկեղեցական շրջանակներում այցելութիւններ է անում Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին (Վատիկան), Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի Արքեպիսկոպոս դր. Ռոբերտ Ռանսիին (Լօնդօն), Շուէյցարիայի Աւետարանական Եկեղեցիների միութեանը, Դանիայի եւ Գերմանիայի Լիւթերական Եկեղեցիներին, Աւստրալիայի Եկեղեցիների խորհրդին եւ Ղպտի Եկեղեցու պետ Նորին Սրբութիւն Շենուդա Գ. Պատրիարքին (Եգիպտոս)։ Նշուած շրջանում հանդիպում է նաեւ ԱՄՆ նախագահներ Ռոնալդ Ռէյգանի եւ Ջորջ Բուշ Աւագի հետ։

Գարեգին Բ.-ի տասնութամեայ գահակալութիւնը (1977—1995 թթ.) Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար նորանոր նուաճումների շրջան է յատկապէս կրօնական, ազգային, կրթական, մշակութային եւ շինարարական ոլորտներում։

Բնականաբար Կիլիկիոյ կաթողիկոսութիւնում սպասաւորելու եւ հովուապետելու տարիներին ազգանուէր հոգեւորականը բազմիցս այցելում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ թէ՛ խորհրդային եւ թէ՛ նորանկախ շրջանում։ Սուրբ Էջմիածին նա այց է կատարում նախ որպէս վարդապետ (3 անգամ), ապա 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից յետոյ՝ որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ինչպէս նաեւ՝ իբրեւ անդամ «Հայաստան համահայկական հիմնադրամ»-ի հոգաբարձուների խորհրդի (9 անգամ) եւ միշտ եղբայրական սիրով է հյուրընկալվում հայոց հոգեւոր մայրաքաղաքում։ 1994-ի օգոստոս 28-ին Գարեգին Վեհափառը Սուրբ Էջմիածնում կատարում է երանաշնորհ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերջին օծումը։

1994-ի մայիսին Վազգէն Ա. հրաւէրով Գարեգին Վեհափառը՝ որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկեանի եւ Թուրքիոյ հայոց պատրիարք Գարեգին արք. Գազանճեանի հետ Ս. Էջմիածնում մասնակցում է խորհրդակցական եռօրեայ հանդիպումների՝ քննելու Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի արժանավայել կերպով պանծացումը։

1988-ի դեկտեմբերի 7-ի աւերիչ երկրաշարժից յետոյ Գարեգին Բ. Կաթողիկոսն առաջիններից մեկն էր, որ լիբանանահայ մեր քոյրերի ու եղբայրների հետ միասին օգնութեան է հասնում աղէտեալ հայրենիքին։ 1988-ի դեկտեմբերի 11-ին՝ երկրաշարժից ընդամենը չորս օր անց, նա էջ-

միածնում էր, որպէսզի իր հոգեկից եղբօր՝ Վազգէն Ա. կողքին լինի. այդ օրը Մայր Աթոռին է նուիրում իր կրծքի ոսկեայ արծիւը, որպէսզի դրանով հոգան մի տառապեալ ընտանիքի կարիքները։

Երկու Հայրապետների բարեկամութիւնը, անշուշտ, սկիզբ էր առել շատ աւելի վաղ։ Նրանք առաջին անգամ հանդիպել էին 1956-ին Անթիլիասում. մէկը՝ արդեն Հայոց Կաթողիկոս, միւսը՝ վարդապետ։ Հետագայ տարիներին Վազգէն Վեհափառը շարունակում է յատուկ սեր տածել երիտասարդ վարդապետի հանդէպ։ Հայ Եկեղեցու Քահանայապետը տեսնում է նրա գործը 1963-ին Երուսաղեմում, երբ Խորէն Կաթողիկոսի հետ հաշտութիւն էր կնքւում, տեսնում է 1965-ին Ադիս-Աբեբայում, աւելի ուշ՝ 1967-ին՝ Էջմիածնում, երբ առիթ է տալիս արդեն Գարեգին եպիսկոպոսին քարոզելու Մայր տաճարում։ Երբ գնում են Վեհարան, Վազգէն Ա. պանակէ է նուիրում Գարեգին եպիսկոպոսին եւ ասում. «Եկեղեցին մէջ ուզեցի համբուրել քեզ, բայց անյարմար զգացի, եկուր, այստեղ ճակատդ համբուրեմ»[3]։ Ահա այսքան տպաւորուած էր Գարեգին եպիսկոպոսի քարոզով, որը խօսուած էր Գրիգոր Լուսաւորչի «Մուտն ի Վիրապ»-ի առթիւ։ Այս ամրակուռ բարեկամութիւնը շարունակւում է նաեւ յաջորդ տարիներին, եւ 1977 թ., երբ աթոռակից պիտի ընտրուէր Գարեգին սրբազանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին տրուած երաշխիքների հիման վրայ Վազգէն Ա.-ն Անթիլիաս է ուղարկում Սերովբէ արք. Մանուկեանին եւ Ներսէս արք. Պոզապալեանին, որպէսզի մասնակցեն Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեանը։

Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանուելուց յետոյ՝ 1995 թ. ապրիլի 4-ին, Էջմիածնում հրաւիրուած ազգային-եկեղեցական սրբազումար ժողովը Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին ընտրում է Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս. գահակալութեան հանդիսութիւնը տեղի է ունենում ապրիլի 9-ին՝ Ծաղկազարդի տօնին՝ Միածնաէջ Մայր տաճարում։

Գարեգին Ա. մեր այն եզակի կաթողիկոսներից է, որոնք հայրապետական գաւազանը ձեռքն առան անկախ, պետականակիր Հայաստան աշխարհում։ Նրա հովուապետութիւնն սկսուեց այն ժամանակ, երբ անաստուած կարմիր կայսրութեան փլատակներից նոր-նոր վեր էր յառնել հայկական պետականութիւնը, եւ հայ ժողովուրդը տեւական դադա-

[3] *Անդ, էջ 87։*

րից յետոյ վերստին ուսերին էր առել պետականութեան ծիրանին։ Նման պայմաններում Հայ Եկեղեցու գահակալի խոյրը կրկնակի ծանր էր, գահակալութիւնը՝ պատասխանատուութեամբ լի։ Այդ մասին վկայում է ինքը՝ Գարեգին Վեհափառը. «Շատ աւելի դիւրին է կառուցելու սկսիլ տեղ մը, ուր բան չկայ, քան թէ՝ վերահիմնել աւանդութիւն մը, որ խորապէս խոցուած է Հայաստանի մէջ, բայց իրողութիւնը պէտք է ընդունիլ այնպէս, ինչպէս որ է եւ վերանորոգումի աշխատանք տանիլ գործնականօրէն՝ նոր կենդանութեան մը ի խնդիր։ Համայնավարութեան ժամանակ Եկեղեցիին գործը կենդանի մնալն էր եւ պահել այն, ինչ որ գոյութիւն ունէր։ Բայց այսօր պէտք է ընդառաջ երթանք մեր ժողովուրդին։ Ձեռնարկել պէտք է առաքելութեան մը, որ վերաքրիստոնէացնէ մեր ժողովուրդը այնպէս, ինչպէս եղած է միշտ։ Քրիստոնեայ ազգ մը, որ իր ինքնութիւնը արտայայտած է ստեղծագործ կերպով ու յարատեւօրէն՝ իր արեան գնով մինչեւ իսկ։ Մեր ժողովուրդի այս այլակերպումը կենթադրէ հոգեւոր, բարոյական, մարդկային եւ մշակութային կազմաւորում։ Ազգ մը չի՛ կրնար միայն տնտեսական եւ քաղաքական հիմերու վրայ կանգնիլ, պէտք ունի բարոյական տոկունութեան, Եկեղեցի՛ն է աղբիւրը բարոյական այս ուսուցումին»[4]։

Գարեգին Ա. Ամենայն Հայոց հայրապետութիւնն սկսում է «Ապրե՛լ ու մեռնե՛լ վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութիւնում» կարգախօսով։

Ընտրութիւնից սկսած՝ Նորին Սրբութիւնն իր ամբողջ եռանդն ու ջանքերն ուղղում է եկեղեցական կեանքի ներքին կարգաւորմանն ու կազմակերպմանը։ Եկեղեցու աշխատանքն առաւել նպատակաուղղուած դարձնելու եւ ժողովրդի կեանքում քրիստոնէական աւանդոյթներն ամրացնելու նախանձախնդրութեամբ Գարեգին Ա. վերանայում է Հայաստանի թեմական կառուցուածքը. 1996 թ. Հայաստանեան չորս թեմերի կողքին ստեղծւում են եւս չորսը, հիմնադրւում են նաեւ Ուկրաինայի եւ Հարաւային Ռուսաստանի թեմերը։ Հայաստանում ծխական համայնքների վերակազմաւորման համար հին եկեղեցիներ են նորոգւում, կառուցւում՝ նորերը, հոգեւոր հովիւներ են պաշտօնի նշանակւում բազմաթիւ շրջաններում։

---

[4] «Karekin I: The Gift of Faith» *(«Գարեգին Ա. հաւատքի պարգեւը»), Կանադա, 2009, էջ 118–119։*

Գարեգին Ա. Կաթողիկոսի մեծ ուշադրութեան եւ հոգատարութեան առարկան է դառնում նաեւ Գէորգեան հոգեւոր ճեմարանը. արդիւնքը՝ կրթական հաստատութեան նորոգութիւնն ու կրթաուսումնական բարեփոխութիւնն էին։ Վերստին աշխուժանում է ճեմարանի կեանքը. 1997 թ. սեպտեմբերին՝ութ տասնամեակ տեւած դադարից յետոյ, վերաբացւում է կրթական հաստատութեան հիմնովին նորոգուած շէնքը, հիմք է դրւում նաեւ ուսանողների համար նոր՝ կացարանային համալիրի շինարարութեանը։ Այս շրջանում բազմապատկւում է նաեւ ուսումնական հաստատութեան սաների թիւը՝ հասնելով մօտ 120-ի։ Լոյսը պաշտող Վեհափառը համոզուած էր՝ Եկեղեցու բարեկարգութիւնն սկսւում է հոգեւորականութեան բարենորոգութեամբ։ Վեհափառ Հայրապետի՝ գրի ու լոյսի տարածմանն ուղղուած ջանքերից է իր հովանաւորութեամբ երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի ծրագրի իրականացումը՝ Օշականում՝ Մեսրոպ Մաշտոցի սուրբ շիրիմի կողքին՝ վերակառուցուած շէնքում, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան դպրատան հիմնումը, որն այսօր եւս գործում է։

Գարեգին Ա., ինչպէս Վազգէն Ա. ժամանակին, ուշադրութեան եւ մտահոգութեան կենտրոնում է պահում նաեւ մեր մայր ձեռագրատունը՝ Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, եւ Հայաստան աշխարհի հինաւուրց վանքերն ու եկեղեցիները։

Երջանկայիշատակ Հովուապետը բարեկարգում է Սուրբ Էջմիածնի տպարանը եւ մեծ զարկ տալիս Մայր Աթոռի հրատարակչական գործին. այդ դժուարին չորս տարիների ընթացքում թարգմանաբար եւ ժողովրդին մատչելի լեզուով լոյս են տեսնում հարիւրաւոր գրքեր՝ եկեղեցական հայրերի աշխատութիւններ, ծիսական մեկնութիւններ, խորհրդածութիւններ եւ ուսուցողական ու քարոզչական բազմաթիւ գործեր, հիմնւում է «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթը։

Հայոց Կաթողիկոսը սփիւռքահայ բարերարների եւ միջեկեղեցական կազմակերպութիւնների նիւթական միջոցներով Մայր Աթոռում հաստատում է կարիքաւոր ընտանիքներին, հիւանդներին, անկարներին եւ միայնակ տարեցներին աջակցութիւն ցոյց տուող յատուկ ծառայութիւն։

Լուսաւորչի աթոռի 131-րդ շնորհազարդ ժառանգորդի կարճատեւ գահակալութեան ընթացքին Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի շրջանակում կրօնական, մշակութային եւ շինարարական կարեւոր ծրագրեր են իրականութիւն դառնում։ Հայ Եկեղեցու պատմութեանն ու արուեստին նուիրուած միջազգային

ցուցահանդէսներ են բացւում Մոսկուայում, Աթէնքում եւ Վատիկանում։ Զանազան երկրներից հրաւիրուած աւելի քան քառասուն հայագէտների մասնակցութեամբ Փարիզում տեղի է ունենում եռօրեայ խորհրդակցական համագումար։

Գարեգին Ա. կազմակերպում է քաղաքամայր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարի կառուցումը։ Եկեղեցու առաջին հիմնարկէքը կատարել էին երկու երջանկայիշատակ Կաթողիկոսները՝ Վազգէն Ա. եւ այն ժամանակ տակաւին Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.։ Ըստ Շահէ արք. Աճեմեանի՝ առաջին հիմնարկէքի ժամանակ Վազգէն Ա. յուզումով ասել է Գարեգին Բ.-ին. «Եթէ իմ օրովս չօծուի նորակերտ Մայր եկեղեցին, անպայման դուք կը տեսնէք երջանիկ այդ օրը»[5]։ Արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. կարողացաւ օծել միայն տաճարի հիմնաքարերը. «Որքան երջանկութիւն կար անոր դիմագիծին վրայ Ս. Գրիգոր Լուսաւորիչի հիմնաքարերու օրհնութեան եւ օծումի օրը։ Անոր դէմքին վրայ կերեւէր արդէն իսկ կառուցուած Մայր եկեղեցիին հեռանկար տեսիլքը»[6],— յիշում է Շահէ սրբազանը։ Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի հանդիսութիւնների շրջանակում Վեհափառ Հայրապետի ձեռամբ 1997-ի ապրիլի 7-ին կատարւում է Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցու հիմնարկէքը։ Աւա՜ղ, երջանկայիշատակ Հայրապետի միայն արարուն աչը դիպաւ Երեւանի մայր տաճարի հիմքերին, տաճարի յառնումը նա չտեսաւ։

Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելու 1700-ամեակի առթիւ Գարեգին Ա. ապահովում է շուրջ 45 կիսաքանդ եկեղեցիների ու վանքերի հիմնանորոգումը, ինչպէս Ամաղուի Նորավանքի, Մուղնու Ս. Գէորգ եկեղեցու, Սեւանայ կղզու զոյգ եկեղեցիների, Բիւրականի Ս. Յովհաննէս եկեղեցու, Կարբիի եկեղեցու եւ այլն։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսն իր գահակալութեան առաջին երեք տարիներին հովուապետական այցելութիւններ է կատարում Հայաստանի, Արցախի (1995 թ.) եւ արտասահմանի բոլոր թեմերը՝ Վրաստան (1995 թ.), Ուկրաինա, Ռումինիա (1995 թ.), Կանադա (1995 թ.), Ամերիկայի Միացեալ Նահանգներ (1996 թ.), Շուէյցարիա (1996 թ.)

---

[5] *«Էջմիածին», 2002, Ը., էջ 50։*
[6] *Անդ։*

Բրազիլիա, Ուրուգուայ, Արգէնտինա, Իտալիա (1996 թ.), Ֆրանսիա (1997 թ.), Սինգապուր, Թայլանդ, Աւստրալիա (1997 թ.), Աւստրիա (1997 թ.), Անգլիա (1997 թ.) Եգիպտոս (1998 թ.), Գերմանիա (1998 թ.), ինչպէս նաեւ Կ. Պոլիս՝ Հայոց պատրիարքարան։ 1998 թ. ապրիլին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնում է Միացեալ Նահանգներ՝ Ամերիկայի հայոց թեմի 100-ամեայ յոբելեանական հանդիսութիւններում նախագահելու նպատակով։

Վեհափառ Հայրապետը նախագահում է Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռի նորընտիր Կաթողիկոս Արամ Ա. գահակալութեան ու օծման արարողութեանը՝ 1995 թ. յուլիսի 11-ին։

Իր հայրապետութեան կարճ ժամանակահատուածում Քահանայապետը լինում է արտասահմանի համարեա բոլոր մեծ ու փոքր հայկական համայնքներում։

Գարեգին Ա. հայրապետութեան տարիներին տեղի են ունենում տարեկան ուխտագնացութիւններ Հայաստանի թեմեր, որոնց մասնակցում են արտասահմանի զանազան երկրներից ժամանած հայ ուխտաւորներ։ Հրատարակւում են մեծադիր սրբապատկերների շարք եւ ուխտաւորների համար նախատեսուած ուղեցոյցներ։

Նորին Սրբութիւնը մեծապէս կարեւորում է նաեւ միջեկեղեցական շարժումը. Վեհափառը նոր թափ է հաղորդում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի էկումենիկ գործունէութեանը, պաշտօնական հանդիպումներ ունենում քոյր Եկեղեցիների Հովուապետների հետ, պաշտօնական այցելութիւններին հանդիպում Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսիյ Երկրորդին (1995 թ.), Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբութիւն Թեոկտիստին (1995 թ.), Վրաց Ուղղափառ Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբութիւն Իլիա Երկրորդին (1995 թ.), Հռոմի Սրբազան Քահանայապետ եւ Կաթոլիկ Եկեղեցու պետ Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Երկրորդ Պապին (1996 թ.), Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբութիւն Բարդուղիմէոս Առաջինին (1996 թ.), Քենթրբերիի Արքեպիսկոպոս Դր. Ջորջ Քերիին (1997 թ.), Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբութիւն Շենուդա Երկրորդին (1998 թ.)։

Հայոց Հայրապետը հանդիպումներ է ունենում նաեւ օտարերկրեայ պետական այրերի, պետութիւնների ղեկավարների՝այդ թւում ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթօնի հետ։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայ Եկեղեցու գահակալը հիւրընկալում է մի շարք եկեղեցական պատուիրակութիւնների՝ մասնաւորապէս Նորին Սրբութիւն Բարդուղիմէոս Ա. Տիեզերական Պատրիարքին, Նորին Սրբութիւն Ալեքսի Բ. Պատրիարքին, Նորին Սրբութիւն Թեոկտիստ Պատրիարքին, Նորին Սրբութիւն Իլիա Բ. Կաթողիկոս-Պատրիարքին եւ եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխաւոր քարտուղար դր. Կոնրադ Ռայզէրին։ Հայոց Հայրապետին այցելում են նաեւ պաշտօնական այցով Հայաստան ժամանած օտարերկրեայ պետական բարձրաստիճան բազմաթիւ այրեր, քաղաքական նշանաւոր գործիչներ, գիտութեան եւ մշակոյթի ականաւոր դէմքեր։

1999 թ. Մարտի վերջին օրերին՝ Նիւ Եօրքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադարձից առաջ, Գարեգին Ա. Վատիկանում Հռոմի Պապի հետ կատարում է «Հռոմ—Հայաստան»ցուցահանդէսի բացումը՝ նուիրուած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին։ Վատիկանեան այցի ընթացքում Գարեգին Ա. Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին հրաւիրում է Հայաստան։ Պոնտիֆիկոսն ընդունում է Հայոց Հայրապետի հրաւէրը՝ յուլիսի 2—4-ը այցելել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. աւա՜ղ, Վեհափառի առողջական վիճակի վատթարացման պատճառով նախատեսուած այցելութիւնը չի կայանում։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հասնելուց երեք շաբաթ յետոյ՝ 1999-ի ապրիլի 18-ին, հակառակ մարմնական ամենատկար վիճակին, Հայոց Հովուապետը կատարում է հիմնապէս վերանորոգուած Ամաղուի Նորավանքի օծումը։

1999 թ. յունիսի 29-ին՝ ժամը 17։50-ին, հայոց հաւատքի մայրաքաղաքում Ամենայն Հայոց 131-րդ Հայրապետը ծանր հիւանդութիւնից յետոյ՝ դեռ չբոլորած երկրային կեանքի վաթսունեօթ տարին, աչքերը փակում է յաւէրժ՝ ի խոր սուգ մատնելով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն եւ համայն հաւատացեալ հայութեանը։

Աւելի քան 1700-ամեայ Հայ Եկեղեցու եզակի ու բացառիկ դէմքերից մէկը եղաւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Հայրապետը, որի հոգեւոր հերկի հիմնական ուղղութիւնները եկեղեցական կեանքի վերանորոգումը եւ նոր զարթօնքը եղան։ Իբրեւ Հայ Եկեղեցու մեծագոյն նուիրեալ՝ նա անշուշտ գիտակցում էր վերջինիս՝ ընդգրկմամբ ու անցեալով ամենամեծ ազգային կառոյցի միասնութեան կարեւորութիւնը. «Մեր Եկեղեցին կը դառնայ ներքնապէս աւելի կենսալից եւ իր գործունէութեամբը աւելի

բարերար, երբ կը գործէ որպէս մէկ Եկեղեցի, ընդ գլխաւորութեամբ եւ հովանաւորութեամբ Ամենայն Հայոց Ընդհանրական Կաթողիկոսութեան, զոր ողջ հայ ժողովուրդը կը դաւանի որպէս Մայր Աթոռ»[7]։

Հայրապետը մի իւրայատուկ կապով էր կապուած Ս. Էջմիածնին, այն իւրայատուկ նշանակութիւն ունէր նրա համար. «Աշխարհում չկայ մէկ հայ եկեղեցի, որի մէջ Էջմիածինը ներկայ չլինի։ Էջմիածինը արեւն է, եւ մեր եկեղեցիները՝ ճառագայթները։ Աշխարհի չորս ծագերում գտնուող մեր եկեղեցիները արեւից ճառագայթուած շառաւիղներ են եւ արեւի լոյսը ունեն իրենց մէջ»[8]։ «Այնտեղ, ուր մի նոր հայ եկեղեցի է կառուցւում, այնտեղ Սուրբ Էջմիածնի լոյսից մի կաթիլ է ցօղում Մայր Աթոռից, մեր ծննդավայրից մի նոր լոյս է ծագում, ինչ ուրիշ անուն էլ որ ունենայ այդ եկեղեցին՝ Սուրբ Յակոբ, Սուրբ Գէորգ կամ Սուրբ Յովհաննէս, այնտեղ Լուսաւորիչն է իր տեսիլքովը ապրում եւ Էջմիածինն է իր ժողովրդի հոգու մէջ տաճար դառնում Աստուծոյ կենդանի»[9]։

Գարեգին Կաթողիկոսի՝ հովուապետեալ Եկեղեցու համար ունեցած վաստակը ցոյց տալու նպատակով մէջբերենք Շահէ արք. Աճեմեանի սասածը. «Ամփոփելով մեր խօսքը, կրնանք ըսել, թէ երջանկայիշատակ Հայրապետը եղաւ այն Կաթողիկոսը, որ յաջողեցաւ Մայր Աթոռի իրավիճակը հիմնապէս փոխել, այսինքն՝ պետական հիմնարկի մը վիճակէն վերածել Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մայր Աթոռի կարգավիճակին»[10]։

Գարեգին Հայրապետի գործունէութիւնը, սակայն, չի սահմանափակուել Հայ Եկեղեցու շրջագծով։ Ինչպէս վերն արդեն նշել ենք, Նորին Սրբութեան համար մեծ կարեւորութիւն ունէր նաեւ միջեկեղեցական շարժումը։ 1955-ից նա էկումենիկ շարժման մէջ էր, գործուն մասնակցութիւն է ունեցել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ միջեկեղեցական այլ կազմակերպութիւնների աշխատանքներին։ 1997 թ. յունիսին Աւստրիայի Գրաց քաղաքում գումարուած՝ Եւրոպայի երկրորդ էկումենիկ համաժողովի բացումն ու հիմնական խօսքն առաջարկուեցին Հայոց Հայրապետին։ Իր ելոյթում նա անդրադարձաւ վերջին տասնամեակում Եւրոպայում կատարուած վերափոխումներին եւ Եկեղեցիների կեանքում դրանց ունեցած հետեւանքներին։ Հայ Եկեղեցու առաջնորդի արտասա-

[7] Անդ, էջ 71։
[8] «Էջմիածին», օգոստոս, Ը., 2002, էջ 72։
[9] Անդ։
[10] Անդ։

նած ճառն արժանացաւ հանրութեան, յատկապէս բարձրաստիճան հոգեւորականների եւ աստուածաբանների բացառիկ գնահատանքին։

Միջազգային գիտաժողովի մասնակիցներից Ուղղափառ Եկեղեցու մասնագէտ, Մոսկուայի համալսարանի դասախօս իտալացի Ջովաննի Գուայտան հարցազրոյց է խնդրում Գարեգին Ա.-ից։ Գուայտայի եւ Հայոց Հայրապետի հարցուպատասխանները բովանդակող գիրքը հրատարակուել է ֆրանսերէն։ Իսկ 1999-ին Տ. Մեսրոպ արք. Աշճեանի ջանքերով այն հրատարակուեց հայերէն[11]։

Հայ եկեղեցապետի արժանիքները գնահատել է նաեւ Հռոմի Յովհաննէս-Պօղոս Պապը։ Գարեգին Ա. 1996-ի դեկտեմբերին այցելել էր Վատիկան եւ հանդիպել Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետի հետ։ Վերջինս Հայ Եկեղեցու առաջնորդին խնդրել էր պատրաստել «Խաչի ճանապարհ» արարողութեան խոկումներն ու աղօթքներ, ինչը Հայ եկեղեցապետն իրագործել է 1997 թ.։ «Խաչի ճանապարհ»-ը Հռոմէականթոլիկ Եկեղեցու ծիսակարգի ու աւանդութեան մէջ բացառիկ կարեւորութիւն ունեցող այն բարեպաշտական արարողութիւնն է, որը տեղի է ունենում ամեն տարի՝ Աւագ ուրբաթ օրը, աշխարհի բոլոր կաթոլիկ եկեղեցիներում։ Տասնչորս կայանից բաղկացած այս ծէսը մի խաչափայտի ձեռամբարձ ընկերակցութեամբ եւ աւետարանական 14 ընթերցման միջոցով վերակենդանացնում է Յիսուս Քրիստոսի կեանքի վերջին դրուագները՝ Գեթսեմանիի պարտէզում Իր կրած անձկութիւնից մինչեւ դատապարտումը, ձաղկումը, խաչի շարչարանքը, մահուան ու թաղման պահը։ Առանձնայատուկ շուք է ձեռք բերում մանաւանդ Հռոմի Պապի նախագահութեամբ կատարուող «Խաչի ճանապարհ» արարողութիւնը, որը տեղի է ունենում Հռոմի աշխարհահռչակ Կոլիզէիումի շուրջ։ Հռոմի եկեղեցապետի նախագահութեամբ կատարուող արարողութիւնը զուգակցւում է խոկումներով եւ աղօթքներով։

Գարեգին Ա.-ն անգլերէն էր գրել խոկումներն ու աղօթքները, որոնք յետոյ թարգմանուել էին իտալերէն եւ լոյս տեսան առանձին գրքոյկով՝ հայ մանրանկարչութեան անզուգական պատկերներով զարդարուն։ 1997 թ. «Խաչի ճանապարհ»արարողութեանը մասնակցեց Մայր Աթոռի ժամանակի դիւանապետ Տ. Ներսէս արքեպիսկոպոսը, որն ընթեր-

---

[11] Տե՛ս «Զրոյցներ Ջովաննի Գուայտայի հետ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս», Ս. Էջմիածին, 1999, 2001

*ցեց Վեհափառի գրած բացման աղօթքը, հայերէն արտասանեց «Պահպանիչ» օրհնութիւնը եւ Պապի կողքին քայլեց խաչի խորհրդանշական ճանապարհով։ Արարողութիւնը Եւրատեսիլ (*Eurovision*) եւ այլ հեռուստաալիքներով ուղիղ եթերով հեռարձակուեց ողջ աշխարհում։ Հայրենիքում հայութիւնը, ցաւօք, մեծաւ մասամբ անհաղորդ մնաց սոյն կարեւոր իրադարձութեանը։*

Գարեգին Ա. Կաթողիկոսը Եկեղեցիների միութեան եւ էկումենիկ շարժման Ի. դարի մեծագոյն առաջնորդներից էր, նա մի աստիճանով բարձրացրեց Հայ Եկեղեցու արժէքն ու յարգը Եկեղեցիների համաշխարհային ընտանիքում։

Հայոց Հայրապետը նաեւ աշխոյժ մտաւոր կեանքի, գիտութեան մարդ էր։ Նրա աստուածաբանական, հայագիտական, փիլիսոփայական, բարոյագիտական, պատմագիտական ու գրական բազմաթիւ ուսումնասիրութիւններ, յօդուածներ, խոհագրութիւններ եւ այլ բնոյթի գրուածքներ հրատարակուել են Հայաստանում ու արտերկրում՝ Բէյրութում, Երուսաղէմում, Թեհրանում, Ժնեւում, Լօնդօնում, Բոստօնում եւ այլուր՝ հայերէն, անգլերէն, գերմաներէն, ֆրանսերէն, արաբերէն, պարսկերէն, յունարէն։

Անթիլիասում ծաւալած իր գործունէութեան ընթացքում նա նոր շունչ հաղորդեց «Հասկ» գիտաաստուածաբանական տարեգրքին, որը, 1998-ից սկսած, անընդմէջ լոյս տեսաւ եւ աստիճանաբար նուաճեց համաշխարհային աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, գրականութեան, պատմագիտութեան կարեւոր հարթակի կարգավիճակ։ Իմաստուն հոգեւորականի գիտաստեղծագործական հրայրքը դրսեւորուեց նաեւ Սուրբ Էջմիածնում։

Ըստ Մեսրոպ սրբազանի՝ նրան ենք պարտական «Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ» կոթողային հատորի երկրորդ անգամ հրատարակութեան պատրաստումը[12]*։*

Վեհափառը նաեւ ուշագրաւ ու արժէքաւոր դասախօսութիւններով հանդէս է եկել արտերկրում։ Հայ Եկեղեցու 131-րդ գահակալը ՀՀ ԳԱԱ պատուաւոր անդամ էր, արժանացել էր աշխարհի մի շարք կրօնական եւ գիտական հաստատութիւնների եւ համալսարանների պատուաւոր դոկտորի կոչմանը, այդ թւում՝ Երեւանի պետական համալսարանի։ Նա ուսուցանող էր էութեամբ։ Ինչպէս նշում էր Մեսրոպ արք. Աշճեանը. «Իր

[12] *«Էջմիածին», 1999, է., էջ 92։*

կէսդարեայ հոգեւոր գործունէութեան ամբողջ ընթացքին Վեհափառը երբեք չդադրեցաւ ուսուցիչ ըլլալէ»[13]։

Գարեգին Վեհափառը քայլեր է արել նաեւ Եկեղեցու եւ պետութեան միջեւ կրթութեան նոր օրէնքի հաստատման եւ դպրոցներում կրօնի դասաւանդման օրինականացման ուղղութեամբ։ Ըստ Շահէ արք. Աճեմեանի՝ լուսահոգի Հայրապետն էր, որ զարկ տուեց քարոզչութեան կենտրոնի գործունէութեանը, կիրակնօրեայ վարժարանների զարգացմանն ու տարածմանը՝ այն յոյսով, որ նոր սերնդի կրօնական կրթութեան ծրագիրը պիտի այդ դպրոցում զարգանայ կրթական օրէնքի բարեփոխութեամբ[14]։ Նա քաջալերեց՝ հիմնելու Հայ Առաքելական Եկեղեցու ուսանողական միութիւնը, միշտ խանդավառուեց բոլոր այն ծրագրերով, որոնք կապ ունէին հայ համալսարանականների հետ[15]։

Հայոց Հովուապետի ուսուցչական գործունէութեան մասն է կազմում դասագրքաստեղծումը։ Դպրեվանքում նա ոչ միայն դասաւանդել է, այլ նաեւ պատրաստել տեսական աստուածաբանութեան, հովուական աստուածաբանութեան, քրիստոնէական բարոյագիտութեան, Ընդհանուր Եկեղեցու պատմութեան եւ Հայ Եկեղեցու պատմութեան մի շարք դասագրքեր, որոնք երկար տարիներ գործածել են դպրեվանքում։ Գարեգին Հայրապետի կազմած ուսումնական ձեռնարկներն են՝ «Համառօտ ձեռնարկ հովուական աստուածաբանութեան» (Անթլիաս, 1979), «Տեսական աստուածաբանութիւն» եւ «Քրիստոնէական բարոյագիտութիւն» («Կրօնական, աստուածաբանական եւ հայագիտական երկեր», հտ. Գ., 2005)։

Գարեգին Հայրապետը գրքի նկատմամբ պաշտամունք ունէր։ Գարեգին Ա. Հայրապետի հովուապետական այցելութիւնների, ճամփորդութիւնների եւ ընթերցանութեան անբաժան ուղեկիցն էր իր «կարմիր գիրքը»։ Կարմիր թաւշակազմ այդ ժողովածուն ձեռագիր ընտրանի է, որում Հովուապետը դեռեւս վարդապետական տարիներից գրառումներ է կատարել կարդացած գրքերից. այդ գրառումները ընտրեալ հատուածներ են մեծ մտածողների խրատական մտքերից, գրողների ու բանաստեղծների երկերից։ Մեր խօսակցութեան առարկայ գիրքը լոյս ընծայուեց 2019 թ. էջմիածնում՝«Իմ կարմիր գիրքը. բանք իմաստնոց» վերնագրով։

---

[13] *Անդ, 2002, Ը., էջ 55։*

[14] *Անդ։*

[15] *Անդ, էջ 51։*

Գարեգին Հայրապետը մշակոյթին ծառայում էր ոչ միայն գրչով ու խօսքով, այլեւ դրուատական գործունէութեամբ։ 1978-ից մինչեւ 1994 թ.՝ 16 տարի շարունակ, Բէյրութում կազմակերպում էր գրքի ամենամեայ ընդարձակ ցուցահանդէսներ, որոնց հանդիսաւոր բացումն ինքն անձամբ էր կատարում։ Ունկնդիր հասարակութիւնն անյագաբար կլանում էր նրա՝ գրի ու գրականութեան մասին հարուստ ու շքեղ խօսքը։ Այդ խօսքերը տպագրուել են առանձին գրքով՝ «Հայ մարդը հայ գիրքին դիմաց» (Անթիլիաս, 1990)։ Վեհափառի՝ պաշտամունքի առարկայի՝ գրքի մասին խոհերն ու մտորումներն ամփոփուած են նաեւ «Գիրքը պատիւն հայուն. հայ գրքի Բ. ցուցահանդէսին առիթով» (Անթիլիաս, 1979) գրքում։

Ահա գրքի վերաբերեալ հենց իր՝ երանաշնորհ Կրօնապետի՝ ասոյթի արժէք ունեցող մտքերից երկուսը, որ նրա գրապաշտ ոգու դրսեւորումներից են. «Գիրքով բարձրացաւ հայ մարդը։ Գիրքով ծաղկազարդուեցաւ հայոց երկիրը։ Եւ այդ օրէն մինչեւ այսօր դարերու ճամբաներով քալեց այդ Գիրը եւ մշտնջենաբուխ շունչ տուաւ հայ մտքին ու սրտին»[16]։ «Ձայնասփիւռ, հեռատեսիլ, շարժանկար եւ այլ տեսողական-լսողական գործնական արդի միջոցներ ճաշակ մը կուտան, երբեմն ճաշակ կը սրեն, բայց բուն ճաշը ընթերցումն է, խոր, արդար վայելք, որովհետեւ մարդկային ինքնածին ճիգ կայ անոր մէջ, խորանալու, մտերմանալու աւելի մեծ կարելիութիւն»[17]։

Մի առանձին հիացմունքի եւ ուսումնասիրութեան առարկայ է Վեհափառի լեզուն, խօսքը. նրա բերանում մեր արքայական ոսկեղէնիկը նիւթեղենանում է իր ողջ հնութեամբ, հարստութեամբ, գեղեցկութեամբ, հմայքով, փայլով ու փառքով։ Հայաստանի Հանրապետութեան գիտութիւնների ազգային ակադեմիայի Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի գիտաշխատող Հայկանուշ Մեսրոպեանը հանգամանալի գիտական քննութեան է ենթարկել Հայրապետի ողջ գրաւոր խօսքը։ Տիկին Մեսրոպեանը կազմել է Գարեգին Ա. Ստեղծած 1700 նոր բառերն ամփոփող բառարան՝ «Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկերի բառարան (նոր բառեր եւ իմաստներ. շուրջ 1700 բառ)» (Մօնրէալ, 2000)։ Ոսկեբերան Հայրապետը ոչ միայն ստեղծել է նորանոր բառեր ու արտայայտութիւններ, լեզուաարտայայտչական բազմազան ու ազդու

[16] «Էջմիածին» 2002, Ը., էջ 66։
[17] Անդ, էջ 67։

կերտուածքներ, այլեւ նոր շունչ ու կենդանութիւն ներարկել հազարաւոր բառերի մէջ, որոնք կորստեան եզրին էին։

Հարուստ, ճոխ ու գեղեցիկ լեզուի եւ արժէքաւոր բովանդակութեան միաձուլումը ծնունդ էտուել ընտիր քարոզների. Գարեգին Ա. Հայրապետը խօսել եւ հրատարակել է հարիւրաւոր քարոզ ու ճառ, որոնք հմայել, հիացրել են ունկնդիրներին ու ընթերցողներին։ Ես համարձակօրէն նրան դասում եմ աշխարհի մեծագոյն ճարտասանների շարքը։ Յուրախութիւն մեզ՝ գիտնական ու մտածող Հայրապետի հետազօտութիւնները, մտորումներն ու խոկումները, պատգամներն ու քարոզները լոյս են ընծայուել առանձին գրքերով։ Թուենք դրանցից մի քանիսը՝ «Քաղկեդոնի ժողովը եւ Հայ Եկեղեցին» (Լօնդօն, «էս Փի Սի Քեյ» (S.P.C.K.), 1965, վերահրատարակուած Նիւ Եօրքում 1976-ին), «Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու վկայութիւնը» (Անթիլիաս, 1968), «Հայ Եկեղեցին այժմ», (Նիւ Եօրք, 1970, վերահրատարակուած որպէս «Կրօնը Միջին Ասիայում»), «Իրանը եւ հայերը» (Թեհրան, 1971), «Հայկական քրիստոնէական աւանդոյթը Իրանում», (Նոր Ջուղայ, 1974), «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»-ին մէջ» (Սպահան, 1973), «Հող, մարդ եւ գիր» (Անթիլիաս, 1991), «Ծանի՛ր զքեզ...» (Անթիլիաս, 1984), «Ի խորոց սրտի խօսք ընդ ժողովրդեան (Նոր-Ջուղա, 1971), «Անժամանակը ժամանակին մէջ» (Ս. Էջմիածին, 1995), «Արեան վկայութիւն։ Նահատակութիւն սրբոց քառասնից մանկանց։ Հաղորդութիւն սրբոց...» (Ս. Էջմիածին, 1997), «Ես յաղթեցի աշխարհի...» Յարութիւն եւ հայութիւն» (Անթիլիաս, 1993), «Խոհեր եւ յորդորներ Մեծի պահոց շրջանի (հայրաշունչ խօսքեր՝ մեր սիրեցեալ ժողովրդին)» (Ս. Էջմիածին, 1998), «Խորհէ՛ եւ մտի՛ր...» (խոհեր եւ հայեացքներ դպրեվանքի մասին) (Ս. Էջմիածին, 1995), «Մաշտոցաշունչ» (Ս. Էջմիածին, 1997), «Ս. Մեսրոպ ինք իր մէջ. ակնարկ մը՝ իր անձնաւորութեան վրայ» (Անթիլիաս, 1962), «Վասն հայրենեաց...» (Անթիլիաս, 1992), «Սիրոյ հրամայականը» (Անթիլիաս, 1977), «Հրաշք Տաթեւի թափօր լեռան լանջերուն» (Անթիլիաս, 1989), «Հին արմատներէն նոր ընձիւղումներ» (Անթիլիաս, 1990), «1700-ամեակը՝ նոր հոգեգալուստ» (Անթիլիաս, 1994), «Միւռոնուած ժողովուրդ, միւռոնելի առաքելութիւն» (Ս. Էջմիածին, 1996), «Հոգեւոր կեանքի փնտրտուքի մէջ» (Անթիլիաս, 1991), «Մի օր Ղարաբաղում. Արցախեան ազատագրական շարժումի 10-ամեակին առիթով, 19 փետրուարի 1998» (Ս. Էջմիածին, 1998), «Աստուած ընդ մեզ» եւ Մենք՝ ընդ Աստուծոյ. հայրապետական պատգամ ծննդեան տօնի» (Ս. Էջ-

միածին, 1997), «Հայրենիքը պատկերն է հայութեան. քարոզներ, Գիրք Ա.» (Ս. էջմիածին, 2001), «Հատընտիր կոնդակներ եւ հայրապետական պատգամներ» (Կանադա—Ս. էջմիածին, 2006), «Հոգեմտաւոր ճառագայթումներ» (Ս. էջմիածին, 1997), «Մեղքը» (Անթիլիաս, 1979), Տո՛ւք զկայսերն՝ կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ» (Ս. էջմիածին, 1998), «Կոմիտաս վարդապետ Հայ երաժշտութեան առաքեալը» (Բէյրութ, 1969) եւ այլն։

Հայոց Կաթողիկոսի գիտական ուսումնասիրութիւնների, մտքերի, խոհերի, քարոզների ու պատգամների մի կարեւոր մասն ամփոփուել է «Կրօնական, աստուածաբանական եւ հայագիտական երկեր» շարքում, որ հրատարակուել է 2003—2015 թթ. Կանադայում եւ Չինաստանում։

Իմաստալից է Վեհափառի խօսքը, մեծարժէք. նրա բանաւոր ու գրաւոր խօսքից կարելի է բազմաթիւ ասոյթներ հանել այնպէս, ինչպէս ոսկու հանքաքարից հրի գործադրմամբ կարելի է մաքուր ոսկին զատել. այս աշխատանքը եւս կատարել է Հայկանուշ Մեսրոպեանը՝ «Ընտրանի ասոյթների եւ պատգամների՝ քաղուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջին Հայրապետի գրական ժառանգութիւնից» (էջմիածին, 1999)։

Գարեգին Հայրապետն իր հոտի հաւատաւոր հայրն ու պաշտպանն էր. ծանր ու դժուարին ժամանակներում հոգացել է Իրանի ու Լիբանանի հայկական համայնքների հոգսերը։ Մեծանուն հոգեւոր գործչի ուշադրութեան բեւեռակէտում Հայ Եկեղեցին էր, ինչպէս նաեւ հայոց բազմահազարամեայ պատմութեան ամենից ողբերգական դրուագը՝ հայոց Մեծ եղեռնը։

Հայ հոգեւորականութիւնը, մտաւորականութիւնը, հաւատաւոր ժողովուրդն առհասարակ միշտ յիշում ու գնահատում են իրենց Հայրապետին, մշտնջենապէս իր ժողովրդի նուիրական յուշերի մէջ է նա՝ Հայ Եկեղեցու դժուարընթաց ուղին լուսաւորող մշտավառ կերոններից մէկը՝ գնահատանքով, մեծարանքով ու սիրով պարուրուած։ Գարեգին Ա.-ի նման մեծութիւնը եւ իր պես մեծութեան գործն ու վաստակը չէին կարող չարժանանալ մտաւորականների, հետազօտողների ուշադրութեանը. Հայ Եկեղեցու ու մշակոյթի մեծ լուսաբաշխներից մէկի եւ նրա արարման ու վաստակի մասին գրուել եւ դեռ գրուելու են գրքեր, ուսումնասիրութիւններ. այստեղ ցանկանում ենք հիշել որոշ հրատարակութիւններ՝ «Ուղեւորութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի Միացեալ Նահանգս Ամերիկայի» (Լոս Անճելէս, 1994), «Խաչի ճանապարհ։

խոկումներ եւ աղօթքներ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի» (Ս. Էջմիածին, 1998), «Խոհեր = Thovghts = Pense'es *(նուիրուած՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.-ի գահակալութեան 4-րդ տարեդարձին (Մօնրեալ, 1999), Գագիկ Յարութիւնեան, «Շարունակուող երկխօսութիւն.... Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի յիշատակին» (Երեւան, 1999), Վանիկ Սանթրեան, «Մայրամուտի շարակնոց. Գարեգին Ա. Կաթողիկոսի համար» (Երեւան, 2000), «Մարդ է, որ գործէ զերկիր. Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց երանաշնորհ Հայրապետի մահուան 10-րդ տարելիցին» (Ս. Էջմիածին, 2009), Ֆելիքս Բախչինեան, «Հայոց հարիւր երեսունմէկերորդ Հայրապետը» (Երեւան, 2011), «Իննսուն գործ, իննսուն խօսք» (Երեւան, 2022), վերն արդեն յիշատակուած՝ «Ընտրանի ասոյթների եւ պատգամների քաղուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջին Հայրապետի գրական ժառանգութիւնից» (Էջմիածին, 1999), «Յուշամատեան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. առաքինազարդ Հայրապետի եւ աստուածարեալ կաթողիկոսի ամենայն հայոց (Զուիցերիա հովուապետական անդրանիկ եւ շնորհաբեր այցելութեան առթիւ)» եւ այլն։ Ինչպէս տեսանք, հրատարակուել եւ անշուշտ հրատարակուելու են նաեւ նրա հեղինակած գործերը։*

2000 թ. յունիսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պաշտօնապէս բացուեց «Գարեգին Ա.» աստուածաբանական-հայագիտական կենտրոնը՝ երջանկայիշատակ Վեհափառի գնահատանքի ու խոնարհումի եւս մէկ դրսեւորում։

Վեհափառին նուիրուած ակնարկը կկամենայինք աւարտել հոգեւորականներին տուած նրա խրատով, որը, ըստ մեզ, տիպար հոգեւորականի կերպարի սահմանումն է. «Մենք հոգեւորական ենք, սա սքեմը ունինք. եւ ժողովուրդը մեզի այդպէս կը նայի. պիտի արժեցնենք զայն. ոչ թէ հովէն եկող, ծովէն եկող տեսակ-տեսակ խօսքերու, նոր-նոր ճաշակներու ետեւէն երթանք։ Թո՛ղ իրենք մեզի գան, ոչ թէ մենք իրենց երթանք։ Եւ այս է ձեր կոչումը, որ ըլլաք, մնաք, տեւէք, խորանաք այս ձեր գիտակցութեանը մէջ եւ ոչ թէ տերեւի նման երթաք ու գաք, ճիւղին նման տատանիք կամ եղէգին պէս ծռիք։ Տոկո՛ւն եղէք, տղա՛ք։ Երբ այս եկեղեցիին մէջ շարականներ երգէք՝ համով-հոտով, ապրումով, հասկացողութեամբ, գեղեցկութեամբ, ժողովուրդը կը հիանայ ձեր վրայ. երբ քարոզը տաք, ձեր հոգիին մէջէն Աստուծոյ խօսքը անցընէք, մեր հայութեան խօսքը բերէ՛ք, ժողովուրդը կը հրճուի, կուրախանայ, կը հարստանայ, եւ

ատիկա կըլլայ ձեր գերագոյն երջանկութիւնը։ Երբ գրէք, ու ժողովուրդը ձեր գրածը կարդայ ու անկէ բարիք քաղէ, անոր մէջ տեսէք ձեր արժանիքը։ Երբ կը ծառայէք, պարզ գործերու մէջէն վարչական, կազմակերպական կամ խնամատարական, անոր մէջ զգացէք ձեր խնդութիւնը։ Ահա է իմ հայրական խրատը ձեզի»[18]։

РЕЗЮМЕ

Католикос Всех Армян Гарегин I — один из признанных деятелей Армянской и общехристианской Церкви, ученый, мыслитель, публицист, педагог, культурный деятель. Он осуществлял эффективную церковную, национальную и благотворительную деятельность в Армении и за рубежом, активно поддерживал армянское книгопечатание, выступал организатором культурной жизни Армении. До избрания Католикосом Всех Армян Гарегин I имел тесные связи с родиной, в частности с Первопрестольным Святым Эчмиадзином. Он оказывал большую материальную и моральную поддержку армянам в Армении и за рубежом. Осуществлял проармянскую деятельность в диаспоре. Как Католикос, все свои силы и энергию он направлял на регулирование и организацию церковной жизни. Он проделал значительную работу для развития армянской культуры, внес большой вклад в дело церковного строительства, вел интенсивную экуменическую деятельность и был одним из видных деятелей межцерковного движения. Гарегин I был одним из наших интеллигентных католикосов, занимался наукой и преподавательской деятельностью. Любил книги. Его армянский был богат и красив. Исследования, размышления, заветы и проповеди Католикоса были изданы отдельными книгами. За свое преданное служение церковным и национальным интересам он снискал большую любовь и уважение армянского духовенства, интеллигенции и народа, благодаря своим высоким интеллектуальным дарованиям и профессиональной подготовке он пользовался любовью и уважением церковнослужителей и интеллигенции за рубежом. О нем, его трудах и достижениях написаны книги.

[18] *«Էջմիածին», 2002, Ը., էջ 57*

SUMMARY

Catholicos Karekin I of All Armenians is one of the recognized figures of the Armenian and the universal Christian church: scientist, thinker, publicist, pedagogue, cultural figure. He carried out effective ecclesiastical, national and philanthropic activities in Armenia and abroad, greatly supported Armenian publishing, acted as an organizer of Armenian cultural life. Before being elected the Catholicos of All Armenians, Karekin I had close ties with the Motherland, particularly with the Mother See of Holy Etchmiadzin. He provided great material and moral support to the Armenians in Armenia and abroad. He stimulated pro-national activities in the Diaspora. As the Armenian Catholicos, he directed all his efforts and energy to the internal regulation and organization of the church life. He has done a significant work for the development of the Armenian culture. He made a great contribution to the church building field. Carrying out rapid ecumenical activity, he was one of the prominent figures of the inter-church movement. Karekin I was one of our intellectual catholicoi, engaged in science and teaching. He had a cult of books. His Armenian language was rich and beautiful. The researches, reflections, oracles and sermons of the Catholicos were published in separate books. He received great love and respect from the Armenian priesthood, intellectuals and the people for his ecclesiastical and national activities and enjoyed the love and respect of foreign churchmen and intellectuals for his high intellectual abilities and professional preparation. Books have been written about the hero of our review, his work and merit.

Doi: 10.56737/2953-7843-2022.8-136

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ[1]

Ռուբեն Սեւակը Ի. դարասկզբի արեւմտահայ նշանաւոր բանաստեղծներից է։ Նա ապրել եւ ստեղծագործել է մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը ոչ միայն քաղաքական ճնշման տակ էր, այլեւ կանգնած էր բնաջնջման սարսափի առջեւ։

Այս շրջանում ազգային քնարերգությունն ստանում է քաղաքական-հասարակական բովանդակություն, ձեռք բերում համամարդկային ընդգրկում։ Ռ. Սեւակը, ինչպես իր ժամանակակիցներ Սիամանթոն ու Դ. Վարուժանը, հայ ժողովրդի պատմական բախտը դարձնում է քնարերգության առանցք, դառնում համապարփակ տառապանքի երգիչ, որի խոսքը հնչում է որպես բողոք առհասարակ բռնակալության, «նորագույն ստրկության», անարդարության եւ անհավասարության դեմ[2]։ Միաժամանակ Սեւակի երգը սիրո, պայքարի եւ ազատության ներբող է եւ նպատակ ունի ոչ թե հուսալքելու, այլ զգաստացնելու, արիության ոգի ներարկելու, պայքարի ու ինքնապաշտպանու-

---

[1]* *Հոդվածը ստացվել է 31.10.2022, գրախոսվել է 3.11.2022։*

էլ. փոստ՝ nara77706@mail.ru։

[2] *Հր. Թամրազյանը նկատում է, որ Ռ. Սեւակը, որոշ ժամանակ գտնվելով Եւրոպայում, հեռու հայկական միջավայրից, ավելի շատ ուներ գրական լիցքեր, բայց հետո ուժեղանում է «անհատական եւ հայկական լարը», գնում «հոգու եւ հողի մեջ». «Նրա երգի մեջ երեւում են անօրինակ թռիչքներ՝ գրեթե բոլոր թեմաների մեջ»։ Մանրամասն տես* ՀՐ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Ռուբեն Սեւակի առեղծվածը, Երկեր, հտ. Գ., Երեւան, 2010, էջ 387։ Համամիտ ենք գրականագետի այն համոզմանը, որ ստեղծագործության ընդհանուր մթնոլորտի առումով Ռ. Սեւակը որոշ չափով զիջում է ժամանակի նշանաւոր բանաստեղծներին՝ Սիամանթոյին, Մեծարենցին եւ Վարուժանին. «Ռուբեն Սեւակի երգի մեջ դեռ չկար թանձր մթնոլորտ՝ ոչ «Հացին երգի», ոչ «Հոգեվարքի եւ հույսի ջահերի», ոչ էլ «Նոր տաղերի» յուրահատուկ աշխարհը»։ Բանաստեղծը հետո էր ստեղծելու այդ «թանձր մթնոլորտը» (անդ, էջ 387)։*

թյան մղելու սերունդներին՝ սեփական ուժի եւ արժանապատվության պայծառ գիտակցմամբ։

Բարեբախտաբար Ռուբեն Սեւակի մասին շատ են գրել, լույս են տեսել գրքեր, հրապարակ եկել մենագրություններ, հոդվածներ եւ այլն։ Մեր քննության նյութն այդ ուսումնասիրություններից մեկի՝ Վլադիմիր Կիրակոսյանի «Ռուբեն Սեւակ. կյանքը եւ ստեղծագործությունը» աշխատությունն է[3], որը գիտական շրջանառության մեջ է դրվել 1972 թ. եւ դարձել գրականագիտական հայտնություն։

Մինչ այդ հրապարակի վրա էին Հ. Օշականի, Մ. Պարսամյանի, Մ. Թեոլեոլյանի, Ա. Սեւանի, Ե. Պետրոսյանի, Գ. Հատիտյանի, Էդ. Ջրբաշյանի եւ այլոց ուսումնասիրությունները։

Ռ. Սեւակի գրական ժառանգությունն ուսումնասիրելիս քննադատները հիմնականում սահմանափակվել են ընդհանուր բնութագրական հոդվածներով[4]։ Մասնավորաբար Բարթող Զորյանը՝ Ժիրայր ծածկանվամբ, գրում է. «Ռ. Սեւակ, այս զգայուն հոգին, իր բոլոր տաղերուն մէջ ալ անխտիր հզօր երեւակայութիւն մ՚ է, անզուգականօրէն հարազատ նկարագրող մը հոգեկան եւ բնական երեւոյթներու»։ *Իսկ Մ. Թեոլեոլյանը երեք հիմնական գծերով է բնորոշում Սեւակի ստեղծագործությունը՝ անձնական, ազգային-հեղափոխաշունչ եւ մարդկային ապրումներով հարուստ էջեր[5]։ Գրականագետը տալիս է այդ ստեղծագործության «ներաշխարհը» հասկանալու բանաձեւումները. «Սեւակի գրականութեան մայր երակը կը կազմէ* մարդկայնական, *աւելի ընդհանուր բնորոշումով մը՝* համամարդկային ցաւը *(այս եւ հետագա ընդգծումները.— Ն. Ս.)։ Բացուած է իր հոգին՝* ամենո՛ւն տառապանքին, մարդերուն վերապահուած չարիքին եւ անարդարութեան վրայ, *Հայուն միայն յատուկ այլասիրութեան մը մղումով»[6]։*

Ա. Սեւանը համեմատաբար ծավալուն ուսումնասիրության մեջ՝ «Ռուբեն Սեւակ (կյանքը եւ գրականությունը)», վերլուծում, հայտնաբերում

---

[3] Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, *Ռուբեն Սեւակ. կյանքը եւ ստեղծագործությունը, Երեւան, 1972։ Այս գրքից բոլոր մեջբերումների էջերը կնշվեն տեղում։*

[4] ԺԻՐԱՅՐ, *Ժամանակակից թրքահայ բանաստեղծներ. Ռ. Սեւակ, «Արեւելյան մամուլ», Զմիւռին, 1909, թ. 27, էջ 647։ Տե՛ս նաեւ* Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ, *Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները, «Շանթ», Կ. Պոլիս, 1918, թ. 2։*

[5] *«Մարդկայնական լարի, ազգային-յեղափոխաշունչ ապրումներու եւ սիրոյ բանաստեղծ մըն է Սեւակ»։ Տե՛ս* Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ, *Դար մը գրականութիւն (1850–1950), հտ. Ա., Գահիրէ, 1955, էջ 632։*

[6] Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ, *նշ. աշխ., էջ 633։*

եւ արժեւորում է Ռ. Սեւակի գրական ժառանգության մի շարք էական առանձնահատկություններ. «Ռ. Սեւակի քերթուածներուն նիւթ կ'ըլլան ոչ միայն սիրոյ եւ բնութեան ստեղծած ապրումները, այլ նաեւ ազգային ու համամարդկային զգայնութիւններ, ցեղին անցեալը, ներկան ու ապագան, մարդկային ընկերութեան ցուցադրած անհաւասարութիւններն ու անարդարութիւնները, ինչպէս նաեւ կեանքի ու մահուան առեղծուածը, որ ի վերջոյ կը տիրապետէ բոլորին»[7]։

Ե. Պետրոսյանի, Գ. Հատիսյանի, Էդ. Ջրբաշյանի ուսումնասիրություններում ընդհանրական է այն տեսակետը, որ Ռ. Սեւակի ստեղծագործության մեջ գերակշռողը կապիտալիզմի զարգացումով առաջացած ընկերվարական հակասություններն են, դասակարգային ճնշումները, հակամարտությունները, հասարակական անարդարությունները[8]։

Ուշարժան է, որ գրականագետ Էդ. Ջրբաշյանը, Սեւակին համեմատելով իր նախորդների եւ ժամանակակիցների հետ, նկատում է որոշակի տարբերություններ. արեւմտահայ բանաստեղծներից ոչ մեկն այնքան շատ երգեր չի նվիրել սիրո զգացման եւ սիրած էակի պատկերմանը, որքան Ռ. Սեւակը[9]։

Գրականագետների ուշադրությունից դուրս էր մնացել քննությունը Սեւակի ստեղծագործությունների զգալի մասի, որն առանցքային նշանակություն ուներ նրա աշխարհայացքի ու գեղագիտական հակումների պարզաբանման տեսանկյունից։ Դա պայմանավորված էր նրանով, որ բանաստեղծի կենդանության ժամանակ նրա երկերն առանձին հրատարակությամբ լույս էին տեսել մեկ անգամ՝ 1910 թ.՝ «Կարմիր գիրք» ընդհանուր խորագրով, իսկ գրական ժառանգության մյուս մասը ցրված էր մնացել պարբերական մամուլի էջերում[10]։ Այդ էր թերեւս այն հիմնական պատճառը, որ Ռ. Սեւակի մասին եղած բոլոր ուսումնասիրությունների մեջ բացակայում էր ժամանակի գրական միջավայրի ամբողջական

---

[7] Ա. Սեւան, *Ռուբէն Սեւակ (իր կեանքը եւ գրականութիւնը), «Հայրենիք», Բոստոն, 1930, թ. 1, նոյեմբեր, էջ 53։ Ա. Սեւանի նշված ուսումնասիրության շարունակությունը մանրամասն տես նաեւ նշված ամսագրի հաջորդ համարում՝ «Հայրենիք», Բոստոն, 1930, թ. 2, դեկտեմբեր։*

[8] *Մանրամասն տես* Ե. Պետրոսյան, *Ռուբեն Սեւակ, Երկեր, Երեւան, 1955. տես նաեւ* Գ. Հատիսյան, *Ռուբեն Սեւակ, Երեւան, 1959.* Էդ. Ջրբաշյան, *Ռուբեն Սեւակ. ստեղծագործության համառոտ ակնարկ, Երեւան, 1965։*

[9] Էդ. Ջրբաշյան, *նշ. աշխ., էջ 24։*

[10] *Հայտնի է, որ առաջին անգամ՝ 1944 թ. է հրատարակվել Ռ. Սեւակի բանաստեղծություններից մի քանի տասնյակ, իսկ 1955 թ. Ե. Պետրոսյանի առաջաբանով հրատարակվել է Ռ. Սեւակի երկերի ժողովածուն՝ թեեւ ոչ լիակատար։*

պատկերը, չէր որոշվել բանաստեղծի տեղը գրական շարժման միասնական ընթացքի մեջ, շրջանցվել էին աշխարհայացքային, գեղագիտական բնույթի մի շարք էական հարցեր։

Վ. Կիրակոսյանը պարբերական մամուլից եւ այլ աղբյուրներից քաղված նյութերի, ինչպես նաեւ Ռ. Սեւակի ամբողջ ստեղծագործության հանգամանալից վերլուծության հիման վրա 1972 թ. շրջանառության մեջ է դնում «Ռուբեն Սեւակ. կյանքը եւ ստեղծագործությունը» գիտական աշխատությունը՝ անդրադառնալով այն կարեւոր խնդիրներին, որոնք դուրս էին մնացել նախորդ ուսումնասիրողների տեսադաշտից՝ ժամանակի գրական միջավայրի ամբողջական պատկեր, բանաստեղծի տեղը գրական շարժման միասնական ընթացքի մեջ, գեղագիտական-աշխարհայացքային բնույթի մի շարք հարցեր եւ այլն։ Կարեւոր էր նաեւ այն հանգամանքը, որ գրականագետը առաջիններից մեկն էր, որ Ռուբեն Սեւակին դրեց արեւմտահայ խոշոր բանաստեղծներ Սիամանթոյի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի կողքին[11]*. «Նա Սիամանթոյի ժամանակակիցն էր եւ հանդես եկավ Մեծարենցի ու Վարուժանի հետ գրեթե միաժամանակ, որոնք գրական նոր շարժման անվիճելի պարագլուխներն էին։ Սեւակը հետեւորդ էր միայն, բայց ոչ էպիգոն (կուրորեն հետեւող.-խմբ.), նա ուներ մյուսներից տարբեր իր ճանապարհը, արվեստի դավանանքներն ու սկզբունքները» (էջ 6)։*

Այսպես՝ 1890-ական թվականներից սաստկացած թուրքական բռնաճնշումները, ազգային հալածանքները, արեւմտահայության քաղաքական ու տնտեսական խոր ճգնաժամը, ժողովրդի գլխին կախված բնաջնջման սպառնալիքը ծնեցին մի նոր գրականություն, որը, սնվելով ժողովրդական կյանքի հարստությունից, հակադրվում էր հրապարակում իշխող քաղքենիական քնարերգությանը։

Մյուս կողմից՝ եւրոպական գեղագիտական մտքի նորագույն նվաճումները թափանցում էին արեւմտահայ քնարերգություն։ Շատ բարդ

---

[11] *Համամիտ չենք Հ. Օշականի այն դիտարկմանը, թե «Ազգային զգացման ծնունդ անոր տաղերը տմոյն ոտանաւորներ են, երբ մօտիկը կը դրուին Վարուժանի, Թէքէեանի պայծառ, ինքնահաճ, կատարեալ քանդակներուն» (Հ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հտ. 9, Անթիլիաս, 1980, էջ 59)։ Կարծում ենք՝ գրականագետ Հր. Թամրազյանն ավելի ճիշտ եւ դիպուկ է բնութագրել բանաստեղծին։ Նա նկատում է, որ թեեւ սկզբնական շրջանում Ռ. Սեւակն առաջ էր գնում որոշ նմանություններով, սակայն ժամանակի ընթացքում հայտնաբերում էր սեփականը, ինքնուրույնը։ Նա ճանապարհի վրա էր, օժտված էր աստվածային ձիրքով։ Մանրամասն տե՛ս Հր. Թամրազյան, նշ. աշխ., էջ 384։*

էին այդ ներթափանցումները հայրենի գրականության ավանդույթներին միահյուսելը եւ գեղարվեստական ինքնուրույն որակ ստեղծելը։ Սիամանթոն, Միսաք Մեծարենցը գեղագիտական տարբեր հայեցակետերով հայտնաբերեցին այն «մայրուղին», որով պիտի ընթանար ու հարստանար դարասկզբի արեւմտահայ երգը։ Գրական նոր ու հուժկու շարժման գոյությունը դառնում էր անհերքելի իրողություն. «Սիամանթոյի ու Մեծարենցի հետ միասին այդ շարժման ամենաականավոր ներկայացուցիչները դարձան Վարուժանն ու Սեւակը»[12] (էջ 54)։

Ռ. Սեւակի գրական նկարագիրն ամբողջանում էր մի կողմից՝ հայրենի գրականության ավանդույթի ձեւավորման, մյուս կողմից՝ եւրոպական առաջադեմ մշակույթի նվաճումներին հետեւելու ճանապարհով։

Վ. Կիրակոսյանը, իր աշխատությունում անդրադառնալով վերոնշյալ իրողություններին, տալիս է ժամանակաշրջանի գրական-հասարակական միջավայրի ընդհանուր բնութագիրը՝ հստակ ուրվագծելով բանաստեղծի տեղը եւ դերը գրական միջավայրում, ինչը չէին արել նախորդ քննադատները։ Նա արձանագրում է, որ Ռ. Սեւակի ստեղծագործությունը դարասկզբի ամենաբարդ եւ հակասական երեւույթներից է, եւ նրա ստեղծագործությունների հետ կապված շատ խնդիրներ անհասկանալի կմնային՝ առանց ժամանակի գրական շարժման յուրահատկությունները, օրինաչափությունները լուսաբանելու։

Գրական-հասարակական միջավայրը նեկայացնելուց հետո գրականագետը սահուն անցում է կատարում Ռուբեն Սեւակի բանաստեղծական շարքերի վերլուծությանը[13] («Քառսը», «Կարմիր գիրքը», «Սիրո գիրքը»)՝ տեսնելով նրանց մեջ գաղափարական ներձույլ միասնություն, աստիճանական զարգացում։

---

[12] Այս առումով գրականագետ Վ. Գաբրիելյանն ուշադրություն հոդված ունի Դ. Վարուժանի եւ Ռ. Սեւակի ստեղծագործության աղերսների, երկու տարեկից բանաստեղծների «հոգեկցության» մասին։ Մանրամասն տե՛ս Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, *Ռուբեն Սեւակ եւ Դանիել Վարուժան, «Ռուբեն Սեւակ —125» հոդվածների ժողովածու, Երեւան, 2011, էջ 59—84։*

[13] Ռ. Սեւակը ժամանակին ծրագրել էր հրատարակել բանաստեղծությունների հինգ շարք՝ «Կարմիր գիրքը», «Վերջին հայերը», «Քառսը», «Չհասկցվածները» եւ «Սիրո գիրքը», սակայն հրատարակեց միայն առաջինը։ Վ. Կիրակոսյանն իր ուսումնասիրության «Առաջաբան»-ում գրում է, որ «Վերջին հայերը» ամփոփելու էր բանաստեղծի ազգային-քաղաքական ստեղծագործությունները եւ այս տեսակետից կապվում է «Կարմիր գրքի» գաղափարաբանության հետ։ Ուստի եւ նպատակահարմար է գտել այդ շարքերին՝ իբրեւ նույն մտայնության տարբեր արտահայտությունների, նվիրել մի ամբողջական հատված, իսկ «Քառսը» եւ «Չհասկցվածները» շարքերին հատկացրել է մեկ գլուխ։ «Սիրո գիրքը» վերլուծվել է առանձին։ Գրականագետը, ամեն դեպքում, աշխատել է չխախտել բանաստեղծի ստեղծագործության գաղափարական-գեղարվեստական միասնականությունը։

Հարկ ենք համարում ընդհանուր գծերով ներկայացնել, վերլուծել բանաստեղծի ստեղծագործությանը բնորոշ այն գաղափարական-գեղագիտական առանձնահատկությունները, որոնք քննել եւ բացահայտել է Վլադիմիր Կիրակոսյանն իր «Ռուբեն Սեւակ. կյանքը եւ ստեղծագործությունը» աշխատությունում։

Այսպես՝ «Քառս» շարքի «ողնաշարը», ըստ գրականագետի, հասարակական-քաղաքական գործուն հարցադրումներն են դառնում։ Ռ. Սեւակի ուշադրության կենտրոնում «հասարակ մարդու» ճակատագիրն է՝ բուրժուական իրավակարգի պայմաններում[14]։ Զգայուն բանաստեղծը փորձում է խորանալ մարդկային ճակատագրի բարդ հանգույցների մեջ, խորանալ հոգեկան աշխարհի առեղծվածներում։ Նա համակրանքով է լցված «ճակատագրին մտրակին տակ» տառապող մարդկության նկատմամբ[15], դժգոհում է աշխարհում տիրող անարդարությունից, անհավասարությունից, մարդու ստրկական վիճակից եւ իր բողոքի ձայնն է բարձրացնում հանուն նրա ոտնահարված իրավունքների, ցանկանում տեսնել արդարության հաղթանակը («Դրամին աղոթքը», «Մեծդ Աստված», «Փողոց ավլողը», «Այս դանակը», «Քարե նստարանը» եւ այլն)։ Բանաստեղծը հերոսություն է համարում բարոյազուրկ հասարակության մեջ «սուրբ իդեալի» փառաբանումը («Թրուպատուրները»)։

Վ. Կիրակոսյանը «Կարմիր գիրքը» համարում է «դարասկզբի արեւմտահայ պոեզիայի աչքի ընկնող երեւույթներից մեկը» *(էջ 114), գտնում, որ կոտորածի ու ավերի տեսարաններից, ընդվզումի ու բողոքի, ցասման ու վրեժի տրամադրություններից դեպի կյանքի ու մահվան, մարդու, նրա գոյության իմաստի եւ առհասարակ աշխարհում տիրող չարիքների ընկերվարական ակունքների մասին խորհրդածությունները «Կարմիր գրքում» տիրող մտայնության զարգացման ընթացքն է։*

Գրականագետը հանգամանալից վերլուծում է շարքի բանաստեղծությունները, ցույց տալիս բանաստեղծի եւ իր գրչակից ընկերների, սերնդակիցների ստեղծագործության ընդհանրություններն ու տար-

---

[14] *Հետագայում Հր. Թամրազյանը պետք է գրեր ոչ թե «հասարակ մարդու», այլ առհասարակ «Մարդու ճակատագրի թեման՝ հոգեբանական ու կենսական բազմապիսի դիտումներով ու վերլուծությամբ, ահա այն նորը, որ դժվար մթնոլորտում մշակում էր բանաստեղծը»։ Տես* ՀՐ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, *նշ. աշխ., էջ 392։*

[15] *Վ. Կիրակոսյանը նկատում է, որ ազատության ձգտող անհատի դրաման («Վերջին արքայն») դառնում է մի համապարփակ մի երեւույթ, որի հերոսը տառապող մարդկությունն է։ Այս իմաստով Սեւակի քնարերգությունը հարստանում է համամարդկային մոտիվներով։*

բերությունները, ոճական առանձնահատկությունները։ Նա նկատում է էականը՝ «Ջարդի խենթը» պոեմն ամենից առաջ մի բողոք է թուրք բարբարոսների եւ հայրենիքի վշտին անտարբեր բուրժուական աշխարհի դեմ։ Խենթի համոզմամբ՝ գալու է վրիժառության այդ օրը. նա անխախտ հավատ ունի ժողովրդի ուժերի նկատմամբ։ «Թրքուհին» պոեմում ներկայացվում է վրիժառու այն հերոսը, որի օրինակով պիտի դաստիարակվեր երիտասարդ սերունդը։ Վ. Կիրակոսյանը դիպուկ բնութագրում է՝ Սեւակն այստեղ սոցիալական-քաղաքական ողբերգական վիճակից դուրս գալու ծրագիր էր առաջադրում, որի հիմքում ժողովրդի գործուն պայքարի գաղափարն էր։ Նրա պայքարը միայն ազգային-ազատագրական պայքար չէր, այլեւ ուներ համամարդկային ազատագրության բարձր գաղափարներ։

Առաջ անցնելով՝ գրականագետը ցույց է տալիս, որ «Մարդերգություն» պոեմը նախորդ երկու պոեմների գաղափարական գծի տրամաբանական զարգացումն է եւ ամբողջացնում է «Կարմիր գրքի» մտայնությունը։ Սեւակը մարդուն ոչ թե ունայնության է մղում, այլ դեպի պայքար։ Գաղափարի խորքն է տեսնում քննադատը. «Բանաստեղծն առաջ է քաշում նաեւ պայքարով ու զոհողությունների գնով մարդու կյանքը եւ առհասարակ աշխարհը գեղեցկացնելու գաղափարը» (էջ 144)։ Նա ուզում է մարդուն տեսնել ազատ եւ կատարյալ։

Վ. Կիրակոսյանը թեմատիկայով ու գաղափարական բովանդակությամբ «Կարմիր գրքի» հետ է կապում «Վերջին հայերը» շարքը, որի բանաստեղծություններն աչքի են ընկնում նաեւ ազգային արժանապատվության խոր գիտակցությամբ։ Ըստ քննադատի՝ դրանք անիրավության, ժողովրդի մռայլ ճակատագրի դեմ ուղղված հոգեբուխ պոռթկումներ են՝ երբեմն ծայրահեղ կրքով[16]։

Բանաստեղծի իդեալների ամբողջությունը մարմնավորվում է «Սիրո գրքում»։ Այն գաղափարապես կապվում է նախորդ երկու շարքերի հետ,

[16] Համոզիչ է գրականագետ Ս. Սրապիոնյանի դիտարկումը։ Ըստ գրականագետի՝ եթե Սիամանթոն «հնչեցնում էր հույսի ու վրեժի նվագներ («Դյուցազնորեն», «Հայորդիներ»-ի Ա. եւ Բ. շարքերը) եւ հետո միայն անցնում տառապանքի ու պայքարի զուգակցված նվագներին (ի դեպ՝ նույն զարգացման ընթացքն է նաեւ Դ. Վարուժանի գործերում), ապա Ռ. Սեւակի՝ ժամանակի հայ կյանքի եղերական պատկերները միշտ զուգակցված են վրեժի ու պայքարի գաղափարակոչերով, ինչը պայմանավորված էր նախ եւ առաջ նրա գեղագիտական ու քաղաքացիական ըմբռնումներով» (Ս. Սրապիոնյան, Ցեղային ողբերգության արտացոլումը Ռուբեն Սեւակի պոեզիայում, «Ռուբեն Սեւակ — 125». հոդվածների ժողովածու, Երեւան, 2011, էջ 87)։

դառնում դրանց լրացումն ու ամփոփումը։ Քննադատը նրբորեն դիտարկում է՝ ի տարբերություն Դ. Վարուժանի, որի գործերում սերն ստանում է փիլիսոփայական երանգավորում, Սեւակի երգերը հյուսված են իրական ու ապրված զգացմունքների նրբերանգներից։ Նրանց համար բնորոշն ու հատկանշականը մարդկային գեղեցիկ զգացմունքի փառաբանումն է, սիրող անհատի հոգեբանության նրբին ծալքերի բացահայտումը («Նամակը», «Քերթողը», «Ինչո՞ւն» եւ այլն)։

Անդրադառնալով Սեւակի արձակին՝ «Բժշկին գիրքէն փրցուած էջերին», Վ. Կիրակոսյանը խորանում է գրքի առեղծվածի մեջ. ներհուն գրողը հիվանդությունների հետեւում տեսնում է մարդու անհատական դրաման. «Հիվանդանոցը դառնում է յուրատեսակ թատերաբեմ, ուր խոցվում է կյանքի անվերջանալի դրաման՝ վեր հանելով մի ամբողջ հասարակության պատկերը» (էջ 198)։ Գրականագետը եզրահանգում է՝ Սեւակը փառաբանում է մարդու հաղթանակը մահվան նկատմամբ, ստեղծում գեղեցիկի ու նյութական իրականության հակադրության պատկերը։

Այսպիսով՝ Վ. Կիրակոսյանի գիտական աշխատությունը դառնում է ժամանակի գրականագիտական հայտնությունը[17]։ Նշենք, որ հետագայում գրականագետը կրկին անդրադարձել է Ռ. Սեւակին՝ «մենազրույցի» մեջ մտնելով ներհուն բանաստեղծի հետ։ «Մենազրույց նահատակ բանաստեղծի հետ» յուրօրինակ աշխատությունը լույս տեսավ 2005 թ.։ Գիրքը ողողված է գրականագետի անսպառ, անկեղծ սիրով, ջերմությամբ ու նվիրումով դեպի իր սիրելի հեղինակը։ Միեւնույն ժամանակ նա ավելի հասուն, խորաթափանց մտքով «զրույցի է բռնվում» բանաստեղծի հետ, վերարժեւորում, վերաիմաստավորում է նրա ազգային գաղափարախոսությունը, որ հավերժ արդիական է. «Քեզ համար մեր պատմության գլխավոր դասը միասնական անհրաժեշտությունն է՝ իբրեւ համազգային գիտակցություն։ Իսկ այդ գիտակցումը ամենից առաջ ինքնաճանաչում է, արժանապատվություն ու հպարտություն։ Այդ նպատակով դու ոգեկոչում ես մեր պատմության հերոսական ու փառավոր դրվագները, քաղաքակրթության պատմության մեջ մեր ցեղի հոգեւոր ավանդները։ Սակայն դա ազգային սնապարծություն չէ.... Դա, քո մեկնաբանությամբ, այն ուժն է, որ հազարամյակների ընթացքում պաշտպանել է մեզ ինքնան-

[17] *Վ. Կիրակոսյանի ուսումնասիրությունից հետո Սեւակի կյանքը եւ գրական ժառանգությունը քննել են Ստ. Թոփչյանը, Հր. Թամրազյանը, Վ. Պետրոսյանը, Հ. Ջիլինկիրյանը, Վ. Գաբրիելյանը, Ս. Սրապիոնյանը եւ այլք։*

վաստացման, ազգային թերարժեքության կործանարար բարդույթից, պիտի պաշտպանի այսօր եւ ապագայում»[18]։

Վ. Կիրակոսյանը գնում է հայտնությունների ճանապարհով։ Ըստ նրա՝ «Զանգակնե՛ր, զանգակնե՛ր» հայտնի քերթվածում զանգակների լռությունը խորհրդանշում է «ընդվզումի կարկամած ոգին»։ Նա թափանցում է բանաստեղծի տագնապահար եղած ներաշխարհը, որ «արթնացումի ահազանգ» է հնչեցնում, հուսահատության փոխարեն արդար ցասումի ու վրեժխնդրության կիրք բորբոքում։

«Ջարդի խենթը»-ի հերոսը վրիժառության գաղափարակիրն է։ Նա պայքարի ու ըմբոստ դիմադրության ոգին է՝ գալիք սերունդների մարտնչումի պատգամաբերը։ Սիամանթոյի, Դ. Վարուժանի երգերից տարբեր է Սեւակի երգը՝ «վրիժառու պատգամի անարվեստ ու աներկմիտ անմիջականությամբ»։ Գրականագետը գալիս է այն եզրահանգման, որ բանաստեղծի «վերածնության կանխագծումներում» վրեժի ու պայքարի գործնական բարոյականը, սակայն, համածավալ գոյաբանական իմաստ է ստանում անձնազոհության խորհրդով[19], որ ընդհանրապես առանցքային դեր է խաղում նրա ազգային գաղափարախոսության մեջ. «Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկորեն կատղիլ... Ու իրա՛վ, Մարդկորեն կատղի՛լ»։

ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԳԻ

РЕЗЮМЕ

Рассматривается научная работа В. Киракосяна «Рубен Севак (жизнь и творчество)», посвященная жизни и творчеству западноармянского поэта Р. Севака, как литературное открытие того времени,

Показано, что литературовед В. Киракосян, на основе тщательного анализа всего творчества Р. Севака, затрагивает важные вопросы, которые остались вне поля зрения предшествующих исследователей; как целостная картина литературной среды того времени, роль поэта на литературное направление, и ряд

---

[18] Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, *Մենագրույց նահատակ բանաստեղծի հետ, Երեւան, 2005, էջ 50։*
[19] *Անդ, էջ 113։*

вопросов эстетико-мировоззренческого характера. Примечательно, что В. Киракосян ставит Рубена Севака в ряд великих западноармянских поэтов как Сиаманто, М. Мецаренц, Д. Варужан.

SUMMARY

The article examines the literary critic V. Kirakosyan's research work entitled as "Ruben Sevak (life and work)" dedicated to the life and work of the Western Armenian poet R. Sevak, as a revelation of the time. It is shown that on the basis of a thorough analysis of R. Sevak's entire creativity, V. Kirakosyan revealed essential issues that were left out of the view of the previous researchers, like a complete picture of the literary environment of the time, the place of the poet in the unified course of the literary movement and a number of aesthetic-worldview questions.

It is noteworthy to mention that V. Kirakosyan places Ruben Sevak among the great Western Armenian poets like Siamanto, M. Metsarents, D. Varujan.

СОДЕРЖАНИЕ

От редакции 5

ПРОПОВЕДИ

Проповедь **АРХИМАНДРИТА НЕРСЕСА ХАЛАТЯНА**, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 8

Проповедь **ЕПИСКОПА АРТАКА ТИГРАНЯНА**, произнесенная в монастыре Св. Гаяне во время Св. Литургии в честь праздника Успения Пресвятой Богородицы 13

Проповедь **АРХИМАНДРИТА МОВСЕСА САРГСЯНА** произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 17

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ФЕОФИЛ АНТИОХИЙСКИЙ – Послание к Автолику 20

АРХИМАНДРИТ МАТЕОС ДЖУГАЕЦИ – Проповедь о слове «Если бы вы были слепые, то не были бы повинны в грехах» 32

ПРОТОАРХИМАНДРИТ ШАГЕ АНАНЯН – Теологический портрет Его Святейшества Гарегина I, Католикоса Всех Армян 39

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ЛУСИНЕ ВАРДАНЯН – Эстетические взгляды архимандрита Аристакэса Ластивертци по его «Истории». 50

АШОТ АЙРУНИ — О турецком вторжении 1920 г. и ситуации в Карской области 64

АЙКАНУШ МЕСРОПЯН — Лингвистические особенности проповеди Католикоса Гарегина Кесабци 75

СУРЕН ДАНИЕЛЯН — «Движение духа» к материи: перед формулой извечного времени 86

СООБЩЕНИЯ

СИРАНУШ МАДОЯН — Документ из специальных хранилищ США 105

ГРАЧЬЯ БАЛОЯН (АРМЕНЯН) — Проницательный Патриарх. Католикос Всех Армян Гарегин I (биографический очерк). 112

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

НАРА САРГСЯН — Творчество Рубена Севака сквозь призму интерпретации Владимира Киракосяна 136

CONTENTS

Editorial 5

SERMONS

Sermon delivered by **ARCHIMANDRITE NERSEH KHALATYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 8

Sermon delivered by **BISHOP ARTAK TIGRANYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery on the occasion of the Feast of the Assumption 13

Sermon delivered by **ARCHIMANDRITE MOVSES SARGSYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 17

RELIGIOUS STUDIES

THEOPHILUS OF ANTIOCH — To Autolycus 20

ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA – Sermon on “If ye were blind, ye should have no sin” 32

PROTO-ARCHIMANDRITE SHAHE ANANYAN – Catholicos Karekin I of All Armenians: theological portrait 39

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

LUSINE VARDANYAN — The aesthetic views of Archimandrite Aristakes Lastivertsi according to his “History” 50

ASHOT N. HAYRUNI — The Turkish invasion of 1920 and the situation in Kars . . . 64

HAYKANUSH MESROPYAN —Linguistic peculiarities of sermons of Catholicos Karekin I of Kesab 75

SUREN DANIELYAN — "The movement of the soul" to matter: before the formulation of constant time. 86

ESSAYS

SIRANUYSH MADOYAN – A document from US special archives 105

HRACHYA BALOYAN (ARMENYAN) – Sagacious Pontiff: Karekin I, Catholicos of All Armenians (biographical review) 112

LITERARY REVIEW

NARA SARGSYAN — Ruben Sevak's work interpreted by Vladimir Kirakosyan. . . . 136

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրրեւ խմբագրական 5

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱԼԱԹԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին 8

Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում՝ Սուրբ Աստուածածնի վերափոխման տօնին մատուցուած Ս. Պատարագին. 13

Տ. ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին 17

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԹԵՈՓԻԼՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ — Առ Աուտոլիկոս 20

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՅԵՑԻ — Քարոզ «Եթէ կոյր ըլլայիք՝ մեղք պիտի չունենայիք» խօսքին մասին 32

Տ. ՇԱՀԷ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆԵԱՆ — Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց. *աստուածաբանական դիմանկար* 39

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՒՍԻՆԷ ՎԱՐԴԱՆԵԱՆ — Արիստակէս վարդապետ Լաստիվերցու գեղագիտական հայացքները՝ ըստ նրա «Պատմութեան» 50

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ — 1920 թ. թուրքական ներխուժման եւ Կարսի նահանգում տիրող իրադրութեան շուրջ 64

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ — Գարեգին Ա. Քեսաբցի Կաթողիկոսի քարոզիսօսութեան լեզուական առանձնայատկութիւնները 75

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ — «Հոգիի շարժումը» դէպի նիւթը. մնայուն ժամանակի բանաձեւումի առջեւ 86

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԱԴՈՅԵԱՆ — Մէկ վաւերագիր ԱՄՆ յատուկ պահոցներից . . . 105

ՀՐԱՉԵԱՅ ԲԱԼՈՅԵԱՆ (ԱՐՄԷՆԵԱՆ) — Խորագետ Հայրապետը. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը (կենսագրական ակնարկ). 112

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ — Ռուբէն Սեւակի ստեղծագործութիւնը՝ Վլադիմիր Կիրակոսեանի մեկնութեամբ 136

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal “Etchmiadzin”

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374–10) 517–276

Ստորագրուած է տպագրութեան՝ 27.12.2022 թ.